Ծ ո ւ ղ ո ւ

ա ռ ո գ ա կ ն ո ղ ն յ ո ւ թ ե ր ի ժ ո ղ ո վ ա ծ ո ւ
2 - 6 տ ա ր ե կ ա ն ն ե ր ի հ ա մ ա ր

«Հանրակրթական դասարան նախաառարտատական ուսուցում»
հ ա ն ր ա կ ր թ ա կ ա ն դ ր ա գ հ ի ր

Մ Խ Ի Թ Ա Ր Ս Ե Բ Ա Ս Տ Ա Ց Ի Կ Ր Թ Ա Հ Ա Մ Ա Լ Ի Ր

Ծանոթություն

Ժողովածուում զետեղված նյութերը նախատեսված են 3-5 տարեկանների զարգացման համար: Դրանք փորձարկվել են «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի նախակրթարաններում, որտեղ ՀՀ ԿԳ նախարարության պատվերով մշակվել և իրականացվում է «Հանրակրթական դպրոցում նախապատրաստական կրթություն» հանրապետական ծրագիրը:

Խաղաղարան

Խաղեր 3-5 տարեկանների համար

Ներկայացված խաղերը նախատեսված են 2-6 տարեկանների համար:

Մի քանի խաղերի դեպքում նշված է խաղացողների ցանկալի տարիքային խումբը: Խաղը դաստիարակը /կամ խաղավարը/ ընտրում է՝ հաշվի առնելով մասնակիցների տարիքը, նախասիրություններն ու հետաքրքրությունները, առանձնահատկությունները:

Խաղերի մեծ մասը փորձարկվել է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի նախակրթարանային խմբերում:

Բոլոր խաղերը խաղում են բակ-պարտեզներում, ներսում խաղում են միայն ցուրտ եղանակներին:

** Նշանով խաղերը ստեղծվել են կրթահամալիրի նախակրթարաններում:

Առավոտվա խաղեր

Բարի լույս

Երեխաները մեջքի վրա պառկում են գորգին, դաստիարակը կամ խաղավարն էլ է պառկում, այնպես, որ բոլորին տեսանելի լինի: Խաղավարը հրահանգում է. «Հիմա մարմնով պինդ կպչում ենք հատակին, մեր գլուխները կպա՞ն գորգին: Այժմ դանդաղ, խորը շնչում ենք ու դանդաղ արտաշնչում: Ուշադիր եղեք, զգացեք, թե ինչպես է օդն անցնում մեր ամբողջ մարմնով. խո՞րը շնչում ենք, հիմա արտաշնչում ենք»: Ինքը նույնը կատարում է:

Կամաց-կամաց երեխաներին պետք է «արթնացնել»: Երեխաները դանդաղորեն բարձրանում են, հետևում, թե ինչպես են մարմնի մասերը կամաց-կամաց պոկվում հատակից: Երեխաները կանգնում են երկու ոտքի վրա, խորը շնչում և արտաշնչում:

Ծափ ու հաշիվ

Երեխաները ազատ շարժվում են: Նախապես պայմանավորվում են, որ ըստ խաղավարի ծափերի քվի նրանք որևէ կենդանի կամ առարկա են դառնալու:

Լսելով խաղավարի մեկ ծափը՝ երեխաները դառնում են արագիլ, բարձրացնում են մեկ ոտքը, տարածում թևերը: Երկու ծափի դեպքում կարող են գորտեր դառնալ, երեքի դեպքում կրկին ազատ շարժվում են: Խաղավարը ծափերի հերթականությունը փոխում է:

Կարելի է նաև այսպես՝ մեկ ծափի դեպքում դառնում են պատառաքաղ, երկու ծափի դեպքում՝ թավա, երեքի դեպքում ազատ թռվռում են:

Բարև, ես...

Անհրաժեշտ պարագաներ՝ խմբում բոլոր երեխաները և դաստիարակը իրենց ձեռքով պատրաստած տիկնիկ են ունենում:

Խաղավարը և երեխաները իրենց ձեռքերին հագցնում են իրենց տիկնիկները, մի ձեռքով սեղմում են իրենց տիկնիկի ձեռքը և ներկայանում, ինչպես ուզում են:

Օրինակ խաղի փորձարկումից.

- Բարև, ես Սաթիկն եմ և սիրում եմ երգել:
- Բարև, ես շնիկն եմ, ոչ մեկին չեմ կծում:
- Բարև, ես ծաղրածուն եմ և գունավոր քշիկներ ունեմ:

Բարևախաղ

Երեխաները իրար կողք են կանգնում: Կարող են շրջանածև կանգնել: Դաստիարակը երեխաների հետ է կանգնում: Նա էլ սկսում է խաղը: Աջ ձեռքով թույլ հարվածում է իր աջ կողքին կանգնած երեխայի ձախ ձեռքին /թույլ ծափ է տալիս իր և կողքինի ձեռքով) և տալով ընկերոջ անունը՝ բարի լույս է մաղթում՝ նշելով իր անունը.

Օրինակ՝

- Բարի լույս, Արտա՛կ, ես Աստղիկն եմ:

Արտակը հարվածում է իր կողքինի ձեռքին.

- Բարի լույս, Արմինե՛, ես Արտակն եմ:

Արմինեն նույն կերպ շարունակում է՝ հարվածելով կողքինի ձեռքին.

- Բարի լույս, Հասմի՛կ, ես Արմինեն եմ:

Խաղն ավարտվում է, երբ շրջանն ավարտվում է:

Խաղը հետո զարգացվում է: Երեխաները և աշխատողները գնդակը փոխանցում են միմյանց՝ իրար անուն դնելով:

Օրինակ՝

- Մարինե՛, դու խնձոր ես:

Մարինեն գնդակը տալիս է Աշոտին և ասում.

- Աշո՛տ, դու բողկի նման ես:

Աշոտը գնդակը տալիս է Լուսինեին.

- Լուսինե՛, դու անձեռոցիկ ես:

- Ալի՛կ, դու փուշ ես:

Շրջանն ավարտվելու հետ խաղն ավարտվում է:

Գնդակը, որքան հնարավոր է, պետք է արագ փոխանցել:

Հաճելի խոսքեր

Խաղավարը բոլոր խաղացողներին նախապես առաջարկում է հիշել ու մտքում պահել փաղաքշական խոսքերից կամ արտահայտություններից մեկը, որ իրենց սիրելիս ասում են հարազատները: Հետո խաղացողները բաժանվում են երկու հավասար խմբի: Մի խմբի անդամները նստում են շրջանածև շարված աթոռներին: Մյուս խմբի անդամները կանգնում են նրանց գլխավերևում:

Կանգնածը իր դիմաց նստածի ականջին շշնջում է իր մտապահած խոսքերը, անցնում է հաջորդ նստածին ու նրա ականջին ասում նույն խոսքերը: Այսպես մեկ-մեկ անցնում է ժամացույցի սլաքի ուղղությամբ, մինչև շրջանն ավարտվում է, ինքը հասնում է իր առաջին ընկերոջը: Այդպես վարվում են բոլոր կանգնածները:

Երբ շրջանն ավարտվում է, կանգնածները նստում են աթոռներին, նստածները կանգնում: Հիմա նույն բանն անում են կանգնածները, իսկ նստածները լսում են:

Վերջում խաղացողները կարող են խոսել իրենց տպավորությունների մասին:

Մուկ-մատները

Երեխաները իրենց մատները մկների են վերածում և դրանցով կամաց-կամաց «վազվզում» սեղանի վրա: Հետո վազքն աստիճանաբար արագացնում են: Այնուհետև «վազում են» իրենց ծնկներին, հետո՝ կողքինի ծնկներին:

Մեկ, երկու, երեք, անշարժացի՛ր

Երեխաները քայլում են սենյակում: Խաղավարն ասում է.

- Հիմա դուք կոկորդիլոսներ եք դառնում (կարող է ցանկացած կենդանի անվանել) և շարժվում եք կոկորդիլոսի նման: Երբ ես ծափ տամ և հրաման տամ՝ մեկ, երկու, երեք, կոկորդիլո՛ս, անշարժացի՛ր, դուք պետք է անշարժանաք այն դիրքում, որում կաք:

Խաղավարը արագ-արագ փոխում է կենդանիների անունները՝ խաղն ավելի ռիթմիկ դարձնելով:

Գնացք

Երեխաները շրջանաձև նստում են, խաղում ենք «գնացքներ» խաղը: Սկզբում գնացքը վագոններ չի ունենում, և նա, ում մենք շոգեքարշ ենք ընտրում, «երթևեկում է» շրջանով և բարձր բղավում՝ «չո՛ւք-չո՛ւք-չո՛ւք»: Հետո «շոգեքարշը» ծանծրանում է և մոտենում ցանկացած աղջկա կամ տղայի ասելով.

- Գնա՛ցք, չուք-չուք-չուք,- և ասում է իր անունը:

Օրինակ՝

- Գնա՛ցք, չուք-չուք-չուք, Արման:

Այն երեխան, ում մոտեցել է «շոգեքարշը», ի պատասխան տալիս է իր անունը և դառնում շոգեքարշ, իսկ Արմանը՝ առաջին վագոն: Միվագոնանի գնացքը շարժվում է և մոտենում ցանկացած երեխայի:

- Գնա՛ցք , չուք-չուք-չուք,- և շոգեքարշն ասում է իր և իր վագոնի՝ Արմանի անունը: Նրանց նոր միացած երեխան դառնում է շոգեքարշ, մյուսները՝ վագոն: Այսինքն՝ ամեն նոր միացած երեխա դառնում է շոգեքարշ, հները՝ վագոն:

Խաղը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև որ գնացքին կմիանան բոլոր երեխաները:

Մենք քեզ երկինք ենք տալիս

Խաղացողները բաժանվում են երկու խմբի: Մի խումբը երկինք է, մյուսը՝ ծով: Խմբերը կանգնում են իրար դիմաց՝ իրարից 6-7 մետր հեռու: Առաջին խումբը (ասենք՝ երկինքը) ռիթմիկ քայլերով մոտենում է դիմացի խմբին, կանգնում մոտ 1 մետր հեռու, տալիս է դիմացի խմբի առաջին անդամի անունը և ծգվելով դեպի երկինք՝ այնտեղից նրա համար «որևէ նվեր է իջեցնում, նվիրում»՝ ասելով.

- Հասմի՛կ, մենք քեզ կայծակ ենք նվիրում:

Խումբը, ետ-ետ քայլելով, վերադառնում է իր տեղը: Նույն բանն անում է ծովը, բայց նա նվերը ծովից է հանում:

«Ծովը» նվիրում է այնպիսի բաներ, որ կարելի է ծովից հանել (ջուր, ալիք, ափսե...). «Երկինքը» նվիրում է այնպիսի բաներ,որ հնարավոր է երկնքից իջեցնել (ամպ, արև, ինքնաթիռ...): Խաղավարը նախապես զգուշացնում է, որ նվերները դժվար են ձեռք բերվում, պետք է շատ ծգվել, չարչարվել:

Խաղն ավարտվում է, երբ բոլորը «նվերներ են ստանում»:

Խաղավարը կարող է օգնական խաղալ, օգնել այդ պահին դժվարացող թիմին: Կարևորն այն է, որ առավոտյան հնչեն բոլորի անունները, և երեխաները ծգեն իրենց մկանները:

Հիշողության, երևակայության և այլ զարգացնող խաղեր

Հողաթափեր

Երեխաները կիսաշրջանաձև նստում են, յուրաքանչյուրը հանում է իր հողաթափերից մեկը և դնում կիսաշրջանի կենտրոնում: Ընտրում են իրենցից մեկին: Նա մոտենում է հողաթափերի բուրգին, բարձրացնում է մի հողաթափ, ուշադիր նայում ընկերների ոտքերին և որոշում՝ ումն է իր ձեռքի հողաթափը: Հողաթափի տերը ձեռքը բարձրացնում է, ասում իր անունը, վերցնում է իր հողաթափը և հագնում:

**Տարբերակ 1

Խաղացողները բաժանվումեն զույգերի: Զույգերից յուրաքանչյուրը հանում է իր մի հողաթափը, դնում կենտրոնում: Բոլորի մի հողաթափը կենտրոնում է, մեկը՝ հագին: Խաղավարի հրահանգով զույգի մեկը գտնում է իր ընկերոջ հողաթափը, հագցնում, հետո մյուս ընկերն է իր զույգի հողաթափը գտնում, հագցնում:

Հետագայում խաղն ավելի է բարդացվում: Խաղացողները զույգերի են բաժանվում և կիսաշրջանաձև նստում: Միմյանց հողաթափերը "ուսումնասիրելուց" հետո հանում են դրանք և հավաքում կենտրոնում, այնպես, որ հողաթափերի կույտ ստացվի: Խաղավարի հրահանգով ամեն զույգից մեկը կույտից հանում է իր ընկերոջ հողաթափերը և հագցնում նրան: Նույն բանն անում է զույգի մյուս անդամը: Հաղթում է այն զույգը, որն առաջինն է հագնում հողաթափերը:

Մատներով զգացմունքներդ ցույց տուր (3-4 տարեկաններ)

Խաղում են զույգերով: Խաղավարը աշխույժ երաժշտություն է միացնում: Խաղացող զույգերը նստում են իրար դիմաց: Խաղավարի օրինակով խաղում են մատներով՝ ցույց են տալիս, թե ինչպես են իրենց ձեռքերը ուրախությունից թռվռում սեղանի վրա, պարում են, հրում իրար, կծում մեկ մեկու, չարություններ անում, սեղմվում իրար և դողում վախից...

**Գույներ (3-4 տարեկաններ)

Անհրաժեշտ նյութեր՝ նախորդ աշխատանքներից մնացած գունավոր թղթերի կտորներ, սպիտակ թղթեր, ջրաներկեր կամ գուաշներ, վրձիններ:

Դաստիարակը յուրաքանչյուր խաղացողի առաջարկում է վերցնել երկու գույնի թուղթ, միասին պարզում են երեխայի ընտրած գույների անունները: Նա 2 սպիտակ թղթերի երեսները ամբողջովին ներկում է իր վերցրած թղթերի գույներով: Այսպես՝ երեխան ընտրել է կապույտ և դեղին: Նա սպիտակ թղթերից մեկն ամբողջովին կապույտ է ներկում, մյուսը՝ դեղին:

Հաջորդ խաղին սպիտակ թղթի մի կեսը կներկի իր ընտրած մի գույնով, մյուս կեսը՝ իր ընտրած մյուս գույնով:

Անհրաժեշտության դեպքում խաղը կարելի է մի գույնից սկսել:

Հետագայում երեխայի վերցրած գույները կարող են հասցվել 3-4-ի:

Գույներ (3-5 տարեկաններ)

Անհրաժեշտ նյութեր՝ նախորդ աշխատանքներից մնացած գունավոր թղթերի կտորներ, սպիտակ թղթեր, ջրաներկեր կամ գուաշներ, վրձիններ:

Դաստիարակը յուրաքանչյուր խաղացողի առաջարկում է վերցնել 3-4 հատ տարբեր գույներ և մի սպիտակ թուղթ:

Սպիտակ թղթի երեսը ամբողջովին ներկում են իրենց ընտրած թղթերի գույներով:

Առաջին խաղին պետք է պայման դնել՝ ներկելիս գույները կարող են խառնվել:

Հետո երեխան փորձում է «պատմել», թե ինչ է ստացվել իր աշխատանքից, ինչի է նման, ինչ տրամադրություն կա նկարի մեջ...:

Երբ բոլորը կպատասխանեն, դաստիարակն առաջարկում է նորից նայել նկարները և դրանց անվանումներ տալ:

Դաստիարակը գրի է առնում երեխաների մեկնաբանությունները, անվանումները, ամրացնում է նկարին և կախում նկարների պարանից կամ ցուցադրություն է կազմակերպում: Կարելի է անվանումը հենց նկարի վրա գրել՝ հարմար տեղում. գրածը կդառնա նկարի մաս:

Մեր փորձից

Գույն-շաբաթ

Խաղի փորձարկման նկարագրությունը

Նախակրթարանում «գունավոր» շաբաթ է, ամեն օրը՝ մի գույն:

Շաբաթվա առաջին օրը դեղին էր: Ըստ պայմանավորվածության բոլորը դեղին բլուզ կամ շապիկ էին հագել, դեղին փուչիկներ ու ժապավեններ էին բերել, որոնցով խմբասենյակը ձևավորեցինք: Զրուցեցինք դեղին գույնի մասին: Դեղին թղթերը բարակ-բարակ կտրատեցինք, դեղին անձրև սարքեցինք, կախեցինք առաստաղից (թղթերի մեծ մասը նախորդ աշխատանքներից մնացած թափոններ էին):

Հարցրինք՝ ինչպիսի գույն է դեղինը, ի՞նչ կասեն նրա մասին:

- Դեղինը մի՞ քիչ արևի գույն է: Արևի մնացած գույնը դեղին չի,- ասաց Արտյոմը:

- Դեղինը թթու գույն է, որովհետև լիմոնի գույն է: Որ ես դեղին եմ տեսնում, լեզուս մրմռում է,- սա էլ Արսենն էր:

- Դեղինը հեչ էլ չի ջղայնանում, իր համար խելոք ապրում է,- քթի տակ մրթմրթաց Լևոնը:

Հարց՝ որտե՞ղ է ապրում դեղինը:

- Իր դեղին տանը,- զարմացավ Անին, իբր՝ էլ որտեղ պիտի ապրի:

- Ներկերի տուփի մեջ, իր ընկերների հետ. Բելան է, թողնես՝ ամբողջ օրը կնկարի:

- Որտեղ ուզում է, էնտեղ էլ ապրում է,- երջանիկ ժպտաց Արթուրը:

- Իմ մամայի մանիկյուռի ամանի ու սիրուն շորի մեջ,- ասաց մեր կոկետուհին՝ Անահիտը:

- Դեղին տերև էլ է լինում,- երազկոտ հայացքով ավելացրեց Էդգարը:

Հետո համեմատեցինք խմբում եղած «դեղինները», տեսանք, թե որքան տարբեր են դրանք, թեև բոլորն էլ դեղին են:

Դեղին խնձորներով, տանձերով, բանաններով մրգային աղցան պատրաստեցինք. կերանք:

- Ես ինչքան դեղին աղցան կերանք,- սրամտեց Թերեզան:

Դրսում տաք եղանակ էր, բակում պատին վատմաններ փակցրինք, թղթե պատ ստացանք ու այդ պատին միայն դեղին ներկերով ինչ ուզեցինք՝ նկարեցինք: Երկա՜ր դեղին ու հետաքրքիր նկար ստացվեց: Նկարին ինչ անուն ասես տվեցինք՝ դեղինանկար, դեղինի փողոց, դեղին արևիկ, լիքը խառը դեղին և այլն: Ապահովության համար օրվա վերջում նկարը ներս տարանք. աշուն էր, մեկ էլ տեսար անձրև եկավ, այն էլ՝ դեղին: Մի երկու օր «դեղին խաղացինք», որ գույնը «ամրանա»:

Հաջորդը կանաչ օրն էր: Բոլորը կանաչ էին հագել, կանաչ փուչիկներով ու ժապավեններով էին: Կանաչ տերևներ սարքեցինք, կախեցինք խմբում: Ծառերին կանաչ ժապավեններ կապեցինք, զրուցեցինք:

- Կանաչը մազալու գույն է, գարունն է գալիս,- ասաց Մերին:

Հարցրինք՝ բա ծմռանը որտե՞ղ է լինում:

- Ի՜նչ իմանամ:

Այսպես, օրը մի գույն՝ իր առանձնահատկություններով: Երեխաները հագնում էին այդ օրվա գույնի հագուստ, խմբասենյակում՝ օրվա գույնի ժապավեններ, փուչիկներ, գույնին բնորոշ իրեր: Այդ օրվա նկարը նկարում էին միայն այդ գույնով: Վերջում ունեցանք պատերին փակցված տարբեր գույների «պաննոներ»:

Գունավոր շաբաթ մի ուրիշ խմբում

Գունավոր օրեր են: Գունավոր են օրերը մեր խմբում՝ գունավոր փուչիկներով, ժապավեններով, ներկերով ու նկարներով: Գունավոր թաթիկներով գունավոր պատ է, երգերն ու խոսքերն էլ են գունավոր: Իսկական կախարդական գույն - օրեր:

Երկուշաբթին կարմիր էր: Կարմիր փուչիկով Գնդլիկ-բոքոնիկ սարքեցինք, անունը դրեցինք Կարմիր բոքոնիկ ու ճամփորդեցինք նրա հետ կարմիր ճամփեքով, հանդիպեցինք կարմիր ձվին, նրա մեջ հավաքեցինք կարմիր արևին, կարմիր տերևին, կարմիր խնձորին ու կարմիր - կարմիր հարսանիք արեցինք:

Պարզեցինք, թե որտեղից է գալիս կարմիր գույնը:

- Սարից, սարի վրայի կարմիր ծաղիկներից,- ասաց Զինան:

- Չէ՛, երկնքից է գալիս,- ասաց Նարեկը:

- Որ երկնքից գար, կապույտ կլիներ,- չհամաձայնեց Արամը:

- Դու չգիտես, երկնքի ամենավերևը կարմիր ա,- պատասխանեց Նարեկը:

Մեր թաթիկները ջրաներկով մի լավ ներկեցինք, շրջանածև տպեցինք մե՜ծ սպիտակ թղթի վրա, կարմրաթաթ շողերով կարմիր արև սարքեցինք:

Մի օրն էլ դեղին էր: Խումբը լցրել էինք դեղին փուչիկներով, տերևներով, անձրևով, մրգերով ու դեղնակարմիր արևներով: Դեղին թաթիկներ արեցինք, դեղին տերևներով կոլաժներ արեցինք:

- Որտեղի՞ց է դեղին գույնը:

- Արևից,- պատասխանեց Հարութիկը:

- Արևից ո՞նց կգա, արևը շատ հեռու է ապրում,- զարմացավ Ամալիկը:

- Նստում է արևի շողին, գնացքի պես «սղղղղո՜ւմ» է ու գալիս մեզ մոտ,- բացատրեց Հարութիկը:

Մեր թաթիկները դեղին ներկեցինք ու տպեցինք երկա՜ր թղթի վրա: Ոնց որ դեղին թաթերի անձրև լիներ:

Ամեն մեկն իր համար դեղին նշաններ հորինեց, ու դեղին նամակներ գրեցինք, ով ում ուզեց:

Բա կանաչ օ՜րը: Կանաչով մի լա՜վ խաղացինք՝ ներկեցինք, նկարեցինք, կանաչ թելերով, տերևներով, այլ նյութերով տարբեր դեմքեր ու դիմակներ սարքեցինք: Ամենից հետաքրքիրը կանաչ տերևներով սարքված ուլունքներն էին:

**Հականիշներ
(մնջախաղ)

Խաղացողները նստում են շրջանածև: Դաստիարակը ներկայացնում է խաղը՝ ամեն երեխա մի բառ է պահում մտքում: Ով որ կենտրոն է գալիս, դաստիարակի ականջին ասում է իր պահած բառը և դրա հականիշը: Այնուհետև մնջախաղով ցույց է տալիս իր պահած բառը: Ով գուշակում է բառը, նա պիտի ասի նաև այդ բառի հականիշը: Հետո նա է կենտրոն գալիս, դաստիարակի ականջին ասում է իր պահած բառը և հականիշը, մնջախաղով ցուցադրում իր բառը: Խաղը նույն կերպ շարունակվում է:

Մեր փորձից

Ռոդարիական մեթոդով բառագույգեր էինք խաղում՝ բարեկամ բառեր, թշնամի բառեր, հակառակ բառեր: Նախորդ օրը շերեփներով, գդալ-պատառաքաղով և խոհանոցային այլ պարագաներով բարեկամ բառեր էինք խաղացել: Այսօր հակառակ բառեր պիտի խաղայինք: Նախ փորձեցինք բացատրել հակառակ բառի իմաստը: Երբ հասկացանք, Բելլան ասաց.

- Ես որ շատ եմ խոսում, տատս բարկանում է՝ ի՞նչ շատ ես խոսում, քիչ խոսիր:

- Ըհը՞, ուրեմն շատը քչի հակառակն է,- ասացի ես:

Սկսեցինք խաղալ: Էլենը ծեծել բառը «խաղաց»: Գուշակեցին.

- Կռիվ:

- Ֆիզկուլտ:

Հակոբը տեղից կանչեց.

- Էդ մամադ ա քեզ ծեծո՞ւմ:

Մենք ճշտեցինք.

- Հիմա Էլենի ցույց տված բառը ո՞րն էր:

Հակոբը պատասխանեց՝ պատժելը:

Էլենը չհամաձայնեց.

- Չէ՛, իմ բառը ծեծելն էր:

Հակոբն էլ այդ բառերի տարբերությունը չի հասկանում, նրա համար ծեծը պատիժ է, ի՞նչ տարբերություն:

Վերջը Հակոբը համոզեց Էլենին, որ երբ ծեծում են, ուրեմն պատժում են, և այդ բառերի հականիշն էլ սիրելն է: Հակոբը կենտրոն եկավ, խաղը շարունակվեց:

Ամենա-ամենա

Խաղացողները շրջանածև նստում են: Շրջանի կենտրոնում՝ աթոռին թղթեր են դրված, որոնցից յուրաքանչյուրի վրա մի հանձնարարություն է գրված.

- Ո՞վ արագ կհանի և կհագնի իր կոշիկները:

- Ո՞վ կարող է ավելի երկար կանգնած մնալ մեկ ոտքի վրա:

- Ո՞վ կարող է երկար նայել ընկերոջ աչքերի մեջ ու չծիծաղել:

- 5 լեգոները ո՞վ ավելի շուտ կշարի օղակի մեջ:

Խաղում են զույգերով: Խաղավարը կենտրոն է հրավիրում առաջին զույգին: Նրանք մի թուղթ են ընտրում, դաստիարակը կարդում է առաջադրանքը, զույգը կատարում է այն: Երեխաներն են որոշում, թե ով է հաղթել: Հաղթողին որևէ մրցանակ են տալիս: Հետո խաղը զարգացնում են: Խաղացողները բաժանվում են 2 խմբի: Խաղավարը ամեն խմբից մի խաղացող է կանչում: Նույն կերպ մրցում են: Հաղթողը իր խմբի համար միավոր է շահում: Ամեն միավորի համար խումբը մի փայտիկ կամ խաղալիք է ստանում: Վերջում հաշվում են, որ խմբի փայտիկները ավելի շատ լինեն, այն խումբն էլ հաղթում է:

Նվերներ

Երեխաները շրջան են կազմում, խաղավարը առաջարկում է յուրաքանչյուրին մտածել որևէ նվեր՝ աջ կողքի ընկերոջը նվիրելու համար: Հետո նա մնջախաղով ցույց է տալիս, թե ինչ է ուզում նվիրել ընկերոջը: Նվեր «ստացողը» մնջախաղով ուրիշ նվեր է փոխանցում աջ կողմում կանգնած ընկերոջը:

Նվերները միանման չպիտի լինեն, եթե դրանք կրկնվում են, պետք է նվերը «փոխել»:

Լրացում՝ նվեր ստացողը կարող է գուշակել, թե ընկերն ինչ է իրեն նվիրում:

Փորձիր գուշակել

Խաղում են 12-24 հոգով. (թիվը պիտի բաժանվի 6-ի): Անհրաժեշտ նյութեր՝ նկարներ, որոնք բաժանված են 6 մասի:

Խմբեր են կազմում՝ խմբում՝ 6 հոգի: Վերցնում են խմբերի թվով նկարներ, որոնք բաժանված են 6 մասի: Խմբի ուրաքանչյուր երեխայի տրվում է նկարի 1/6 մասը: Խմբերը հավաքում են նկարը: Հաղթում է այն խումբը, որն արագ կհավաքի իր նկարը:

Տարբերակ 1.

Նկարների մասերը ավելացվում են՝ նկարը բաժանում են 6-ից ավելի մասերի:

Տարբերակ 2.

Կտրտված նկարները խառն են բաժանվում: Խումբը հավաքվում է ըստ նկարի՝ նույն նկարի մասն ստացած երեխաները ընտրում են իրար, մի խումբ են դառնում և հավաքում նկարը:

Առեղծվածների արկղ

Անհրաժեշտ նյութեր՝ միջին չափսի արկղ, քարերի, կաղինի, խխունջների, փետուրների կամ երկրաչափական մարմինների՝ խորանարդի, բուրգի, գնդի, կոնի կամ այլ գույքեր:

Առարկայի գույգից մեկը դնել արկղի մեջ, իսկ մյուսը՝ սեղանի վրա: Երեխան ձեռքը մտցնում է արկղի մեջ և շոշափելով գուշակում, թե սեղանի առարկաներից որի գույգն է ինքն արկղում բռնել: Ապա նայելով սեղանի վրայի նույն առարկային՝ պետք է նկարագրի արկղի միջի առարկայի կառուցվածքը: Այդ ընթացքում պետք է երեխային հարցնել՝ առարկան փափուկ է, թե կոշտ, խորդուբորդ է, թե հարթ, սառը, թե տաք, գնդաձև է, թե ոչ... Հետո հանում է առարկան և դնում գույգի կողքին:

Ով ում շորն է հագել

Երեխաները նստում են շրջանաձև և ուշադիր նայում են միմյանց հագուստներին: Փորձում են հիշել, թե ով ինչ է հագել: Երեխաներից մեկը դուրս է գալիս սենյակից: Երկու մասնակից իրար հետ փոխում են հագուստները: Հետո կանչում են դրսում գտնվողին: Նա պետք է որոշի, թե ով ում հագուստն է հագել :

Հետագայում խաղը զարգացնում են. հագուստները կփոխեն երեք, չորս մասնակից:

Ինչ եմ ասում (5-6 տարեկաններ)

Անհրաժեշտ պարագաներ՝ աթոռներ:

Խմբում պետք է լինի ամենաքիչը 6 երեխա: Բացի մեկից՝ բոլորը նստում են աթոռներին: Աթոռները դասավորված են կիսաշրջանաձև:

Կենտրոնում կա 3 աթոռ, որոնցից մեկի վրա նստած է երեխաներից մեկը: Նա ասում է օրինակ՝ «Ես այգի եմ»: 1-ին աթոռին նստած երեխան նստում է նրա կողքի ազատ աթոռին և ընկերոջ ասած մտքի հետ տրամաբանական կապ ունեցող ուրիշ միտք է ասում. «Ես նստարան եմ»: Մյուսը նստում է երրորդ աթոռին և ասում օրինակ՝ «Ես այգի մաքրող եմ»: Երեխա-այգին պետք է ընտրի երկուսից մեկին, օրինակ՝ « Ես ընտրում եմ նստարանին»: Այս երկու-

սը նստում են մյուս երեխաների մոտ: Մնացած երեխան՝ «նստարանը», նոր բան պետք է մտածի: Օրինակ՝ «ես կարի մեքենա եմ»:

Այս անգամ 2-րդ աթոռին նստած երեխան է նստում նրա կողքին և ասում, օրինակ՝ «ես ասեղ եմ»: Խաղն այսպես շարունակվում է:

Հնարավոր այլ տարբերակ՝ խաղում են շրջան կազմած: Մեկն ասում է, ասենք, «Ես կայծակն եմ»: Կողքինը պետք է արագ շարունակի, ասենք՝ իսկ ես անձրևն եմ: Երրորդը շարունակում է թեման, օրինակ՝ ես մեծ ամպն եմ: Հաջորդը պետք է արագ ասի՝ իսկ ես աշունն եմ և այսպես մինչև վերջ: Խաղից դուրս է գալիս նա, ով արագ չի գտնի որևէ տրամաբանական շարունակություն: Երբ խաղն հասնում է 1-ին երեխային, թեման փոխվում է, օրինակ՝ ես փողոց եմ:

«Այո» և «ոչ» չասել, սևը սպիտակի հետ չշփոթել (5-6 տարեկաններ)

Խաղավարը առաջարկում է երեխաներին հարց և պատասխան խաղալ: Երեխաները հարցերին կարող են տարբեր պատասխաններ տալ, բայց պետք է մի կանոն իմանան՝ չի կարելի արտասանել արգելված բառերը, օրինակ՝ «այո», «ոչ», «սև», «սպիտակ» կամ ըստ պայմանավորվածության՝ այլ բառեր:

Խաղավարը այնպիսի հարց պետք է տա, որը կենթադրի արգելված բառի օգտագործումը, օրինակ՝ «Ի՞նչ գույն է բժշկի խալաթը»: Երեխան պետք է այնպիսի պատասխան տա, որ չխախտի կանոնը. կարող է պատասխանել՝ ձյան գույնի: Սխալվելու դեպքում խաղացողները փոխվում են: Խաղը պետք է սկսվի մեկ արգելված բառից, հետո արգելված բառերը կարող են 2-3-ը լինել:

Գտի՛ր կորած խաղալիքը

Սեղանի վրա՝ երեխայի դիմաց, դասավորում են 3-4 խաղալիք: Երեխային առաջարկում են ուշադիր նայել, որից հետո նա շրջվում է, իսկ խաղավարը թաքցնում է խաղալիքներից մեկը: Երեխային առաջարկվում է շրջվելուց հետո գուշակել, թե որ խաղալիքը չկա: Եթե պատասխանը ճիշտ է, ապա խաղացողը փոխվում է: Խաղալիքները աստիճանաբար ավելացնում են: Եթե երեխան հեշտությամբ հաղթահարում է առաջադրանքը՝ մինչև 10-12 և ավելի խաղալիքներով, կարելի է խաղը բարդացնել՝ փոխելով խաղալիքներն այլ առարկաներով, պատկերված նկարներով:

Հնարավոր այլ տարբերակ: Առաջարկեք երեխային հիշել խաղալիքների դասավորության հերթականությունը (որը որից հետո է դրված), որից հետո երկու (կամ ավելի) խաղալիքներ տեղափոխեք և առաջարկեք գուշակել, թե որ խաղալիքն է տեղափոխած:

Ո՞վ կհավաքի

Խաղավարը 5 տարբեր առարկաներ է դասավորում սեղանին: Այնուհետև խառնում է: Խաղացողը, աչքերը փակ, արագ սկսում է հավաքել բոլոր առարկաները նախկին հերթականությամբ: Խաղավարը փոխում է առարկաների հերթականությունը և նոր առաջադրանք տալիս մյուս խաղացողներին:

Զիգզագ

Անհրաժեշտ պարագաներ՝ գրատախտակ, կավիճ, թուղթ, մատիտ կամ գրիչ:

Խաղավարը իր նոթատետրում նկարում է 5-6 տարբեր ուղղություններ ունեցող գծեր: Նա գրատախտակին նկարում է առաջին գիծը: Եր հաջորդ գիծը նկարում է, ջնջում է նախորդը: Երբ ջնջում է վերջին գիծը, խաղացողները թղթի վրա փորձում են հիշել, թե ինչ դիրքերով գծեր են եղել՝ վերականգնել զիգզագը (սկզբում կարելի է նշումներ կատարել, հաջորդ անգամ խաղում են առանց նշումների): Խաղավարը համեմատում է այդ գծերի դիրքերը իր մոտ նշված գծերի դիրքերի հետ:

Հաղթում է այն երեխան, որը ճիշտ է նկարել գծերի ուղղությունները:

Բղավոցներ-փսփսոցներ-լռոցներ

Անհրաժեշտ պարագաներ՝ գունավոր թղթեր:

Կարմիր, դեղին, կապույտ թղթերի վրա նկարում են երեխայի ձեռքեր և կտրում: Դրանք ազդանշաններն են: Պայմանավորվում են, որ կարմիր ձեռքը «բղավոցի» համար է, կարելի է բղավել, ուժեղ աղմկել, թռվռալ, դեղին ձեռքը՝ շշուկի նշան է, պետք է փսփսոցով խոսել, հանդարտ տեղաշարժվել, կապույտ ձեռքը՝ «լռության» ազդանշան է, երեխաները պետք է լուռ կանգնեն տեղերում:

Երբ խաղավարը բարձրացնում է համապատասխան ազդանշանը, մասնակիցները համապատասխան վարք են դրսևորում:

Մեկը լսում է, մյուսը՝ տեսնում

Երեխաները խաղում են զույգեր կազմած: Զույգերից մեկը լինում է «լսող», մյուսը՝ «տեսնող»: Խաղավարը ինչ-որ զգացմունք արտահայտող ձայն է հանում, օրինակ՝ լացի ձայն կամ անհրաժեշտ բառն է ասում լսողի ականջին, այնպես, որ զույգը չլսի: Յուրաքանչյուր զույգում «լսողները» մնջախաղի միջոցով փորձում են «տեսնողներին» հասկացնել դրան համապատասխան բառը՝ լացը:

Գուշակելու դեպքում զույգերը փոխատեղվում են՝ «լսողները» դառնում են «տեսնողներ» և հակառակը:

Գնդակը ջրի վրա

Անհրաժեշտ պարագաներ՝ լոգարան կամ փչովի լողավազան, ջուր, սեղանի թենիսի գնդակ, կպչող ժապավեն

Լոգարանը կամ լողավազանը լցնում են ջրով: Լոգարանի կամ լողավազանի հանդիպակաց պատերին կպչող ժապավենով առանձնացնում են դարպասները: Բաժանվելով երկու խմբերի՝ երեխաները նստում են լոգարանի մոտ կամ խաղում են լողավազանում: Նրանք փչում են գնդակների վրա, որպեսզի, ուղղելով նրանց հակառակորդի դաշտը, գոլ խփեն: Փչելու փոխարեն երեխաները կարող են մատերով կտացնելով տեղաշարժել գնդակները:

Երաժշտական օղակներ

Անհրաժեշտ պարագաներ՝ մասնակիցների թվից մեկով պակաս մարզական օղակներ, երաժշտական ձայնագրություն:

Խաղավարը դասավորում է օղակները սենյակի հատակին: Ամեն օղակի մեջ մի երեխա է կանգնում: Մեկը դառնում է օղակ չունեցող: Հենց երաժշտությունը միացնում են, մասնակիցները սկսում են պարել, թռչկոտել մի օղակից

մյուսը՝ փոխելով տեղերը: Երբ անջատում են երաժշտությունը, յուրաքանչյուրն արագ գտնում է իր նախկին օղակը: Օղակ չունեցողը կանգնում է ուշացողի օղակում՝ գրավում է այն. եթե չի կարողանում դա անել, նա օղակ չունեցող է մնում: Դուրս մնացած խաղացողը դառնում է օղակ չունեցող: Խաղը շարունակվում է նույն պայմանով:

Ծիածան

Անհրաժեշտ պարագաներ՝ տարբեր գույների մոտավորապես թաշկինակի չափսով ոչ մեծ կտորներ ՝ դեղին, կարմիր, կապույտ, կանաչ, այնպես, որ ծածկի երեխայի գլխամասը, երաժշտական ձայնագրություն:

Յուրաքանչյուր մասնակից ընտրում է իր համար որևէ գույն, որին համապատասխան կտորը դրվում է երեխայի գլխին: Խաղավարը սենյակում իրարից հեռու տարբեր գույների կտորներ է դասավորում, երբ հնչում է երաժշտությունը, բոլորը սկսում են պարել՝ հետևելով, որ այդ կտորները չընկնեն գլխներից: Երաժշտության դադարի ժամանակ բոլորը վազում են իրենց համապատասխան գույնի կտորի մոտ: Եթե կտորը գլխից ընկնում է, խաղացողն այն վերցնում է դնում գլխին:

Խաղը խաղում են նաև խմբով՝ կարմիրներն իրենց անկյունը կամ տարածքն են ունենում, կանաչները՝ իրենց...

Հաղթում է այն խումբը, որն ավելի արագ է հավաքվում իր տարածքում: Խաղն ավելի արդյունավետ է դառնում հեծանիվներով խաղալիս: Այս դեպքում երեխաները կտորի փոխարեն համապատասխան գույնի գլխարկ են դնում:

Տարածքները կարելի է նշել համապատասխան գույնի դրոշակով:

Այս խաղը խաղում են նաև «գունավոր» օրերին:

Մոխրոտիկը (4 տարեկաններ)

Անհրաժեշտ պարագաներ՝ սեղան, նեղ բերաններով երկու շիշ, շատ ոլոռ:

Խաղի ընթացքը՝ Երեխաները բաժանվում են երկու հավասար խմբի:

Յուրաքանչյուր խումբ կանգնում է իր շշի մոտ: Խաղավարի ազդանշանով յուրաքանչյուր խմբի առաջին երկու երեխաները սկսում են ոլոռը լցնել իրենց շշերի մեջ: Մի քանի վայրկյան անց երեխաները խաղավարի ծափով իրենց տեղը զիջում են հաջորդ երկու խաղացողներին: Խաղի վերջում համեմատում են շշերում լցված ոլոռների քանակը: Որ խմբի ոլոռները շատ լինեն, այդ խումբն էլ կհաղթի:

**Բերքահավաք

Բաժանվեցինք երկու խմբի: Որոշակի հեռավորության վրա 2 արկղ (կարելի է նաև դույլ) դրեցինք: Խնձորը դրեցին դնչի տակ, տարան, գցեցին արկղի մեջ, վազելով ետ եկան, իրենց խմբի երկրորդ անդամին իրավունք տվեցին նույն բանն անելու: Խնձորը ձեռքով բռնելու իրավունք չունեին: Եթե ճանապարհին այն ընկնում էր, մասնակիցը այն վերցնում էր, դնում դնչի տակ և շարունակում խաղը:

Հաղթեց այն թիմը, որը խնձորներն ավելի արագ հավաքեց արկղի մեջ:

Խաղեր գրական ստեղծագործություններով

**Մեղուն

Երեխաները բաժանվում են 2 խմբի՝ մեղուներ և ծաղիկներ:

Խմբերի բաժանվելու համար առաջարկում ենք այս ձևը:

Երկու երեխա իրարից 3-4մ հեռու են կանգնում: Նրանցից մեկը, ոտնաթաթերը իրար դիմաց դնելով, իրար կպցնելով, 3 ոտնաթաթ առաջ է գալիս: Նույնն անում է մյուսը: Այսպես երեք-երեք ոտնաթաթ առաջ են գալիս, մինչև թաթերը «հանդիպում են»: Սովորաբար վերջինին տարածությունը պակասում է, և նա մեկ-երկու «թաթ» է քայլում: Հենց նա էլ առաջինն է իր ընկերներից մեկին ընտրում իր թիմի անդամ: Հետո մյուսն է ընտրում: Եվ այսպես հաջորդաբար, մինչև բոլորը կընտրվեն:

Մեղուները աչքերը փակում են, իբր դեռ քնած են: Ծաղիկները թաքնվում են տարբեր տեղերում:

Դաստիարակն սկսում է մեղուներին կանչելով արթնացնել.

- Պզզա՜ն, պզզա՜ն, պզպզա՜ն,
Պստի՛կ մեղու՝ տզտզա՜ն:

Մեղուներն արթնանում են, ճմլկոտվում, ձգվում և արտասանում.

- Դաշտ ու հովիտ կշրջենք,
Բարձր սարեր կթռչենք:
Սուսան, սմբուլ կծծենք,
Ու ոտներով թավամազ
Փոշի առած տուն կգանք:

Խաղավարն ասում է.

- Ծաղիկները թաքնվել են, նրանց փոշին ինչպե՞ս կհավաքեք:

Մեղուների խումբ՝

Բը՜զզ, ծաղիկ-ծաղիկ, որտե՞ղ ես:

Ձայն չկա:

Խումբ՝

- Ծափ-ծաղիկներ, ծալ-ծաղիկներ,
Կարմիր թերթով ալ ծաղիկներ,
Որտե՞ղ եք:

Սա ասելուց հետո մեղուները փնտրում են ծաղիկներին, ով ծաղիկ է գտնում, բերում է խմբասենյակի կենտրոնում գծած մեծ օղակի մեջ: Երբ բոլոր ծաղիկները գտնված են լինում, դերերը փոխվում են

Երեխաները կարող են նաև նոր կանոններ ավելացնել:

**Փիսոն (3-5 տարեկաններ)

Երեխաները կանգնում են շրջանածև: Կենտրոն է գալիս փիսոն: 4-5 երեխա կանգնում է շրջանից դուրս՝ որպես արծագանք: Բոլորը կքանստում են: Արտասանելիս ոտքի են կանգնում, կրկին կքանստում: Երբ խաղը յուրացնում են, ստացվում է բանաստեղծությանն համապատասխան ռիթմիկ շարժում: Սկզբում դաստիարակն է փիսո լինում, որ երեխաները բանաստեղծությունն անգիր սովորեն:

Խումբ - Փիսոն, փիսոն, մլավան
(փիսոն մլավում է):
Արծագանք - Մլավա՜ն, վա՜ն, վա՜ն, վա՜ն,:
Խումբ - Թավրիզ թողեց, փախավ Վան:
(Փիսոն վազվզելով պտտվում է շրջանում):
Արծագանք - Վա՜ն, վա՜ն, վա՜ն:
Խումբ - Լեզուն թաթխան, երկար պոչ,
(ցույց են տալիս),
Արծագանք- Պո՜չ, պո՜չ, պո՜չ:

Փիսո - Ինչ ուզեցի, ասին՝ ո՛չ:
(Լաց է լինում):
Խումբ - Ինչ որ ուզեց, ասին՝ ո՛չ:
Արծագանք - Ո՛չ, ո՛չ, ո՛չ:
Խումբ - Փիսոն գնաց գողեգող,
(փիսոն քայլում է գողեգող, երեխաներն էլ շշուկով են արտասանում):
Արծագանք - Գո՜ղ, գո՜ղ, գո՜ղ:
Խումբ - Փո՜րը՝ դատարկ, սիրտը՝ դող,
(փիսոն ցույց է տալիս փորն ու սրտի դողը):
Արծագանք - Դո՜ղ, դո՜ղ, դո՜ղ:
Խումբ - Դունչը մեկնեց կովկիթին,
(կատուն ուրախ-ուրախ դունչը բարձրացնում է վեր):
Արծագանք - Թի՜ն, թի՜ն, թի՜ն:
Խումբ - (մոտենում են փիսոյին և ձեռքով դիպչում փիսոյի ճակատին):
Փիսո՝ լացակումած - Շերեփն իջավ ճակատիս:
Արծագանք - Վա՜յ, վա՜յ, վա՜յ,
Շերեփն իջավ ճակատին:
Արծագանք - Տի՜ն, տի՜ն, տի՜ն:
Խումբ - Վա՜յ, վա՜յ, վա՜յ,
Շերեփն իջավ ճակատին:
Արծագանք - Տի՜ն, տի՜ն, տի՜ն:
Խաղի ընթացքում կարելի է ուրիշ ոտանավոր օգտագործել:

Աքաղաղն ու կտուրը

Երկու երեխա կանգնում են իրար դիմաց, ձեռքերը վեր են բարձրացնում և կտուրի ձև ստանում: Մի տղա փորի վրա պառկում է «կտուրի» տակ: Երեխաներից մեկն էլ աքլոր է դառնում: Մնացածը հավ մայրիկներ և աքլորիկներ են դառնում և կանգնում կտրի երեսու կողմերում: Բոլորն ունենում են համապատասխան գլխարկներ:

Աքաղաղը հիանում է ինքն իրենով, ծգվում-փքվում: Տղան «կտուրի» տակից ճայում է աքաղաղին.

Տղա - Մի աքաղաղ՝
Կարմրապեծիկ,
Իր ոտքերը՝
Երկա՜ր ու ծիգ (ցույց է տալիս աքլորին):
Աքաղաղ՝ (խիստ հպարտ)
- Ես՝ աքաղաղ կարմրապեծիկ,
Իմ ոտքերը՝
Երկա՜ր ու ծիգ:
Աքլորներն ու հավերը ցույց են տալիս աքլորին և կրկնում.
Աքլորներն ու հավեր՝
- Դու՝ աքաղաղ
Կարմրապեծիկ,
Քո ոտքերը՝
Երկա՜ր ու ծիգ:
Տղա - Կտրին տալով՝
վեր - վեր ծգվեց
Ու զարմանքով
Ի՞նչ հարց տվեց:
Հավիկ մայրիկներ (դիմում են աքլորներին)
- Ու զարմանքով
Ի՞նչ հարց տվեց:

Աքաղաղներ (դիմում են հավերին)
- Ու զարմանքով
Ի՞նչ հարց տվեց.
Աքաղաղ - Ես ո՞նց է, որ
Ես զոռ տալիս,
Էս կտուրը
(կտուրը շարժվում է)
Փուլ չի գալիս:
Ու կտուրը փուլ է գալիս, բոլորը փռվում են հատակին:

****Առավոտը գյուղում**

Արեգակը դուրս է եկել
Պսպղալով,
Շողքը երդից ներս է ընկել
Շողշողալով,
Ծիտը ծառին կչկչում է
Ծլվլալով,
Ձորում առուն քչքչում է
Վշվշալով,
Ծույլ տղայի քունն է տարել
Խռմփալով,
Տրեխները շունն է տարել
Մռմռալով:

Նախաճաշին մի քանի րոպե կար: Որոշեցի խաղալով «Առավոտը գյուղում» ոտանավորը սովորեցնել, մի անգամ խաղալ ու նոր նախաճաշել, որ երեխաները չձանձրանան, որ հետո նորից ցանկանան նույն խաղը խաղալ:
Բանաստեղծությունը արտասանեցի ու ներկայացրի:
Հետո կրկին արտասանեցի 1-ին քառատողը.

Արեգակը դուրս է եկել
Պսպղալով,
Շողքը երդից ներս է ընկել
Շողշողալով...

Բացատրեցի՝ ինչ է երդիկը, միասին պարզեցինք, թե շողը ինչպես ներս կմտնի երդիկից:
Այդպես՝ մնացած 2 քառատողերն էլ լսեցինք ու հասկացանք, պատկերացրինք, ծիծաղեցինք ծույլ տղայի վրա, պարզեցինք, թե մեր խմբում ով է շատ քնել սիրում:
Հետո բաժանվեցինք 4 խմբի՝ ձայն տվողներ, հարցնողներ, հաստատողներ և ուրախացողներ:
Ես ձայն տվողների խմբին միացա, որ երկտողերը հուշեմ:
Ձայն տվողների խումբը ձայն է տալիս.
- Արեգակը դո՞ւրս է եկել
Պսպղալով:
Հարցնողների խումբը հարցնում է.
- Արեգակը դո՞ւրս է եկել
Պսպղալով:
Հաստատողները պատասխանում են.
- Արեգակը դո՞ւրս է եկել
Պսպղալով:
Ուրախացողների խումբը ուրախացած, ոգևորված, թռվռալով բացականչում է.
- Արեգակը դո՞ւրս է եկել
Պսպղալով:
Հետո սկսում ենք 2-րդ քառատողով խաղալ:

Եվ այսպես մինչև ոտանավորի ավարտը: Առաջին խաղի ժամանակ երեխաները ոտանավորից դուրս համապատասխան բառեր էին օգտագործում:

Այսպես՝

Չայն տվողներն ասում էին.

- Ա՜յ մարդիկ,

Շողքը երդից նե՞րս է ընկել

Շողշողալով:

Հարցնողները.

- Ճի՞շտ, շողքը երդից նե՞րս է ընկել

Շողշողալով:

Քնելուց առաջ ես, տիկին Մարինեն ծուղրուղո՞ւ կանչեցինք, որ երեխաները հավաքվեն, պատրաստվեն քնելու, իսկ նրանք հիշեցին առավոտյան խաղը և ուզեցին խաղալ: Խաղացին, հետո քնեցին:

Առաջին անգամ մի քիչ դժվարացան, հետո վարժվեցին, ռիթմն ավելի արագացավ: Երրորդ, չորրորդ խաղից հետո բոլորը ոտանավորը անգիր գիտեին:

Ծափերով և ոտքերի դոփերով արտասանեցինք ոտանավորը:

Վերջում արդեն իրենք երաժշտություն էին հորինել ոտանավորի համար և երգում էին:

Պոչատ աղվեսը

Մինչև խաղալը երեխաները ստվարաթղթից կամ այլ նյութերից պատրաստում են խաղի առարկաները՝ պոչ, կաթի սափոր կամ ժամանակակից կաթի տարա, սափոր, ուլունք, խոտ, հոսող ջուր, ծու, կուտ:

Խաղացողները բաժանվում են 2 խմբի: Խմբերում դերաբաժանում են կատարում՝ տատ, աղվես, կով, արտ, աղբյուր, աղջիկ, չարչի, հավ, կալվոր: Երկու խմբերում էլ յուրաքանչյուր հերոս վերցնում է համապատասխան առարկա՝ տատը՝ պոչ, աղբյուրը՝ ջուր, արտը՝ խոտ...: Երկու խմբերը իրար զուգահեռ են կանգնում: Թիմերի անդամները կանգնում են մի գծով՝ իրարից մոտ մեկ մետր հեռավորության վրա, կերպարները խառն են կանգնում՝ ոչ հեքիաթի հերթականությամբ: Խաղն սկսվում է հեքիաթի վերջից: Խաղավարի հրահանգով թիմերի աղվեսներից յուրաքանչյուրը իր թիմի կալվորից վերցնում է կուտը, տալիս հավին, հավից ծուն վերցնում է, տալիս չարչուն, չարչուց ուլունքը վերցնում է, տալիս աղջկան, այսպես, մինչև տատից պոչը վերցնում է, գալիս կանգնում խաղավարի մոտ: Հաղթում է այն թիմը, որի աղվեսն առաջինն է հասնում խաղավարին:

v Հերոսները հերթով միանում են աղվեսին և գնացքի վագոնների նման ուղեկցում նրան: Այսպես՝ կալվորը կուտը տալիս է աղվեսին և գնում նրա ետևից՝ բռնելով նրա զգեստի ծայրից, հավը ծուն է տալիս աղվեսին և բռնում կալվորի զգեստի ծայրից, չարչին ուլունքն է տալիս և բռնում հավի զգեստից: Վերջում գնացք է ստացվում և գնացքն է կանգնում խաղավարի մոտ:

v Սկզբում թիմերը առանձին-առանձին են կանգնում: Հետո կարող են խառը կանգնել, աղվեսը պիտի ընտրի և խաղա իր թիմի հերոսների հետ:

v Վերջում տատն ուղարկում է կովի մոտ, կովը արտի մոտ..., մինչև հասնում է կալվորին, այնուհետև խաղը շարունակվում է նախկին ձևով:

Ծիտը

Նախապես պատրաստում են անհրաժեշտ առարկաները՝ յուրաքանչյուրից երկուական: Դրանք կարող են պայմանական նշաններով լինել՝ փուշ, լոշիկ, բոնիր, գոգնոց, գառ, կաթի աման, սրինգ, քար, հովվի թիկնոց, հարս, փեսա, հարսանքավորներ, փոքր գորգ՝ վրան նստելու համար, սազ, ճյուղեր: Խաղացողները բաժանվում են երկու խմբի, յուրաքանչյուրում՝ տատ, հովիվ,

հարսանիք, աշուղ, ծիտ, ծառ: Իրենց պատրաստած իրերը լցնում են արկղերի մեջ:

Տատը, հովիվը, հարսանիքը, աշուղը, ծառը կանգնում են իրարից 1-1,5 մետր հեռու:

Ծիտը արկղից վերցնում է առարկան և վազելով տանում տալիս է համապատասխան հերոսին: Հաղթում է այն թիմը, որի ծիտը առաջինն է բաժանում բոլոր առարկաները:

Այլ տարբերակ՝ Ծիտը վերցնում է առարկան, համապատասխան հերոսը վազելով գալիս է, վերցնում իր առարկան և գնում կանգնում իր տեղում:

**«Ճամփորդները»

Խմբից շուն և աքլոր են ընտրում: Մնացածները աչքերը կապում են և ձևացնում, իբր որսորդներ են: Շունն ու աքլորը կանգնում են կենտրոնում իրարից 2-3 մետր հեռու. մյուս մասնակիցները չպիտի իմանան նրանց կանգնած տեղերը: Հնչում է երաժշտությունը: Որսորդները փակ աչքերով սկսում են սենյակով մեկ պտտվել: Ով դիպչում է շանը կամ աքլորին, նա խաղից դուրս է գալիս:

Խաղը զարգացվում է. խաղից դուրս մնացողը բացում է աչքերը և աղվեսից փախչում, աղվեսն էլ բռնում է նրան, իր բույնը տանում:

**Կերպարային խաղ

Խաղ 4 փուլից

Բոլոր երեխաներն էլ հայրիկի ու մայրիկի կոշիկները հագնել սիրում են՝ որ նրանց պես լինեն, որ ավելի բածրահասակ լինեն, որ պարզապես ուրիշ լինեն: Վերազգեստավորման խաղը, բացի իր խորհրդանշականությունից, դրանից բխող գրոտեսկային էֆեկտի շնորհիվ միշտ զվարճալի է: Սա թատրոն է, միշտ հետաքրքիր է ուրիշի զգեստներ հագնելը, ինչ-որ դեր խաղալը, ոչ քո կյանքով ապրելը, օտար շարժուձևեր կրկնելը:

Ջ. Ռոդարի

Անհրաժեշտ պարագաներ

Պահարան «Հայրիկ-մայրիկ», որտեղ հավաքված են երեխաների հայրերի, մայրերի հին հագուստները, կոշիկները, հողաթափերը, որոնք նախապես ախտահանված են:

1-ին փուլ

Երեխաները հագնում են իրենց ուզած հագուստները, դաստիարակն էլ է զգեստափոխվում, բոլորը դառնում են «մեծ մայրիկներ կամ հայրիկներ», զրուցում են, թե ինչ են անում ամբողջ օրը, տոն օրերին ինչ են անում, ինչպես են անցկացնում իրենց «երեխաների» ծննդյան օրերը, ինչ հոգսեր ունեն, ինչն է իրենց բարկացնում, ինչի համար են ուրախանում: Զրույցից հետո խաղում են «Այլևս չեմ անի» խաղը:

- Եթե ես իմ հայրիկը լինեի, այսօրվանից այլևս չէի...

2-րդ փուլ

Երեխաները հագնում են հայրիկի կամ մայրիկի հագուստը, դարձյալ դառնում են «մեծ հայրիկ կամ մայրիկ»: 2-4 հոգանոց խմբեր են կազմում և

որոշում ներկայացնել ընտանեկան որևէ իրավիճակ: Դաստիարակը սկզբում կարող է առաջարկել, թե ինչ տեսարան ներկայացնի խումբը, որպեսզի երեխաները խաղի մեջ մտնեն:

Այսպես մի խումբը կարող է ներկայացնել, թե հայրիկն ու մայրիկն ինչպես են ամանորյա սեղան պատրաստում, ինչ են խոսում այդ ընթացքում, ով ինչով է զբաղվում:

Մյուս խումբը կարող է ներկայացնել հայրիկին ու մայրիկին խանութում երեխայի ծննդյան օրվա նվերը գնելիս:

Մնացած երեխաները դառնում են հանդիսատեսներ: Երբ բոլոր խմբերը խաղում են իրենց խաղը, հագուստները չեն փոխում, մնում են հայրիկ-մայրիկ: Դաստիարակը աննկատ դուրս է գալիս խաղից, կողքից դիտարկում է երեխաների խաղը: Ամբողջ օրը երեխաները հայրիկ-մայրիկ են մնում, այդ օրվա ողջ գործունեության ընթացքում իրենց պահում են դերին համապատասխան ամեն ինչ անում են «հայրիկավարի կամ մայրիկավարի». կերպարանափոխությունը տևում է ամբողջ օրը: Օրվա վերջում երեխաներն ու դաստիարակը որոշում են օրվա անունը, հագնում իրենց հագուստները և տուն գնում:

3-րդ փուլ

Այս փուլը պետք է խաղալ հաջորդ օրը, երբ նախորդ օրվա տպավորությունները դեռ թարմ են: Երեխան վերցնում է ծնողի որևէ հագուստ, հագնում է կամ հագցնում ձեռքին, դառնում է «այդ իրը»: Երեխաները խմբեր են կազմում և խաղում: Մեկը հողաթափ լինում և իրեն պահում է հողաթափի նման, մեկ ուրիշը գլխարկ կարող է դառնալ: Ուսուցիչը խաղին չի միջամտում: Երեխաները խաղում են այնպես, ինչպես տուն-տունիկ կամ իրենց ծանոթ այլ խաղ կխաղային:

«Գլխարկն» ու «հողաթափը» կարող են պարզապես զրուցել, որևէ գործ անել, «պատմություն խաղալ», իրենց կամ իրենց տիրոջ մասին պատմել: Կարևորն այն է, որ երեխաները խաղի մեջ լինեն և կերպավորեն իրենց ընտրած իրը:

4-րդ փուլ

Երբ երեխաները կսովորեն իրենց ընտրած իրին, «կմտերմանան» դրա հետ, կյուրացնեն, իրենցը կդարձնեն այն, հեքիաթ կհորինեն դրա շուրջ: Հեքիաթը հորինում են խմբով մեկը մյուսին շարունակելով, լրացնելով:

Ասենք «Ծակ ձեռնոցն ու մաշված հողաթափը», «Գլխարկն ու բարձրակրունկ կոշիկը», կամ «Իմ հայրիկի կոշիկն ու մայրիկի գոգնոցը»:

Ժողովրդական և այլ շարժուն խաղեր

Ափ ու պտղունց

Իրար դիմաց նստելով խաղացողները մրցում են հետևյալ ձևով: Խաղացողը բաց է անում ձախ ափը և աջ ձեռքի մատները պտղունց անելով հենում է ձախ ափամիջին: Հետո բացում է աջ ափը և ձախն է պտղունց անում ու հպում աջ ափամիջին անսխալ կարգով: Գործողությունը կատարվում է ակնթարթային արագությամբ մերթ մեկ, մերթ մյուս խաղացողի կողմից:

Ափ ու բռունցք

Մրցողները ձախ ձեռքը բռունցք են անում և դեպի վեր պարզած պահում: Աջ ձեռքը բաց վիճակում, մատները վեր պարզած, հենում են (թեթև խփում) ձախի բռունցքին: Ապա արագ փակելով աջ ափը, բաց են անում ձախ ձեռքը և խփում աջ բռունցքին:

Մատնամիջի կամ միջնամատի

Մեկը ձախ ձեռքը ամփոփում է աջ ձեռքի մեջ այնպես, որ մատների ծայրերն են երևում (մատները խաչվում են), և ցույց տալով խաչված ձեռքերը խաղակցին հարցնում է.

- Միջնամատիկ ո՞ր մատիկ:
- Ա՛ռ մատիկ միջնամատիկ,- ասում է խաղակիցը և ցույց տալիս միջնամատը:

Խաղացողը հարցնում՞է.

- Մատնեմատիկ ո՞ր մատիկ:

Խաղակիցը, մատը դնելով մատնեմատի վրա, պատասխանում է.

- Ա՛ռ մատիկ մատնեմատիկ:

Այսպես խաղում են այնքան, մինչև նշում են բոլոր մատները:

Մատ ճանաչել

Երեխաները լայն բացում են ձեռքի մատները (ճկույթից սկսած) և ասում.

- Ուլուլիկ, ուլկե-մերիկ,

էրկեն տաճիկ:

Ապա ձախ ձեռքով հերթով բռնելով աջ ձեռքի մատները ասում.

Բութմատն ասաց.- Գայլը եկավ:

Ցուցամատն ասաց.- Ո՞րտեղից եկավ:

Միջամատն ասաց. - Սարից եկավ:

Մատնեմատն ասաց. - Վեր կացեք փախչենք:

Ճկույթն ասաց. - Պստլիկ եմ, ճստլիկ եմ, ոտիկ չունեմ, թևիկ չունեմ, ինչպե՞ս փախչեմ:

Ծափոցիկ

Երկու հոգի իրար դիմաց նստում, ձեռքերը ծնկներին են խփում և համաչափ շարժումով բարձրացնելով մինչև կուրծքը ծափ են տալիս և ապա դեմդեմի ափերն իրար են խփում, ապա աջերն իրար, ձախերն իրար են խփում, այնուհետև դարձյալ ծափ տալով ծնկներին են խփում ու նորից սկսում: Այս գործողությունը նախ չափավոր և ուշադրությամբ են կատարում, ապա աստիճանաբար արագացնելով այնքան շուտ-շուտ են ծափ տալիս, կարծես լարված մեքենայից պատրաստված երկու զույգ ձեռքեր են, որ ծափ ծափի, ափ ափի, աջ աջի, ձախ ձախի զարմանալի ճշտությամբ բախվում են իրար:

Թզուկներ և հսկաներ

Խաղացողները կանգնում են շրջանով: Երբ խաղավարն ասում է հսկաներ և ձեռքը վեր բարձրացնում, բոլորը բարձրանում են ոտնաթաթերին, իսկ եթե ասում է թզուկներ և ձեռքերը ներքև իջեցնում, կքանստում են: Խաղավարը խաղի ընթացքում ձեռքերի սխալ շարժումով շփոթեցնում է երեխաներին, պետք է ուշադիր լինեն, ով շփոթվում է, խաղից դուրս է գալիս:

Չիլինա

Երեխաները կլոր շրջան են կազմում, իրար ձեռք բռնած սկսում են պտտվել: Պտտվելու ընթացքում երգում են «Չիլինա-զիլինա, հո՛պ զիլինա, զիլինա»: Երբ լսում են «հո՛պ զիլինան», պետք է միանգամից բոլորը կքանստեն առանց ձեռքերը բաց թողնելու: Այն երեխան, ով չի հասցնում կքանստել, անցնում, նստում է շրջանի մեջտեղում, իսկ մյուսները շարունակում են խաղը, մինչև շրջանում կմնա երեք երեխա:

Թաշկինակ

Երեխաները շրջանաձև կքանստում են: Նրանցից մեկը վերցնում է թաշկինակն ու սկսում է արագ քայլել շրջանով: Մի քանի պտույտ գործելուց հետո թաշկինակն աննկատելիորեն գցում է երեխաներից մեկի ետևը: Ում ետևում գտնվում է թաշկինակը, պետք է արագ վերցնի այն, վազի գցողի ետևից և բռնի թաշկինակ գցողին, իսկ գցողը պետք է հասցնի կքանստել այն տեղում, որտեղ նստած էր թաշկինակ վերցնողը: Եթե մինչ այդ նա բռնվում է, համարվում է պարտված, բռնողը դառնում է թաշկինակ գցող:

Մուկն ու կատուն

Խաղում են 20-25 հոգով: Երեխաներից մեկը ընտրվում է մուկ, մյուսը կատու: Երեխաները ձեռք ձեռքի բռնած շրջան են կազմում, մուկը վազում է շրջանի շուրջը կատվից փախչելով: Երեխաները օգնում են մկնիկին, որպեսզի մտնի շրջանի մեջ, որ կատուն չկարողանա բռնել նրան: Երբ բռնում է, ուրիշ զույգ է դառնում մուկ ու կատու:

Մուկ-կատու

Երեխաները ձեռք ձեռքի տված շրջան են կազմում նախապես մեկին մուկ, մյուսին կատու նշանակելով: Մուկը դրսից որևէ թևամիջով ներս է մտնում և կատվին խաբելով դուրս է գալիս մեկ ուրիշ տեղով: Կատուն հետապնդում է նրան և նույն տեղերով մտնելով ու դուրս գալով աշխատում է բռնել նրան և դերը նրա հետ փոխել: Բայց երբ մկանը շուտ բռնելու տենչով տարված կատուն ոչ թե նախորդի անցած ճանապարհով է անցնում, այլ ուրիշ թևամիջով, այդ ժամանակ նրան փոխարինում է շրջանում կանգնած մեկը խաղը նույնությամբ շարունակելով:

Գայլն ու ոչխարը

Խաղացողներից մեկը դառնում է ոչխար, մյուսը գայլ: Մնացածները ձեռք ձեռքի բռնած շրջան են կազմում են, իրենց մեջ են առնում ոչխարին և աշխատում նրան պաշտպանել գայլի հետապնդումներից: Գայլը, մնալով դրսում, հարձակումներ է գործում փակ շրջան կազմողների վրա ջանալով խզել ձեռքերի շղթան և ներս մտնել ոչխարին բռնելու: Երբ գայլին հաջողվում է շրջանը որևէ տեղում կտրել, այդ ժամանակ ոչխարին փախցնում են փակ

շրջանից դուրս և գայլին են բռնում «փարախի մեջ» հնարավորություն չտալով հասնել ոչխարի ետևից: Եթե գայլին հաջողվում է ներսից կտրել ներքևի շղթան և դուրս գալ, ոչխարին դարձյալ ներս են առնում և այսպես շարունակվում է այնքան ժամանակ, մինչև որ գայլին հաջողվում է բռնել ոչխարին: Դրանից հետո ոչխարը դառնում է գայլ, մի ուրիշ խաղացող ոչխար:

Գա՛յլ, թող գիշերենք քեզ մոտ

Խաղում են 10-15 հոգով: Երեխաներից մեկը դառնում է գայլ, իսկ մնացածը նապաստակներ: Անկյունում դրվում է գայլի տնակը կամ որևէ երկրաչափական պատկեր է գծվում (շրջան, ուղղանկյուն...) որպես գայլի տուն: Նապաստակները մոտենում են տնակին ու ասում.

- Գա՛յլ, թող գիշերենք քեզ մոտ:

Գայլը գլուխը թեքում է մի կողմ և բարձրաձայն մտածում. «Լավ, կթողնեմ, բայց գիշերը կուտեմ»: Երեխաները մտնում են գայլի տնակը: Խաղավարն ասում է.

- Երեկո է, ուշ երեկո: Մոտենում է գիշերը: Արդեն գիշեր է:

Վերջին բառի հետ երեխաները պետք է փախչեն գայլից: Գայլը առաջինը ում բռնեց, նա է գայլ դառնում:

Գործնագործ

Երեխաները բաժանվում են երկու հավասար խմբերի (կարող են լինել աղջիկների և տղաների կամ խառը խմբեր): Մի խումբը դառնում է խփողների խումբ, մյուսը խաղացողների: Խփողները կանգնում են իրարից մի քանի մետր հեռավորության վրա, խաղացողները մտնում են մեջ ու սկսում են խաղալ: Խփողները հերթով փորձում են գնդակով խփել խաղացողներին: Ամեն անգամ, գնդակը մեկին կպչելուն պես, խաղացողը պետք է դուրս գա խաղից:

Երբ խաղի մեջ մնում է մի մասնակից և կարողանում է մինչև տասը հաշիվը խաղալ, բոլոր խաղացողները մտնում են խաղը շարունակելու, իսկ եթե մինչև տասը հաշիվը չի կարողանում ազատել, իրենք դառնում են խփողներ, իսկ խփողները խաղացողներ:

Աղջիկ փախցնոցի

Երեխաները զույգերով իրար ետևից կանգնում են զույգերի ծեռքերը վերև պահած ափերն իրար մեջ: Նրանցից մեկը, ով զույգ չունի, գալիս է առաջ ու, նրանց արանքով անցնելով, բռնում է որևէ մեկի ծեռքից, երկուսով գնում են, կանգնում վերջում, իսկ այն մասնակիցը, ում զույգին տանում են, գալիս է առաջ ու կատարում նույն գործողությունը:

Վերևի՞նը, թե՞ ներքևինը

Խաղը խաղում են 30 հոգիանոց խմբով: Խաղում են բակում կամ դաշտում: Բաժանվում են 2 հավասար մասի, երբեմն նույնիսկ չպահպանելով շարքը նստում են իրար դիմաց: Յուրաքանչյուր կողմ ունենում է որոշ քանակութամբ մանր քար կամ լոբի: Խաղը սկսողը բռունցքներից մեկում մի լոբի կամ քար է պահում և բռունցքներն իրար վրա դնելով դիմացինին ասում է.

- Վերևի՞նը, թե՞ ներքևինը:

Մյուս խումբը, միասին որոշելով, առաջարկում է բաց անել իրենց ուզած բռունցքը: Պահված լոբին գտնելու դեպքում խմբերի դերերը փոխվում են: Գտնողները «հակառակորդներից» նրանց թվով լոբի են ստանում, իսկ չգտնելու դեպքում իրենք են նրանց նույնքան լոբի տալիս:

Հաղթում է այն խումբը, որը շատ լոբի է հավաքում:

Ալիս-պալիս

Երկու և ավելի աղջիկներ մի խումբ են կազմում. նրանցից մեկը (վիճակահանությամբ են որոշում, թե՝ ով) մի փոքր հեռանում է և երեսը մի կողմ արած, սպասում է հրավերի: Խմբից մեկն էլ իր ափի մեջ պահում է նախապես պայմանավորված որևէ պարագա՝ մատնոց, թել, չիր և այլն: Որպեսզի իրը պահելը խմբից հեռացողին անհայտ մնա, բոլորը միասին բռները սեղմում, դնում էին գետնին:

Խմբից հեռացողն այդ ժամանակ մոտենում է և իր ձեռքը հերթով դնելով ընկերների ձեռքերի վրա՝ հետևյալ ոտանավորից յուրաքանչյուր ձեռքի համար մի բառ էր արտասանում.

- Ալիս, ալիս,
Մելի յարիս,
Ժամտան դուռը բաց:
Ըստում, ընդում
Սարե տնդում,
Վեր տամ ըստում,
Գտնեմ ընդում:

Եթե ոտանավորի վերջին բառն ընկնի առարկան պահողի ձեռքի վրա, իրը կմնա գտնողին, իսկ եթե չգտնի, ինքը կտա որևէ առարկա:

Կաղին խաղալ

Խաղում են մի խումբ երեխաներով:

Բռի մեջ տեղավորում են կաղինները, ցույց են տալիս դիմացինին և հարցնում՝ զույգ է, թե կենտ: Դիմացինը ճիշտ գուշակելիս ստանում և սխալվելիս նույնքան կաղին է տալիս պահողին: Իբրև գուշակման նշան համարում են պահողի ձեռքի երեսի ակոսները, որոնք գոյանում են բռամիջի կաղիններից:

Աղվեսուկ

Խաղացողները ձեռք ձեռքի տված և ոտքերը լայն բաց արած՝ շրջանածև կանգնում են: Շրջանից դուրս մնում է երկու հոգի, որոնցից մեկը ստանձնում է բարակի և մյուսը՝ աղվեսի դերը: Վերջինս հալածվում է բարակից և ծեծվելու վտանգից խուսափելու նպատակով աղվեսային պտույտներ գործելով՝ շրջան կազմածներից մեկի ոտքերի արանքով մտնում է շրջանի մեջ: Եթե բարակը բռնում է աղվեսին, նրա դերը ստանձնում է շրջան կազմողներից մեկը:

Խաշիլ ճաշ

Երեխաները 10 և ավելի հոգով կիսաշրջան են կազմում, որոնցից առաջինը մայր է կոչվում: Մեկը թռչուն է դառնում, նստում կիսաշրջանի մեջտեղը, հող կամ ավազ է լցնում դիմացը դրված ամանի մեջ: Կիսաշրջանը մոր առաջնորդությամբ պտտվում է նրա շուրջը: Մայրը թռչունին հարցնում է

- Ա՛յ թռչուն, էդ ի՞նչ ես եփում:
- Խաշիլ-փափա,- պատասխանում է թռչունը:
- Ո՞ւմ համար:
- Իմ ճտերի:
- Կտա՞ս իմ ճտերին:
- Չեմ տա. ինչո՞ւ տամ. թե քաջ են, թող իրենք վերցնեն:

Այս խոսքի վրա մայրը կամ ճտերից մեկը աշխատում է թռչնին հրել և անպայման վայր գցել, ամանը փախցնել: Հաջողվելու դեպքում հրողն ու թռչունը դերերը փոխում են, իսկ եթե ոչ՝ շարունակում են խաղալ այնքան ժամանակ, մինչև որ հաջողում են:

Ծուղրուղու

Խումբը շրջանածև պպզում է, իսկ մեկը մի թաշկինակը ձեռքին, կանգնում է շրջանի մեջտեղը: Վերջինս կոչվում է շուն, իսկ մյուսները աքաղաղներ: Աքաղաղները այս ու այն կողմից կանգնում, «ծուղրուղու» են կանչում և իսկույն պպզում: Շունն աշխատում է ձեռքի թաշկինակով խփել աքաղաղին կանգնած ժամանակ: Եթե հաջողվեց, ինքը կդառնա աքաղաղ, իսկ աքաղաղը՝ շուն:

Պուճաղ-պուճաղ

Խաղում են 5 հոգով: 4 մասնակիցներ գրավում են սենյակի անկյունները, իսկ հինգերորդը սենյակի կենտրոնում «պուտ» է դառնում: Շարժման նշանը տալուն պես անկյունների 4 երեխաները անմիջապես տեղափոխություն են անում, իսկ «պուտ» եղողը ձգտում էր օգտվել տեղաշարժից և գրավել այն անկյունը, որին աշխատում է հասնել դանդաղաշարժ մեկը, և վերջինիս հետ փոխում է իր դերը:

Պուտ-պուտ

Խաղացողները շրջանածև պպզում են: Յուրաքանչյուրի գլխավերևում կանգնում է մի խաղացող: Պպզողները կոչվում են «պուտ», նրանց երբեմն փոխարինում են փոքր-ինչ մեծ քարեր: Կանգնողներից միայն մեկը «պուտ» չի ունենում և կոչվում է շուն: Շունը մոտենում է մի «պուտի» և հարցնում կանգնողին.

- Ի՞նչ ուտենք:
- Չիր ու չամիչ:
- Որտեղի՞ց ուտենք:
- Գողանանք՝ ուտենք:
- Ōափ տանք, վազենք,- ասում է շունը:

Եվ երկուսն էլ ծափ են տալիս ու հակառակ կողմերով վազում: Եթե շունը, շրջան անելով, մյուս վազողից շուտ հասավ նրա «պուտին», ինքն է լինում նրա տերը, իսկ մյուսը դառնում է շուն և գնում է միևնույն հարցումը տալիս հարևան «պուտին»: Իսկ եթե շունը չհասավ, դարձյալ մնում է շուն և գնում է, նույն հարցն առաջարկում մյուս «պուտին»: Վազելիս եթե մեկը շրջանի միջով անցնի, նրան պատժում են:

Ես բարձր եմ, դու՝ ցածր

Խաղում են 2-ական հոգով՝ մեծ մասամբ հոգնած մեջքերը հանգստացնելու համար: Խաղացողները կանգնում են մեջքերն իրար կպցրած և երկուսի թևերը մեկը մյուսին շղթայած: Այդ դրությամբ մեկընդմեջ կռանալով՝ մեկը մյուսին առնում է իր շալակը: Շալակողի հարցումով նրանց միջև տեղի է ունենում հետևյալ խոսակցությունը:

- Տակդ ի՞նչ կա:
- Վերմակ, ներքնակ:

Ապա շալակողն էր հարցնում:

- Վրեդ ի՞նչ կա:
- Աստղ ու լուսնյակ:

Խաղացողները կարող են կամաց-կամաց արագացնել այդ գործողությունը:

Աչքկապուկ

7-20 խաղացողներ իրենցից մեկի աչքերը կապում են և շրջապատելով սկսում կսմթել: Կապվածը ձգտում է նրանցից մեկին բռնել և իր դերը նրա հետ փոխել:

Ջանգակի խաղ

Ծառից կամ գետնում ամրացրած փայտից երկու պարան են կապում, խաղացողներից երկուսի աչքերը փակում թաշկինակով ու պարանները տալիս ձեռքերը: Դրանցից մեկի ձեռքում զանգակիկ է լինում, որը սկսում է կամաց-կամաց ծնգծնգացնելով վազել, իսկ մյուսը նրա ետևից է ընկնում, որ լախտով խփի:

Այս խաղը միշտ ծիծաղելի է լինում, որովհետև խաղացողները չտեսնելով ակամա միմյանցով են ընկնում, կամ թե լախտավորը, կարծելով, որ զանգակավորը հասել է, լախտը վրա է բերում, բայց բոլորովին հակառակ կողմն ու դատարկ օդին է խփում:

Ճլոթ

Վիճակով մեկը կանգնում է պատի առջև, ձեռքերը մեջքին տանում, միացնում: Մեկը դառնում է Պապ: Նա թաշկինակով կամ ձեռքով ծածկում է սրա աչքերը: Մյուս խաղացողները ետևից մեկ-մեկ մոտենում են և խփում նրա ձեռքերին:

Պապը հարցնում է.

- Ո՞վ է խփողը:

Եթե գուշակում է, խփողը կանգնում է նրա տեղը:

Կարմիր կոճակ

Երեխաները նստում են աթոռներին, ձեռքերը մեկնում են առաջ ափերն իրար կպցրած: Խաղավարը իր ափի մեջ թաքցնում է կարմիր կոճակը, մոտենում է յուրաքանչյուր երեխայի ու նրա ափի մեջ մտցնելով իր ձեռքերը կոճակը թաքուն գցում է երեխաներից մեկի ձեռքերի մեջ: Ընթացքում կարող է որևէ խաղերգ արտասանել: Վերջացնելուց հետո ասում է.

- Կարմի՛ր կոճակ, դո՛ւրս արի:

Կոճակ ստացած երեխան պետք է արագ դուրս թռչի, որ իրեն չհասցնեն բռնել: Եթե նրա կողքի կանգնած երեխան կամ մեկ ուրիշը կարողանում է բռնել նրան, դառնում է խաղավար:

Համրախաղ

Մանուկները մի քանի հոգով մի մայր են ընտրում, որը նախապես գծված շրջանի մեջ տեղավորվելով, մոտենում է շուրջը կանգնած խաղացողներից մեկին, զանազան ծիծաղաշարժ շարժումներ անում, կանչում է որևէ թռչունի նման ու հրամայում այդ երեխային կրկնել իր արածները հարևանի առանց ծիծաղելու: Եթե հանձնառուն չի կարողանում ծիծաղը պահել կամ ճշտորեն կրկնել իր ցույց տվածը, բոլորը նրան թեթևակի խուտուտ են տալիս, իսկ եթե կարողանում է, մտնում է շրջան և շարունակում խաղը:

Դաշտի չոբան

Խաղին մասնակցում է 5-10 երեխա: Երկու ընտրվածներից մեկը հովիվ, մյուսը գայլ է կոչվում: Գառները բռնում են իրար փեշից և, երբ գայլը նրանց է մոտենում, գառան պես մայում են: Գայլը նրանց մոտենալիս ասում է.

- Սարի գել եմ, կտանեմ:

Դաշտի չոբան եմ, չեմ տա.- պատասխանում է չոբանը:

Գայլը հերթով փախցնում է գառներին, տանում իր բույնը: Հովիվն աշխատում է չթողնել: Երբ բոլորին փախցնում է, հերթը հասնում է նաև չոբանին, որին տանելուց հետո խաղը վերսկսվում է գայլի ու չոբանի դերերի վերաբաշխումով:

Ոչխար-ոչխար

Տղաներից մեկը դառնում է հովիվ, երկուսը՝ շներ, մեկը՝ գայլ, իսկ մյուս երեխաները՝ ոչխար, այծ ու գառ: Իրարից 50-80 քայլ հեռավորության վրա ոչխարների համար մակաղատեղ (գիշերը հավաքվելու տեղ) և գայլի համար բույն են գծում: Երևակայում են, թե մութը վրա է տալիս: Հովիվն արոտից ոչխարը մակաղատեղ է բերում: Բոլորը պառկում և քնած ձևանում: Գայլը գաղտագողի գալիս, հանդարտիկ մտնում է մակաղատեղը և բռնում որևէ ոչխարի, որը պարտավոր է հնազանդորեն հետևել գայլին: Այդ ժամանակ ոչխարի քնած հոտը խրտնում, դես ու դեն է փախչում, որից հովիվն ու շներն արթնանում են: Հովիվը շներին հո՜յ, հո՜յ, հո՜յ բացականչությամբ հորդորում է գայլին բռնել և ոչխարին ազատել, իսկ գայլը ձգտում է րոպե առաջ ոչխարին հասցնել իր բույնը: Երբ շները գայլին հասնում ու բռնում են մինչև բույնը հասնելը, ոչխարին ազատում են, հակառակ դեպքում ոչխարը մնում է գայլի մոտ:

Խաղը այսպես պարբերաբար կրկնվում է, մինչև որ գայլը բռնվում է, կամ ընդհակառակը, ոչխարն է վերջանում:

Գել-գել

Երեխաներն իրենց գլխարկները ոչխար են համարում և շարքով, իրարից երկու քայլ հեռու, գետնին դնում: Գլխարկատերերը՝ որպես շներ, նստում են քիչ հեռու՝ գլխարկ-ոչխարների ետևը և հսկում ընդհանուրին: Նրանցից մեկը դառնում է հովիվ: Ոչխարներից 30-40 քայլ հեռու գայլն է տեղավորվում իր բնով: Նա տոտիկ-տոտիկ գալիս, մոտենում է ոչխարին, մեկ-մեկ վերցնում, հոտոտում է, ապա միամտացնելով շներին ուզում է խաբել-փախցնել «գլխարկ–ոչխարը»: Շներն իսկույն վեր են ցատկում: Գայլը, եթե վստահ չի լինում, թե կարող է ոչխար փախցնել, իսկույն գլխարկը վայր է դնում, որ շները նստեն: Ապա անցնում է հաջորդ «ոչխարին», հոտոտում է, կամ տեղն է դնում, կամ նորից է փորձում և հարմար վայրկյանին փախցնում: Հովիվն անմիջապես աղմուկը գցում է, շներին հրահրում և վերջիններիս հետ հետապնդում գայլին:

Եթե գայլին կեսճանապարհին բռնում են, ոչխարը ետ են առնում և նրան «ծեծում»: Եթե գայլին հաջողվում է բռնվելուց խուսափել և «ոչխարը» բույնը հասցնել, սրա տեր շանը ևս տեղափոխում է իր բույնը: Աստիճանաբար բոլորին այս ձևով իր բույնը տանելու դեպքում գայլը հաղթող է համարվում, և նրա դերը հովվի հետ փոխելով՝ խաղը նորից են սկսում:

Գդակ թռցնել

Խաղում են 8-10 հոգիանոց երկու խմբով: Խմբերը կանգնում են 50 քայլ իրարից հեռու սահմանների վրա: Վիճակահանությամբ խաղն սկսող խմբից մի հոգի գալիս է մյուս խմբից մեկի գլխարկը հանկարծ թռցնում ու փախչում հասնելու իր խմբին: Գլխարկատերը պետք է հասնի և նրան ձեռքով դիպչի մինչև տեղ հասնելը: Այդ գործողությամբ գլխարկն ազատում է և խաղը շահում: Հակառակ դեպքում ինքը գերվում է, իսկ խումբը տանուլ է տալիս: Խաղը վերսկսում է շահող խումբը:

Խաղը շարունակում են, մինչև խմբերից մեկը գերի մյուսի բոլոր անդամներին:

Թաթիկ-լաթիկ

Խաղացողները բաժանվում են 2 խմբի: Խաղում են ընդարձակ և հարթ վայրում: Խաղահրապարակի կեսից անցնում է մի սահմանագիծ, որի երկու կողմերում իրարից որոշակի հեռավորության վրա, կանգնում են խաղացողները: Սահմանի մի կողմից մի երեխա (մարտիկ) է դուրս գալիս և առանց սահմանագիծը անցնելու գծի երկարությամբ իր խմբի կողքին վազում և աշխատում է մյուս խմբի երեխաներից մեկի շորին՝ լաթիկին, իր ձեռքով (թաթիկով) կպչել: Խաղացողը, հակառակորդի շորին ձեռք տալով, նրան շարքից հանում է և քարացնում:

Մյուս կողմի մասնակիցները, հետևելով նույն կանոններին, առանց խախտում անելու, փորձում են բռնել մյուս կողմում խաղացողի թաթիկը և տանում իրենց կողմն ու քարացնում: Հետո մյուսն է դուրս գալիս և շարունակում խաղը: Երբ ամեն կողմից մի հոգի է մնում, այդ երկու խաղացողները գալիս են կենտրոն և իրար զուգահեռ երեք գիծ գծում: Մեջտեղի գիծն ազատ է մնում. խաղացողները իրենց ոտնաթաթերը եզերքի երկու զուգահեռներին հասցնում, ապա աջ թաթիկներն իրար տալով սկսում են միմյանց քաշել: Մրցակցին իր սահմանի մեջ քաշել կարողացողի խումբը հաղթող է ճանաչվում:

Արդար-մեղավոր

Խաղացողներից մեկը գայլերի առաջնորդ (պետ) է ընտրվում, մյուսը՝ գառների: Կարող են խմբերին տարբեր անուններ դնել՝ կրակ ու ջուր, ոտք ու ձեռք... Երրորդ մասնակիցը դառնում է անուն դնող, որը մյուս բոլոր խաղացողներին անուններ է դնում՝ քնած մոծակ, կորած մրջյուն...: Անուններ դնելուց հետո անուն դնողը գնում նստում է գայլերի և գառների առաջնորդների մեջտեղում, որոնք հերթով նրա «դուռը» ծեծելով՝ սկսում են հետևյալ երկխոսությունը.

- Չը՛խ-չը՛խկ:
- Ո՞վ է:
- Գայլն եմ:
- Ի՞նչ ես ուզում:
- Ես քնած մոծակ եմ ուզում...:

Տրված անվան տերն անմիջապես գալիս է և նստում գայլերի ետևը: Ապա գառների պետն է դուռը ծեծում և հարցնում.

- Չը՛խ-չը՛խկ:
- Ո՞վ է:
- Գառն եմ:
- Ի՞նչ ես ուզում:
- Ես ուզում եմ ...կոտրած խաղալիք:
- Չկա՛:
- Ես ուզում եմ կորած մրջյուն...:

Կանչվածը գալիս, նստում է գառների պետի ետևը: Եվ այսպես պետերը երկխոսությունը կրկնում են մինչև վերջին անվանատերը, որից հետո 2 խմբի բաժանված մասնակիցները, իրար մեջք բռնած, շղթա են կազմում, սկսում են խմբերով իրար քաշել: Որ խմբին որ հաջողվում է շղթան կտրել և մասնակցին քաշել իր կողմ, այդ խումբը ճանաչվում է հաղթող:

Հինգ այծատեր

Խաղում է 5-10 երեխա:

Նրանք, առանց իրար ձեռք բռնելու, շրջան են կազմում: Մեկը ծևանում է 1, երկրորդը՝ 3, երրորդը՝ 5 այծի տեր, ապա հաջորդաբար՝ 7,10,15: Նրանցից յուրաքանչյուրը պետք է հիշի իր այծերի թիվը: Խաղն սկսելիս խաղակիցներից մեկը հայտարարում է.

- Գյուղին հարկ է եկել, ո՞վ պիտի տա:
- Թող երեք այծատերը տա,- պատասխանում է մյուսը:
- Հաշվիր գյուղի վրա, թող գյուղը տա, երեք այծատերն ինչո՞ւ տա,- վրա է տալիս երեք այծատերը:
- Գյուղն ինչո՞ւ տա, թող 5 այծատերը տա,- ասում է հաջորդը:

5 այծատերը անմիջապես վրա է բերում.

- Ինչո՞ւ 5 այծատերը, թող 15 այծատերը տա:

Խաղն այսպես շարունակվում է այնքան, մինչև մեկը շփոթվում է: Պարտվողը խաղից դուրս է գալիս կամ որևէ «պատիժ» է ստանում:

Մանկական զինվորական խաղ

Խաղում են 5-6 տարեկան երեխաները 6 հոգով: Փորում են մի փոքրիկ փոս և նրանից 4-5 ոտնաչափ հեռու գծում մի գիծ: Վերցնում են 5 փոքր կլոր քար: Խաղացողները հերթով կանգնում են գծի վրա և հինգ քարն էլ միասին գցում փոսը:

Ում նետած քարերից ոչ մեկը չի ընկնում փոսիկի մեջ, դառնում է հրամանատարի ծի: Ով գցում է քարերից մեկը, դառնում է թագավորի ծի: Երկու քար գցողը վեզիրի ծի, երեքը՝ վեզիր, չորսը՝ թագավոր, հինգը՝ հրամանատար: Եթե փոսի մեջ երկու հոգի միևնույն քանակի քարեր են գցում, ապա նրանք հերթով պետք է գցեն, որպեսզի նշված դերը ստանա նա, ով դրա համար պահանջված քանակի քարեր կգցի կամ ձեռք կբերի այլ պաշտոն:

Դերաբաժանումն ավարտվում է: Ձիերը շալակում են տերերին: Հրամանատարը հրամայում է ձիերին տանել այսինչ տեղը և նորից բերել այստեղ, ըստ որում՝ հրամանատարից է կախված տարածության շատ կամ քիչ լինելը: Երբ հրամանը կատարվում է, խաղը վերսկսվում է հրամանատարի նոր նետումով: Եթե նրան հաջողվում է մնալ հրամանատար, նա նախկին ձիերին «շալակեցեք» հրամանն է տալիս: Ձիերը շալակում են նույն տերերին և կատարում հրամանատարի նոր հրամանը:

Երբ հերթական նետման ժամանակ հրամանատարը վրիպում է, և նրան մեկ այլ դեր է բաժին ընկնում, նոր դերաբաժանում է կատարվում նախկին սկզբունքով, բոլորը նորից են ընտրվում:

Խաղը սկսվում է նոր հրամանատարի կարգադրությամբ:

Գող և փաշա

Վիճակահանությամբ մեկը փաշա է դառնում, երկու-երեքը՝ թիկնապահ, մեկը՝ շուն, մի քանիսը՝ գող: Թիկնապահներն ու շան պաշտոնը վարողը նստում են փաշայի շուրջը: Նրանցից քիչ հեռու մեծ շրջան են գծում, որի մեջ գողերն են թաքնվում, դա գողերի տունն է: Փաշայի խումբը կեղծ քուն է մտնում: Քիչ հեռվում թաքնված «գողերը» գալիս են նրանց մոտ, նախապես դրված իրերը

հափշտակում, փախչում: Շունն անմիջապես սկսում է հա՜ֆ, հա՜ֆ, հա՜ֆ հաչել և արթնացնել քնածներին: Եթե արթնացած թիկնապահներն արագ հետապնդում, բռնում են գողերին և բերում փաշայի մոտ, փաշան սրանց զանազան «պատիժներ» է սահմանում, որը կիրառելուց հետո խաղը նույնությամբ կրկնվում է: Եթե մինչև «տուն» հասնելը թիկնապահները չեն կարողանում գողերին բռնել, դերերը փոխվում են:

Յոթ քար

Խաղում են 10-20 մասնակից բակում, դաշտերում: Համեմատաբար տափակ 7 քարեր իրար մոտ են դնում: Բաժանվում են երկու խմբի և վիճակահանությամբ որոշում որ խումբն է քարերը հավաքում: Մյուս խումբը գնդակով հետապնդում է և աշխատում թույլ չտալ, որ քարերը դնեն իրար վրա: Եթե խաղի ընթացքում փախչող խմբի անդամներից մեկը կամ մի քանիսը չեն խփվում, այլ խույս տալով գնդակից շրջանցում են և կարողանում են ցրված յոթ քարը շարել միմյանց վրա ու հաշվել մինչև 7 թիվը, փախչողները շահում են մեկ «փալան»: Երբ հետապնդվողը նետած գնդակը բռնում է օդի մեջ նախքան դրա գետնին դիպչելը, ապա այս դեպքում գնդակ բռնող խումբը շահում է մեկ «փալան»:

5 քար

Խաղում են 10 հոգով:

Քաշում են մի գիծ, որի երկարությամբ յուրաքանչյուր խաղացող իր համար մի փոս է փորում: Խաղացողներից մեկը կանգնում է փոսերի շարքի մի ծայրին, և մի ուրիշը հակառակ ծայրին: Կանգնողներից մեկը փոքր գնդակը գլորում է փոսերի շարքի երկարությամբ: Երբ գնդակն ընկնում է որևէ փոսի մեջ, սրա տերը վազում, վերցնում է գնդակը և փորձում դրանով խփել որևէ մեկին: Եթե կպչում է, ապա խփվողի փոսի մեջ մի քար են գցում: Հենց որ խաղացողներից որևէ մեկի փոսում հավաքվում է 5 քար, նրա աչքերը կապում են և գնդակը տանում են որևէ տեղ պահում: Երբ գնդակը պահված է, նրա աչքերը բացում են, և խաղացողներից մեկը մոտենում է նրան ու մեջքին խփելով ասում.

- Գռտու-գռտու, ծագերդ գտիր:

Խփում ու այդ բառերը կրկնում են այնքան ժամանակ, մինչև որ 5 քարատերը գտնում է գնդակը: Երբ գնդակը գտնվում է, խաղը համարվում է վերջացած, և խաղացողները նույն կարգով խաղը սկսում են նորից:

Խաղերգեր և հաշվերգեր

Հաշվերգերը, խաղերգերը սովորաբար ասում են հաշվելու նպատակով, ռիթմիկ ձեռնախաղերի, մատնախաղերի, մանկական նստած որոշ խաղերի ժամանակ:

Չեռնախաղ

Չեռքերի ափերը դեպի վեր պահած հավասար դիրքով շփում են իրար, ընդ որում շփելիս ձախ ձեռքը իջնելու դեպքում աջի մատները երկրորդ հոդերում ծալվում են նրա գլխին, և հակառակը՝ աջը իջնելիս ձախի մատներն են ծալվում նրա գլխին: Աստիճանաբար ռիթմը արագացնում են: Խաղալիս ռիթմին համապատասխան արտասանում են.

- Էկե դուկե, տըմըզա,
Թալան չուկե պուպուզա,
Մախտե կոճակ, դան պլոճակ,

Ճան ճուկ:
Այս խաղերգը կարող են ասել նաև այլ ձեռնախաղերի ընթացքում:

Խնոցի-հարոցի

Խաղում են զույգերով:
Նստած կամ կանգնած դիրքով զույգերը դեմքով իրար են նայում: Մի խաղացողի երկու ձեռքերի մատները հագցրած են դիմացինի մատներին՝ ափը ափին կպած:
- Խնոցի-հարոցի, կարագը՝ ձեզ, թանը՝ մեզ:
Կամ՝
- Հարի-հարի խնոցի,
Մեջդ բարի, խնոցի,
Ունկդ բարակ, խնոցի,
Մեջդ կարագ, խնոցի:
Տեքստը ռիթմիկ արտասանելով, առաջին երեխան թեքվում է առաջ՝ ձեռքերը պարզելով առաջ, իսկ երկրորդ երեխան թեքվում է ետ՝ ձեռքերը մոտեցնելով կրծքին: Ապա երկրորդ երեխան թեքվում է առաջ՝ ձեռքերը պարզելով առաջ, իսկ առաջին երեխան ետ՝ ձեռքերը մոտեցնելով կրծքին:

Ատատե-բատատե

Երկու ձեռքը բռունցք են անում և դնում իրար վրա, հետո բռունցքների տեղերը փոխելով՝ որևէ ասերգ են ասում.
- Ատատե, բատատե,
Շամամ շուլ,
Շամշե լակե
Չի տամբուլ:
Հատիկ, հատիկ հալվավատիկ (հավատիկ)
Չալ խնձորիկ, փշատիկ,
Չալիկ-մալիկ, ծուռ աքլորիկ,
Կուտ ուտի, կուտման ուտի,
Դռան տակին տիտիկ անի:

Ըստում, ընդում,
Դեղին դդում,
Գցեմ, բռնեմ,
Գտնեմ ուտեմ,
Պապոնց տանը
Տիտիկ անեմ:
Կոպալ, կոպալ,
Իփլի կոպալ,
Հերասա,
Մերասա,
Լակոտ թալեց,
Դուս թալեց:

Աջ ձեռքի բութով և ցուցամատով բռնում են ձախ ձեռքի մաշկից և վերևներքև շարժելով ասում են.
- Ճվի՜կ, ճվի՜կ, ճկուբիկ,
Երկեն տաճիկ, բարակ լաճիկ,
Ճվի՜կ, ճվի՜կ, ճկուբիկ,
Ճվիկը թռավ մտավ ...-ի ծոցիկ:
(Իր անունն է ասում, քանդում է բռունցքը ու ցույց տալիս, թե ճվիկը ինչ-

պես մտավ իր ծոցը):

Խաղը կարող են խաղալ երկուսով. այս դեպքում ճվիկը մտնում է ընկերոջ ծոցը:

Մարզական խաղեր

Գնդակը տանել-բերել

Խաղացողները բաժանվում են 2 հավասար թիմերի, շարվում են մեկնարկային գծից միասյուն: Հրահանգից հետո թիմերի առաջին մասնակիցները գնդակը վազքով տանում են, դնում 5-6 մետր հեռու գտնվող օղակի մեջ, վերադառնում և ձեռքի հպումով մեկնարկ են տալիս երկրորդ մասնակիցներին, որոնք վազքով գնում և բերում են գնդակը: Այսպես. մեկը տանելով, մյուսը բերելով խաղում են, մինչև բոլոր մասնակիցները մասնակցեն խաղին:

Օղակների միջով

Խաղացողները բաժանվում են 2 հավասար թիմերի, շարվում են մեկնարկային գծից միասյուն: Հրահանգից հետո թիմերի առաջին մասնակիցները, անցնելով օղակների միջով, վազում են, շրջանցում 5-6 մետր հեռու դրված դրոշակը և ուղիղ գծով վերադառնում, ձեռքի հպումով մեկնարկ են տալիս մյուս մասնակցիներին: Հաղթում է այն թիմը, որի վերջին մասնակիցն ավելի շուտ է հասնում իր շարքին:

Բուլավաների արանքով

Խաղացողները բաժանվում են 2 հավասար թիմերի, շարվում են մեկնարկային գծից միասյուն: Հրահանգից հետո թիմերի առաջին մասնակիցները, անցնելով բուլավաների արանքով , վազում են, շրջանցում 5-6 մետր հեռու դրված դրոշակը և ուղիղ գծով վերադառնում ետ՝ մեկնարկ տալով հաջորդին:

Նստարանների վրայով

Խաղացողները բաժանվում են 2 հավասար թիմերի, շարվում են մեկնարկային գծից միասյուն: Հրահանգից հետո առաջին մասնակիցները բարձրանում են նստարանի վրա, ձեռքերը կողմ տարածած անցնում են նստարանի վրայով, ցատկով իջնում՝ անցնելով որոշակի տարածություն, շրջանցում են դրոշակը և ուղիղ գծով վերադառնում:

Գնդակը՝ պարկում

Խաղացողները բաժանվում են 2 հավասար թիմերի, շարվում են մեկնարկային գծից միասյուն: Որոշակի հեռավորության վրա պարկեր են դրվում: Յուրաքանչյուր մասնակցի ռեզինե գնդակ է տրվում: Մասնակիցները, անցնելով որոշակի տարածություն, նշված գծից գնդակը նետում են պարկի մեջ, վերադառնում ետ՝ մեկնարկ տալով հաջորդին:

Ծափով՝ վազել

Խաղացողները միասյուն շարվում են իրարից կես մետր հեռավորության վրա: Մեկ ծափ՝ քայլում են, երկու ծափ՝ ցատկոտում են, երեք ծափ՝ վազում են: Ով սխալվում է, դուրս է գալիս շարքից: Հաղթում է նա, ով ավելի ճիշտ և արագ է կողմնորոշվում:

Վերցրո՛ւ գնդակը

Խաղի մասնակիցները բաժանվում են երկու խմբի, կանգնում իրար դիմաց որոշակի տարածության վրա: Մասնակիցները համարակալվում են, կենտրոնում դրվում է գնդակ: Իրենց թիվը լսելով՝ վազում են դեպի գնդակը. ով ավելի արագ կվերցնի գնդակը: Հաղթում է այն թիմը, որն ավելի շատ միավոր կհավաքի:

Բասկետբոլ (5-6 տարեկաններ)

Խաղի նպատակը գնդակը զամբյուղի մեջ գցելն է:

Խումբը բաժանվում 2 թիմի: Յուրաքանչյուր խաղացող մի գնդակ է վերցնում: Թիմերը ուղղահայաց շարքով կանգնում են իրար կողք՝ 1,5-2մ իրարից հեռու: Շարքերից հավասարաչափ հեռավորության վրա (3-4 մետր) 2 զամբյուղ է դրվում: Խաղավարի հրահանգով խաղն սկսվում է: Շարքի առաջին երեխան գնդակը նետում է զամբյուղի մեջ և գնում կանգնում շարքի վերջում, նույն կերպ վարվում է հաջորդ երեխան, այսպես մինչև վերջ: Հաղթում է այն թիմը, որի զամբյուղում ավելի շատ գնդակ է հավաքվում:

Կարելի է խաղը զարգացնել՝ մի գնդակով խաղալ

Խաղավարը գնդակը նետում է թիմերից մեկի առաջին խաղացողին: Սա բռնում է գնդակը, նետում իր թիմի զամբյուղի մեջ և գնում կանգնում շարքի վերջում: Խաղավարը վերցնում է գնդակը, նետում է մյուս թիմի առաջին խաղացողին: Սա էլ է նույն բանն անում: Այսպես հաջորդաբար: Ընթացքում հաշվում են հաջող նետումները: Հաղթում է այն թիմը, որի հաջող նետումները շատ են լինում:

Խաղի պայմանները կարելի է փոփոխել.

Խաղը կարելի է խաղալ աթոռներին նստած: Խաղացողների թիվը կարող է լինել 10 և ավելի:

Գնդակը կարող է մնալ նույն թիմի մոտ մինչև վրիպելը. ինչպես սովորական բասկետբոլում, երբ գնդակը դուրս է գալիս սահմաններից, խաղավարը այն խաղի մեջ մտցնելու հնարավորությունը տալիս է հակառակորդ թիմին:

Խաղը կարելի է խաղալ կա՛մ ժամանակով, կա՛մ մինչև որոշակի միավորներ հավաքելը:

Արգելքներով խաղ

Խաղին մասնակցում է 12 երեխա: Իրարից 1մ հեռավորության վրա դրվում են տարբեր բարձրության ուղղանկյուն արգելքներ, որոնց միջով կամ վրայով հնարավոր լինի անցնել. մասնակիցներն իրենք են որոշում՝ արգելքի տակով անցնել, թե վրայով թռչել: Վերջինից 1մ հեռու բուլավա է դրվում:

Առաջին մասնակիցը հաղթահարում է բոլոր արգելքները, բուլավան շրջանցելով արագ ետ է վերադառնում՝ մեկնարկ տալով հաջորդին: Այսպես շարունակվում է մինչև բոլորի մասնակցությունը:

Ծնողների մասնակցությամբ էստաֆետա

Խաղին մասնակցում են 6 երեխա և 6 ծնող: Խաղացողներից 2մ հեռու իրար կողք դրված են թունել և մարզական նստարան: Առաջին մասնակիցը ծնողի ուղեկցությամբ հեծանիվով հասնում է թունելին, երեխան անցնում է թունելի միջով, ծնողը՝ մարզական նստարանի վրայով, միասին շրջանցում են բուլավան, վերադառնալով՝ մեկնարկ են տալիս հաջորդ զույգին: Այդպես շարունակվում է մինչև բոլորի մասնակցությունը:

Խորանարդներով խաղ

Խաղին մասնակցում է 12 երեխա:

Բոլոր մասնակիցները տարբեր չափի, տարբեր գույնի խորանարդիկներ են ունենում: Առաջին մասնակիցը վազելով տանում է խորանարդը, դնում շրջանի մեջ, վազելով ետ է գալիս մեկնարկ տալով հաջորդին, որն էլ իր խորանարդը տանում է դնում համապատասխանաբար կամ խորանարդի վրա կամ տակը: Մյուսներն էլ իրենց խորանարդները պետք է դնեն համապատասխան տեղում. խորանարդները շարում են մեծից փոքր:

Այդպես շարունակվում է մինչև բոլորի մասնակցությունը և բուրգի պատրաստ լինելը:

ոսկեմատեան

Բանաստեղծություններ և առակներ

Աղունակ
Աթաբեկ Խնկոյան
Ղու-ղու-ղու,
Ա-ղու-ղու, նակ-նակ,
Ա-ղու-նակ,
Թըռռ...

Կաչաղակ
Աթաբեկ Խնկոյան
Չա-չա-չա,
Կա-չա-չա,
Ղակ – ղակ,
Կա-չա-ղակ,
Թը՛ռռ...

Բզեզ
Աթաբեկ Խնկոյան
Բը՛զ, բը՛զ, բզբզան,
Բզեզն եկավ տզտզան,
Եկավ – ընկավ թակարդը,
Նրան բռնեց չար սարդը:

Լուսին
Աթաբեկ Խնկոյան
Լուսին, լուսին,
Լուսերես,
Ինչքան, ինչքան
Կլոր ես:
Լույս ես տալիս
Գիշերով,
Քո վառվռուն
Թշերով:

Խնոցի
Հովհաննես Թումանյան
Խնոցի, հարոցի,
Կարագը քեզ,
Թանը՝ մեզ:

Հարի-հարի խնոցի,
Մեջդ՝ բարի, խնոցի,
Ունկդ՝ բարակ, խնոցի,
Մեջդ՝ կարագ, խնոցի:

Ծիտիկ
Աթաբեկ Խնկոյան
Ծիտ եմ, ծիտ եմ,
Ծլվլում եմ,
Ճիկ-ճիկ-ճիկ,
Ոստոստում եմ,
Թռչկոտում եմ,
Տիկ-տիկ, տիկ,
Արի, թևիկ,
Արի փետրիկ,
Որ ես դառնամ
Փոքրիկ ծիտիկ,
Փոքրիկ ծիտիկ,
Պիծիկ միծիկ,
Թը՛ռռ...

Սագիկ
Աթաբեկ Խնկոյան
Ղա՛ արիր, տվի,
Ղու՛ արիր, տվի
Ա՛յ սիրուն սագիկ:
Գետումը լող տուր,
Գետումը սող տուր,
Ա՛յ կարմիր տոտիկ:
Գոնե իրիկուն
Կրկին արի տուն
Շարմաղ ու կոկիկ:

Ճուտիկը
Աթաբեկ Խնկոյան
Կը՛տ, կը՛տ կտկտաց,
Եկավ ճուտս ճտճտաց,
Հալածվել է ուրուրից,
Բաժանվել է իր մորից,
Ճտճտում է ու լալիս,
Կորած մորն է մաս գալիս:

Գիշեր
Աթաբեկ Խնկոյան
Իջնում է գիշեր
Սարերի ուսին,
Փայլում է վերից
Կաթնագույն լուսին:
Վերից նայում է
Երկինքը ուրախ,
Քնած է գյուղը
Անհոգ ու խաղաղ:

Կատու

Ղազարոս Աղայան

Կատուն եկավ,
Փիսի՛կ, փիսի՛կ,
Հազար նազով,
Ինչպես հարսիկ,
Դունչը սրբեց
Թաթիկներով,
Մազը սանրեց
Չանչիկներով:
- Կատու, կատու,
է՞ր ես տրտում.
Թե՞ մկներն են
Հիմա արթուն:
Կատուն ասաց.
- Միաո՛ւ, միաո՛ւ.
Այսինքն թե՝
- Այո, այո:

Փիսիկ

Հովհաննես Թումանյան

Փիսիկ, փիսիկ,
Չալ պոչիկ,
Վանա ճուտիկ
Խուճուճիկ.
Փիսիկ, փիսիկ ,
Շուտ արի,
Մեր Լուսիկին օրորի:
Կտամ ես քեզ կովի կաթ,
Կարմիր գինի, նռան հատ,
Կապեմ վզիդ թաշկինակ,
Ու հագցնեմ տաք մուշտակ,
Փիսիկ, փիսիկ,
Շուտ արի,
Մեր Լուսիկին օրորի:

Գարուն

Հովհաննես Թումանյան

Ձմեռն անցավ...
Եկավ գարուն...
Ձյունը հալվեց,
Լցվեց առուն:
Արև ծագեց
Արևելքից,
Ծիլեր քաշեց
Գետնի տակից:

Գորտն ու ագռավը

Աբաբեկ Խնկոյան

Մի գորտ ընկած ցամաք առուն
Կռկռում էր, հա՛ կռկռում:
- Քիչ կռկռա, այ գորտ քեռի,
Աշուն կգա, ջուր կբերի,-
Հույս էր տալիս մի սև ագռավ:
- է՛, ի՞նչ անեմ, սիրտս պառավ,
Մինչև ցամաք առուն ջուր գա,
Գորտի աչքն էլ հո՛ դուրս կգա:

Սագ

Ղազարոս Աղայան

Սագիկ – մագիկ, իմ սիրունիկ,
Ես քեզ կտամ քաղցր կուտիկ,
Որ դու ուտես, շուտ մեծանաս,
Ուրախ ապրես, զվարճանաս:
Երբ մեծանաս, մեծ սագ դառնաս,
Ես կխնդրեմ իմ մայրիկին,
Որ նա ժողվե քո փետուրներ
Եվ ինձ համար շինե բարձեր:

Արտուտիկ

Մշակումը՝ Հովհաննես Թումանյանի

Արտուտիկ,
Նախշուն տոտիկ,
Իջնեն կալեր
Գողտիկ-մողտիկ,
Ընտրեն քարեր,
Ուտեն կուտիկ,
Կծլվլան
Կըլթիկ-կըլթիկ:

Փիսոն

Հովհաննես Թումանյան

Փիսոն, փիսոն մլավան,
Թավրիզ թողեց, փախան Վան,
Լեզուն թաթխան, երկար պոչ,
Ինչ որ ուզեց, ասին՝ ոչ:
Փիսոն գնաց գողեգող,
Փորը՝ դատարկ, սիրտը՝ դող:
Դունչը մեկնեց կովկիթին,
Շերեփն իջավ ճակատին:

Ծիտը և բազեն

Ղազարոս Աղայան

Ծիտը ծառին ծլվլում է.
Ծի՛վ, ծի՛վ, ծի՛վ:
Բազեն գլխին պտտվում է.
Վո՛ւյ, վո՛ւյ վո՛ւյ:
Ծիտը լռեց, ծիտը վախեց.
Վա՛յ, վա՛յ, վա՛յ:
Բազե, բը՛ռռ. բազե, բը՛ռռ.
Հա՛յ, հա՛յ հա՛յ:
Բազեն թռավ, բազեն փախավ,
Ինչ լավ եղավ,
Հե՛յ, հե՛յ, հե՛յ:
Ծիտիկ – միտիկ, պիծիկ-միծիկ,
Պտպտուրիկ-չալպտուրիկ,
Դու լավ պրծար չար բազեի
Սուր ճանկերից, հա, հա՛, հա՛:

Անձրև ու ախպեր

Ղազարոս Աղայան

Անձրև՛, անձրև՛, ցա՛ծ արի,
Բուսնի ցորեն ու գարի.
Ցորենը տանեմ ջրաղացին տամ,
Ջրաղացն ինձ ալյուր տա,
Ալյուրը տանեմ ջրին տամ,
Ջուրը ինձ խմոր տա,
Խմորը տանեմ թոնրին տամ,
Թոնիրը ինձ գաթա տա,
Գաթան տանեմ հովվին տամ,
Հովիվը ինձ գառ տա,
Գառը տանեմ Աստծու
գոտիկին տամ,
Աստծու գոտիկն ինձ ախպեր տա:
Աստծո՛ւ գոտիկ,
Աստծո՛ւ գոտիկ,
Տո՛ւր ինձ նախշուն ապերիկ:
Ախպե՛ր, ախպերի՛կ նախշուն,
Գոտկի ծայրը աբրեշում.
Ախպե՛ր, ախպե՛ր, ջա՛ն ախպեր,
Իմ թև ու թիկունք, ախպեր:

Գարնան առավոտ

Հովհաննես Թումանյան

Բարի լուսի զանգեր զարկին
Ջնգզնգալեն ան՛ուշ, ան՛ուշ,
Լուսը բացվեց մեր աշխարհքին
Ճղճղալեն ան՛ուշ, ան՛ուշ:

Հովտում առուն խոխոջում է
Գլգլալեն ան՛ուշ, ան՛ուշ,
Քամին բարակ շնկշնկում է
Ջլգլալեն ան՛ուշ, ան՛ուշ:

Կռունկն եկավ երամ կապած
Կռկռալեն ան՛ուշ, ան՛ուշ,
Կաքավ քարին տաղ է կարդում,
Կղկղալեն ան՛ուշ, ան՛ուշ:

Հարսն ու աղջիկ հանդերն ելան
Շորորալեն ան՛ուշ, ան՛ուշ.
Ծաղկանց բուրմունքն անմահա-
կան,
Սլսլալեն ան՛ուշ, ան՛ուշ:

Քամի

Աթաբեկ Խնկոյան

Քամի՛, քամի՛, դու ահեղ,
Էն երկնքի ամպերը
Հալածում ես ամեն տեղ,
Ալեկոծում ծովերը
Ու տարածում սար ու ձոր
Քո անուշիկ հովերը:

Ծիածան

Աթաբեկ Խնկոյան

Մթին ամպերից
Եկավ հորդ անձրև,
Պարզեց երկինքը,
Ծագեց ջինջ արև:
Կանաչ ու կարմիր
Կապեց ծիածան,
Ջրի կաթիլներն
Ալ-գոհար դարձան:
Քամին հանդարտեց.
էլ չկա փոշի.
Հողը տաքացավ,
Ծխեց գոլորշի:

Ճանճը

Աթաբեկ Խնկոյան

Խոնարհ ու հեզ
Մի հոգնած եզ
Արորն ուսին,
Ճանճը պոզին
Մի իրիկուն
Գալիս էր տուն:
Մին էլ ճամփին
Մի ուրիշ ճանճ
Հենց նստածին
Ասաց.- Տո՛, մա՛նչ,
Քիթը տնկած
Ես եզան հետ
Որտեղի՞ց էդ:
Ճանճը ասաց.

- Մենք որտեղի՞ց.
Վարում էինք,
Վարատեղից:

Բկլիկ-ծկնիկ

Աթաբեկ Խնկոյան

Ձկնիկ, լո՛ղ տուր, լո՛ղ արա,
Դրսի որսը թո՛ղ արա.
Իջիր ջրի հատակը,
Մինչև անցնի վտանգը:

Տե՛ս, փորձանք կա քո գլխին,
Մի լավ մտիկ երեխին.
Որդ է խփել իր կարթին,
Չմոտենաս էդ որդին:

Ինձ չլսեց շեկլիկը,
Ինձ չլսեց բկլիկը,
Հոպ, կուլ տվեց նա որդը,
Կարթը մնաց կոկորդը:

Քամին ու մժեղը

Աթաբեկ Խնկոյան

Արև անցավ,
Քամին վեր կացավ:
Մժեղը տեսավ,
Որ քամին իրեն պտտեց,
Ինքն էլ մի կերպ
Խոտը բռնեց, խտտեց:
- Մժե՛ղ, խոտն ինչո՞ւ ես խտտել:
- Քամի՛, էն քեզանից եմ ազատել,
Որ չհանես սարեսար,
Որ չգցես քարեքար.
Բա գյուղացին մեղքը չի՞,
Հնձած խոտը զուր կորչի:

Մարտը

Հովհաննես Թումանյան

Ա՜խ, էսպե՜ս էլ գիժ ամիս,
Մարդու հանգիստ չի տալիս:
Էսօր ուրախ օր կանի ,
Վաղը՝ անձրև ու քամի.
Առավոտը՝ պայծառ օդ,
Կեսօրը՝ մութ ու ամպոտ:
Մե՛կ հագնում է սպիտակ,
Մե՛կ կանաչին է տալիս,
Մի՛ օր ցուրտ է, մի օր՝ տաք,
Մե՛կ խնդում է, մե՛կ լալիս...
Ա՜խ, էսպե՜ս էլ գիժ ամիս...

Մանուկն ու ջուրը

Հովհաննես Թումանյան

Ամպոտ սարեն ուրախ ձենով
Ջուր է գալիս, անցնում շենով;
Մի թուխ մանուկ դուրս է վազել,
Ջեռքն ու երես պաղ լվացել.
Լվացել է ձեռքն ու երես,
Ու դարձել է խոսել էսպես.
- Դու ո՞ր սարեն կուգաս, ջրիկ,
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ;
- Ես էն սարեն կուգամ մթին,
Որ հին ու նոր ձյունն է գլխին;
- Դու ո՞ր առուն կերթաս, ջրիկ,
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ;
- Ես էն առուն կերթամ զվարթ,
Ուր ափերն են շուշան ու վարդ:
- Դու ո՞ր այգին կերթաս, ջրիկ,
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:
Ես էն այգին կերթամ դալար,
Որ տերն է ժիր մեջն այգեպան:

Մոծակի մահը

Աթաբեկ Խնկոյան

Ամպից խփեց հուր կայծակ,
Կաղնուց ընկավ մի մոծակ:
Մոծակն ընկավ կաղնու մոտ
Թև ու թիկունք արյունոտ:
Ճանճերն եկան պզզալով,
Տզտզալով, բզզալով.
Եղբոր վրա շատ լացին,
Աղի արցունք մաղեցին.
- Ազի՛զ ախպեր, քա՛ջ մոծակ,
Էլ չես թռչի թևարձակ.
Ախ՜, խավարի մեր լույսը,
Կոտրվել է քո ուսը,
Դու տանջվում ես չարաչար,
Ափսո՜ս, չունենք ոչ մի ճար:
Մոծակն իրեն հավաքեց,
Նվաղ ձայնով կտակեց.
- Իմ քույրիկնե՛ր աննման,
Փորեք դուք ինձ գերեզման,
Թաղեք կանաչ պուրակում,
Որտեղ դուք եք նվագում:
Ամեն, ամեն իրիկուն,
Երբ դուք գնաք դեպի տուն,
Իմ հորքուրնե՛ր, մորքուրնե՛ր,
Ջբոսասե՛ր քույրիկներ,
Անցե՛ք, դարձե՛ք իմ մոտով,
Ինձ հիշեցե՛ք կարոտով:
Ճանճերը շատ լաց եղան.
- Մեռավ,- ասին,- քաջ տղան.
Ոչ թե չնչին մի ծագ էր,
Այլ մի կտրիճ մոծակ էր:

Մի էծ ունեմ

Աբաբեկ Խնկոյան

Մի էծ ունեմ
Հինգ վեց ուլով,
Կաք կկթեմ
Կուժով, կուլով,
Մածուն մերեմ
Կճուճներով,
Եղը հանեմ
Լվի տկով,
Բառնամ սելին
Մեծ-մեծ ակով,
Քաղաք տանեմ
Յոթ լուծ մկով,
Հո, հո անեմ
Ուղտի պոչով,
Ճամփեն երթա,
Կատվի քուչով:
Թե չհասնի
էդտեղ վնաս,
Քեռի Միհաս,
Ինձ հյուր կգաս:

Գորտը

Աբաբեկ Խնկոյան

Լքուն, փքուն
Գորտը կռռան,
Ջրհորի մեջ
Ջրի վրան,
Իր չորս կողմը
Աչք ածելով
Ասավ. - Ո՞ւր է
Մեծ է ծովը,
Չորս թիզ չկա
Իմ թզովը:

Մուկն ու կատուն

Աբաբեկ Խնկոյան

Կատուն մկին
Ասավ. - Անգին,
Թե էդ ծակից
Էս ծակը գաս
Հազար թուման
Փող կստանաս:
Պատասխանեց
Մուկը կատվին.
- Չեմ արժանի
էդ մեծ պատվին,
Ճամփեն կարճ,
էդքան խարջ:
Շատ լավ գիտեմ
Փորիդ ցավը,
Պա՞պս է տեսել
Կատվի լավը:

Մաստաղ

Աբաբեկ Խնկոյան

Կըտի-կըտի Մաստաղը,
Կտիկը մտավ բոստանը,
Ոտքով մարգը տրորեց,
Գլխով հողը փորփրեց,
Ծուլի-ծուլի վեր ելավ,
Իր պոչի հետ խաղ արավ:
Բոստանչին էլ դուրս թռավ
Չար այծիկին ձեռքն առավ.
Տվեց, տվեց, տուր տվեց
Ջանը վրեն քրքրեց.
Քամուն տվեց մազերը,
Տեղից հանեց պոզերը,
Հանած պոզերի տեղը
Լցրեց աղ ու տաքդեղը:
Քոլիկ դարձավ Մաստաղը
էլ չէր մտնում բոստանը:

Կաչաղակը

Աբաբեկ Խնկոյան

Չալ կաչաղակը թռչում էր, թռչում ու ծառին նստում: Նստում էր, նստում, պոչիկն էր շարժում: Շարժում էր, շարժում ու երգեր ասում.

- Կա, չէ, կա, չկա, չէ:

Նորից թռչում էր, թռչում ու ծառին նստում. նստում էր, նստում, պոչիկն էր շարժում ու երգեր ասում.

- Կա, չէ, կա, չկա, չէ:

Նորից թռչում էր, թռչում ու ծառին նստում:

Ծառին էր նստում, պոչիկն էր շարժում ու երգեր ասում.

- Չկա, չէ, չէ...

Առավոտը գյուղում

Աբաբեկ Խնկոյան

Արեգակը դուրս է եկել
Պսպղալով.
Շողքը երթից ներս է ընկել
Շողշողալով.
Ծիտը ծառին կչկչում է
Ծլվլալով.
Չորում առուն քչքչում է
Վշվշալով.
Ծույլ տղայի քունն է տարել

Խռմփալով.
Տրեխները շունն է տարել
Մռմռալով:

Լուսաբաց

- Ծուղրուղո՜ւ,
Աքլորը գիլ կանչեց թառին:
- Ճիկ-ճիկ, ճիկ-ճիկ,
Ջարթնեց մթում ծիտը ծառին:

- Ծուղրուղո՜ւ,
Կանչեց ծեգին երկրորդ բերան:
- Հո-հո՜, հո-հո՜,
Նախիրն արդեն հանդը տարան:

- Ծուղրուղո՜ւ,
Լույսը բացվեց երրորդ կանչին:
- Վույ, վույ, վույ, վո՜ւյ,
Նստեց նանը տեղի միջին:

Գիշեր

Աթաբեկ Խնկոյան

Իջնում է գիշեր
Սարերի ուսին,
Փայլում է վերից
Կաթնագույն լուսին:
Վերից նայում է
Երկինքը ուրախ,
Քնած է գյուղը
Անհոգ ու խաղաղ:

Մեղու

Աթաբեկ Խնկոյան

Պզզան, պզզան,
Պզպզան,
Պստիկ մեղու տզտըզան,
Դաշտ ու հովիտ կշրջես,
Բարձր սարեր կթռչես,
Սուսան սմբուլ կծծես
Ու ոտքերով թավամազ
Փոշի առած տուն կգաս:

Եղևնի

Աթաբեկ Խնկոյան

Գունատ աշուն է...
Էլ չկա թռչուն,
Քամու թևերին
Տերևն է թռչում:
Միայն եղևնին,
Այնտեղ, խոր հովտում
Կանաչ է հագել,
Աշնան դեմ ժպտում:

Ձմեռ պապիկ

Աթաբեկ Խնկոյան

Արի՜, արի՜,
Ձմե՛ռ պապի,
Սպիտակ հագի
Սպիտակ կապի:
Սարում, ձորում
Սուլի՜ր, երգի՜ր,
Հեքիաթ ասա
Հետաքրքիր:
Դաշտ ու անտառ,
Գետ ու գետակ,
Այս ամենը
Առ թևիդ տակ:
Գցիր կամուրջ,
Փռիր կարպետ,
Այ անուրագ,
Անձեռ վարպետ:

Լորիկ

Աթաբեկ Խնկոյան

Առավոտից փչեց հով,
Արտը ծփաց, դարձավ ծով.
Արտի միջից թռավ լոր,
Թռավ ընկավ սար ու ձոր:
Կլորիկ, գլորիկ,
Այ լորիկ,
Օրոր-մորոր,
Շորորիկ:
Լորիկ, լորիկ, էս տարի
Արտս ցանել եմ գարի.
Ուր որ գնաս, շուտ արի,
Արտիս միջին ծվարի:
Կլորիկ, գլորիկ,
Այ լորիկ,
Օրոր-մորոր,
Շորորիկ:

Աքաղաղն ու կտուրը

Աթաբեկ Խնկոյան

Մի աքաղաղ
Կարմրապեծիկ,
Իր ոտքերը
Երկար ու ձիգ,
Կտրին տալով
Վեր-վեր ձգվեց,
Ու զարմանքով
Ի՞նչ հարց տվեց.

- Ես ո՞նց է, որ
Ես զոռ տալիս,
Էս կտուրը
Փուլ չի գալիս:

Գորտերի խաղը

Աթաբեկ Խնկոյան

Լուսնյակ գիշեր...
Լիճը խաղաղ...
Ուռած թշեր
Գորտերի խաղ:
Գորտի բանակ,
Գորտի նվագ...
Սրախոսում...
Զրախոսում...
Քեռու մասին
Էս են ասում.
- Քեռին մեռել ա՜.
Քեռին մեռել ա՜...
- Ե՞րբ, ե՞րբ, ե՞րբ, ե՞րբ,
- Մե-կե-կել օր, մե-կե-կել օր:
Ղորդ, ղորդ, ղորդ, ղորդ:
Ուռել ա, մեռել ա, լռել ա,
Կը-կը-կա, մը-կը-կա,մեռել ա,
Կանչեք տատը գլխին լա...
Գորտ տատիկը բարկացավ,
Չուստերն հագավ, վեր կացավ
Ճմբան ծերին թըփ, թըփ, թըփ,
Գիժ թոռները չըփ, չըփ, չըփ,
Ոտ ու տոտիկ չռեցին,
Ջուրը չընկած լռեցին:

Ճպուռն ու մրջյունը

Աթաբեկ Խնկոյան

Թըռի-վըռի մի ճպուռ,
Ողջ ամառը շուռումուռ
Երգեց, ճռռաց, ճռճռաց:
Սին էլ ըհը, ձմեռը
Փռեց իրեն թևերը,
Բացեց գորգը սպիտակ,
Դաշտերն առավ ձյունի տակ:
Անցան պայծառ օրերը,
էլ ո՞րն ասեմ, էլ ո՞րը,
Երբ ամեն մի թփի տակ,
Թե սեղան կար, թե օթյակ:
Եկան օրեր ցրտաշունչ,
Ճպուռն ընկավ լուռումունջ.
Քաղցած փորին էլ ի՞նչ երգ,
Ցուրտը տարավ ոտ ու ձեռք:
Զընգըր-զընգըր դողալով,
Ծանր-ծանր սողալով,
Նա մրջյունին ասում էր.
- Գլխիդ մատաղ, սանամեր,
Մի ճար արա, շունչ առնեմ,
Ցրտից, սովից չմեռնեմ.
Կերակրիր, տաքացրու,
Մինչև գարուն ապրեցրու:
- Ի՞նչ խաբար է, սանիկս,
Զարմանում եմ, ջանիկս.
Չաշխատեցի՞ր ամառը,
Ասա, ի՞նչ էր պատճառը:
- Էդպես բանի, սանամեր,
էլ ժամանակ ո՞վ ուներ.
էն խոտերում բուրավետ
Երգում էինք մերոնց հետ
- Ուրեմն դո՞ւ:
- Այո, ես...
Ողջ ամառը դեն ու դես
Երգում էի մշտապես:
- Երգո՞ւմ էիր, շատ բարի,
Այժմ էլ բռնի վեր-վերի,
Քամին ծափ տա դու պարի:

Պապն ու շաղգամը

Աթաբեկ Խնկոյան

Դռան առաջ մի անգամ
Պապը ցանեց մի շաղգամ:
Շաղգամն աճեց, մեծացավ.
Պապը քաշեց, քաշքշեց,
Շաղգամն հողից չհանեց:
Պապը կանչեց տատիկին.
Տատը պապից, պապը շաղգամից,
Հա քաշեցին, քաշքշեցին,
Շաղգամն հողից չհանեցին:
Տատը կանչեց թոռնիկին,
Թոռը տատից, տատը պապից,
Պապը շաղգամից, հա քաշեցին,
Քաշքշեցին, շաղգամն հողից
Չհանեցին:
Թոռը կանչեց շնիկին.
Շունը թոռից, թոռը տատից,
Տատը պապից, պապը շաղգամից,
Հա քաշեցին, քաշքշեցին,
Շաղգամն հողից չհանեցին:
Շունը կանչեց փիսոյին.
Փիսոն շնից, շունը թոռից,
Թոռը տատից, տատը պապից,
Պապը շաղգամից,
Հա քաշեցին, քաշքշեցին,
Շաղգամն հողից չհանեցին:
Փիսոն կանչեց մկնիկին.
Մուկը փիսոյից, փիսոն շնից,
Շունը թոռից, թոռը տատից,
Տատը պապից, պապը շաղգամից.
Որ քաշեցին, քաշքշեցին,
Շաղգամը հողից հանեցին:

Նապաստակները

Աթաբեկ Խնկոյան

Նապաստակներն ամբողջ ցեղով
Անտառի մեջ արին ժողով:
Եվ ժողովում մի ծեր Շլդիկ
Ասավ. - Լսեք, մեծ ու պստիկ.
Շունը հաչե, քամին փչե,
Ամպը գոռա, մուկը ճռռա,
Մեր ես ցեղը հա՞ կդողա:
Էսպես ապրել չի կարելի
Էս աշխարհում փորձանքով լի,
Չարն ու բարին աշխարհի հետ,
Թողնենք գնանք, լցվենք մի գետ:
Շլդիկները՝ ոչ այս, ոչ այն,
Ելան ընկան մահի ճամփան:
Հենց որ եկան գետին մոտիկ,
Էն գորտերը, մեծ ու պստիկ,
Խառնիխուռն ընկան ջուրը:
Իսկույն այդտեղ մի այլ Շլդիկ.
- Դարձե՛ք,- կանչեց,- պապի՛ս որդիք,
Էլ մի կախեք ձեր քթերը,
Մեզնից վախկոտ են գորտերը:

Գայլն ու կատուն

Աթաբեկ Խնկոյան

Գայլ անտառից փախավ գեղը.
- Նեղն եմ, նեղը,- ասավ կատվին,
Ասլան բալա, քո հոր պատվին
Մի ճար արա: Մի տես հլա,
Որսորդ ու շուն, թազի, թուլա
Միսս են կրծում, ինձ հալածում:
Այ կտրվի դրանց հոտը,
Մի մարդ ցույց տուր պահվեմ մոտը:
- Այ ցեղակից,- գոչեց կատուն,
- Գնա մտիր Մարոյենց տուն.
Նա չափազանց բարի կին է:
- Ես էլ գիտեմ, որ անգին է,
Բայց որ նրա հորթն եմ կերե՛լ...
- Բկիդ կանգներ, լավ չես արել:
- Այ, Դավթի մոտ, կուզե՞ս կանչեմ:
- Նրանից էլ ես կամաչեմ. հենց ամառը
Կերա Դավթի փոքրիկ գառը...
- Ու՞մ ասեմ էլ... հա՛, մեր Ջաքին:
- Էս գարնանն էլ նրա մաքին...
- Ո՞վ մնաց էլ. հա՛, երեցը:
- Էս աշնանն էլ նրա էծը...
- Այ դու ուտես չոռի մեծը:
Քանի՞սն եղավ հի՛նգը... վե՛ցը...
Ա՛յ անամոթ, ի՞նչ երեսով
Դու գյուղ մտար, ի՞նչ է, ուրիշ
Տեղ չգտա՞ր: Գյուղն հիմա՞ր է,
Որ թշնամուն պատսպարե:
Ով ինչ բրթե, էն կխրթե:

Ագռավն ու աղվեսը

Աթաբեկ Խնկոյան

Բախտի բերմամբ, թե պատահմամբ,
Մի մեծ ագռավ մի գունդ պանիր
Դաշտում գտավ,
Կտուցն առավ, ծառին թռավ:
Օ՛, ի՛նչ պանիր, դեղին ոսկի...
Բայց դեռ չառած համը իսկի,
Աղվեսն անցավ ծառի մոտով,
Գերվեց, էրվեց պանրի հոտով:
Վազեց գնաց բերնի ջուրը,
Եվ թուլացան կուռն ու ճուռը:
Էն ժամանակ իրա ձևին,
Ծառի տակից, աչքն ագռավին,
Հեզիկ, նազիկ, փափկամազիկ,
Բացեց լեզուն անուշ, մեղուշ,
Թափեց, չափեց շաքար ու նուշ.
- Ինչքա՛ն լավն ես, ես քո գերին,
Քո էդ սևիկ վառ աչքերին,
Նուրբ ծալքերով զույգ թևերին:
Մի դու մտիկ էդպես քթիկ,
Էդպես ծտիկ, մախմուր ագին,
Խաս ու ղումաշ, ատլասն հագին:
Գիտեմ, անշուշտ, իմ քուրիկի
Ձայնն էլ կըլնի հրեշտակի:
Երգիր, քուրիկ, մի ամաչիր,
Իմ ուզածը մի մեծ բան չի:
Թե որ չքնաղ էդ տեսքիդ հետ
Երգելում էլ եղար վարպետ,
Օ՛, կդառնաս, իմ մաքրուհի,
Թռչունների մայր թագուհի:
Ագռավ ազին իրեն տված
Գովեստներից շշմած, ուռած
Ագռավային բկովը մին որ չկռռաց,
Պանիրն ընկավ ծառիցը ցած
Շողոքորթը ըռխեց, գնաց:

Մկների ժողովը

Աթաբեկ Խնկոյան

Սով էր, սով էր Մկստան,
Կատվի ձեռքից լկստան,
Գգիրն ընկավ դռնեդուռ,
էլ չթողեց տուն-կտուր,
Ջահել, ահել գեղովի,
Ջոջերին ջոկ տեղովի
Կանչեց, բերեց ժողովի
Թե ինչ անեն, որ կատվեն
Մի հնարքով ազատվեն:
Եկան գյուղի ջոջերը,
Երկար բարակ պոչերը,
Մասնակցեցին խորհրդին,
Մի մուկ խոսեց իր հերթին.
- Լսեք, մկներ ցեղակից,
Չունեմ որդի, կողակից,
Ես մի անտեր ծերուկ եմ,
Բայց պատվավոր մի մուկ եմ.
Պակսեց ուժը իմ ոտի,
Պետք է մեռնեմ անոթի...
Սովն է չոքել դռանը,
Ա՜խ, մռռանը, մռռանը,
Վեր է ընկել մառանը,
Ինչքան ասես նազ անի,
Ստից սատկի, տազ անի,
Մուկ տեսնելիս վազ անի,
Գլխից բռնի, կախ անի,
Թաթովը տա, խաղ անի,
Ուտի, քեֆը չաղ անի,
Էսպես զուլում ու կրակ,
Դեռ աչքերն էլ ջուխտ ճրագ:
Բայց թե ազնիվ մեր ցեղը
Կորչելու չէ գուր տեղը,
Ցավն էլ ունի իր դեղը...
Ա՜յ, բերել եմ ես մի զանգ,
Ծափ, ծլնգոց, մեջը զնգոց.
Կատվի վզից մենք կախ տանք,
Որ ինչքան էլ օրորա,
Որ ինչքան էլ շորորա,
Ստից սատկի, տազ անի,
Գալն իմանանք գազանի:
է, զանգը ո՞վ կախ անի.
- Ալո դու:
- Ալո՞ն տանի:
- Բալո դու:
- Բալո՞ն կախե:
- Չալո, դու:
- Չալոն կաղ է:
- Մստո, դու:
- Մստոն կարճ է:
- Փոստո, դու:
- էդ էլ խի՞ղճ է:
- Համբո, դու:
- Ես տկար եմ:
- Չամբո, դու:
- Ասենք տարա,
Բա որ կատուն գա ինձ վրա՞:
- Բտոն, Խտոն թող մեկից
Բռնեն կատվի քամակից:
- Ի՞նչ է խոսում չոր գանգը,
Լավ է դու տար էդ զանգը,
էլ ի՞նչ Բտո, ի՞նչ Ֆստան,-
Ճստաց Բտոն ճստճստան:
- Լռիր, հանդուգն, կոտորվեք դուք,
Վախկոտներիդ ես թաղեմ,
Ճա՞ռ ասեմ, թե՞ զանգ կախեմ,-
Գոչեց ջոջը, քաշեց պոչը:

Պոչատ աղվեսը

Աթաբեկ Խնկոյան

Փախավ աղվեսը, փախավ թակարդից
Բայց պոչի կեսը թողեց նա ներսը:
Այդպես պոչատ, պոչից անջատ,
Գնաց ասավ ընկերներին.
- Այ, ձեզ մատաղ, ես ձեր գերին,
Դեն գցեցեք ձեր պոչերը.
Ինչո՞ւ են պետք այդ փրչերը:
Իրանք զարդ չեն ու զարդարանք,
Այլ մեր գլխին պատիժ, փորձանք,
Գետնի ավել, վազքի խափան,
Մեզ անվայել ավելորդ բան:
Այդտեղ մի ծեր վարպետ աղվես
Ասավ նրան. «Ապրես, ապրես,
Այ ծակամուտ թոռիս թոռը,
Էդքան չեն տա խելքի զոռը,
Բա քանի որ տեղն էր պոչդ,
Ինչո՞ւ չարիր դու այդ կոչդ»:

Փիսիկի գանգատը

Հովհաննես Թումանյան

Փիսիկը նստել
Մի մութ անկյունում
Ունքերը կիտել
Ու լաց է լինում:
Մոտիկ է գալիս
Մի ուրիշ կատու.
- Ինչո՞ւ ես լալիս,
Ա՛յ փիսո ջան, դու...
- Հապա ի՞նչ անեմ,
Որ լաց չլինեմ.
Գանգատ է անում
Փիսոն տխրադեմ:
Էն Համոն թաքուն

Մածունը կերավ,
Գնաց տատի մոտ
Ինձ վրա դրավ:
Հիմա տատիկի
Ետևից ընկած
Ինձ են ման գալիս
Մի-մի փետ առած
Էն քոթոթ Սուրենն,
Անոն ու Մոսոն:
- Ո՞ւր է,- ասում են,-
Ո՞ւր է գող Փիսոն,
Ա՜խ, թե մի գտա՜նք,
Մածուն ցույց կտանք...
Էսպես բան սարքեց
Էն Համոն իմ դեմ.
Ի՞նչ անեմ հապա,
Որ լաց չլինեմ...
Ու փիսոն նստել
Մի մութ անկյունում ,
Ունքերը կիտել
Ու լաց է լինում:

Օրհնանքներ

- Յոթ որդով սեղան նստեք:
- Ծլեք, ծաղկեք, զորանաք:
- Կարմիր արև քեզ, ախպեր,
Աստծու բարև քեզ, ախպեր:
- Դռներս միշտ բաց լինի, տաշտ-
ներս միշտ հաց լինի:
- Աստված մեկը հազար անի:
- Ծլենք, ծաղկենք, զորանանք,
Հորով-մորով մեծանանք:
- Մեկ ցանես, հազար հնձես:

Հանելուկներ

Մի բան կա, բան չի նմանի,
Ջու կածի, հավ չի նմանի,
Չորս ոտք ունի, կով չի նմանի,
Շատ կաշխատի, մարդ չի նմանի:
(մրջյուն)

Ման եմ գալիս, հավ չեմ,
Լույս եմ տալիս, ճրագ չեմ:
(լուսատիտիկ)

Թռչի՝ ոտքերը կախ են,
Իջնի՝ ծնկները շալակն են:
(մորեխ)

Մի գոմ կա՝ մի խուրձ խոտ մեջը չի
մտնի,
Բայց հազարավոր զորք կա մեջը:
(մրջնանոց)

Կատուն կանգնել է դեզին,
Պոչն օլորել է վզին:
(աղվես)

Ինքը հողից, կյանքն արևից,
Մահը ջրից:
(աղ)

Մի աման ներկ
Աշխարհ կներկի:
(արև)

Եկավ օրով, գնաց տարով:
(Նոր տարի)

Մինչև իրիկուն կպտտի, բան չկա,
Իրիկունը տուն հասնի թե չէ,
Բերանը բաց կմնա:
(կոշիկ)

Ուր գնամ, հետս է:
(ստվերը)

Աչքեր ունի, ոտքեր չունի,
Մարդ կսպանի, ձեռքեր չունի,
Հավկիթ ունի, փետուր չունի,
Շորեր ունի, որ կար չունի:
(օձ)

Էստեղ պուպուզ, էնտեղ պուպուզ,
Մեկ էլ տեսար՝ կտուրով դուրս:
(արևի շողը)

Քույր ու եղբայր են, մեկն առա-
վոտն է ծնվում, երեկոյան մեռնում,
Մյուսը երեկոյան ծնվում, առավո-
տը մեռնում:
(արև, լուսին)

Գլխին տուր,
Մեջը կուլ տուր:
(ընկույզ)

Ի՞նչ պարան է,
Ինքն է վրադ փաթաթվում:
(օձ)
Պոզեր ունի, այծ չէ,
Թևեր ունի, թռչուն չէ:
(բզեզ)

Մի խուրձ խոտ չի մտնում,
Բայց հազար կենդանի շունչ է
ապրում:
(մրջնանոց)

Կլորիկ է, քար չէ,
Չու է ածում, հավ չէ:
(կրիա)

Թռչում է, թռչուն չէ,
Փոքրիկ է, մրջյուն չէ:
(մեղու)

Մեկ հոր,
Երեսուներկու զինվոր:
(բերան, ատամներ)

Մի ծառ կա, վրան հինգ ճյուղ,
Ամեն ճյուղին՝ մի տերև:
(ձեռք, մատներ, եղունգներ)

Չորս կողմը փուշ,
Մեջտեղը նուշ:
(թարթիչներ, աչք)
Սև է սաթի նման,
Սպիտակ է կաթի նման,
Կարմիր է վարդի նման,
Սան կգա մարդի նման:
(աքաղաղ)

Չորս ախպեր մի գդակի տակ,
Ոնց որ թե էլի չգտաք:
(սեղան)

Շարժվում է ոտք չունի,
Մտրակ է, կոթ չունի:
(օձ)

Մի թագավոր կա,
Քառասուն կին ունի,
Կարմիր թագիկ ունի,
Դեղին ոտիկ ունի:
(աքաղաղ)

Չորս ոտքը հողին,
Երկուսը կողին:
(ձի և ձիավոր)

Գընդըլ, մընդըլ տատիկը,
Հանեց վրայի շապիկը,
Փախավ մտավ բաղնիքը:
(կարտոֆիլ)

Չի լալիս մորթվողը,
Լալիս է մորթողը:
(սոխ)

Ուլուլիկ, պուլուլիկ,
Ոչ դուռ ունի, ոչ կտուր:
(ձու)

Մի պուտուկի մեջ
Երկու տեսակ ջուր:
(ձու)

Արի՛, ասում եմ, չի գալիս,
Մի՛ արի, ասում եմ, գալիս է:
(շրթունք)

Շնչավորից անշունչ ելավ,
Անշունչից՝ շնչավոր:
(հավ, ձու)

Սան է գալիս կամաց-կամաց,
Մի շալակ փուշ վրան առած:
(ոզնի)

Փոքրիկ գազան,
Արագ վազան,
Քուրքը դեղին,
Շատ է սիրում հավի ցեղին:
(աղվես)

Մի պապիկ կա
Հազար թոռ է շալալկել:
(խաղող)

Նայում ես՝ կանաչ է,
Կտրում ես՝ կարմիր է,
Մեջը լիքը սև զինվոր է:
(ձմերուկ)

Ափը կանաչ,
Ջուրը կարմիր,
Չկները սև:
(ձմերուկ)

Չորս կողմը փակ,
Մեջը հազար ծագ:
(ձմերուկ)

Մի փոքրիկ պապիկ,
Հագին հազար շապիկ:
(կաղամբ)

Գլխիդ վերև,
Հազար տերև:
(ծառ)

Ձմռանը տաքացնում է,
Գարնանը ուրախացնում,
Ամռանը հովացնում է,
Աշնանը կշտացնում:
(ծառ)

Մանրիկ-մանրիկ եկեղեցի,
Դանակով զարկի, դուռը բացի,
Մեջը սիրով համբուրեցի:
(նուռ)

Ուլուլիկ-պուլուլիկ,
Մեջը լիքը շողուն ուլիճք:
(նուռ)

Սև արաբը գյուղը մտավ,
Գյուղը վախից քուն մտավ:
(գիշեր)

Սև սատանեն բեղն ոլորեց,
Հազար-հազար մարդ գլորեց:
(գիշեր)
Թռչում է, թռչուն չէ,
Թրջում է, ջուր չէ:
(ամպ)

Մի երկար սփռոց ունեմ,
Ինչքան ուզես հավաքել, չես կա-
րող:
(ամպ)

Մի հովիվ կա ոչխարներին գիշերն
է արածեցնում:
(լուսին, աստղեր)

Ոտք չունի, ման է գալիս,
Բերան չունի, կուլ է տալիս:
(մառախուղ)

Պստիկ, պստիկ մանչեր
Արտի վրա տոճիկ տվեցին:
(կարկուտ)

Գորգ ունեմ,
Թափ տալ չի լինի,
Ոսկի ունեմ,
Հաշվել չի լինի:
(երկինք, աստղեր)

Այ լարի, լարի,
Երկու կաքավ գնում են գալիս:
(արև, լուսին)

Մեկը փչում է պաղած-պաղած,
Մեկի աչքերը կրակ վառած:
(արև, լուսին)

Կարմիր բաղարջ
Հազարի առաջ:
(արև)

Ինչ թուր է
Գլխիդ ընկնի, չի կտրի:
(արևի ճառագայթ)

Պատուհանից ընկավ ներս,
Թե որ կարաս, կբռնես:
(արևի ճառագայթ)

Մեծ տուն, հազար ճրագ, ոչ տուն
ունի, ոչ գերան:
(երկինք, աստղեր)

Ինձ նայես, աչքերդ կծակեմ:
(արև)

Մի խնծոր,
Կեսը սպիտակ, կեսը սև:
(օր)

Երեսուն օր ապրում է ու մեռնում,
Մյուս օրը նորից ծնվում:
(լուսին)

Ցերեկը քուն են մտնում,
Գիշերը զարթնում:
(աստղեր)

Շուտասելուկներ

Ծտի ճուտը ծլվլում է,
Ծլվլում է ճիտը ծուռ:

Ուլը մի բուռ ուռ ոլորեց,
Ուռ առ ոլոր, ուռ առ ոլոր:

Գնամ գամ,
Մեր հին սև սան տակը պաչեմ:

Ես սեխ ուտեմ, դու ցեխ,
Դու ցեխ ուտես, ես սեխ:

Մեր դռան տասը մանր տանձի ծառը ձեր դուռը:
Ձեր դռան տասը ծանր տանձի ծառը մեր դուռը:

Մի ջուխտ չարուխ դրի ջուր,
Թրջավ, թող թրջի,
Չթրջավ, թող չթրջի:

Չուկ եմ, ձուկ եմ, ջրի մուկ եմ,
Մուկ եմ, մուկ եմ, ջրի ձուկ եմ:

Չոր ցցին սառ տանձաջուր,
Չալ ծտին չար ծտաճուտ:

Չուկը մուկը մեկ տապակ,
Մուկը ձուկը մեկ տապակ,
Չուկը ուտեմ, մուկը գցեմ,
Մուկը գցեմ, ձուկը ուտեմ:

Քեռի, էն անուշ ալրեն էլի առ,
էն անուշ ալրեն էլի առ, քեռի:

Փոկակապ Ակոփ պապի,
Ինձ համար մի փոկ կապի,
Ես քեզ ասեմ փոկակապ Ակոփ պապի:

Ուլն ընկավ ուռի ծառը,
Ուլը պոչով ուռ ոլորեց:
Ուռի պես ոլորած ուռով
Ուլը ձեռով դուռ ոլորեց:

Տանձ գլորեմ, տանձ ուտեմ,
Բողկ գլորեմ, տանձ ուտեմ:

Առած-ասացվածքներ
Ամառվա փուշ՝ ձմեռվա նուշ:
Ամառվա օրը տարի է կերակրում:
Առատ տարի, բերքը՝ բարի:
Հա՛ց, հա՛ց, դուռդ բաց
Ով ինչ ցանի, այն կհնձի:
Ով աշխատի, նա կուտի:
Ես աղա, դու աղա, բա մեր աղունն ո՞վ աղա:
Ժլատ մարդու հացը չի ուտվի:
Հացը երեսից էլ պիտի ուտվի:
Ջատիկն առանց ձվի չի լինի:
Ակլատիզը փետելով զատիկը շուտ չես բերի:

Ուլիկը

Հովհաննես Թումանյան

1

Խոր անտառում մի այծ է լինում: Ունենում է մի գեղեցիկ ուլ:

Ուլին ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է արոտ անելու: Արածում է և իրիկունը կուրծքը լիքը տուն է գալիս: Տուն է գալիս, դուռը զարկում է ու սկսում, կանչում.

Սևո՛ւկ ուլիկ,
Սիրո՛ւն բալիկ,
Մաո եմ եկել սարեսար,
Կաթն եմ արել քեզ համար,
Դռնակը բաց ներս գամ ես,
Անուշ-անուշ կաթ տամ քեզ:
Սևո՛ւկ ուլիկ,
Սիրո՛ւն բալիկ:

Ուլիկն իսկույն վեր է թռչում, դուռը բաց անում: Մայրը ծիծ է տալիս նրան ու կրկին գնում արոտ:

2

Էս բոլորը թաքուն տեսնում է գայլը: Մի իրիկուն այծից առաջ գալիս է, դուռը զարկում ու իր հաստ ձայնով կանչում.

Սևո՛ւկ ուլիկ,
Սիրո՛ւն բալիկ,
Մաո եմ եկել սարեսար,
Կաթն եմ արել քեզ համար,
Դռնակը բաց ներս գամ ես,
Անուշ-անուշ կաթ տամ քեզ:
Սևո՛ւկ ուլիկ,
Սիրո՛ւն բալիկ

Ուլիկը լսում է, լսում ու պատասխանում. «Էդ ո՞վ ես դու, չեմ ճանաչում: Իմ մայրը էդպես չի կանչում: Նա քաղցր ու բարակ ձայն ունի: Քո ձայնը կոշտ է ու կոպիտ: Դուռը բաց չե՛մ անի... Գնա՛... Չե՛մ ուզում քեզ...»:

Ու գայլը հեռանում է, գնում:

3

Գալիս է մայրը, դուռը ծեծում.

Սևո՛ւկ ուլիկ,
Սիրո՛ւն բալիկ,
Մաո եմ եկել սարեսար,
Կաթն եմ արել քեզ համար,
Դռնակը բաց ներս գամ ես,
Անուշ-անուշ կաթ տամ քեզ:
Սևո՛ւկ ուլիկ,
Սիրո՛ւն բալիկ:

Ուլիկը դուռը բաց է անում, ծիծ է ուտում ու մորը պատմում.

- Գիտե՞ս, մայրի՛կ, ինչ եղավ: Մի քիչ առաջ մինը եկավ, դուռը զարկեց ու կանչում էր.

Սևո՛ւկ ուլիկ,
Սիրո՛ւն բալիկ:

Ասում էր՝ դուռը բաց արա: Էնպես հաստ ձայն ուներ: Էնպես վախեցա, էնպես վախեցա... Դուռը բաց չարի, ասի՝ չեմ ուզում, գնա՛...

- Պա՛, պա՛, պա՛, պա՛, Սևո՛ւկ ջան, ի՞նչ լավ է եղել, որ բաց չես արել,- ասավ վախեցած մայրը: - Էդ գայլն է եղել. եկել է, որ քեզ ուտի: Մյուս անգամ էլ որ գա, բաց չանես. ասա՝ գնա՛, թե չէ իմ մայրը քեզ կսպանի իր սուր պոզերով:

Ծիտը

Հովհաննես Թումանյան

Լինում է, չի լինում մի ծիտ: Մի անգամ էս ծտի ոտը փուշ է մտնում: Դես է թռչում, դեն է թռչում, տեսնում է՝ մի պառավ փետի է ման գալի, թոնիր վառի, հաց թխի: Ասում է.

- Նանի՛ ջան, նանի՛, ոտիս փուշը հանի, թոնիրդ վառի, ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Պառավը փուշը հանում է, թոնիրը վառում: Ծիտը գնում է, ետ գալի, թե՝ փուշը ետ տուր ինձ: Պառավն ասում է.

- Փուշը թոնիրն եմ գցել:

Ծիտը կանգնում է, թե՝

- Իմ փուշը տուր, թե չէ՝ դես թռչեմ, դեն թռչեմ, լոշիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Պառավը մի լոշ է տալի: Ծիտը լոշը առնում է թռչում: Գնում է տեսնում՝ մի հովիվ անհաց կաթն է ուտում: Ասում է.

- Հովիվ ախպեր, կաթն ինչո՞ւ ես անհաց ուտում: Ա՛յ, լոշը ա՛ռ, կաթնի մեջ բրդի՛, կե՛ր, ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի, թե՝ լոշս տուր: Հովիվն ասում է.

- Կերա:

- Չէ՛,- ասում է,- իմ լոշը տուր, թե չէ՝ դես թռչեմ, դեն թռչեմ, գառնիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Հովիվը ճարահատած մի գառն է տալի: Առնում է, թռչում: Գնում է տեսնում է՝ մի տեղ հարսանիք են անում, մսացու չունեն, որ մորթեն: Ասում է.

- Ի՞նչ եք մոլորել: Ա՛յ, իմ գառն առեք, մորթեցեք, քեֆ արեք... Ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի, թե՝ իմ գառը տվեք: Ասում են.

- Մորթել ենք, կերել, ո՞րտեղից տանք:

Սա կանգնում է, թե՝ չէ, իմ գառը տալիս եք՝ տվեք, թե չէ՝ դես թռչեմ, դեն թռչեմ, հարսին առնեմ, դուրս թռչեմ:

Ու հարսին առնում է թռչում: Գնում է, գնում. գնում է, տեսնում՝ մի աշուղ մի ճամփով գնում է: Ասում է՝

- Աշուղ ախպեր, առ էս հարսին, պահի՛ քեզ մոտ: Ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ: Գնում է, ետ գալի, աշուղի առաջը կտրում, թե՝ իմ հարսը ինձ տուր: Աշուղն ասում է.

- Հարսը գնաց իրենց տուն:

Սա թե՝ չէ՛, իմ հարսը տուր, թե չէ՝ դես թռչեմ, դեն թռչեմ, սազիկդ առնեմ, դուրս թռչեմ: Աշուղը սազը տալիս է իրեն: Սազն առնում է, ուսին գցում, թռչում, մի տեղ նստում է, սկսում է ածել ու ճտվտալով երգել.

Ծընգլը, մընգլը,
Փուշիկ տվի, լոշիկ առա,
Լոշիկ տվի, գառնիկ առա,
Գառնիկ տվի, հարսիկ առա,
Հարսիկ տվի, սազիկ առա,
Սազիկ առա, աշուղ դառա,
Ծընգլը, մընգլը,
Ծի՛վ, ծի՛վ:

Սին էլ հանկարծ սազը վեր ընկավ ջարդվեց, ծիտը թռավ գնա՛ց, հեքիաթն էլ վերջացա՛վ:

Ճամփորդներ

Հովհաննես Թումանյան

Աքլորը մի օր կտուրը բարձրացավ, որ աշխարհք տեսնի: Վիզը ձգեց, երկարացրեց, բայց բան չտեսավ, դիմացի սարը խանգարում էր:

- Քույչի ախպեր, կարելի է դու գիտենաս, թե սարի ետևը ի՞նչ կա,- հարցրեց վերևում պառկած շանը:

- Ես էլ չգիտեմ,- պատասխանեց քույչին:

- Հապա մինչև ե՞րբ պիտի այսպես մնանք, արի գնանք տեսնենք աշխարհումս ինչ կա, ինչ չկա:

Շունն էլ համաձայնեց: Խոսքը մին արին ու փախան: Գնացին, գնացին, իրիկունը հասան մի անտառ: Գիշերը մնացին էնտեղ: Շունը պառկեց մի թփի տակ, իսկ աքլորը բարձրացավ մոտիկ ծառին, քնեցին: Լուսադեմին աքլորը կանչեց՝ ծուղրուղո՜ւ:

Մի աղվես լսեց աքլորի ձայնը:

- Վա՛հ, սա որտեղի՞ց դուրս եկավ, այ լավ նախաճաշիկ,- մտածեց աղվեսն ու վազեց:

- Բարի լույս, սանահեր աքլոր: Ի՞նչ ես շինում էս կողմերը:

- Գնում ենք աշխարհ տեսնելու,- խոսեց աղվեսը: Քանի ժամանակ է ես էլ մի կարգին ընկեր եմ մաս գալի: Ինչ լավ էր՝ պատահեցինք: Դե, ցած արի, որ չուշանանք:

- Ես համաձայն եմ,- ասավ աքլորը,- տես թե ընկերս էլ համաձայն է, ցած գամ՝ գնանք:

- Որտե՞ղ է ընկերդ:

- Էն թփի տակին:

«Սրա ընկերն էլ երևի իր նման մի աքլոր կլինի, ես էլ իմ ճաշը»,- մտածեց աղվեսը ու վազեց թփի կողմը: Հանկարծ որ շունը դուրս եկավ, աղվեսը, պո՛ւկ, փախավ, ոնց փախավ:

- Կա՜ց, աղվե՛ս ախպեր, մի վռազի, մենք էլ ենք գալի, էդպես ընկեր չի լինի,- ծառի գլխից ձայն էր տալիս աքլորը:

Անհաղթ աքլորը

Հովհաննես Թումանյան

Լինում է, չի լինում՝ մի աքլոր է լինում:

Էս աքլորը քուջուջ անելիս ոսկի է գտնում:

Կտուրն է բարձրանում, ձեն է տալիս.

- Ծուղրուղո՜ւ, փող եմ գտել...

Թագավորը լսում է, իր նազիր-վեզիրներին հրամայում է՝ գնան խլեն բերեն:

Նազիր-վեզիրը գնում են՝ խլում, բերում:

Աքլորը կանչում է.

- Ծուղրուղո՜ւ, թագավորն ինձանով ապրեց...

Թագավորը ոսկին ետ է տալիս իր նազիր-վեզիրին, ասում է .

- Ետ տարեք, իրեն տվեք, թե չէ աշխարհքովը մին կխայտառակի մեզ էդ անպիտանը...

Նազիր-վեզիրը ոսկին տանում են, ետ տալիս աքլորին:

Աքլորն էլ կտուրն է բարձրանում.

- Ծուղրուղո՜ւ, թագավորն ինձանից վախեց...

Թագավորը բարկանում է, իր նազիր-վեզիրին հրամայում է.

- Գնացեք,- ասում է,- բռնեցեք էդ սրիկային, գլուխը կտրեցեք, եփեցեք, բերեք ուտեմ, պրծնեմ դրանից: Նազիր-վեզիրը գնում են, աքլորին բռնում, որ

տանեն: Տանելիս կանչում է.

- Ծուղրուղո՜ւ, թագավորն ինձ հյուր է կանչել...

Տանում են, մորթում, պղինձն են կոխում, որ եփեն, ձեն է տալիս.

- Ծուղրուղո՜ւ, թագավորն ինձ տաք-տաք բաղնիք է դրկել...

Եփում են, բերում, թագավորի առաջն են դնում, կանչում է

- Թագավորի հետ սեղան եմ նստել, ծուղրուղո՜ւ...

Թագավորը շտապով վերցնում է, կուլ տալիս: Կոկորդով գնալիս կանչում է.

- Նեղ-նեղ փողոցներով անց եմ կենում, ծուղրուղո՜ւ...

Թագավորը որ տեսնում է կուլ տվեց, էլ չի ձենը կտրում, իր նագիր-վեզիրին հրամայում է թուրները հանած, պատրաստ կենան, որ մին էլ ձեն ածի զարկեն:

Նագիր վեզիրը թրերը հանած պատրաստ կանգնում են մինը էս կողմը, մյուսը էն: Աքլորը որ թագավորի փորն է հասնում, ձեն է տալիս.

- Լույս աշխարհքում էի, մութ տեղն եմ ընկել, ծուղրուղո՜ւ...

- Զարկեցե՛ք,- հրամայում է թագավորը: Նագիր-վեզիրը զարկում են, տալիս են թագավորի փորը պատռում: Աքլորը դուրս է պրծնում, փախչում է, կտեր ծերին կանգնում ձեն տալի.

- Ծուղրուղո՜ւ...

Պոչատ աղվեսը

Հովհաննես Թումանյան

Լինում է, չի լինում մի պառավ: Էս պառավն իր էծը կթում է, կաթը վեր է դնում, գնում է ցախ ու փետ բերի, որ կրակ անի, կաթն եփի:

Մի աղվես գալիս է, գլուխը կոխում կաթնի ամանը, կաթն ուտում:

Պառավը վրա է հասնում, ցաքատով տալիս է, աղվեսի պոչը կտրում:

Պոչատ աղվեսը փախչում է, գնում է մի քարի վրա կանգնում է ու էսպես խնդրում.

- Տատի՛կ, տատի՛կ, պոչս տուր, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Պառավն ասում է.

- Դե գնա իմ կաթը բեր:

Աղվեսը գնում է կովի մոտ:

- Կովի՛կ, կովի՛կ, կա՛թ տուր ինձ, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Կովն ասում է .

- Դե գնա ինձ համար խոտ բեր:

Աղվեսը գնում է արտի մոտ:

- Արտի՛կ, արտի՛կ, խո՛տ տուր ինձ, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Արտն ասում է.

- Դե գնա ինձ համար ջուր բեր:

Աղվեսը գնում է աղբյուրի մոտ:

- Աղբյո՛ւր, աղբյո՛ւր, ջու՛ր տուր ինձ, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Աղբյուրն ասում է .

- Դե գնա կուժ բեր:

Աղվեսը գնում է աղջկա մոտ:

- Աղջի՛կ, աղջի՛կ, կուժդ տուր, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Աղջիկն ասում է.

- Դե գնա ուլունք բեր ինձ համար:

Աղվեսը գնում է չարչու մոտ.

- Չարչի՛, չարչի՛, ուլունք տուր, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Չարչին ասում է .

- Դե գնա ինձ համար ծու բեր:

Աղվեսը գնում է հավի մոտ:

- Հավի՛կ, հավի՛կ, ծու-ծու տուր, ծու-ծուն տանեմ չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Հավն ասում է.

- Դե գնա ինձ համար կուտ բեր:

Աղվեսը գնում է կալվորի մոտ:

- Կալվո՛ր, կալվո՛ր, կո՛ւտ տուր ինձ, կուտը տանեմ հավին տամ, հավը ինձ ծու տա, ծուն տանեմ չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Կալվորի մեղքը գալիս է, մի բուռ կուտ է տալիս: Աղվեսը կուտը տանում է հավին, հավը ծու է տալի, ծուն տանում է չարչուն, չարչին ուլունք է տալի, ուլունքը տանում է աղջկան, աղջիկը կուժ է տալի, կուժը տանում է աղբյուրին, աղբյուրը ջուր է տալի, ջուրը տանում է արտին, արտը խոտ է տալի, խոտը տանում է կովին, կովը կաթն է տալի, կաթը տանում է տալի պառավին, պառավը պոչը տալիս է իրեն, կցում է, կցմցում, վազում է գնում, իր ընկերներին հասնում:

Երկինքը փուլ է գալիս

Հովհաննես Թումանյան

Լինում է, չի լինում մի ճստիկ-ճուտիկ: Էս ճստիկ-ճուտիկը մի օր ծածուկ մտնում է դրացու պարտեզը, որ քուջուջ անի: Մեկ էլ հանկարծ թփից մի վարդ է պոկվում, ընկնում է պոչին: Ճստիկ-ճուտիկը վախեցած դուրս է փախչում: Վազում է վազում, հասնում է Հավիկ-Մարիկին:

- Վա՛յ, Հավիկ-Մարիկ,- կանչում է հեռվից,- երկինքը փուլ է գալիս:

- Այ ճստիկ-ճուտիկ, էդ որտեղի՞ց իմացար,- հարցնում է Հավիկ-Մարիկը:

- Օ՛, ես իմ աչքովը տեսա, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկավ:

- Դե, արի փախչենք,- ասում է Հավիկ-Մարիկը:

Վազում են, վազում, հասնում են Բադիկ-Տատիկին:

- Վա՜յ, Բադիկ-Տատիկ,- կանչում է Հավիկ-Մարիկը,- երկինքը փուլ է գալիս:

- Ա՛յ Հավիկ-Մարիկ, էդ որտեղի՞ց իմացար:

- Ճստիկ-Ճուտիկն է ասում:

- Ա՛յ Ճստիկ-Ճուտիկ, էդ որտեղի՞ց իմացար:

- Օ՜, ես իմ աչքովը տեսա, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկավ:

- Դե, եկեք փախչենք,- ասում է Սագիկ-Խաքունը:

Վազում են, վազում, հասնում են Հնդու-Թնդուին:

- Վա՜յ, Հնդու-Թնդու,- կանչում է Սագիկ-Խաքունը,- երինքը փուլ է գալիս:

- Ա՛յ Սագիկ-Խաքուն, էդ որտեղի՞ց իմացար,- հարցնում է Հնդու- Թնդուն:

- Բադիկ-Տատիկն է ասում:

- Ա՛յ Բադիկ-Տատիկ, էդ որտեղի՞ց իմացար:

- Հավիկ-Մարիկն է ասում:

- Ա՛յ Հավիկ-Մարիկ, էդ որտեղի՞ց իմացար:

- Ճստիկ-Ճուտիկն է ասում:

- Ա՛յ Ճստիկ-Ճուտիկ, էդ որտեղի՞ց իմացար:

- Օ՜, ես իմ աչքովը տեսա, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկավ:

- Դե, եկեք փախչենք,- ասում է Հնդու-Թնդուն:

Վազում են, վազում, հասնում են Աղա-Աղվեսին:

- Աղա՛-Աղվես, Աղա՛-Աղվես,- կանչում է Հնդու-Թնդուն, երկինքը փուլ է գալիս:

- Ա՛յ Հնդու-Թնդու, էդ որտեղի՞ց իմացար,- հարցնում է Աղա-Աղվեսը:

- Սագիկ-Խաքունն է ասում:

- Ա՛յ Սագիկ-Խաքուն, էդ որտեղի՞ց իմացար:

- Բադիկ-Տատիկն է ասում:

- Ա՛յ Բադիկ-Տատիկ, էդ որտեղի՞ց իմացար:

- Ճստիկ-Ճուտիկն է ասում:

- Ա՛յ Ճստիկ-Ճուտիկ, էդ որտեղի՞ց իմացար:

- Օ՜, ես իմ աչքով տեսա, իմ ականջովը լսեցի, մի կտոր էլ դեռ պոչիս ընկավ:

- էդ ի՞նչ եք ասում,- ասում է Աղա-Աղվեսը,- եկեք ձեզ տանեմ իմ տուն, որ երկինքը ձեր գլխին փուլ չգա:

Ճստիկ-Ճուտիկը, Հավիկ-Մարիկը, Բադիկ-Տատիկը, Սագիկ-Խաքունը, Հնդու-Թնդուն բոլորը միասին ընկնում են Աղա-Աղվեսի ետևից և մտնում են նրա որջը:

Մտնում են նրա որջը ու էն մտնելն էր, որ մինչև էսօր էլ դեռ չեն դուրս եկել:

Երեք արջերի հեքիաթը

Հովհաննես Թումանյան

Մի աղջիկ է լինում: Մի անգամ էս աղջիկը անտառ է գնում: Անտառում մոլորվում է, ճամփա չի գտնում, գալիս է դեմ առնում մի տնակի: Դուռը բաց է լինում: Նայում է, տեսնում տանը ոչ ոք չկա: Ներս է մտնում: Դու մի ասա՝ էս տնակում երեք արջ են ապրում՝ հայրը, մայրը և իրենց քոթոթը: էդ ժամանակ գնացած են լինում անտառ՝ մաճ գալու: Տնակը ունենում է երկու սենյակ՝ մինը սեղանատուն, մյուսը՝ ննջարան: Էս աղջիկը սեղանատուն է մտնում, տեսնում է սեղանի վրա դրված երեք ամաճ ապուր: Առաջինը՝ հոր ամանը, մեծ է լինում, երկրորդը՝ մոր ամանը, միջակ, երրորդը՝ քոթոթի ամանը, փոքրիկ:

Ամեն մի ամանի մոտ էլ մի գդալ է լինում՝ մեծ, միջակ ու փոքր:

Աղջիկը վերցնում է մեծ գդալը, ուտում է մեծ ամանից, անհամ է լինում: Հետո վերցնում է միջակ գդալը, ուտում է միջակ ամանից, դուր չի գալիս: Հետո վերցնում է փոքր գդալը, ուտում է փոքր ամանից: Տեսնում է՝ փոքր ամանի ապուրը համով է: Ուզում է նստել, տեսնում է երեք աթոռ՝ մեկը մեծ, մյուսը՝ միջակ, երրորդը՝ փոքր: Բարձրանում է մեծ աթոռին՝ ընկնում է: Նստում է միջակ աթոռին՝ անհարմար է: Նստում է փոքր աթոռին, քեֆը գալիս է, ենքան լավն է լինում: Վերցնում է փոքր ամանը, դնում է ծնկներին ու սկսում փոքր գդալով ուտել: Ուտում է կշտանում ու սկսում աթոռով օրորվել: Աթոռը կոտրվում է , աղջիկը վեր է ընկնում:

Վեր է կենում, աթոռը բարձրացնում ու մտնում մյուս սենյակը:

Մյուս սենյակում երեք մահճակալ է լինում՝ մեկը՝ մեծ, մյուսը՝ միջակ, երրորդը՝ փոքր:

Պառկում է մեծ մահճակալի վրա, տեսնում է՝ շատ է լայն: Միջակի վրա է պառկում՝ տեսնում է՝ շատ է բարձր: Փոքրի վրա է պառկում, տեսնում է՝ հենց իրենն է որ կա, ու քնում է:

Արջերը քաղցած գալիս են, որ ճաշեն: Հայրը մոտենում է իր ամանին, մտիկ անում ու զարհուրելի գոռում.

- Ես ո՞վ է կերել իմ ամանից:

Մայրը մտիկ է անում իր ամանին ու փնթփնթում.- Ես ո՞վ է կերել իմ ամանից:

Քոթոթն է նայում իր ամանին ու գոմռում.

Ես ո՞վ է կերել իմ ապուրը:

Հայրը նայում է իր աթոռին ու գոռում.

- Ես ո՞վ է նստել իմ աթոռին ու տեղից շարժել:

Մայրն է նայում իր աթոռին ու փնթփնթում.

- Ես ո՞վ է նստել իմ աթոռին ու տեղից շարժել:

Քոթոթն է նայում իր կոտրած աթոռին ու գոմռում.

- Ես ո՞վ է նստել իմ աթոռին ու կոտրել:

Մտնում են մյուս սենյակը:

Հայրը նայում է իր մահճակալին ու գոռում.

- Ես ո՞վ է պառկել իմ անկողնու վրա ու տրորել:

Մայրը նայում է իր մահճակալին ու փնթփնթում.

- Ես ո՞վ է պառկել իմ անկողնու վրա ու տրորել:

Քոթոթն է նայում իր անկողնուն ու գոմռում.

- Ես ո՞վ է պառկել իմ անկողնուն:

Հանկարծ աղջկան նկատում է ու էնպես ճղղում, կարծես մորթում էին իրեն:

- Ես ո՞վ է ... Գտել եմ ... հրես բռնեցեք...վա՜յ...վա՜յ...բռնեցեք:

Եվ ուզում է աղջկան կծել: Աղջիկը վախից վեր է թռչում, աչքերը բաց անում, տեսնում՝ պառկած է իրենց տանը, իր ննջարանում: Ու ես բոլորը երազ է:

Կարմրիկը

Հովհաննես Թումանյան

Լինում է, չի լինում, մի փոքրիկ սիրուն աղջիկ է լինում: Ով մի անգամ տեսնում է, սիրում է էս աղջկան, բայց ամենից շատ իր տատն է սիրում. էլ չի իմանում ինչ անի, որ թոռան սիրտը շահած պահի: Մի անգամ էլ կարմիր գլխարկ է նվիրում: Էս կարմիր գլխարկն էնքան է սազ գալիս էս աղջկան, որ էլ չի ուզում գլխին ուրիշ գլխարկ դնի, բացի կարմիրից: Կարմիր շորերն էլ հագցնում են, ոտից մինչև գլուխ կարմրում է, դրա համար էլ անունը դնում են Կարմրիկ:

Մի անգամ մերը Կարմրիկին ասում է.

- Առ էս գաթեն ու էս գինին, տար տուր տատին. հիվանդացել է, թուլացել է, թող ուտի, խմի, մի քիչ ուժի գա: Դե, քանի օրը շոգ չի, գնա, միայն կարգին, կամաց գնա, ճամփից էլ չծռվես, թե չէ վեր կընկնես, շիշը կջարդես, էլ տատի համար բան չի մնա: Տատի մոտ էլ որ մտնես, չմոռանաս տատին բարևես: Էնտեղ էլ հանգիստ կաց, դես ու դեն չվազվզես:

- Հա, մայրի՛կ, ինչպես ասում ես, էնպես կանեմ,- խոսք է տալիս Կարմրիկն ու գնում:

Տատը ապրելիս է լինում գյուղից մի կես ժամ հեռու, անտառի մեջ: Կարմրիկը հենց անտառն է մտնում թե չէ՝ դեմը դուրս է գալիս մի գել: Բայց Կարմրիկը չի իմանում, թե գելն ի՞նչ սարսափելի գազան է, ու իսկի չի էլ վախենում:

- Բարո՛վ, Կարմրի՛կ,- ասում է գելը:

- Բարո՛վ, գել-ախպեր:

- Էսպես վաղ-վաղ ո՞ւր ես գնում, Կարմրի՛կ:

- Գնում եմ տատիս մոտ:

- Էդ ի՞նչ ես տանում գոգնոցումդ:

- Գաթա ու գինի եմ տանում: Մենք երեկ գաթա թխեցինք, տատիկս հիվանդացել, թուլացել է, տանում եմ, որ գաթան ուտի, գինին էլ խմի, ուժի գա:

- Քո տատը որտե՞ղ է ապրում:

- Անտառում, մի քառորդ ժամի ճամփա էլ կա մինչև էնտեղ: Էնտեղ երեք կաղնի ծառ կա, էն ծառերի տակին է նրա տունը, այ, էն, որ չորս կողմն էլ ցանկապատ ունի. հիմի կարելի է հիշես:

Կարմրիկն էսպես խոսում է, իսկ գելն իրեն-իրեն միտք է անում.

- Էս փոքրիկ, քնքուշ աղջիկը ինչ անուշ պատառ է ... սա ավելի համով կլինի, քան թե պառավը: Ապա, քեզ տեսնեմ, մեր տղա, բանդ էնպես խելքով բռնի, որ ջուխտն էլ ճանկդ գցես:

Մի քիչ Կարմրիկի հետ գնում է ու ասում.

- Մի դեսը մտիկ արա, է՛, Կարմրի՛կ, տես ի՛նչ հիանալի ծաղիկներ են փռված մեր չորս կողմը: Մի չես կանգնում ու չես հիանում սրանցով: Մի լսիր, տես թռչուններն ի՛նչ ուրախ երգում են: Հենց ուղիղ քշած , սուսուփուս գնում ես, կարծես թե ուսումնարան ես գնում: Մի տես, ինչ ուրախություն է անտառում...

Էստեղ գլուխը վեր է քաշում Կարմրիկը, չորս կողմն է աչք ածում, տեսնում է ծառերի տերևների արանքից էստեղ-էնտեղ ներս են թափանցում ու խաղում են արևի շողքերը, իսկ կանաչ խոտի մեջ ցրիվ բարձրանում են գույնզգույն անհամար ծաղիկները: Մտքումն ասում է.

- Տատի համար, որ մի փունջ ծաղիկ էլ տանեմ, հո շատ կուրախանա: Դեռ ժամանակ էլ կա, կհասնեմ...

Ասում է, ճամփից դուրս է գալիս, անտառն ընկնում ու սկսում ծաղիկ քաղել: Մինը պոկում է, տեսնում է նրա կողքին ավելի գեղեցիկն է ծաղկում, հիմի էլ էն կողմն է վազում. էսպիսով էլ ավելի ու ավելի հեռու, անտառի խորքն է մտնում:

Իսկ էս ժամանակ գելը կարճ ճամփով տատի տունն է հասնում ու դուռը ծեծում:

- Էդ ո՞վ է:

- Կարմրիկն եմ, քեզ համար գաթա ու գինի եմ բերել, դուռը բաց արա:

- Դռան փակիչին հուպ տուր, կբացվի,- ներսից ձեն է տալիս տատը: - Ես թույլ եմ, չեմ կարող վեր կենալ:

Գելը դռան փակին հուպ է տալիս, դուռը ետ է բացվում: Լուռ հարձակվում է անկողնու վրա ու պառավին ողջ-ողջ կուլ տալիս: Հետո նրա շորերը հագնում է, նրա գլխակապիչը կապում, անկողնում պառկում ու վերմակը քաշում վրեն:

Իսկ Կարմրիկը էնտեղ մի ծաղկից մյուս ծաղիկն է վազում ու երբ որ էնքան շատ ծաղիկ է քաղում, որ տեսնում է էլ չի կարող տանի, նոր տատը միտն է ընկնում. Դարձյալ ընկնում է ճամփեն, վազում դեպի տատի տունը:

Որ հասնում է տատի տունը զարմանում է, թե դուռն ինչո՞ւ է կրնկի վրա բաց: Ներս է մտնում, սիրտը մի վախ է ընկնում: Ասում է «Տեր Աստված, միշտ տատի մոտ էնպես լավ էր, էսօր ինչո՞ւ եմ էսպես վախենում...»:

Մտքումն էսպես է ասում ու ձեն է տալիս.

- Բարի լո՛ւս, տատի՛ ջան:

Պատասխան չկա: Մոտենում է տատի անկողնուն, վերմակը ետ է քաշում: Տեսնում է տատը պառկած է, բայց չի իմանում ինչու գլխակապիչը ներքև է քաշել ու էնպես տարօրինակ է նայում որ...

- Վա՜յ,- ասում է ,- տատի՛, էդ ինչ ահագին ականջներ ունես...

- Էս նրա համար է, որ քեզ լավ լսեմ, բալիկս...

- Վա՜յ, տատի՛, էդ ի՜նչ ահագին աչքեր ունես...

- Էս նրա համար է, որ քեզ լավ տեսնեմ, բալիկս...

- Վա՜յ, տատի՛, էդ ի՜նչ ահագին ձեռներ ունես...

- Էս նրա համար է, որ քեզ ավելի լավ գրկեմ, բալիկս...

- Բայց, տատի՛, էդ ի՜նչ սարսափելի մեծ բերան ունես...

- Իսկ էս նրա համար է, որ քեզ շուտով ուտեմ...

Ասում է գելն ու տեղիցը ներքև թռչում, ձեռաց կուլ տալիս խեղճ Կարմրիկին:

Սրան էլ կուլ է տալիս, կշտանում է ու նորից անկողնում պառկում, խռմփացնելով քնում: Հենց էս ժամանակ, դու մի ասիլ, մի որսկան էդ պառավի տան մոտիցը անց է կենում: Ասում է.

- Էս պառավն ինչո՞ւ է էսպես խռմփացնում, մի տեսնեմ, չլինի՞ թե հետը բան է պատահել...

Ներս է մտնում, մահճակալին մոտենում, տեսնում է պառավի տեղը պառկած գելը:

- Հը, վերջապես ճանկս ընկար, անիծված, վաղուց էի քեզ ման գալիս:

Ասում է որսկանն ու մին ուզում է հրացանով զարկի, մին էլ մտածում է, թե կարելի է պառավին կուլ է տվել, ու կարելի է դեռ նրան փրկել: Էլ հրացանով չի զարկում, դանակն առնում է ու սկսում է փորը ճղել: Մի քիչ ճղում է թե չէ մի կարմիր գլխարկ է երևում, մի քիչ էլ ճղում է, Կարմրիկը կենդանի, կենդանի դուրս է թռչում ու կանչում.

- Վա՜յ, ինչքան վախեցա... Ինչ մութն էր գիլի փորում...

Նրա ետևից էլ տատն է դուրս գալիս, նա էլ էր դեռ կենդանի, բայց դժվար էր շունչ քաշում:

Էստեղ Կարմրիկը շտապով մեծ-մեծ քարեր է հավաքում, էն քարերով բերում են գիլի փորը լցնում: Գելը զարթնում է, ուզում է տեղիցը թռչի, դուրս փախչի, բայց քարերից էնքան ծանրացել էր, որ տեղնուտեղը վեր է ընկնում, գետնովը դիպչում, սատկում:

Ամենքն էլ էնպես ուրախանում են, էնպես ուրախանում էն, որ էլ լեզվով ասիլ չի լինիլ: Որսկանը գիլի մորթին պոկում է, վեր կալնում, գնում, պառավը նստում է, սկսում է Կարմրիկի բերած գաթան ուտել, գինին խմել ու քիչ-

քիչ ուժի գալ, իսկ Կարմրիկը մտածում է.

- Չէ, էս միևը բավական էր, էլ երբեք ճամփից դուրս չեմ գա, մենակ անտառ ընկնիլ, երբ որ մայրիկը չի թողնում:

Ասում են, սրանից ետ մի անգամ էլ Կարմրիկը երբ որ իր տատի համար թխվածք է եղել տանելիս, մի ուրիշ գել է ուզեցել համոզի, որ ճամփից դուրս գա: Բայց Կարմրիկն զգուշացել է ու իր ճամփեն է գնացել: Երբ որ տատի մոտ է հասել պատմել է, թե հապա էսպես մի գել պատահեց ինձ ճամփին, բարևեց, բայց էնպես չար աչքով էր նայում, որ թե ճամփի մեջ չլինեինք, հավատա, թե ինձ ուտեր...

Տատն ասել է.

- Վա՜յ, Կարմրի՛կ ջան, կաց դուռը փակենք, որ չլինի, թե էդ գելը գա հանկարծ:

Մի քիչ կենում են, տեսնում են՝ գելը դուռը ծեծում է ու ձեն է տալիս.

- Տատի՛, դուռը բաց արա, ես Կարմրիկն եմ, քեզ համար գաթա եմ բերել...

Տատն ու Կարմրիկը ոչ պատասխան են տալիս, ոչ դուռը բաց են անում: Սրանից ետը գելը մի քանի անգամ էլ տան չորս կողմը պտույտ է գալիս ու բարձրանում կտուրը: Էստեղ սպասում է, թե երբ պետք է իրիկունը Կարմրիկը դուրս գա իրենց տունը գնալու, որ բռնի ուտի: Տատը գլխի է ընկնում նրա մտքինը:

Դռանը հենց տան պատի տակին, մի մեծ կոթ է լինում ջրով. Կարմրիկին ասում է.

- Կարմրի՛կ ջան, էստեղ մսի խաշու կա, վեր կալ էս խաշուն, տար ածա կոթի մեջը:

Կարմրիկը մսի խաշուն տանում է, ածում դռան մեծ կոթի մեջը, էնքան, որ կոթը պռնգեպռունգ լցվում է:

Էս խաշվի հոտը վեր է բարձրանում, ընկնում գիլի քիթը:

Գելը փնչացնում է, վերևից սկսում է ծիկրակել, թաքուն նայել դեպի ներքև, վիզը ձգում է, ձգում է, էնքան ձգում է, որ էլ չի կարողանում իրան պահի, թրը՛մփ, ընկնում է ուղիղ կոթի մեջը, խեղդվում: Կարմրիկն էլ ուրախ-ուրախ վեր է կենում, գնում իրենց տուն. էն է լինում, էն, էլ ճամփին ոչ ոք ձեռք չի տալիս նրան:

Խոսող ծուկը

Հովհաննես Թումանյան

Լինում է, չի լինում մի աղքատ մարդ: Էս աղքատ մարդը գնում է դառնում մի ձկնորսի շալակատար: Օրական մի քանի ծուկ է աշխատում, տուն բերում, նրանով ապրում են ինքն ու կնիկը:

Մի անգամ էլ ձկնորսը մի սիրուն ծուկ է բռնում, տալիս իր շալակատարին, որ պահի, ինքն էլ ետ ջուրն է մտնում: Էս շալակատարը գետափին նստած նայում է, նայում էն սիրուն ձկանն ու միտք է անում:

- Տեր Աստված,- ասում է,- սա էլ, որ մեզ նման շունչ-կենդանի է, դու ասա՝ սա՞ էլ մեզ նման ծնող ունի, ընկեր ունի, աշխարհքից բան է հասկանում, ուրախություն կամ ցավ է զգում, թե՞ չէ...

Հենց էս մտածելու ժամանակ ծուկը լեզու է առնում:

- Լսի,- ասում է,- մարդ-ախպեր: Ընկերներիս հետ ես խաղում էի գետի ալիքների մեջ: Ուրախությունից ինձ մոռացա ու անզգույշ ընկա ձկնորսի ուռկանը: Հիմի, ով գիտի, իմ ծնողը ինձ որոնում է ու լաց է լինում, հիմի ընկերներս տխրել են: Ես էլ, տեսնում ես, ինչպես եմ տանջվում. շունչս կտրում է ջրից դուրս: Ուզում եմ էլ ետ գնամ ապրեմ ու խաղ անեմ նրանց հետ էն պաղ ու պարզ ջրերում: Էնպես եմ ուզում, էնպես եմ ուզում... Եկ խեղճ արի, ազատ արա ինձ, բա՛ց թող, բա՛ց թող գնամ...

Էսպես էր ասում ցած, շատ ցած ձենով, ցամաքած բերանը բացուխուփ անելով:

Էս շալակատարի մեղքը գալիս է, առնում է, ետ գցում գետը:

- Գնա՛, սիրուն ձկնիկ, թող լաց չլինի քո ծնողը: Թող չտխրեն քո ընկերները: Գնա՛, ապրի՛ ու խաղ արա նրանց հետ:

Ձկնորսը սաստիկ բարկանում է շալակատարի վրա:

- Տո՛, ախմախ,- ասում է,- ես էստեղ ջրի մեջ թրջվելով ձուկ եմ բռնում, դու իմ աշխատանքն առնում ես, էլ ետ ջուրը գցո՞ւմ... Դե գնա, կորի, էլ իմ աչքին չերևաս, էլ իմ շալակատարը չես էս օրից. գնա՛, սովից մեռի՛:

Ձեռի տոպրակն էլ խլում է ու ճամփու դնում:

- Հիմի ես ո՞ւր գնամ, ի՞նչ անեմ, ո՞նց ապրեմ...- տարակուսած մտածելով, դառն ու դատարկ վերադառնում է աղքատը դեպի տուն:

Էս տխուր մտածմունքի ժամանակ ճամփին դեմը դուրս է գալի մի մարդակերպ Հրեշ՝ առաջը մի գեղեցիկ կով:

- Բարի օր, ախպերացու, էդ ի՞նչ ես մոլորել, ի՞նչ ես միտք անում,- հարցնում է Հրեշը:

Աղքատը պատմում է իր գլխի եկածը, թե ինչպես հիմի մնացել է անգործ, անճար ու չի իմանում, թե ոնց պետք է ապրեն ինքն ու իր կնիկը:

- Լսի՛, բարեկամ,- ասում է Հրեշը,- ես կաթնատու կովը ես քեզ կտամ երեք տարվան ժամանակով: Ամեն օր էնքան կաթ տա, որ քու կնիկն ու դու կուշտ-կուշտ ուտեք, ապրեք:

Երեք տարին լրացավ թե չէ հենց էն գիշերը կգամ ձեզ հարց կտամ: Թե հարցիս պատասխանեցիք, իմ կովը ձեզ լինի, թե չէ երկուսդ էլ իմն եք, տանելու եմ, ինչ ուզեմ, կանեմ: Համաձա՞յն ես:

- Մի բան, որ առանց էն էլ սովից մեռնելու ենք,- մտածում է աղքատը,- կովը կտանեմ, էս երեք տարին կապրենք, մինչև երեք տարվա լրանալն էլ Աստված ողորմած է: Մի տեղից մի դուռը կբացվի, կամ գուցե հենց պատասխանը տալիս ենք, ով գիտի...

- Համաձայն եմ,- ասում է ու կովն առաջն անում, տանում տուն:

Երեք տարի կթում են, լիուլի ուտում, ապրում: Չեն էլ նկատում, թե ինչպես անցավ երեք տարին. և ահա հասնում է նշանակած օրը, որ Հրեշն էն գիշեր պիտի գա:

Մարդ ու կնիկ վերջալույսի տակ տխուր նստում են դռանը ու միտք են անում, թե ինչ պատասխան տան Հրեշին, կամ, ով գիտի, ինչ կհարցնի նա. ո՞վ կիմանա Հրեշի միտքը:

- Ա՛յ թե ինչ դուրս կգա, երբ մարդ Հրեշի հետ գործ բռնի... Հրեշի հետ հաշիվ ունենա... Հրեշից լավություն ընդունի...- հառաչելով զղջում էին մարդ ու կին, բայց անցկացածն անց էր կացել, էլ հնար չկար: Իսկ գարհուրելի գիշերը արդեն վրա էր հասնում:

Էս ժամանակ նրանց մոտենում է մի անծանոթ գեղեցիկ երիտասարդ:

- Բարի իրիկո՛ւն,- ասում է,- ճամփորդ մարդ եմ, մութն ընկնում է, ես էլ հոգնած եմ, հյուր չե՞ք ընդունի ձեր տանը էս գիշեր:

- Ընչի՛ չէ, ճամփորդ ախպեր, հյուրն Աստծունն է: Բայց մեզ մոտ վտանգավոր է էս գիշեր: Մենք Հրեշից մի կով ենք առել էն պայմանով, որ երեք տարի կթենք, ուտենք, երեք տարուց ետը գա մեզ հարց տա, թե պատասխանենք, կովը մեզ լինի, թե չէ՝ իր գերին ենք: Հիմի ժամանակը լրացել է. էս գիշեր պիտի գա, ու մենք էլ չգիտենք, թե ինչ պատասխան տանք: Հիմի մեզ ինչ անի՛ մենք ենք մեղավոր, վայ թե քեզ էլ վնասի:

- Բան չկա, որտեղ դուք, էնտեղ էլ ես,- պատասխանում է օտարականը:

Համաձայնում են, հյուրը մնում է: Սին էլ կեսգիշերին դուռը դղրդում է:

- Ո՞վ է:

- Հրեշը: Եկել եմ, որ եկել եմ, դե պատասխանս տվեք:

Ինչ պատասխան. սարսափից մարդ ու կնկա լեզուն կապվում է, մնում են տեղները քարացած:

- Մի վախենաք, ես ձեր տեղակ սրա պատասխանը կտամ,- ասում է երիտասարդ հյուրը ու գնում է դեպի դուռը:
- Եկել եմ,- դռան ետևից ձայն է տալի Հրեշը:
- Ես էլ եմ եկել,- պատասխանում է ներսից հյուրը:
- Որտեղի՞ց ես եկել:
- Ծովի էն ափից:
- Ընչո՞վ էս եկել:
- Կաղ մոծակը թամքել եմ, վրեն նստել եմ, եկել:
- Ուրեմն՝ ծովը պստիկ է եղել:
- Ի՞նչ պստիկ. արծիվը չի կարող մի ափից մյուսը թռչի:
- Ուրեմն՝ արծիվը ճուտ է եղել:
- Ի՞նչ ճուտ. թևերի շվաքը քաղաք է ծածկում:
- Ուրեմն՝ քաղաքը շատ է փոքրիկ:
- Ի՞նչ փոքրիկ. նապաստակը մի ծայրից մյուսը չի հասնի:
- Ուրեմն՝ նապաստակը ծագ է:
- Ի՞նչ ծագ. մորթին մի մարդու քուրք դուրս կգա, գլխարկն ու տրեխն էլ ավել:
- Ուրեմն՝ մարդը թզուկ է:
- Ի՞նչ թզուկ. ծնկան ծերին աքլորը ծուղրուղո՞ւ կանչի, ձենը ականջը չի հասնի:
- Ուրեմն՝ խուլ է:
- Ի՞նչ խուլ. սարում որ պախրեն խոտ պոկի, նա կլսի:

Հրեշը մնում է կապված-մոլորված. զգում է, որ ներսը մի ուժ կա իմաստուն, համարձակ, անհաղթելի, էլ չի իմանում ինչ ասի, սուսուփուս քաշվում, կորչում է գիշերվա խավարի մեջ:

Սրանք նոր մեռած տեղներիցը ետ են գալիս, ուրախանում, աշխարհքովը մին են լինում: Հետն էլ բացվում է բարի լուսը, և երիտասարդ հյուրը վեր է կենում, մնաք բարով ասում, որ գնա իր ճանապարհը:

- Չենք թողնի, որ չենք թողնի,- առաջը կտրում են մարդ ու կին,- դու, որ փրկեցիր մեր կյանքը, ասա՝ ինչով ետ վճարենք քո լավությունը...
- Չէ, անկարելի բան է, պետք է գնամ իմ ճանապարհը:
- Դե գոնե անունդ ասա, եթե լավությունդ կորչի, ու չկարողանանք ետ վճարել, գոնե իմանանք, թե ում ենք օրհնելու...
- Լավությունը արա ու թեկուզ ջուրը գցի՝ չի կորչի: Ես հենց էն խոսող ծուկն եմ, որի կյանքը դու խնայեցիր... - ասում է անծանոթն ու չքանում ապշած մարդ ու կնկա աչքերից:

Անտառի տնակը

Հովհաննես Թումանյան

Մի խոր անտառի բերանում մի խրճիթ է լինում: Էն խրճիթում կնկա ու երեք աղջիկների հետ ապրելիս է լինում մի աղքատ փայտահայտ:

Մի առավոտ գործի գնալիս կնկանն ասում է.

- Այ կնիկ, էսօր բանս մինչև կեսօր չեմ վերջացնի, մեր մեծ աղջկա հետ ինձ համար ճաշ կուղարկես անտառը: Ես էլ հետս մի տոպրակ կորեկ կվերցնեմ, շաղ տալով կերթամ, որ էն նշանովը գա ու ճամփեն չկորցնի:

Ճաշ է դառնում թե չէ՝ մեծ աղջիկը կերակուրն առնում է, ճամփա ընկնում: Բայց ծտերը. արտուտները, սարեկներն ու դեղձանիկները շաղ տված կորեկն արդեն վեր քաղած են լինում, ու աղջիկը չի կարողանում հոր հետքը գտնի: Գնում է, գնում, մինչ արևը մեր է մտնում ու մութը վրա է հասնում անտառում: Ծառերը շրշում են խավարում, բուերը կանչում, կռնչում, ու աղջիկը սկսում է վախենալ:

Մին էլ տեսնում է՝ հեռվում, ծառերի արանքից մի կրակ է փայլփլում:

Էնտեղ երևի մարդիկ են ապրում, գնամ նրանց մոտ մնամ էս գիշեր,- մտածում է աղջիկը ու գնում է կրակի վրա:

Գնում է հասնում մի տնակի, դուռը ծեծում է:

- Ո՞վ ես, ներս արի,- կանչում է ներսից մի ձայն:

Աղջիկը ներս է մտնում, տեսնում է՝ հրես նստած մի ալևոր մարդ, գլուխը կախ արած, սպիտակ միրուքն ալիքածև իջնում է մինչև գետին: Իսկ էն կողմը մի չալ կով, մի հավ ու մի աքլոր:

Աղջիկը պատմում է ծերին, թե ինչպես է ինքը մոլորվել անտառում ու խնդրում է, որ տեղ տա գիշերը մնալու:

Ծերունին դիմում է իր կենդանիներին.

- Սիրո՛ւն հավիկ, իմ լավիկ,
Չալ ու նախշո՛ւն իմ կովիկ,
Եվ դո՛ւ, աքլո՛ր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սրան:

Կենդանիները միասին պատասխանում են.

- Լա՛վ:

Էն ժամանակ ծերունին աղջկան ասում է.

- Համեցե՛ք, մեր աչքի վրա, սիրո՛ւն աղջիկ, մեր դուռը բաց է, տունը լիքը: Համեցե՛ք, մոտեցի՛ր օջախին, կերակուր շինի մեզ համար էլ, քեզ համար էլ:

Աղջիկը մտնում է խոհանոց և, ճիշտ որ, ամեն բան գտնում է առատ-առատ: Մի լավ ընթրիք է պատրաստում, բերում է ծերունու առաջ լիքը սեղան է բաց անում, ինքն էլ նրա հետ նստում, ուտում, խմում, կշտանում: Որ կշտանում է պրծնում.

- Բա ես հոգնած եմ,- ասում է,- հիմի որտե՞ղ քնեմ:

Էստեղ կովը, հավն ու աքլորը պատասխանում են.

- Ողջ դրա հետ դու կերար
Ու խմեցիր, ինչ որ կար,
Մտիկ չարիր իսկի մեզ.
Գնա, քնի ուր կուզես:

Էն ժամանակ ծերունին ասում է.

Բարձրացի, սանդուղքի գլխին մի սենյակ կա: Էն սենյակում երկու անկողին կա. անկողինները պատրաստի, ես էլ կգամ, կքնեմ:

Աղջիկը վերև է բարձրանում, անկողինները գցում ու էլ ծերունուն չի սպասում, ինքը պառկում է քնում: Մի քիչ հետո ծերունին գալիս է, մոմի լույսով նայում է աղջկան ու գլուխը ժաժ տալիս: Գիշերվա մի ժամանակ, երբ տեսնում է խորը քնած է, մահճակալի տակին մի գաղտնի դուռն է լինում, բաց է անում, աղջկան թողնում ցած ու կրկին փակում:

Փայտահատը իրիկունը տուն է գալի, բարկանում է կնկա վրա, որ իրեն ամբողջ օրը սոված է թողել:

- Ես ի՞նչ անեմ,- պատասխանում է կինը,- ճաշը տվել եմ մեր մեծ աղջկան, ղրկել, ինչպես երևում է, ճամփեն կորցրել է, չի գտել, ինքն էլ ետ չի եկել դեռ:

Փայտահատը մյուս օրն էլ առավոտյան վաղ վեր է կենում, գնում անտառը: Պատվիրում է, որ ես անգամ միջնեկ աղջիկը տանի ճաշը:

Էսօր հետս ոսպ կվերցնեմ,- ասում է,- որ ճամփին շաղ տամ: Ոսպը կորեկից խոշոր է, աղջիկս հեշտ կտեսնի ու ճամփեն չի կորցնի:

Կեսօրին միջնեկ աղջիկը ճաշն առնում է ճամփա ընկնում: Գնում է, գնում, ոչ մի տեղ ոսպ չի գտնում: Դու մի ասի՝ դարձյալ թռչունները կերել են, մի հատ էլ չեն թողել:

Աղջիկն անտառում թափառում է, թափառում, գիշերը ընկնում էլ նույն ծերունու մոտ, հաց ու քնելու տեղ խնդրում: Ծերունին դիմում է կովին, հավին ու աքլորին.

- Սիրո՛ւն հավիկ, իմ լավիկ,
Չալ ու նախշո՛ւն իմ կովիկ,

Եվ դո՛ւ, աքլո՛ր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սրան:

- Լավ,- պատասխանում են կենդանիները: Միջնեկ քույրն էլ մեծ քրոջ նման ընթրիք է պատրաստում, ծերի հետ ուտում, խմում, կշտանում. կենդանիների վրա ուշք էլ չի դարձնում: Երբ հարցնում է, թե ես որտեղ պիտի քնեմ, կենդանիները պատասխանում են.

- Ողջ դրա հետ դու կերար
Ու խմեցիր, ինչ որ կար,
Մտիկ չարիր իսկի մեզ.
Գնա, քնի ուր կուզես:

Հենց նա էլ գնում է թե չէ, ետևից գնում է ծերունին, գլուխը թափահարում ու դարձյալ թողնում է ներքև:

Երրորդ առավոտը փայտահատը կնկան ասում է.

- Էսօր մեր փոքրիկ աղջկա ծեռքով ղրկի ճաշը: Նա բարի է ու ականջով: Նա ճամփեն կգտնի, իր քույրերի նման չի, որ դես ու դեն ընկնի:

Մայրը չի ուզում երրորդ աղջկանն էլ անտառը ղրկի: Լաց է լինում, ասում է աչքիս սև ու սպիտակը սա է մնացել, ինչու ես ուզում սրան էլ կորցնես մեծերի նման:

- Դու հանգիստ կաց,- ասում է փայտահատը,- սա կորչիլ չի, սա էնպես խելոք է որ... ես էլ էսօր հետս սիսեռ կտանեմ ճամփին շաղ տալու: Սիսեռը հո ոսպ չի, նրանով ճամփեն անպատճառ կգտնի:

Բայց երբ աղջիկը ճաշն առած անտառ է մտնում, թռչուններն արդեն սիսեռը կերած են լինում: Աղջիկը մնում է տարակուսած. չի իմանում որ կողմը գնա: Մտածում է, դարդ է անում, թե հիմի հայրը կսովի, մայրը լաց կլինի...

Ման է գալի, ման, հորը չի գտնում: Երբ մութն ընկնում է, հեռվից տեսնում է անտառի տնակի լուսն ու գնում է էն լուսի վրա: Մտնում է ներս, տեղ է խնդրում, ու ալեհեր ծերունին դարձյալ դիմում է իր կենդանիներին.

- Սիրո՛ւն հավիկ, իմ լավի՛կ,
Չալ ու նախշո՛ւն իմ կովիկ,
Եվ դո՛ւ, աքլո՛ր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սրան:

- Լա՛վ... - պատասխանում են կենդանիները: Էն ժամանակ աղջիկը մոտենում է, գուրգուրում հավին ու աքլորին, կովի ծակատը քորում: Ծերի պատվերով ընթրիք է պատրաստում, դնում սեղանին ու ասում.

- Ինչո՞ւ ես պետք է ուտեմ, էս բարի կենդանիները քաղցած նայեն: Գնում է կուտ բերում, ածում հավի ու աքլորի առջև, կովի համար էլ մի խորոմ խոտ:

- Կերեք,- ասում է,- իմ սիրելիք, այ հիմի ջուր էլ կբերեմ: - Գնում է մի դույլ ջուր էլ բերում դնում առաջները:

Ամենքին կշտացնում է, նոր ինքն է նստում ուտում, ինչ որ թողել էր ծերունին: Իսկ երբ քնելու ժամանակը գալիս է, ասում է. - Ժամանակը չի՞ արդյոք, որ ամենքս էլ հանգստանանք...

- Սիրո՛ւն հավիկ, իմ լավիկ,
Չալ ու նախշո՛ւն իմ կովիկ,
Եվ դո՛ւ, աքլո՛ր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սրան:

- Լա՛վ,- պատասխանում են կենդանիները. -

Մեզ հետ կերար դու միասին
Ու խոշացիր մեր մասին,
Բարի գիշեր քեզ, բարի.
Մուրազդ Աստված կատարի:

Ծերունի աղջիկը բարձրանում է վերև, անկողինները պատրաստում: Ծերունին գալիս է քնում: Ինքն էլ մյուս մահճակալին է պառկում ու քուն մտնում հանգիստ:

Գիշերվա մի ժամանակ տունը հանկարծ դղրդում է, կարծես քանդվում ու

տակն ու վրա է լինում: Աղջիկը վախեցած զարթնում է, բայց աղմուկն անցնում է, ինքն էլ քնում է նորից:

Առավոտը աչք բաց է անում, ի՞նչ է տեսնում: Տեսնում է պառկած մի մեծ, շքեղ զարդարած ու կահավորած դահլիճում, շուրջը թավիշ ու ոսկի, հարավային փարթամ բույսեր ու ծաղիկներ այրվում, վառվում են առավոտյան արևի ճառագայթների տակ: Տեսնում է, բայց աչքերին չի հավատում, ասում է՝ երազի մեջ եմ երևի: Էսպես մտածելիս ներս են մտնում երեք ծոխ հագնված ծառաներ, խոնարհ գլուխ են տալի ու հարցնում.

- Ի՞նչ կհրամայեք, տիրուհի:

- Լա՛վ, գնացեք,- պատասխանում է քնաթաթախ աղջիկը,- հիմա վեր կկենամ, ծերունու համար կերակուր կպատրաստեմ, կովին, հավին ու աքլորին կհոգամ:

Կարծում է, թե ծերունին էլ արդեն վեր է կացել: Նայում է նրա անկողնին, տեսնում է ծերունին չկա, տեղը պառկած է մի օտար ջահել ու գեղեցիկ երիտասարդ...

Եվ ահա երիտասարդը աչքերը բաց է անում ու էսպես խոսում զարմացած աղջկա հետ

- Լսիր, սիրուն աղջիկ, ես էս երկրի թագավորի որդին եմ: Չար վհուկը կախարդել էր ինձ ու դատապարտել, որ ես ծերի կերպարանքով ապրեի անտառում, ոչ ոք էլ չլիներ ինձ հետ, բացի իմ երեք ծառաները, նրանք էլ կովի, հավի ու աքլորի կերպարանքով: Ու էդպես պետք է մնայինք, մինչև հայտնվեր էն աղջիկը, էն քնքուշ սիրտը, որ ոչ միայն մարդկանց, այլև կենդանիներին լիներ սիրող ու կարեկից... Էն աղջիկը դու եղար: Քո շնորհիվ էս գիշեր կես-գիշերին, մենք ամենքս ազատվեցինք կախարդանքից, ու իմ պալատը, որ դարձել էր անտառի մի հին տնակ, նորից դարձավ առաջվան պալատը:

Ու կանչում է թագավորազնը իր ծառաներին, որ գնան աղջկա ծնողներին բերեն հարսանիքին:

- Բայց ո՞րտեղ են իմ քույրերը,- հարցնում է աղջիկը:

- Նրանց ես փակել եմ ներքնահարկում,- պատասխանում է երիտասարդը:- Էգուց կուղարկեմ անտառը, էնտեղ ածխարարի մոտ ծառայեն ու էնքան մնան, մինչև որ դառնան ավելի բարի ու սովորեն մտածել կենդանիների մասին:

Աննրևը

Դ. Բիսեթ

Երկնքում ապրում էին երկու ամպիկ: Մեկի անունը Չարաճճի էր, իսկ մյուսինը՝ Ուրախիկ: Նրանք սլանում էին բարձր ու չէին խանգարում, որ արևը շողա, թռչունները երգեն, երեխաները խաղան:

- Չարաճճի,- ասաց Ուրախիկը,- չիջնե՞նք ներքև և բոլորին մի լավ թրջենք:

- Ճիշտ է, թե չէ պարապ-սարապ թռչելը ձանձրալի է:

Նրանք իջան և գետինը թրջեցին: Բայց մարդիկ դժգոհ էին:

- Ի՛նչ բարս եղանակ է,- ասում էին նրանք:

- Կարծես դույլով թափեն, ա՛յ քեզ անհաջող օր:

- Դե, եթե մենք նրանց դուր չենք գալիս, թռչենք այստեղից,- ասաց Ուրախիկը:

Նրանք թռան, և անձրևը կտրվեց: Բոլորը շատ գոհ էին: Ամեն օր շողում էր արևը, և օրեցօր շոգն ուժեղանում էր: Երկար ժամանակ ոչ մի անձրև չէր գալիս: Խոտերը դեղնել և չորացել էին, ծաղիկները՝ թառամել: Կովերը մնացել էին առանց խոտ և կաթ չէին տալիս: Պաղպաղակ պատրաստողը չէր կարողանում կաթ գնել, որպեսզի պատրաստեր: Երեխաները լացում էին և պաղպաղակ ուզում: Մարդիկ հագան բաճկոնները, բացեցին անձրևանոցները և դուրս եկան փողոց: Այդ տեսնելով՝ մարդիկ զարմացան.

- Իջնենք, տեսնենք ի՞նչ է պատահել:

Նրանք իջան ներքև, ու նորից տեղաց հորդ անձրև:

- Ի՜նչ հաճելի անձրև է,- ուրախացան բոլորը:

- Վերջապես, ա՛յ հաջողակ օր:

Բոլորը շատ գոհ էին և՛ Ուրախիկն ու Չարաճճին, և՛ երեխաներն ու մեծահասակները:

Շնորհակալությունը, Ներեցեքը, Խնդրեմը

Դ. Բիսեթ

Մի անգամ Խնդրեմը և Շնորհակալությունը հանդիպեցին, և ամեն մեկն սկսեց դժգոհել իր բախտից:

- Ո՛չ մեկը մեզ չի գնահատում և չի հարգում:

Այստեղ նրանց է միանում Ներեցեքը:

- Որտե՞ղ է արդարությունը, բոլոր մյուս բառերն ապրում են հանգիստ, իսկ մենք անդադար աշխատում ենք: Մեզ միշտ հիշում են «շնորհակալություն», «խնդրեմ», «ներեցեք», նույնիսկ չեն թողնում հանգիստ քնենք:

- Այո՛, արդարություն չկա,- համաձայնեց Շնորհակալությունը,- մեր փողոցում մի կին է ապրում: Նա իր աղջկան միշտ ասում է՝ «Ասա՛ շնորհակալություն»:

Վստահ եմ՝ մինչև մեծանալը՝ աղջիկը կմոռանա, թե ինչ է «շնորհակալությունը»:

- Ինձ մոտ էլ է նույնը,- հոգոց հանեց խնդրեմը,- ավտոբուսում, փողոցում միայն լսում ես՝ փոխանցեք խնդրեմ, մեկ տոմս խնդրեմ: Իհարկե, ես հասկանում եմ, դա քաղաքավարություն է, բայց բոլորովին ուժերս կորցրել եմ:

Խնդրեմը խոսելով հետ-հետ գնաց, որպեսզի նստի, բայց պատահմամբ կանգնեց Շնորհակալության մեջքին:

- Օ՜յ, ների՛ր ինձ:

- Ահա՛, դո՛ւ էլ,- բարկացավ Ներեցեքը,- չե՞ս կարող առանց ինձ յոլա գնալ:

- Ների՛ր, ես պարտավոր էի ներողություն խնդրել:

- Նորի՞ց, չէ, պետք է մի բան անել: Եկեք մի շաբաթով գնանք ծով՝ հանգստանալու: Կլողանանք, կխաղանք և ոչ մի աշխատանք: Թող մեկ շաբաթ մարդիկ առանց մեզ դիմանան: Այդպես էլ արեցին: Իսկ երբ վերադարձան, նույնիսկ ուրախացան, լսելով՝ ինչպես են բոլորը անդադար կրկնում իրենց անունները:

Եվ կարևորը՝ նրանք արդեն տեղին էին օգտագործում այդ բառերը, երբ ուզում էին ներվել, ասում էին՝ «ներեցեք», երբ ուզում էին շնորհակալություն հայտնել, ասում էին՝ «շատ շնորհակալ եմ», իսկ երբ ուզում էին լինել քաղաքավարի, ասում էին՝ «խնդրեմ»: Ընկերներն այժմ նույնիսկ գիրք կարդալու ժամանակ ունեին և ամեն տարի մեկ շաբաթով գնում էին ծով՝ հանգստանալու:

Երկու ալիք

Դ. Բիսեթ

Ծովում երկու ալիք էին ապրում, մեկը մեծ, մյուսը փոքր: Մեծ ալիքի անունը Մեծ էր, իսկ փոքրինը Փոքր:

Նրանք միշտ միասին էին լինում: Փոքրը բոլորի նկատմամբ բարեհամբույր էր, խաղում էր ծկների, քամու և ուրիշ ալիքների հետ: Իսկ Մեծը ամեն բան ջարդուփշուր էր անում ու խորտակում: Նա հատկապես սիրում էր հարձակվել նավերի վրա:

Մի անգամ Մեծ ալիքն ու Փոքր ալիքը խաղում էին ծովափի մոտերքում: Փոքրը լողափին տեսավ մի տղայի, որի ձեռքին պաղպաղակ կար:

- Ես էլ եմ պաղպաղակ ուզում,- ասաց նա:

- Հիմա կբերեմ,- ասաց մեծ ալիքը: Նա նետվեց տղայի վրա, ձեռքից խլեց պաղպաղակը և տվեց Փոքրին:

Փոքրիկը պաղպաղակը ուտելուց հետո հարցրեց.

- Իսկ հիմա ի՞նչ ենք անելու:

Նայիր այս քառաժայռերին և կտեսնես:

Մեծ ալիքը փքվեց, դարձավ քառաժայռից էլ մեծ և փլվեց նրանց վրա, բայց հետո նա թռավ քարաժայռերի վրայով և ընկավ նեղլիկ ճեղքի մեջ:

- Օգնեցե՛ք,- գոչեց նա:

Այդ պահին անցնում էր Միրանդա բադը: Նա կանգնեց և հարցրեց:

- Ի՞նչ է պատահել:

- Ես չեմ կարողանում այստեղից դուրս գալ: Օգնիր ինձ, խնդրում եմ:

- Ո՛չ: Ես քեզ չեմ օգնի,- ասաց Միրանդան: - Դու բոլորին վատություն ես անում:

Հանկարծ Միրանդան լսեց, որ մեկը քարաժայռերի մյուս կողմում լալիս է: Շրջվեց ու տեսավ Փոքր ալիքն է:

Փոքր ավտոբուսի մասին, որը վախենում էր մթից

Դ. Բիսեթ

Կար-չկար մի փոքրիկ ավտոբուս կար: Նա կարմիր գույն ուներ և ապրում էր հայրիկի ու մայրիկի հետ: Ամեն առավոտ նրանք լվացվում էին, նախաճաշում բենզինով, մեքենայի յուղով, իսկ հետո ուղևորներ էին տանում գյուղից դեպի ծովափնյա քաղաք: Փոքրիկ ավտոբուսը հաճախ էր ճանապարհը ցերեկով անցնում, բայց գիշերները դեռ առիթ չէր եղել մեկնելու: Նա շատ էր վախենում մթից: Մի անգամ մայրիկը նրան ասաց.

«Գիտե՞ս վաղուց, շատ վաղուց մուքը վախենում էր ավտոբուսներից:

Նրան մայրն ասաց.

- Եթե դու վախենաս դուրս գալ, աշխարհը չի մթնի, և մարդիկ չեն իմանա, որ քնելու ժամանակն է: Աստղերն էլ չեն իմանա, երբ պետք է փայլեն երկնքում:

Մուքն սկսեց զգուշորեն իջնել փողոցների և տների վրա: Իրար հետևից սլանում էին ավտոբուսները: Մուքը սիրտ արեց ու մի քիչ էլ իջավ:Նա դեռ չէր հասցրել ուշքի գալ, երբ նրա միջով սլացավ ավտոբուսը: Ի՞նչ անսպասելի էր... Բայց Մթի համար հաճելի էր՝ չնայած մի քիչ խուտուտ էր զգում:

Հետո Մթի միջով սլացան ևս մի քանի ավտոբուսներ: Իսկ առավոտյան դարձյալ ծագեց արևն ու մթին տուն ուղարկեց: Բայց Մուքն այլևս չէր վախենում ավտոբուսներից»: Երբ մայրիկ ավտոբուսն ավարտեց իր պատմությունը, փոքրիկ ավտոբուսն ասաց.

- Լա՛վ, ես էլ կգնամ:

Վարորդը եկավ, շարժիչը միացրեց. մարդիկ էլ եկան ու նստեցին, և փոքրիկ ավտոբուսը մոլորվելով մթան մեջ ուղևորվեց դեպի քաղաք:

Ռնգեղջյուրն ու բարի փերին

Դ. Բիսեթ

Շատ տարիներ առաջ Սեմ անունով մի ռնգեղջյուր էր ապրում: Նա շատ հաստլիկ էր: Ուտում էր շատ թխվածք, հետո մի բաժակ կաթ էր խմում ու քնում:

Նա ամեն անգամ երազում տեսնում էր, որ մեկը իրեն խուտուտ է տալիս:

Խեղճը չէր դիմանում, անհանգիստ գալարվում էր քնի մեջ ու ամեն գիշեր ցած ընկնում մահճակալից: Գեր լինելու պատճառով նա ընկնում էր մեծ աղմուկով:

Բոլոր հարևանները դժգոհում էին ու գանգատվում, թե նա աղմկոտ ու անհանգիստ ռնգեղջյուր է: Խեղճ Սեմը չգիտեր՝ ինչ անի: Ու մի անգամ նա գնաց իմաստուն բուի մոտ՝ խորհուրդ հարցնելու: Բուի անունը Ջուդի էր: Սեմը նրան պատմեց ողջ եղելությունը: Ջուդին առաջարկեց դիմել բարի փերուն:

Փերին հայտնվեց ձեռքին արծաթյա մի ծող:

Սեմն ամեն ինչ մանրամասը պատմեց փերուն:

- Ա՜հ, ինչ հիմար ռնգեղջյուր ես,- ասաց փերին: - Այդ ո՞վ է անկողնում շոկոլադով թխվածք ուտում: Իսկ փշրանքների մասին մոռացե՞լ ես: Իհարկե խուտուտ կտաս: Ես կօգնեմ քեզ, փակի՛ր աչքերդ ու մի՛ նայիր:

Սեմը աչքերը փակեց, իսկ փերին Ջուդիի վրա թափահարեց արծաթե ծողիկն ու նրան դեղձանիկ դարձրեց:

- Այդ ի՞նչ արեցիք,- զարմացավ Ջուդին:

- Մի՛ զայրացիր,- ասաց փերին,- դու հիմա կկարողանաս կտցահարել փշրանքները:

Ջուդին համաձայնեց:

Սեմը աչքերը բացեց ու սկսեց երգել.

- Կեր իմ փշրանքները, թո՛ղ անուշ լինի:

Շնորհակալությո՛ւն, բարի՛ փերի:

Ջուդին ու Սեմը տուն վերադարձան: Այդ օրվանից Սեմին այլևս խուտուտ չէին տալիս և անկողնուց էլ չէր ընկնում:

Բոլոր հարևանները գովում էին և ասում, որ նրա բախտը բերել է, որովհետև հավատարիմ բարեկամ ունի, որը կտցահարում է բոլոր փշրանքները:

Հազարան բլբուլ

Հայկական ժողովրդական հեքիաթ
Փոխադրությունը Գ. Նազինյանի

Լինում է, չի լինում մի թագավոր: Նա ունենում է երեք տղա: Օրերից մի օր թագավորը տղաներին ասում է .

- Մեր տները հնացել են, բերեք նորոգենք:

Տղաները քանդում են տները, նորից շինում:

Թագավորը ժողովրդին հավաքում է, պալատները ցույց տալիս, հարցնում.

- Լա՞վ ենք շինել:

Մարդիկ էս ու էն կողմից ասում են.

- Շատ լավ են, դրանց նմանը չկա:

Մի պառավ գալիս է ասում.

- Թագավո՛րն ապրած կենա, լավ եք շինել, համա մի բան պակաս է:

Պառավը որ ասում է... «Մի բան պակաս է», թագավորը հրամայում է.

- Քանդեցե՛ք, նորը շինեցե՛ք:

էդ տները քանդում են: Նորից են շինում ուրիշ տեսակ, դրանից ավելի լավը:

Ժողովրդին հավաքում է, հարց ու փորձ անում՝ հավանում են: Բայց էլի էն պառավը գալիս է, ասում.

- Շատ լավ է շինված, համա մի բան պակաս է:

Թագավորը էլի քանդել է տալիս, ասում.

- Դե որ էդպես է, էն տեսակ շինեցեք, որ պակասություն չունենա:

Թագավորը երրորդ անգամ պալատները շինել է տալիս՝ մարմար քարերով, ամեն սարք ու կարգ տեղը, մի զարմանալու բան: Իր երկրում ինչքան մարդ կար՝ հավաքվում են, նայում, հիանում:

Պառավը գալիս է, ասում.

- Թագավորն ապրած կենա, էլի մի բան պակաս է: Սրա միջին Հազարան բլբուլը պետք է ըլի, որ հազար տեսակ ծլվլա ու երգի, խաղ ասի, խոսի, էն ժամանակ քո քեֆին քեֆ չի հասնի:

Թագավորը առավոտյան իր նազիր-վեզիրին կանչում է, հրամայում.

- Գնացե՛ք, Հազարան բլբուլ բերեք:

Նազիր-վեզիրն ասում են.

- Թագավորն ապրած կենա, մենք ոչ Հազարան բլբուլ լսել ենք, ոչ էլ տեսել, որտեղի՞ց գնանք բերենք:

Թագավորի երեք տղաներն առաջ են գալիս, ասում .

- Ա՛յ հեր, մենք կգնանք Հազարա բլբուլը կբերենք:

Տղերքը ճամփա են ընկնում: Շատ են գնում, թե քիչ, շատ ու քիչն իրենք գիտեն, գնում են մի այգեպանի են պատահում: Դրա այգու կողքից երեք ճամփա էր գնում:

Այգեպանին հարցնում են.

- Էս ճամփեքը ո՞ւր են տանում:

Ասում է.

- Վերինը գնում է Բաքի, միջինը գնում է Շաքի, էս ներքին ճամփան էլ Գնացող-ետ չդարձողինն է:

Փոքր եղբայրը կարգադրում է, որ մեծ եղբայրը վերին ճամփով գնա, միջնեկը՝ միջին ճամփով, իսկ ինքը ներքին ճամփան է ընտրում:

Եղբայրներին ասում է.

- Ախպերտինք, գնում ենք, համա որս որ շուտ գա, էստեղ՝ էս բաղմանչու մոտ կսպասի, որ երեքս էլ միատեղ վեր կենանք, ետ գանք մեր տուն:

Էդտեղ բաժանվում են, ամեն մինը մի ճամփով գնում է: Մեծ եղբայրը գնում է, դուրս գալիս մի քաղաք, միջնեկ եղբայրն էլ՝ մի ուրիշ քաղաք, ինքն էլ Գնացող-ետ չդարձող ճամփան բռնած գնում է, հա գնում:

Շատ է գնում, թե՝ քիչ, ինքը գիտի, գնում է տեսնում մի ծերունի մի մեծ պալատի դռանը նստած: Բարև է տալիս, անց կենում: Ծերունին պատասխան չի տալիս: Էդ տղան էլ նրա վրա իսկի ուշք չի դարձնում, անց է կենում, գնում: Ծերունին նոր նրա ետևից ձեն է տալիս.

- Ա՛յ տղա, ետ արի:

Գալիս է: Ծերունին հարցնում է.

- Էդ ո՞ւր ես գնում:

- Գնում եմ Հազարան բլբուլը բերեմ:

- Հազարան բլբուլի պահապանը ես եմ: Տեսնո՞ւմ ես Գնացող-ետ չդարձողի ճամփան, ինչքան մարդ էս ճամփով եկել է, ետ չի դարձել, բոլորին վնասել եմ: Համա քեզ շատ հավանեցի, պետք է օգնեմ: Լավ ականջ դիր, ինչ-որ կասեմ՝ չըլնեմ-չիմանամ խոսքիցս դուրս գաս: Առ էս Քեչա-քյուլլահը կդնես գլխիդ էլ քեզ ոչ ոք չի տեսնի: Տուն կմտնես, Հազարան բլբուլը կվերցնես, կբերես, համա ուրիշ բանի ձեռ չտաս:

Տղան գնում է հասնում թագավորի պալատը, Քեչա-քյուլլահը դնում է գլխին, տուն մտնում ու մի պուճախում կանգնում: Թագավորը գալիս է պալատականներով, իրիկնահաց են բերում, սեղան բացում, ուտում-խմում:

Տղա ու աղջիկ իրար են անցնում, հա՛մ տղաներն են սպա՛ռարկում, հա՛մ աղջիկները: Հետո աղախինները թագավորին իր տեղում պառկեցնում են, իրենք վեր կենում, գնում:

Անցուդարձը որ հանդարտվում է, էն տղան տեսնում է, որ հրեն մի պսպղուն խանչալ պատից կախ արած, վերցնում է, կապում գոտուց: Հետո թագավորի ոսկի Չիբուխն է վերցնում, դնում ծոցը: Մոտենում է քնած թագավորին, տեսնում է սաթի Տերողորմեն կողքին ընկած, էն էլ է վերցնում, դնում գրպանը: Հետո Հազարան բլբուլը վերցնում ու ճամփա է ընկնում: Գալիս է, հասնում են Ծերունուն:

Տղան Ծերունուն հարցնում է.

- Պատճառն ի՞նչ էր, որ դու էս ճամփով եկողներին բոլորին քո ձեռքով կորցրել ես, իսկ ինձ վնաս չտվիր, դեռ հլա ամեն բան էլ սովորեցրիր:

Ծերունին ասում է.

- Դու որ եկար աներկյուղ «բարև» տվիր, անց կացար, իմ քեֆը եկավ, տեսա, որ դու սրտով տղա ես, դրա համար էլ քեզ ճամփա ցույց տվի ու ամեն բան սովորեցրի:

Հետո տղային հարցնում է .

- Հո ուրիշ բան չվերցրի՞ր:

Տղան ասում է.

- Չէ, մենակ Հազարան բլբուլն եմ բերել, մին էլ քո տված Քեչա-քյուլլահը: Առ, ախպե՛ր, քո Քեչա-քյուլլահը, շատ շնորհակալ եմ, որ դու ինձ էս մեծ լավությունն արիր:

Տղան Ծերունու ձեռքը համբուրում է, «մնաս բարով» ասում, Հազարան բլբուլը վերցնում է ու ճամփա ընկնում:

Գալիս է հասնում այգեպանի մոտ, հարցնում է.

- Ա՛յ այգեպան, իմ ախպորտանցից եկող չէլա՞վ:

Ասում է՝ չէ:

Տղան ասում է.

- Քեռի՛, էս խանչալը քեզ նվեր, փետ կկտրես: Էս Հազարան բլբուլն էլ քեզ ամանաթ:

Տղան միջի ճամփան բռնում է ու գնում: Գնում գնում է մի քաղաք տեսնում է՝ միջնեկ եղբայրը մի փալան շալակին համբալություն է անում: Մի ծանր պարկի տակ տնքալով, չոքին-պռկին անելով՝ տանում է:

Եղբորն ասում է.

- Ա՛յ տղա, էդ ի՞նչ բանի ես, թագավորի կարողությունը հատացրել, համբալություն ես անում: Վե՛ր գցի էդ ջվալն ու ետևիցս արի՛:

Եղբորը տանում է, նոր շորեր առնում, հագցնում՝ ոտ ու գլուխը նորոգում: Գալիս են քաղաքի ծայրի մի խանութում հաց են ուտում: Դուրս գալու ժամանակ տղան խանութպանին հարցնում է.

- Ի՞նչ պիտի տանք:

- Հինգ մանեթ,- ասում է խանութպանը:

Տղան սաթի Տերողորմեն հանում է, տալիս խանութպանին, ասում.

- Ա՛ռ, հինգ մանեթի տեղ քեզ ամանաթ, որ փողը բերինք՝ Տերողորմեն ետ կտաս:

Սա էլ վերցնում է Տերողորմեն, պատից կախ անում:

Եղբոր հետ գալիս է այգեպանի մոտ, ասում է.

- Էս ախպորս Հազարան բլբուլի հետ կպահես, մինչև գնամ մեկել ախպորս գտնեմ, բերեմ:

Ընկնում է վերին ճամփան, մեծ եղբոր ետևից գնում: Գնում է մի քաղաք մտնում, տեսնում է՝ մեծ եղբայրը երկու էշ առաջին արած, աղբը բարձած գալիս է: Սա էլ եկել էր մի այգեպանի մոտ մշակ վարձվել, մենակ մի վերնաշապիկ կար հագին, քամին որ փչում էր, փեշերը ետ տանում, թև ու թիկունքը բացվում էր: Եղբորն ասում է.

- Դու թագավորի մեծ տղեն լինես ու էդ օրո՞ւմ: Թող էշերը ու ետևիցս արի:

Ախպորը վերցնում է, նոր շորեր առնում հագցնում, տանում է մի հյուրատուն, լավ ուտեցնում, խմեցնում: Դուրս գալու ժամանակ տանտիրոջը հարցնում է.

- Ի՞նչ պիտի տամ:

- Հինգ մանեթ,- ասում է տանտերը:

- Առ էս Չիբուխը, երբ որ քո փողը դրկեմ, չիբուխը ետ կտաս:

Էդ մարդն էլ ասում է՝ լավ: Վերցնում է չիբուխը, պատից կախ անում:

Տղան մեծ ախպորն էլ առնում, գալիս է այգեպանի մոտ: Երեք եղբայրներն էլ միանում են, Հազարան բլբուլը վերցնում ու ճամփա են ընկնում:

Գալիս են, գալիս, շատն ու քիչը իրենք գիտեն. ճամփին փոքր եղբայրը ետ է մնում: Էս մեծն ու միջնեկ եղբայրները գալիս են հասնում մի ջրհորի, խալիչեն գցում են հորի բերանին ու ամեն մեկը մի ծայրին նստում:

Փոքր եղբայրը բեզարած, հոգնած գալիս է հասնում նրանց:

Ասում են.

- Ա՛յ ախպեր ջան, արի, արի նստի՝ դինջացի:

Նա գալիս է, մեջտեղը նստում: Եղբայրները վեր են կենում թե չէ, նա խալիչի ետ ընկնում է ջրհորը: Ասում են.

- Խալիչեն մեզ տուր, քեզ էդտեղից հանենք:

Ասում է.

- Որ դուք հանող լինեիք, ինձ էս հորը չէիք գցի, առե՛ք ձեր խալիչեն,գնացե՛ք, կորե՛ք:

Եղբայրները գալիս են, տուն հասնում: Հազարան բլբուլը տալիս են իրենց հորը: Հայրն էլ վերցնում է Հազարան բլբուլը կախ անում պատից: Ինչ անում, չեն անում Հազարան բլբուլը չի երգում, ձեն չի հանում:

Սրանց թողնենք էստեղ, լուր տանք փոքր եղբորից: Մի վաճառական է գալիս էդ ջրհորի գլխին կանգնում. քարավանը տանելիս միշտ էդտեղից ջուր է վերցնում: Ուզում է, որ ջուր հանի, տեսնում է ջրհորում մի մարդ կա: Պարանը կախում է, դուրս հանում, տեսնում է՝ մի սիրուն, շնորհքով տղա, ասում է.

- Ա՛յ տղա, էստեղ ի՞նչ ես շինում:

- Գիշերը ճամփա էի գալիս, մթնագիշեր էր, եկա ու հանկարծ ընկա էս հորի մեջ:

Վաճառականն ասում է.

- Ա՛յ որդի, ես զավակ չունեմ, դու կլինես իմ տղան:

Վաճառականը նրան որդեգրում է ու տանում գործի դնում իր խանութում:

Էս տղան սկսում է իրեն համար կարգին առևտուր անել:

Հիմա էլ լուր տանենք Հազարան բլբուլի տեր թագավորից: Թագավորն առավոտը վեր է կենում տեսնում խանչալը չկա, Չիբուխը չկա, Տերողորմեն չկա, Հազարան բլբուլը չկա:

Կանչում է նազիր-վեզիրին, հրամայում, որ կռվի պատրաստություն տեսնեն:

Զորքը հավաքում են ու ճամփա ընկնում: Գալիս են հասնում Ծերունու մոտ:

Թագավորն ասում է.

- Էսքան ժամանակ ինձ պահպանել ես, էս ո՞նց է պատահել, որ հիմա իմ ունեցվածքը թալանել ես տվել:

Հալիվորն ասում է.

- Թագավորն ապրած կենա, քո աշխարհի չորս կողմերովը ճամփա կա, բալքի ուրիշ ճամփով են տարել, ես ի՞նչ իմանամ:

Թագավորն իրեն զորքով հասնում է այգեպանին: Տեսնում են այգեպանը թագավորի խանչալը ձեռին փայտ է կտրում, ծայրերն էլ սրում:

Նազիր-վեզիրը այգեպանին ծեծում են, ասում.

- Էս խանչալը քեզ որտեղի՞ց, ո՞վ է տվել քեզ:

- Ախպե՛ր,- ասում է,- ինձ ինչի՞ եք սպանում, թողեք ասեմ, մի տղա բերեց, ինձ տվեց ու ինքը գնաց: Ես էլ աղքատ մարդ եմ, ցաքատս կոտրել է, կացին

էլ չունեմ, ես խանչալով փետ եմ կտրում:

Թագավորն հարցնում է.

- Խանչալի գինն ի՞նչ է:

- Հինգ մանեթ.- պատասխանում է այգեպանը:

Թագավորը հանում է հինգ մանեթը տալիս այգեպանին, խանչալը վերցնում, հետո հարցնում է, թե էն տղեն ո՞ւր գնաց:

Այգեպանը ասում է.

- Էս միջի ճամփովը գնաց:

Թագավորը զորքը քշում է, էն միջին ճամփան բռնում գնում հասնում մի քաղաք, մտնում է էն խանութը, որտեղ որ թագավորի տղաները հաց էին կերել: Տեսնում է իր Տերողորմեն էնտեղ կախ արած, հարցնում է.

- Դրա գինն ի՞նչ է:

Խանութպանն ասում է.

- Հինգ մանեթ:

Հանում է հինգ մանեթ տալիս, Տերողորմեն վերցնում, ետ գալիս այգեպանի մոտ, հարցնում.

- Էն տղեն հետո ո՞ւ ր գնաց:

- Էս վերի ճամփով գնաց:

Վերին ճամփով գնում են, հասնում էն քաղաքը, էն հյուրատունը, որտեղ թագավորի տղաները հաց էին կերել, հանգստացել: Մտնում են հյուրատուն հաց ուտելու, տեսնում են թագավորի Չիբուխը էնտեղ կախ արած: Թագավորը հարցնում է.

- Էս Չիբուխի գինն ի՞նչ է:

- Հինգ մանեթ,- ասում է տանտերը:

Հինգ մանեթը տալիս է, Չիբուխը վերցնում ու ետ դառնում: Գալիս են նորից այգեպանի մոտ, հարցնում, թե էն տղեն հետո ուր գնաց: Այգեպանը ճամփան ցույց է տալիս: Հազարան բլբուլի տեր թագավորը զորքով գալիս հասնում է էն քաղաքը, որտեղ Հազարան բլբուլն էր:

Լուր է տալիս էդ երկրի թագավորին.

- Հազարան բլբուլը ղրկի, թե չէ քաղաքդ տակն ու վրա եմ անում:

Թագավորը տղաներին կանչում է, ասում.

- Որդի՛ք, Հազարան բլբուլի տերը եկել է՝ Հազարան բլբուլն ուզում է, գնացե՛ք, պատասխան տվեք:

Տղաները վեր են կենում, գալիս Հազարան բլբուլի տիրոջ մոտ, ասում են.

- Հազարան բլբուլը մենք ենք բերել:

- Ո՞նց եք բերել,- հարցնում է թագավորը:

Ասում են.

- Տուն մտանք, վերցրինք , բերինք:

Հազարան բլբուլի տերն ասում է.

- Սուտ եք ասում, Հազարան բլբուլը դուք չեք բերել, գնացեք, աչքիցս հեռացեք:

Ասում է ու ծեծելով վռնդում: Թագավորի տղաները ամոթով ետ են գնում: Հազարան բլբուլի տերը նորից է լուր տալիս թագավորին.

- Իմ Հազարան բլբուլը ղրկի, թե չէ քաղաքդ տակն ու վրա եմ անում:

Լուրը գնում հասնում է վաճառականի տղային: Նա հորն ասում է.

- Ապի՛, արի գնանք տեսնենք էդ ինչ բան է:

- Ա՛յ որդի,- ասում է,- ինչի՞դ է պետք, քո բանին կաց:

- Չէ՛,- ասում է,- արի գնանք, բալքի ծեռներիցս մի բան է գալիս:

Հայր ու տղա գնում են թագավորի մոտ: Տղան ասում է.

- Թագավորն ապրած կենա, ինձ ի՞նչ կտաս, որ Հազարան բլբուլի տիրոջը էստեղից հեռացնեմ:

- Ինչ կուզես՝ կտամ,- պատասխանում է թագավորը:

էդ տղան գալիս է Հազարան բլբուլի տիրոջ մոտ ու ասում.

- Թագավորն ապրած կենա, ինչի՞ ես եկել ժողովրդին լեղաճաք անում:

Հազարան բլբուլ բերողը մի մարդ կլինի: Հիմա էս սաղ քաղաքը ի՞նչ մեղավոր է, որ ուզում ես տակն ու վրա անես: Քո Հազարան բլբուլը ես եմ բերել, ինչ ուզում ես՝ արա ինձ:

- Ո՞նց բերեցիր,- հարցնում է բլբուլի տերը:

- Ես Գնացող-ետ չդարձող ճամփով եկա, տեսա՝ ճամփի կողքին մի պալատ, մոտը մի Ծերունի նստած: «Բարև» տվի, անց կացա, նա ինձ ետ կանչեց. «Ո՞ւր ես գնում»: Ասի. «Գնում եմ Հազարան բլբուլը բերեմ»: Ծերունին ինձ մի Քեչա-քյուլլահ տվեց: Գլխիս դրի, մտա քո պալատը: Իրիկնահացը կերա, քնեցի: Վեր կացա, խաճչալդ, Տերողորմեն, Չիբուխդ ու Հազարան բլբուլդ վեր կալա ու եկա Ծերունու մոտ: Քեչա-քյուլլահը ետ տվի, հարցրեց. «Հո ուրիշ բան չվերցրեցի՞ր»: Ասի. «Չէ՝,մենակ Հազարան բլբուլն եմ բերել»:

Հազարան բլբուլի տերը տեսնում է, որ ամեն բան էդ տղան տեղը-տեղին պատմեց, ասում է.- էդ բոլորը ճիշտ ես ասում, իմ Հազարան բլբուլը բերողը դու ես: Հիմա ես ու դու պիտի կռիվ անենք, թե դու հաղթեցիր՝ Հազարան բլբուլը քոնն է, թե ես հաղթեցի՝ գլուխդ կտրելու եմ ու Հազարան բլբուլը տանեմ:

Սրանք կոխ են բռնում: էդ տղան Հազարան բլբուլի տիրոջը վեր է գցում ու բկին չոքում: Հազարան բլբուլի տերն ասում է .

- Ա՛յ տղա, ինձ ձեռ մի տալ, ես աղջիկ եմ. ես ուխտ էի արել, որ ով ինձ հաղթի՝ նրան ուզեմ: Էս ալամ աշխարհքում մենակ դու էիր, որ ինձ հաղթեցիր, սրանից հետո դու իմն ես, ես՝ քոնը:

Սրանք վեր են կենում, իրար ձեռք բռնած գնում են թագավորի պալատը: Հենց պալատ են մտնում, Հազարան բլբուլը խոսում է, ծլվլում, երգում:

Թագավորն ասում է.

- Էս ի՞նչ բան է, Հազարան բլբուլը խոսեց:

Տղան ասում է.

- Հալբաթ կխոսա, հա՛մ տերն է էստեղ, հա՛մ բերողը: Բերողը ես եմ՝ քո պուճուր տղեն:

Ու պատմում է ամբողջ եղելությունը: Թագավորն էդ րոպեին հրամայում է մեծ ու միջնեկ տղային հեռացնել իր երկրից: Բերում է փոքր տղային ու էդ աղջկան փառքով-պատվով պսակում, հարսանիք անում: Նրանք հասնում են իրենց փափագին, դուք էլ հասեք ձեր փափագին:

Հրատարակության պատրաստեց

ԾԵՍԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Առաջարկվող տոնացույցը հնարավորություն է տալիս նախադպրոցական հաստատություններում գործող ուսուցողական պարապմունքներից անցում կատարելու մանկան գործունեության ամբողջական, հետաքրքիր և արդյունավետ կազմակերպման ձևին, մանկան տոնը վերածելու ստեղծագործական գործընթացի, որը բնականորեն կավարտվի իսկական տոնակատարությամբ, կդառնա նաև հաշվետվություն, ընթացքում սովորածի «ժողովածու», ամփոփում:

Տոնի կամ ծեսի կազմակերպիչն ու ակտիվ մասնակիցը ոչ միայն մեծերն են՝ դաստիարակ, դայակ, ծնող, տատ ու պապ: Երեխան ինքն էլ իրական տոնի ակտիվ մասնակիցն է, ոչ թե միջոցը: Տոնն էլ բոլորի համար է. հանդիսատեսներ, պասիվ դիտողներ, հյուրեր չկան: Ծնողի, դաստիարակի, դայակի հետ ամբողջական ծեսին մասնակցելով, յուրացնելով ծեսի նյութը, երեխան դառնում է այդ նյութի կրողը, զարգացնողը: Հետագայում նա հեշտությամբ և գիտակցաբար կյուրացնի և՛ իր ժողովրդի, և՛ համաշխարհային գրականությունը, արվեստը, պատմությունը: Այդ նյութը կնպաստի գիտակցաբար գնահատելու ճշմարիտ արժեքները:

Ծեսի իրականացումը, որն իր մեջ ներառում է երգ-պար, բանահյուսություն, գրականություն, կերպարվեստ-ձեռարվեստ, թատրոն, խաղ, բնագիտություն և այլն, իրական, ամբողջական կրթության իրագործում է: Ներկայացված ծրագրում համարյա բոլոր ծեսերը երկու բաժնից են կազմված «Տոնական օրեր, տոնական եռուզեռ» և «Տոնակատարություն»: Առաջին բաժնում ծեսի ընթացքն է, երկրորդում՝ ծիսակատարությունը:

«Տոնացույցում» օգտագործված բոլոր նյութերը կարող եք գտնել «Հանրակրթական դպրոցում նախապատրաստական ուսուցում» ծրագրով հրատարակված ժողովածուներում՝

«Երգարան» - 101 երգ 3-12 տարեկանների համար

«Խաղադարան» - մանկական խաղեր 2- 6 տարեկանների համար

«Ոսկեմատենիկ» - գրական և բանահյուսական նյութեր երեխայի բանավոր խոսքի զարգացման համար

Մանուկների համար առաջարկում ենք հետևյալ տոնացույցը.

Ամանոր — Տոնվում է հունվարի 1-ին և հաջորդ օրերին:

Տյառնընդառաջ — Տոնվում է փետրվարի 14-ին

Բարեկենդան — Տոնվում է Զատիկից յոթ շաբաթ առաջ, կիրակի օրը, կոչվում է Բուն Բարեկենդան:

Մեծ Պաս — Սկսվում է Բուն Բարեկենդանի հաջորդ օրվանից, տևում է յոթ շաբաթ:
Մեծ Պասի ընթացքում արգելվում է կենդանական ծագում ունեցող կերակուր ուտել: Պասը «հսկում է» Ակլատիզը՝ երդիկից կախված սոխե գլխով տիկնիկ-պապը: Այս օրերին խոհանոցում հաճախ միասին պասի կերակուրներ են պատրաստում: Միջինք կամ Միջենք Թխում են Պասի 4-րդ շաբաթվա չորեքշաբթի օրը:

Գարնան ծես — Սկսվում է փետրվարի վերջին օրվանից, ավարտվում մայիսի վերջին՝ Համբարձման ծեսով:

Ծառզարդար, Ծաղկազարդ — Տոնվում է Զատիկի նախորդ շաբաթվա կիրակի օրը:

Զատիկ Տոնում են գարնանային օրահավասարին հաջորդող լուսնի լրման հաջորդ կիրակի օրը: Շարժական ծես է՝ եկեղեցու տոնացույցով հաշված և որոշված օրով:

Մայրիկատոն Ապրիլի 7-ին՝ մայրության և գեղեցկության տոն

Երեխատոն Երեխաների պաշտպանության օրը՝ հունիսի 1-ին

Համբարձում Տոնվում է Զատիկի ծեսից 40 օր անց՝ մոտակա հինգ շաբթի օրը:

Վարդավառ Տոնում են Զատիկից 98 օր հետո, կարող է ընկնել հունիսի 2-րդ կեսից օգոստոսի առաջին կեսը՝ կիրակի օր: Հայաստանի շատ շրջաններում տոնվում է հուլիսի 22-ին հաջորդող կիրակի օրը:

Աշնանացան Ցորեն ցանելու ծես, որը տևում է մոտ երկու շաբաթ՝ հոկտեմբեր ամսվա ընթացքում: Նույն կերպ կարելի է գարնանացան տոնը անել ապրիլ ամսին:

Ծննդյան օր Երեխայի ծննդյան օրվա ծես:

Առավոտվա ծես Երեխայի ամենօրյա առավոտյան գործունեությունը

ԱՄԱՆՈՐ

Ամանորը Հայաստանի Հանրապետությունում ամենաճոխ նշվող տոնն է: Այն սկսվում է դեկտեմբերի 31-ի գիշերը և շարունակվում մի քանի օր:

Տոնական օրեր, տոնական եռուզեռ

Նախակրթարանում ամանորյա ծեսն սկսվում է դեկտեմբերի 1-ից կամ ավելի շուտ: Դաստիարակն այդ մասին հայտնում է երեխաներին, միասին քննարկում են՝ ինչպես են անցկացնելու ծեսը. չէ՞ որ այն մի օր չէ, այլ մի տևական շրջան: Դաստիարակը ծեսի ծրագիրը քննարկում է նաև ծնողների հետ, մշակում այն և վերջնական տարբերակը ներկայացնում նրանց:

Սկսում են ժապավեններ, ուլունքներ, կոճակներ, բազմագույն փայլուն թղթեր, այլ մանր-մունր առարկաներ հավաքել, տոնական երգեր, օրհնանքներ, ասերգեր սովորել-բեմադրել, տոնականորեն զարդարել խմբասենյակը, տոնական հագուստներ պատրաստել:

Որևէ գործունեությամբ զբաղվելիս միացնում են ամանորյա երգերի սկավառակը, երեխաները սկսում են աշխատել՝ երգերը լսելով և երգելով:

Բակում մեկ կամ մի քանի ծառ են զարդարում. տոնածառը միայն եղևնին չէ, ցանկացած ծառ կարող է դառնալ տոնի ծառ:

Ծեսին նախորդող յուրաքանչյուր օր խումբն ունենում է իր հստակ անելիքը. օրերն ունենում են իրենց անունները, որքան տարբեր, անսովոր, անսպասելի, ուրախ ու տոնական, այնքան լավ:

Ամենակարևորը այդ օրերի տոնական տրամադրությունն է, տոնի սպասումը, տոնական իրարանցումը:

Օր՝ «Օրացույց»

Նոյեմբերի վերջին օրերին օրացույց են պատրաստում՝ «Ամանորին մնաց--- օր»: Դեկտեմբերի 1-ից մինչև Ամանոր բոլոր օրերը նշում են որևէ կերպարով (փաթիլ, եղևնի, Ձմեռ պապ և այլն): Ամեն օր մի պատկեր հանելով՝ հաշվում են, թե քանի օր մնաց Նոր տարվան:

Դեկտեմբեր ամսվա ներկա-բացակայի թերթը ևս իր տոնական տեսքով պիտի տարբերվի մյուս ամիսներից:

Օր՝ «Պապյե-մաշե»

Երեխաները, դաստիարակը և ծնողները պապյե-մաշեներ են պատրաստում:

Ինչպես պատրաստել պապյե-մաշե:

Անհրաժեշտ նյութեր՝ հին լրագրեր, տաշտ, ալյուր ու ջուր կամ էմուլսիա, տարբեր չափի փուչիկներ:

Փուչիկները փչել: Մի քիչ լայն տաշտի մեջ ալյուրը ջրով բացել, սոսինձ պատրաստել (կարելի է էմուլսիայով աշխատել): Լրագրերը 3-4 սմ լայնությամբ շերտերով ժապավենի նման կտրատել: Ստացված շերտերը թաթախել խմոր-սոսինձի կամ էմուլսիայի մեջ, դրանք շերտ-շերտ հավաքել փուչիկի վրա այնպես, որ փուչիկը 3-4 շերտ լրագրով ծածկվի՝ հնարավորին չափ հարթ մակերես ստանալով: Փուչիկը կախել, 4-5 օր թողնել, որ սոսինձը վրայից քամվի, թուղթը չորանա: Այնուհետև փուչիկը տրաքացնել կամ բերանը բացել, թղթի միջից հանել:

Ստացված պապյե-մաշեն բազմագույն կամ միագույն ներկել. դրանից կարելի է խաղալիքներ, դիմակներ կամ այլ առարկաներ պատրաստել:

Օր՝ «Ուրախ խաղալիք»

Դաստիարակը և ծնողները մինչ այդ հավաքած նյութերով (զարդեր, թելեր, զանազան իրեր, թղթեր, ժապավեններ), պապյե-մաշեներով տոնածառի մեծ ու փոքր խաղալիքներ, շղթաներ են պատրաստում: Անսովոր տոնական խաղալիքներ պատրաստում են նաև մյուս օրերին: Դրանք բազմագույն և բազմաձև պիտի լինեն: Լավ կլինի, որ խաղալիքները նաև զնգզնգան լինեն:

Օր՝ «Անսովոր վարագույր»

Մինչ այդ արդեն որոշած են լինում, թե ինչպիսի վարագույր պիտի պատրաստեն և ինչ նյութերից. նյութերն արդեն հավաքած են լինում: Այդ օրը միասին զարմանալի, անսովոր վարագույր են պատրաստում, կախում պատուհանին կամ պատին:

Վարագույրը կարելի է պատրաստել թելերի վրա կոնֆետներ, քաղցր ձողիկներ, չրեր շարելով, փոքրիկ տիկնիկներով, ճմռթած գունավոր թղթերով, կոնֆետի թղթերով, լուսանկարներով, ադիբուդիներով և այլն:

Ուտելիքներով զարդարված վարագույրը մենք «Ուտելի վարագույր» անվանեցինք: «Ուտելի վարագույրներից» երեխաները կուտեն, կերածի փոխարեն նորը կկախեն. կոնֆետ-վարագույրից կոնֆետ կուտեն, չիր-վարագույրից՝ չիր:

Այդպիսի վարագույրը կարող է նաև ամանորյա ծեսի ժամանակ տիկնիկային կամ խաղային շիրմա դառնալ:

Օր՝ «Կախարդական գլխարկ»

Այդ օրը, տարբեր նյութեր օգտագործելով, սկսում են ծևավոր, հետաքրքիր, բազմաձև տոնական գլխարկներ, հագուստներ պատրաստել: Գլխարկների և անսովոր հագուստի պատրաստման գործը շարունակում են հաջորդ օրերին: Երեխաներն իրենց ստեղծածը օգտագործում են ամանորյա դիմակահանդեսի ժամանակ:

Օր՝ «Տանձ ու խնձոր»

Սկսում են Ամանորը խորհրդանշող կերպարներ նկարել, ըստ այդ պատկերների տանձերով և խնձորներով կերպարներ «քանդակել»: Որքան անսպասելի, վառ երևակայությամբ կերտվեն կերպարները, այնքան լավ: Պետք չէ միջամտել դրանց ստեղծմանը: Հակառակ դեպքում բոլորը կնմանակեն դաստիարակի պատրաստածին, և աշխատանքները միանման կլինեն: Ստեղծված կերպարները կարող են դառնալ տոնածառի խաղալիքներ, տիկնիկային ներկայացման հերոսներ և այլն:

Օր՝ «Թաթիկ-բացիկ»

Երեխաները երկտակ ծալված թղթի վրա իրենց ձեռքերն են նկարում: Թուղթը կտրում են այնպես, որ ծալված մասը չկտրվի, ստացված զույգ թաթիկները չբաժանվեն, այլ ծալվեն-բացվեն: Այդ «թաթիկներով» ամանորյա բացիկներ են պատրաստում: Դաստիարակը դրանց վրա գրի է առնում երեխաների իրենց հարազատներին ուղղված մաղթանքները: Երեխաները կարող են մի քանի այդպիսի բացիկ պատրաստել, որոնք կդառնան նամակներ և կուղարկվեն Ձմեռ պապին:

Օր՝ «Թաքուն-թաքուն»

Ծնողները (երեխաներից գաղտնի) մի ուրիշ սենյակում անակնկալ են պատրաստում անսովոր, հետաքրքիր տոնածառ: Այն կարող են պատրաստել հովանոցները փոքրից մեծ իրար վրա ամրացնելով, կամ իրար խաչածև մեխած փայտերով և զարդարել խմբի սաների 5-6 տարվա հագուստներով, խաղալիքներով, կոշիկներով, նկարներով: Կարելի է փայտե հենարանի վրա ավելներով տոնածառ հավաքել-պատրաստել և ժապավեններով զարդարել, տոնածառ կարող են դառնալ նաև իրարից կախված մանկական հագուստների կախիչները հագուստներով: ...Ամեն ինչ կախված է մեծերի երևակայությունից:

Այդ տոնածառն էլ կարող են ուտելիքներով զարդարել. երեխաները «զարդերից» անպայման կօգտվեն:

Երեխաներն էլ դաստիարակի հետ իրենց տոնածառն են ստեղծում նույնքան անսպասելի ու զարմանալի, որն էլ իրենք են թաքցնում ծնողներից նրանց անակնկալ մատուցելու համար: Օրն իր մեջ պահում է երկու մեծ գաղտնիք-տոնածառ:

Օր՝ «Տոն, ծառ, տո-նա-ծառ»

Առավոտյան ծնողները երեխաներին են նվիրում նախորդ օրը իրենց պատրաստած տոնածառը, երեխաներն էլ ծնողներին են ցուցադրում իրենց երևակայության արդյունք տոնածառը: Օրն անցնում է տոնածառերը զարդարելու եռուզեռով, դրանց շուրջ երգով ու պարով:

Օր՝ «Ացիկ-ացիկ, մի մեծ բացիկ»

Պատրաստում են «աշխարհի ամենամեծ բացիկը»:

Այն պիտի երեխաների հասակից բարձր լինի՝ 1-1,5 մետր բարձրությամբ, կարող է Ձմեռ պապի, տոնածառի կամ ավելի հետաքրքիր այլ կերպարի տեսք ունենալ: Որպեսզի բացիկը հարթ չլինի, կարելի է տարբեր նյութերով (փուչիկներ, ժապավեններ, ուլունքներ, կոճակներ) զարդարել: Բացիկը կախում են խմբում. դրա վրա ծնողները իրար և իրենց երեխաներին ամանորյա բարեմաղթանքներ են գրում:

Օր՝ «Բառաքսակ»

Պատրաստում են փոքրիկ քսակներ, դրանց մեջ «լցնում» են տարվա վատ բառերը, այն ամենը, ինչ պիտի վառեն ամանորյա կրակի մեջ, որ դրանք հետ չգան, չկրկնվեն:

Դաստիարակը համբերատար լսում և գրի է առնում բոլոր վատ բառերը՝ առանց բարկանալու կամ կարևորելու դրանք: Դաստիարակի անտարբերությունը վատ բառերի նկատմամբ դրանք կդարձնեն անկարևոր և կզրկվեն «արգելված պտուղ» լինելու կարգավիճակից և անպայման (թեկուզ գաղտնի) օգտագործելու գայթակղությունից:

Օր՝ «Նվեր-փլավ»

Երեխաներով, դաստիարակով և ծնողներով պատրաստվում են փլավ եփելու արարողությանը: Մաքրում են գազարը, ձևավոր կտրատում՝ փլավը ձևավորելու համար: Ափսեների հատակին նուշ կամ ընկույզ են դնում, վրան փլավ լցնում: Ըստ ափսեից դուրս եկած նուշի կամ ընկույզի՝ երեխան համապատասխան նվեր է ստանում: Սա համարվում է ամանորյա նվիրատվության ձևերից մեկը:

Օր՝ «Կախարդական տարեգաթա»

Երեխաները ալյուրը մաղում են խմոր անելու համար և արտասանում.

Չյունի սպիտակ ալյուր մաղեմ,
Բերք-բարիքի տարի լինի:
Անուշ-անուշ խմոր շաղեմ,
Արտս ցորեն-գարի լինի,
Կլոր, կարմիր գաթա թխեմ,
Թող թխածս բարի լինի:

Խմորը դնում են, որ հասնի: Այդ ընթացքում ծնողները խորիզն են պատրաստում: Գաթան թխելուց առաջ երգում են մի քառյակ «Ավետիս» երգից (տես «Երգարան») որպես օրհնանք տարեգաթային:

Այդ օրը տոնակատարության խարույկի համար չոր ցախ, հին թերթեր են հավաքում:

Օր՝ Տորթ «Ադիբուդի»

Ծնողների և խոհարարի հետ ադիբուդիով զարդարված տորթ են պատրաստում՝ ամանորյա տոնակատարության օրվա համար: Տորթը կարող է ձևե մարդու կամ եղևնու տեսք ունենալ:

Օր՝ «Ամանոր»

Ծիսակատարությունը կարող է տարբեր ընթացք ունենալ: Կարևորը տոնական անկաշկանդ տրամադրությունն է: Միայն մի քանի դիտարկում՝

Կրակը տան, ընտանիքի ջերմությունն է, որի մոտ հրաժեշտ են տալիս հին տարվան և շնորհակալություն և բարեմաղթանքներ ասում՝ դրա վրա վառելով հին տարվա վատ բառերը:

Նոր տարին դիմավորում են հին տարվա կրակի՝ ջերմության մոտ, ու այդ հին ջերմությունը նորացնելով՝ տուն են բերում)հին տարուց մի քիչ ջերմություն նոր տարուն):

Տատիկն անպայման մեղր է քսում բոլորի շուրթերին:

Մասնակիցների վրա ցորեն ցանելը պարտադիր է, որ տարին բարի լինի, տարվա բերքը՝ առատ:

Ամանորյա տոնահանդես

Անհրաժեշտ պարագաներ

Առաստաղից կախում ենք երեխաների թվին համապատասխան քանակով մեծ փուչիկներ՝ լցված մանր գունավոր թղթերով կամ անակնկալներով՝ տոնական սպասք, մոմեր:

Բոլորի մեջ բառաքսակներ են լինում:

Երեխաները ծնողների հետ նախապատրաստում են տոնական սպասքը, զարդարում տոնական սեղանը: Ուտեստները սեղանին դրվում են ծեսի վերջում:

Խմբասենյակում բոլորը հավաքվում են տոնածառի շուրջ: Սկսվում է փոքրիկ թատերականացված ներկայացումը.

Տատիկ 1 - Տարին ծերացել է, ճամփա է ընկել, ուզում է գնալ:

Տատիկ 2 - Գնանք բակ, կրակի կողքին բարի ճամփա ասենք հին տարուն:

Տատիկները վերցնում են 2 մոմ, ծնողները երեխաների հետ դուրս են գալիս բակ:

Բակում՝ զարդարված տոնածառ (կարող է լինել նաև զարդարված ծառ), վառվող կրակ:

Տատիկ 1 - Հի՛ն տարի, շնորհակալ ենք քեզնից:

Բոլորը կրկնում են - Հի՛ն տարի, շնորհակալ ենք քեզնից:

Տատիկ 2 - Քո տված բերք ու բարիքից:

Կրկնում են բոլորը:

Տատիկ 1 - Հի՛ն տարի, բարով գնաս:

Կրկնում են բոլորը:

Տատիկ 2 - Քեզ բարի - բարի ճամփա:

Կրկնում են բոլորը:

Տատիկ 1 - Ձեր քսակների մեջ փսփսացեք այն բոլորը, ինչը չեք ուզում՝ մնա, ուզում եք, որ՝ վառվի, գնա և գցեք կրակի մեջ:

Բոլորը կատարում են տատիկի ասածը: Նախորդ օրերին դաստիարակն ու երեխաները այդ մասին արդեն զրուցել էին: Քսակները կրակի մ?ջ գցելուց հետո արտասանում են.

Բարի եկար, Նոր տարի, կամ Բարի եկար, Նո՛ր տարի,
Մեր տուն մտնի հազար բարի, Բեր մեզ ցորեն ու գարի,
Տանտիկինը յուղ կուզի, Լիքը օրեր շատ ունենանք,
Մեր օջախը փայտ կուզի: Կարմիր շորեր շատ ունենանք,
Կարմիր օրով, կարմիր շորով,
Ուրախ կենանք միշտ կուշտ փորով:

Կրակի մոտ շուրջպար են բռնում ու երգում «Բասեն բարի» երգը:

Տատիկները վառում են մոմերը:

Վերադառնում են խումբ: Դռան մոտ երկու հոգի ցորեն են ցանում մտնողների վրա և օրհնում.

Թող տարին բարի լինի:

Թող բերքն առատ լինի:

Տատիկները վառում են սեղանին դրված մոմերը:

Բոլորը կանչում են - Ծուղրուղո՜ւ:

Դաստիարակ - Աքլորը զիլ կանչեց թառին:

Խումբ Ճիկ-ճիկ, ճիկ-ճիկ,
Ջարթնեց մթնում ծիտը ծառին:

Մի «ծիտ» վազելով մոտենում է տատին, որի մոտ լավաշ կա:

Ծիտ - Նանի՛ ջան, նանի՛, փուշս ետ տուր ինձ:

Տատ - Հենց նոր գցեցի կրակը, վառեցի:

Ծիտ - Չէ՜, փուշս ետ տուր ինձ, թե չէ՝ դես թռչեմ, դեն թռչեմ, լոշիկը առնեմ, ծառին կախեմ (վերցնում է լոշիկը, ծառին կախում):

Երգում են՝ «Պատրաստել ենք մենք Նոր տարվա հանդես»:

Բոլորը - Ծուղրուղո՜ւ,
Կանչեց ծեգին երկրորդ բերան,
Վա՜յ, վա՜յ, վա՜յ,
Աղվեսները քնից ելան:

(Բոլորը երգում են «Աղվեսն եկավ լանջիկ-մանջիկ» երգը): Երգելիս աղվեսը այս ու այն կողմ է վազում, թռչկոտում: Տատը ցաքատով խփում է, աղվեսի պոչը «կտրում»:

Աղվես (դիմում է տատիկին) - Նանի՛ ջան, նանի՛, պոչս տո՛ւր, կցեմ, կցմցեմ, գնամ, ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչ ա՛տ աղվես, որտե՞ղ էիր:

Տատիկ - Դե՛, գնա ինձ համար մեղր բեր:

Աղվեսը մոտենում է «քնած» մեղուներին.

Խումբ - Ծուղրուղո՜ւ,
Լույսը բացվեց երրորդ կանչին:
Պը՜զզ, պը՜զզ,
Ջարթնեց մեղուն բնի միջին:

Մեղու 1 - Պը՜զզ, պը՜զզ, պը՜զզ,

Մեղու 2 - Ես ի՞նչ աղմուկ է, աղվե՛ս, չես թողնում քնենք,

Աղվես - Պըզզզան, պըզզզան, պզպզզան,
Պստիկ մեղու, տզտզան:

Խումբը շարունակում է - Դաշտ ու հովիտ կթռչես,
Բարձր սարեր կթռչես,
Սուսան-սմբուլ կծծես,
Ու ոտներով թավամազ
Փոշի առած տուն կգաս:

Ծափխաղ են խաղում ու երգում «Ջարկ բոլոճիկ» երգը: Մեղուները և աղվեսը մեջտեղում պարում են: Երգից հետո 3 մեղուներ՝ ձեռքներին մեծ շերեփ և փոքրիկ դույլեր, պարելով մոտենում են տատիկներին:

Մեղուներ (միասին) - Նանի՛ ջան, նանի՛, առ էս մեղրը բաժանի, որ տարին քաղցր լինի, մենք էլ գնանք, երգենք-պարենք, նոր տարի անենք:

Տատիկները մեղրը քսում են բոլորի շուրթերին: Այդ ընթացքում հնչում է «Ավետիս» երգի երաժշտությունը: Ծնողները, տատիկ-պապիկները տեղերից օրհնում են երեխաներին:

- Դռներդ միշտ բաց լինի, տաշտներդ միշտ հաց լինի:
- Աստված ձեր մեկը հազար անի:
- Յոթ որդով սեղան նստեք:
- Ծլեք, ծաղկեք, զորանաք:
- Հորով-մորով մեծանաք:

Երգում և պարում են «Ձար-ձընգը» երգը:

Դաստիարակ - Կալ-կալ, անակնկալ:

Բոլորը - Օր ադիբուդի, պտպտիկ-ճտճտիկ,
Սարքեցինք, կերանք:

Դաստիարակ - Օր՝ տանձ ու խնձոր.

Բոլորը - Տանձեր, խնձորներ
Հաշվեցինք, կերանք:

Դաստիարակ - Վարդեր թխեցինք, խմորե վարդեր:

Բոլորը - Թխեցինք, կերանք:

Խ մբի 1-ին կես - Մի տորթ թխեցինք, անվանեցինք «Ճտճտիկ»:

Խմբի 2-րդ կես - Տորթը չկերանք:

Խմբի 1-ին կես - Չկերանք, նվիրելու ենք: (Ցույց են տալիս սեղանին դրված ադի-բուդիով «զարդարված» տորթը):

Խմբի 2-րդ կես - Գիտե՞ք էլ ինչ ենք արել:

Խմբի 1-ին կես - Շատ լավ տարի էր, ինչ ասես արել ենք.

Խմբի 2-րդ կես - Պարել ենք, երգել ենք, խաղեր ենք խաղացել:

Խմբի 1-ին կես - Ցորեն ենք ցանել, լավաշ ենք թխել:

Խմբի 2-րդ կես - Թթու ենք դրել, ծառ ենք տնկել ու...

Խմբի 1-ին կես - Ո՜ւ... գիտե՞ք ալյուր ենք մաղել ճերմա՜կ, ճերմա՜կ:

Խմբի 2-րդ կես - Գիտե՞ք խմոր ենք շաղել փափո՜ւկ-փափո՜ւկ:

Խմբի 1-ին կես - Մեջը մի բան ենք դրել
Թաքո՜ւն-թաքո՜ւն:

Խմբի 2-րդ կես - Ու ջեռոցի մեջ տաք-տաք
Տարեգաթա ենք թխել:

Խումբ (դիմում են տատիկներին) - Նանի՛ ջան, նանիվ, դե մեր թխած գաթան կտրի, բաժանի:

Տատիկները կտրում են տարեգաթան, բաժանում:

Բոլոր մեծերը - Կալ-կալ, անակնկալ, ի՞նչ անակնկալ:

Ուրախ երաժշտություն է հնչում: Գալիս են Չմեռ պապն ու Չյունանուշը, շնորհավորում են բոլորին: Տատիկները բաժանում են գաթաները: Հնչում է ուրախ երաժշտություն, Չմեռ պապն ու Չյունանուշը ուրախ շուրջպար են բռնում երեխաների հետ:

Չմեռ պապի առաջին անակնկալը. երեխաներից ամեն մեկը վերցնում է նախօրոք պատրաստած փոքր, սուր փայտիկը (մեծերից մեկը բաժանում է փայտիկները) և ծնողների հետ կանգնում փուչիկի տակ:

Չմեռ պապ - Հենց ասեմ՝ երեք ոյու չորս, փուչիկները կպայթեցնեք:

Փուչիկների միջից մանր գունավոր թղթեր կամ անակնկալներ են թափվում: Բոլորը երգում են «Տոնածառ ջան, տոնածառ», բռնում են մեծ շուրջպար՝ «Գովընդ», որը շարունակվում է ուրախ պարերով:

Մեր փորձից
«Ամանոր» ծեսից

«Տարեգաթա»
Երեխաները ալյուրը մաղում են խմոր անելու համար և արտասանում.

Ջյունի սպիտակ ալյուր մաղեմ,
Բերք-բարիքի տարի լինի:
Անուշ-անուշ խմոր շաղեմ,
Արտս ցորեն-գարի լինի,
Կլոր, կարմիր գաթա թխեմ,
Թող թխածս բարի լինի:

Խմորը դնում են, որ հասնի, դաստիարակի մասնակցությամբ զրուցում են տարեգաթայի մասին՝ ինչ է տարեգաթան, ինչու է այդպես կոչվում, ինչի համար են թխում:

(Հնում մարդիկ հավատացել են, որ Նոր տարվա գաթան՝ Տարեգաթան, հաջողություն, բերք ու բարիք, փող է բերում նոր տարում: Գաթան թխել են արևի տեսքով, վրան զանազան նշաններ արել, մեջը մետաղադրամ կամ այլ փոքր նշան են դրել: Ամանորի գիշերը գաթան կտրել են ընտանիքի անդամների թվով: Նա, ում ընկնում էր «նշանը», համարվել է այդ տարվա հաջողություն բերողը, նույնիսկ հավատացել են, որ նա կարող է մարդկանց բուժել):

Ապա խոսում են «բարեկամ» բառերի մասին, որ միանում են իրար և դառնում են մի բառ, օրինակ՝ տոն ու ծառ, իսկ տարեգաթա բառի մեջ «բարեկամ» բառերը որո՞նք են (տարի և գաթա):

Տարին էլ ո՞ր բառի «բարեկամը» կարող է դառնալ: Ասենք տարեբառ, նշանակում է տարվա բառ: Հետո երեխաները որոշում են տարի և գաթա բառերի մյուս «բարեկամ» բառերը և փորձում դրանք միացնել:

Եթե գաթան ամբողջ տարվա համար է, ուրեմն այն ինչպիսի՞ն պետք է լինի: Նկարագրում են, խոսում նրա հրաշագործության մասին: Այնուհետև նկարում են տարեգաթան:

Հեքիաթ են հորինում «Տատի, պապի մեծ տարեգաթա» կամ ...: Դաստիարակը կարող է սկիզբը հուշել:

Տատի, պապի ամբարում մի հատիկ ցորեն էր մնացել: Ինչ անեն, ինչ չանեն. որոշեցին այդ մի հատիկ ցորենը խաշել-ուտել: Հատիկը էս որ լսեց, շատ վախեցավ ու ...

Հեքիաթը հորինելուց հետո այն նկարում են: Այնուհետև որոշում են եկող տարվա ամենալավ, ամենակարևոր բառը: Այդ ընթացքում խմորն արդեն հասած է լինում: Երեխաները գնում են խոհանոց՝ տարեգաթա թխելու: Մինչ այդ ծնողները կամ խոհարարը խորիզը պատրաստած են լինում: Թխելուց առաջ երգում են մի քառյակ «Ավետիս» երգից (տես «Երգարան») որպես օրհնանք տարեգաթային: Մեծ տարեգաթայի վրա դեղին չամիչով գրում են եկող տարվա բառը: Մեծ գաթան կկտրեն խմբում ամանորյա ծեսի ժամանակ, կուտեն:

Նույն խմորից մարդահացիկներ (մարդու տեսքով փոքրիկ գաթաներ) են թխում, որոնք տուն կտանեն՝ Նոր տարվա սեղանին դնելու համար: Դաստիարակը բացատրում է, որ մարդահացիկները տարբեր խորհուրդներ ունեն՝

բարիք բերող մարդիկ են
պարզապես բարի մարդիկ են
օտարականներ են, որ հյուր են եկել մեր սեղանին

Առաջարկում է, որ երեխաները որոշեն, թե էլ ովքեր կարող են լինել մարդահացիկները:

Մեր փորձից
Ամանորյա անցուդարձից

Օր՝ Նվերփլավ

Բրինձը մաքրեցինք, լցրինք եռացող աղաջրի մեջ, որ եփվի: Հետո չամիչը կշռեցինք, հաշվեցինք, մաքրեցինք, մի քիչ էլ կերանք, ձեթով մի քիչ տապակեցինք: Դրանից հետո մաքրեցինք գազարը, ձևավոր կտրատեցինք, որպեսզի փլավը ձևավորենք: Ափսեների հատակին նուշ կամ ընկույզ դրեցինք. ինչո՞ւ. հետո կիմանաք: Վրան փլավ լցրինք, սարի տեսք տվեցինք:

Թեև սարը մեկն էր, բայց Արտյոմն ասաց.

- Մասիս սար ենք ուտելու:

Սարի փեշերին լցրինք չամիչը, իսկ ափսեների եզրերը ձևավորեցինք գազարով: Ձևավորում էին Աննան և Բելլան: Մյուսները անակնկալ նվերներն էին դասավորում եղևնու ճյուղերի վրա և որոշում՝ ում ինչ նվիրեն: Ամեն ինչ տոնական էր՝ գեղեցիկ ձևավորված անձեռոցիկներ, մրգեղեն, աղցան:

Բրնձով փլավը մատուցեցինք: Զգույշ էին ուտում, որ փլավի հատակին «թաքնված» նուշը կամ ընկույզը հանկարծ «պատահաբար կուլ չտան»: Փլավը կերան, իրենց նուշը կամ ընկույզը պահեցին: Ամեն մեկն ստացավ իր նվերը՝ ում նուշ էր ընկել զատիկ-շոկոլադ ստացավ, ում ընկույզ՝ արկղիկ-շոկոլադ:

- Շատ հետաքրքիր և համեղ օր էր,- ասաց Աննան,- էլի կուզեի՝ լիներ:

Անին չհամաձայնեց.

- Որ ամեն օր Նոր տարի լինի, Նոր տարի չի լինի:

Օր՝ «Տանձ ու խնձոր»

Այդ օրը խումբը լցված էր տանձով ու խնձորով: Շարեցինք մեծից փոքր, փոքրից մեծ: Վազգենը հիացած նայեց, նայեց ու ասաց.

- Խնձոր-զինվորների շարք է:

- Քայլո՜վ մարշ,- պատիվ առնելով՝ հրահանգ տվեց Արսենը:

Գտանք ամենամեծը և ամենափոքրը, դրանցով թվաբանական տարբեր գործողություններ կատարեցինք:

Սարքեցինք խնձորների մանկապարտեզ: Երկու խնձորի մայրիկները բժիշկ են, և նրանց երեխաները բոլորից շուտ են գալիս (խմբում այդպես են Ալիկն ու Ասյան): Հետո եկան ամենափոքր երկու խնձոր, խմբում եղավ 4 խնձոր:

- Բա դաստիարա՜կը:

- Եղավ 5 խնձոր,- ասացին ու մի խնձոր էլ ավելացրին:

- Բա տիկին Աստղիկը (Աստղիկը դայակն է):

Մի խնձոր էլ ավելացրին: Եղավ 6 խնձոր:

Հավաքվեցին բոլոր խնձորները, չափեցին, խաղացին. նույնիսկ «կռվեցին»:

Խնձորով ու տանձով չափեցինք տարբեր առարկաների երկարություններ, մրգերը կիսեցինք, հաշվեցինք դրանց կորիզները, համեմատեցինք մասերը, վանկատեցինք *խնձոր* բառը, հաշվեցինք *խնձոր* բառի վանկերի թիվը:

- *Խնձոր* բառը կիսեցինք,- ասաց Բելլան:

Գրատախտակին գրեցինք խնձոր բառը և առաջարկեցինք երեխաներին, որ սեղանին դնեն այնքան կարմիր փայտիկ, որքան տառ կա *խնձոր* բառի մեջ:

- Փայտիկը տառ դարձավ,- ասաց Վազգենը: - Լոլոզ տառեր են:

Լեզվագործունեություն

Հարցրինք՝ եթե տանձ բառը միանա պոչ բառին (տանձ, պոչ), ի՞նչ կծնվի:

- Տանձապոչ, պոչի տանձ, պոչով տանձ, տանձի ծառ, պոչ, որ տանձ ունի, պոչի անտառ ու տանձի անտառ:

Երեխաները պատմեցին այդ տանձերի ու խնձորների մասին:

Անվանակոչում

Խնձորը մի քույր ունի, որի անունը Խնձորաքույր է, և մի եղբայր. անունը ի՞նչ կլինի:

Իսկ խնձորի տատի անունը ի՞նչ կլինի:

Որոշեցինք տանձերի և խնձորների մյուս հարազատների անունները՝ տանձաքեռի, տանձատատ. շարունակությունն արդեն պարզ է:

Հեքիաթ հորինեցինք. սկիզբը դաստիարակը հուշեց

Լինում է, չի լինում, ծառի վրա մի խնձոր է լինում: Տերն այդ խնձորը քաղում է, պոչը պոկում, խնձորը դնում սեղանին: Ես խնձորը միտք է անում, թե ոնց կախվի դիմացի տոնածառին...

Սովորական և զարմանալի պատմություններ հորինեցին:

Ձեռարվեստ

Հնարեցինք ամանորյա կերպարներ: Տանձերով և խնձորներով ստեղծեցինք այդ կերպարները:

Տանձն ու խնձորը դրեցինք երևացող տեղում, նկարագրեցինք և նկարեցինք դրանք այնպես, ինչպես որ կան:

Երեխաները երկար խաղացին խնձորներով և տանձերով:

Ամենագեղեցիկ կերպավորված մրգերը պահեցին տոնածառը զարդարելու համար:

Խաղեր

Երեխաները բաժանվում են երկու խմբի: Որոշակի հեռավորության վրա 2 արկղ կամ 2 դույլ են դնում: Խմբի յուրաքանչյուր անդամ մի խնձոր է ստանում: Խմբերի առաջին անդամները խնձորը դնում են դնչի տակ, տանում, գցում են դույլի կամ արկղի մեջ, հետ գալիս, իրենց խմբի երկրորդ անդամին են իրավունք տալիս նույն բանն անելու: Խնձորը ձեռքով բռնելու իրավունք չունեն: Եթե ճանապարհին այն ընկնում է, մասնակիցը այն վերցնում է, դնում դնչի տակ և շարունակում խաղը: Հաղթում է այն թիմը, որը խնձորներն ավելի արագ է հավաքում դույլի կամ արկղի մեջ:

Մեր փորձից

Սեղանին լիքը խնձորներ էինք լցրել: Նախ՝ մի լա՜վ կերանք, կշտացանք: Հետո երեխաներից մի քանիսի, մեզ հյուր եկած տնօրենի՝ Բլեյան Աշոտի ձեռքերը կապեցինք և առաջարկեցինք այդ վիճակում խնձոր ուտել: Ամեն ուտողի մոտ մի «հսկիչ» կանգնեց, որ «հարամություն չանեն»: Ծիծաղն ու աղմուկը բռնել էր ողջ խումբը:

Տյառնընդառաջ կամ Տրնդեզ

Ծեսի համար անհրաժեշտ պարագաներ

Փոխինձ, աղանձ, հալվա, ընկույզ, պնդուկ, պաստեղ, չիր, չամիչ, ցախ խարույկի համար, ճյուղեր, ժապավեններ, տիկնիկներ հարս, փեսա, ծնողներ:

Տոնական օրեր, տոնական եռուզեռ

Երեխաներին այս ծեսի, նրա խորհրդի մասին մանրամասն տեղեկություններ պետք չէ հաղորդել: Պետք է ասել, որ դա հին հայկական տոն է, որի ժամանակ մարդիկ թռել են կրակի վրայով, հավատացել, որ կրակը վառում է բոլոր վատ բաները: Այդ տոնը նվիրվել է նոր ամուսնացած հարս ու փեսային: Բոլորը նրանց օրհնում են, բարեմաղթանք անում, երջանկություն և ուրիշ լավ բաներ ցանկանում: Երգում են, պարում, ուրախանում:

Ծեսից երկու-երեք շաբաթ առաջ սկսում են երգերի, առած-ասացվածքների, հանելուկների ուսուցումը և բեմադրումը: Պատրաստում են ծեսին անհրաժեշտ պարագաները:

Այդ ընթացքում տատիկներն ու մայրիկները մասնակցում են տոնի նախապատրաստությանը:

Դաստիարակը հանձնարարում է երեխաներին տանեցիներից, մյուս հարազատներից, ծանոթներից օրհնանքներ սովորել (մեծերը դրանք կարող են գրել, ուղարկել նախակրթարան):

Հաջորդ օրերին երեխաներն ասում են իրենց սովորած օրհնանքները, խաղում են դրանցով:

Պատրաստում են հարսի, փեսայի, խնամիների տիկնիկները: Երգեր են սովորում և բեմադրում կամ կրկնում են մինչ այդ սովորածները: Առած-ասացվածքներով խաղ-բեմականացում են անում:

Ծեսից 1-2 օր առաջ աղանձ են պատրաստում, աղանձի մի մասը սրճաղացով աղում են, փոխինձ են ստանում: Փոխինձով ու մեղրաջրով կամ շաքարաջրով պինդ խմոր են ստանում (կարող են այլ համեմունքներ էլ ավելացնել), փոքրիկ գնդիկներ են սարքում, ուտում են, մի մասն էլ պահում են տոնի համար:

Ցախ, ծիսական ճյուղեր են հավաքում, պատրաստում են ժապավենները: Ցախը դրսում չեն թողնում, որպեսզի չխոնավանա:

Աղանձ են պատրաստում:

Ծիսակատարություն

Խոհանոցում նախապես պատրաստած փոխինձը, հալվան երեխաների հետ լցնում են ափսեները և ձևավորում: Առանձին թասերի մեջ լցնում են չիր, չամիչ, ընկույզ, պնդուկ և աղանձ:

Ճյուղերի վրա ժապավեններ են կապում մտքում պահելով այն, ինչ ուզում են, որ չլինի, որովհետև այրելով ժապավեն կապած ճյուղը այրում են վատ բաները:

- Թող հիվանդություն չլինի:
- Թող վախ չլինի:

Նախապատրաստում են խարույկի ցախը:

Պայմանավորված ժամին նվերներով գալիս են մյուս ծնողներն ու հյուրերը: Նրանք ևս ժապավեններ են կապում ճյուղերին: Ճյուղերը, տիկնիկները և պատրաստած անուշեղենը դուրս են բերում բակ, միասին վառում են խարույկը: Մեծ տատը օրհնում է բոլորին.

- Կրակը ձեր չոռն ու ցավը տանի, շառ ու փորձանքից հեռու պահի:

Մյուս Մեծ տատը օրհնում է հարս ու փեսա տիկնիկներին (նրանց խաղացնող երեխաներին).

- Յոթ որդով սեղան նստեք:

Ծլեք, ծաղկեք, զորանաք:

Հնչում է երաժշտությունը, բոլորը շուրջպար են բռնում կրակի շուրջը:

Երբ պարն ավարտվում է, Մեծ տատերից մեկը դիմում է հարս ու փեսա տիկնիկներին խաղացնող երեխաներին:

- Հարս ու փեսա, մոտ եկեք:

Մոտենում են «հարսն ու փեսան»: Բոլորը միասին արտասանում են.

Տերընդեզ, դարման ու կես,
Առ մանգաղը ել խոտի դեզ,
Տերընդեզը փեշդ վառե,
Որ ազատվես օձէ, չարէ:

Հնչում է երաժշտություն, տատը բռնում է հարսի ձեռքը, հարսն էլ՝ փեսայի: Մեծ տատը նրանց յոթ պտույտ պտտեցնում է կրակի շուրջ, նրանց հետ պտտվում են մյուս մասնակիցները՝ պտույտները բարձրաձայն հաշվելով: Յոթ պտույտից հետո երգում են «Գիլի գիլ» կամ մինչ այդ սովորած այլ երգ, ընթացքում Մեծ տատերն ու երեխաները պարեցնում են ժապավեն կապած ճյուղերը, գցում խարույկի մեջ: Դրանից հետո խաղի տեղ են բացում 10-15 մետր տրամագծով: Հնչում է զուռնայի երաժշտություն: Մասնակիցները սկսում են խաղերը:

Գդակ թռցնել

Խաղում են 8-10 հոգիանոց երկու խմբով: Խմբերը կանգնում են 5մ իրարից հեռու սահմանների վրա: Վիճակահանությամբ խաղն սկսող խմբից մի հոգի գալիս է, մյուս խմբից մեկի գլխարկը հանկարծ թռցնում ու փախչում՝ հասնելու իր խմբին: Գլխարկատերը պետք է հասնի և նրան ձեռքով դիպչի, մինչև տեղ հասնելը: Այդ գործողությամբ գլխարկն ազատում է և խաղը շահում: Հակառակ դեպքում՝ ինքը գերվում է, իսկ խումբը տանուլ է տալիս: Խաղը վերսկսում է շահող խումբը: Խաղը շարունակում են, մինչև խմբերից մեկը գերի մյուսի բոլոր անդամներին:

Հաղթող խմբի երեխաները տատիկի հետ մի բուռ աղանձ են ցանում իրենց շուրջը և ասում.

- Ես մի բուռը երկնքի հավքերին:

Մի բուռ էլ ցանում են ու ասում.

- Ես մի բուռն էլ ճամփորդին ու օտարականին:

Մեծ տատերը և երեխաները հավաքվածներին փոխինձ, աղանձ և քաղցրավենիք են հյուրասիրում: Երգում և պարում են «Հոպ, հոպ, հոպ ըլնի», «Վեր հա վեր վերիկ է» երգերը («Երգարան»): Երբ կրակը մեղմանում է, սկսում են վրայից թռչել: Ապա շուրջպար են բռնում, երգում են «Հոպ, թռի» և «Կռունկ, ծափ տուր ու թռի» երգերը:

Վերջում կարող են շարունակել խաղալը:

Փուչիկ

Խաղավարի կանչով բոլոր խաղացողները հավաքվում են մի տեղում՝ իրար մոտիկ: Հավաքված տեղից փորձում են շրջան կազմել և այն աստիճանաբար մեծացնել՝ «փչելով փուչիկը»:

- Դե փքվի՛ր, ի՛մ փուչիկ, որ չմնաս դու փոքրիկ:

Երբ շրջանը բացվում է այնքան, որ բոլոր մասնակիցների ձեռքերը հազիվ են իրար հասնում (փուչիկը մինչև վերջ փչվում է), նորից գալիս են դեպի կենտրոն՝ շրջանը կրկին փակելով հետևյալ խոսքերով.

- Փուչի՛կ, դու շատ չփքվես, թե չէ հանկարծ կպայթես:

Այս խոսքերն ասելուց հետո բոլորը պայթյունի ձայն են հանում և «ընկնում» հատակին, իբր փուչիկը պայթեց:

Գա՛յլ, թող գիշերենք քեզ մոտ

Խաղում են 10-15 հոգով: Երեխաներից մեկը դառնում է գայլ, իսկ մնացածը նապաստակներ: Անկյունում դրվում է գայլի տնակը կամ որևէ երկրաչափական պատկեր է գծվում (շրջան, ուղղանկյուն...) որպես գայլի տուն: Նապաստակները մոտենում են տնակին ու ասում .

- Գա՛յլ, թող գիշերենք քեզ մոտ:

Գայլը գլուխը թեքում է մի կողմ և բարձրաձայն մտածում. «Լավ, կթողնեմ, բայց գիշերը կուտեմ»: Երեխաները մտնում են գայլի տնակը: Խաղավարն ասում է.

- Երեկո է, ուշ երեկո: Մոտենում է գիշերը: Արդեն գիշեր է: Վերջին բառի հետ երեխաները պետք է փախչեն գայլից: Գայլը առաջինը ում բռնեց, նա է գայլ դառնում:

Վերջում խարույկի մոխիրը ցանում են բակում, մի քիչ էլ պահում են, որ գարնանը խառնեն հողին: Մնացած հետքերը միասին մաքրում են:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Բարեկենդանը հայկական հին տոներից է: Դա հայերի ամենաուրախ տոնն է եղել: Մարդիկ մի շաբաթ կերել-խմել են, երգել, պարել, ուրախ խաղեր են խաղացել, դիմակահանդեսներ են կազմակերպել: Այդ տոնից հետո պասն է սկսվել. մարդիկ չեն կերել այն, ինչ կենդանիներից են ստացել յուղ, միս, ձու, կաթ, մածուն:

Բարեկենդանին փոքրերը մեծի հագուստ էին հագնում, տղաները աղջկա, ոմանք ծաղրածու էին դառնում: Հաճախ մեկին թարս նստեցնում էին էշին, պոչը տալիս ձեռքը և ծաղրում.

- Ճամփա էշի պարոնին,

Անբեղն է գալիս, ճամփա տվեք:

Բարեկենդանի հերոսներից էին ձեռնափայտին հենված ծերուկը, կուզիկ զոքանչը, հաստափոր ու ագահ տերտերը, նոզայը, փայտե ուղտը:

Տոնական օրեր, տոնական եռուզեռ

Երեխաները, դաստիարակն ու ծնողները պատրաստում են տարբեր դիմակներ (կենդանիների, թռչունների, մրգերի, բույսերի և այլն): Պատրաստում են «ուղտ խաղացնելու» համար փայտի վրա ամրացված «ուղտի գլուխ» Բարեկենդանի կարևոր խորհրդանիշերից մեկը:

Բացի դրանից պատրաստում են

երկու տիկնիկ հարսի և փեսայի

Նոզայի դիմակ

Ակլատիզի տիկնիկ

Ուտիս տատի տիկնիկ

Դաստիարակը կազմակերպում է փոքրիկ խաղեր, խաղ-ներկայացումներ նշված կերպարներին ծանոթանալու, կերպարների առանձնահատկությունները ընկալելու, ասույթները սովորելու և հասկանալու համար, որ ծեսի ժամանակ իրենց անելիքն իմանան, հասկանան:

Դաստիարակը ինքը կարող է Մեծ տատ դառնալ, որ տոն-խաղը կազմակերպի:

Ծեսին նախորդող երկու շաբաթվա անելիքների ուղեցույց

Առաջին շաբաթ
Երկուշաբթի, երեքշաբթի

Սկսում են պատրաստել դիմակներն ու հանդերձանքը, սկեսուրի տիկնիկը:
Սովորում կամ կրկնում են Բարեկենդանի երգերը, ասույթները:
Փոքրիկ խաղ-ներկայացումներ են խաղում, որոնց «հերոսները» իրենց պատրաստած դիմակներն են:

Չորեքշաբթի

Պատրաստում են Նոզայի դիմակը և շարունակում են պատրաստել իրենց դիմակները: Ներկայացում են խաղում, որի հերոսը Նոզայն է:
Այդ հերոսի հետ կապված երգեր, ասույթներ, կատակներ, ծաղրանքներ են սովորում:
Գոմշակռիվ և աքլորակռիվ են խաղում:

Հինգշաբթի, ուրբաթ

Պատրաստում են հարսի և փեսայի տիկնիկները:
Բարեկենդանի նոր երգեր, ասույթներ, կատակներ, ծաղրանքներ են սովորում:

Երկրորդ շաբաթ
Երկուշաբթի, երեքշաբթի

Պատրաստում են ուղտի գլուխը և սովորում այն խաղացնել:
Երգեր, ասույթներ, կատակներ, ծաղրանքներ:

Չորեքշաբթի

Պատրաստում են Ակլատիզի տիկնիկը: Ակլատիզ խաղացնող երեխան միշտ մեծի հետ է լինում. նրանք ամեն ինչ միասին են անում:

Հինգշաբթի

Պատրաստում են Ուտիս տատի տիկնիկը: «Ուտիս տատ» երեխան էլ Ակլատիզի նման իր «մեծն» է ունենում:
Երգեր, ասույթներ, կատակներ, ծաղրանքներ:

Ուրբաթ

Երեխաները փորձում են իրենց դիմակներն ու հանդերձանքը, տիկնիկներն են խաղացնում, կրկնում են երգերն ու բանաստեղծությունները:

Շաբաթ

Ուղտի գլուխը պատրաստվում է հաստ ստվարաթղթից կամ փայտե թիթեղից, որի վրա ձագցնում են կտորից նախօրոք կարված «գլուխը», իսկ «գլխի» մեջ լցնում են բամբակ կամ կտոր: Այն ամրացվում է մոտ 1 մետր երկարություն ունեցող բարակ փայտին: Երեխաներից մեկը բռնում է փայտը և պարացնում այն:
Նոզայը խառնակիչ, թափթփող, խանգարող, վախեցնող կերպար է՝ չարաճ-

ճի ծաղրածու: Բարեկենդանը, լինելով ուրախության, կատակների տոնախմբություն, կերուխումի, դիմակահանդեսի տոն, չէր կարող չունենալ այդ կերպարը: Նրան տարբեր շրջաններում տարբեր անուններ են տվել: Բացի դրանից, ամեն ոք իր պատկերացումն ուներ նրա տեսքի մասին: Որոշ տեղերում Նոզայ խաղացողի դեմքին, ձեռքերին ալյուր էին քսում, ցանում էին շորերի վրա: Բոլոր դեպքերում նա զվարճացնում էր, խառնաշփոթ ստեղծում: Երբեմն նրան բաժին էին տալիս, որ հանգստանա, համոզում էին, որ գնա: Նոզայի դիմակը կարելի է պատրաստել սև գույնի ստվարաթղթով, վրան կպցնել տարբեր գույնի ժապավենի նման կտորներ: Հագուստը թափթփված, մի փոքր մեծ: Գլխին կարելի է դնել մորթուց փափախ (գլխարկ): Ավելի հարմար կլինի, որ Նոզայ դառնա որևէ բարձրդասարանցի:

Հարսի և փեսայի տիկնիկները պետք է պատրաստել ծիծաղելի և տգեղ:

Ակլատիզը միշտ հիշեցնում է պասի մասին, «պասի հսկիչն» է: Երբ ցանկանում են պասի ժամանակ արգելված կերակուր ուտել, Ակլատիզը հիշեցնում է չի կարելի: Մեծերը նրանով միշտ վախեցրել են փոքրերին: Ակլատիզը պատրաստում են սոխի գլխից (երբեմն կարտոֆիլից): Սոխն ամրացնում են խաչածև փայտի գլխին, մեջը յոթ փետուր խրում, որոնք պասի յոթ շաբաթներն են խորհրդանշում: Ամեն շաբաթվա վերջին օրը մի փետուր են հանում: Վերջին փետուրը հանում են Զատիկին նախորդող շաբաթ օրը. հաջորդ օրը Զատիկն է:

Ակլատիզի թևերին կախում են կծու պղպեղներ, քարեր, կոճակներ, որոնք իբր «ընկնում են պասը խախտողի գլխին» կամ պասը խախտելիս աղմկում են:

Ուտիս տատը ազատության, կերուխումի հովանավորն է:

Խաղեր

Աքլորակռիվ

Աջ ձեռքով մեջքի կողմից բռնում են ծալված ձախ ոտքը և թռչկոտելով աջ ոտքի վրա ուսով այնքան են իրար թեթևակի խփում, մինչև խաղացողներից մեկը վայր է ընկնում, պարտվում:

Գոմշակռիվ

Խաղացողները չորեքթաթ իրար հրում են ուսերով: Նույնը կատարում են կանգնած: Խաղում են կատակով աշխատելով պարտվել:

Խաղ «Նոզայ»

Անհրաժեշտ պարագաները խորանարդիկներ կամ այլ իրեր են, որոնք իբր թե ուտելիք են, Նոզայի դիմակ, որևէ կենդանու թղթից պատրաստված պոչեր, թել, արկղ:

Խաղի ընթացքը

Խաղին մասնակցում է 8-10 երեխա: Հատակին թելով ուղղանկյուն են ստանում. դա «սեղանն» է: Սեղանից 3-5մ հեռու դրվում է Նոզայի արկղը: Երեխաները «սեղանին» շարում են «մրգերը» (խորանարդները), մեկը դառնում է խաղավար և մյուսների հետ նստում «սեղանի» մոտ: Այնպես են նստում, որ սեղանի մի կողմը բաց մնա: Մեկն էլ Նոզայ է դառնում, կանգնում սեղանից հեռու իր արկղի մոտ: Հնչում է պարային երաժշտություն: Պարելով գալիս է Նոզայը: Նա պարում է, ծամածռություններ անում մյուսների ուշադրությունը շեղելու համար, հարմար պահ ընտրելով փորձում է սեղանից «ուտելիք» փախցնել և գցել իր արկղի մեջ: Եթե մինչև երաժշտության ավարտը (այն կարող է դաստիարակն անջատել) Նոզայը կարողանում է խորանարդ փախցնել, մի պոչ է ստանում որպես խրախուսանք, եթե չի կարողանում,

ուրիշն է դառնում Նոզայ: Եթե Նոզայը կարողանում է 2 անգամ պոչ ստանալ, փոխվում են «սեղանակիցները»:

Ծիսակատարություն

Ամբողջ ընթացքում ուղտն իր համար շրջում է, պարում, ուրախանում:

Տոնն սկսում է Մեծ տատը.

- Ահա եկան հայոց ազգի օրերը,

Հանեցեք հիները, հագեք նորերը:

Հետո հրավիրում է սեղան գցելու: Պատրաստում են ուտելիքներով լի սեղան: Հագնում են դիմակներն ու հանդերձանքը:

Մեծ ու փոքր իրար հետ երգում ու խաղում են «Թագվորի մեր» երգը: Մեծ տատը զարմանում է.

- Թագվորի մեր, վախեցա՞ր, դե դուրս արի:

Սկեսուրի տիկնիկը խաղացնելով մայրիկի հետ առաջ է գալիս «թագվորի մերը»:

Նրան ծաղրում են: Մեծ տատն ասում է.

- Արի, պառա՛վ, քեզ գովենք, ջաղացից ելած դևի նման ես:

Երեխաների մի խումբ.- (ծաղրելով) Աչքդ փոս է, քիթդ ծուռ է, փետրահան հավի նման ես:

Մի ուրիշ խումբ - Երեսիդ միսն է գնացել, միայն ոսկորդ է մնացել:

Երրորդը - Բերանդ ատամ չի մնացել, չորացած քոթուկի նման ես:

Չորրորդը - Վրա գլուխդ քրքրվել, պառաված շան նման ես:

Բոլորը երգում են «Տրիռո» երգը:

Մայրիկի հետ առաջ է գալիս «հարսը» հարսի տիկնիկը խաղացնելով.

- Ես խունջիկ - մունջիկ հարսիկն եմ, մեծ քիթ ունեմ սարի պես, ծուռ ոտքերով, կուզիկ մեջքով...

Փեսա.

- Ես էլ քաչալ փեսան եմ, գլխիս երկու մազ ունեմ ու ոտքերիս հասնող բեղեր:

Հնչում է զուռնան, Մեծ տատը աքլորակռիվ է կազմակերպում:

Խաղից հետո երգում են «Պսակ-պսակ» երգը: Երգից հետո հնչում է ուրախ պարեղանակ, բոլորը շրջան են կազմում, մեջտեղում կանգնում է որևէ ծնող կամ դաստիարակը և անսովոր շարժումներ անում, պարողները նույնությամբ կրկնում են այդ շարժումները:

Հանկարծ ներս է մտնում Նոզայը: Բոլորը փախչում են այս ու այն կողմ: Նոզայն աշխատում է խառնել ամեն ինչ՝ հագուստները, առարկաները, սեղանի սպասքը և այլն: Մի փոքր անկարգություն անելով և Մեծ տատից իր բաժինը խնծորը, ստանալով հեռանում է:

Նորից ուրախություն է, երգում են «Մի էծ ունեմ ուլերով» երգը: Ամբողջ ընթացքում Ուտիս տատը որևէ մեծի հետ երեխաներին տարբեր ուտեստներ է հյուրասիրում: Երգում են «Քուրիկ Զիզի» երգը: Արտասանում են կատակային խաղիկներ, կատակում են իրար հետ, իրար հյուրասիրում:

Գալիս է Ակլատիզը:

Ակլատիզ - Ուտել խմելը պրծա՞վ, յուղն ու պանիրը պրծավ, ոչ մի չորքան ու բքու քան: Պասի օրերը եկան:

Ուտիս տատ - Ա՛յ Ակլատիզ, պասը կանցնի, Զատիկ կգա, Ուտիս տատին սպասող միշտ կա:

Խումբն ասում է - Տատը գնաց՝ շերեփը ձեռքին,
Պապը եկավ՝ ճիպոտն ուսին:

Տատն ու երեխաները միասին արտասանում են.
- Ակլատիզ, չվանը վիզ,
Եկավ մեզ հյուր, կախվավ երդիս:

Յոթը շաբաթ քարքաշան,
ճժեր հալան ու մաշան:

Երեխաներից մեկը - Մեծ պասն եկավ, տես ինչ բերեց:

Խումբ - Հիսուն օրեր հետը բերեց,
Սոխ ու սխտոր կանոն դրեց,
Փորիս հալը շատ վատ եղավ:
Բարով եկար, զեյթուն քեռի,
Հազար բարի օրհնած լոբի:

Բոլորը միասին - Եկանք ի Բարեկենդան, կերթանք ի Զատի՛կ:
Չեզ Բարեկենդան, մեզ բարի Զատիկ:

Տոնախմբությունն ավարտվում է «Գնացեք, տեսեք» երգով: Ակլատիզին կախում են առաստաղից կամ դնում են խմբում տեսանելի տեղում, մինչև Զատիկ ամեն շաբաթ նրանից մի փետուր են պոկում: Ուտիս տատի տիկնիկը պահում են մինչև Զատիկ:

Ծեսը կարող է այլ ընթացք ունենալ: Պետք է հիշել և կարևորել բարեկենդանի ծեսին բոլորն ուրախացել են, կատակել, երգել, պարել, կերել, խմել, խաղացել տարբեր խաղեր, կազմակերպել տարբեր ներկայացումներ, ծաղրել են բոլորին տերտերին, հարսին, փեսային, թագավորին, դատավորին, միշտ «ներկա են եղել» Ուտիս տատն ու Ակլատիզը, միշտ «ուղտ» են պարեցրել:

Բարեկենդանից հետո սկսվում է Մեծ պասը:

ՄԵԾ ՊԱՍ

Միջենք

Թխում են Մեծ պասի 4-րդ շաբաթվա չորեքշաբթի օրը:

Ծեսի համար անհրաժեշտ են բաղարջ միջինք կամ կլոճ, պասի ուտելիք:

Խոհանոցում թխում են կլոճը գաթայի նման. բաղադրության մեջ մտնում է ալյուր, շաքարավազ, ձեթ, ջուր:

Վրան քսում են մեղրաջուր և զարդարում ընկույզով ու չամիչով:

Ծիսակատարությունը

Առավոտյան բոլորը միասին թխում են միջինքը: Մեջը դնում են որևէ նշան բախտագուշակության համար: Երբ միջինքը պատրաստ է լինում, բաժանում են խմբում եղածների թվով: Ում ընկավ բախտագուշակության նշանը, նա էլ տարվա երջանիկն է:

Դուրս են քշում «Պուպուշիկին», որը հնում համարվել է տան անկյունում թաքնված գանգրահեր փոքրիկ սատանայածուտ (չարաճճի երեխա, որն ամեն ինչ խառնում է, ջարդում, փշրում): Վերցնում են սուր ծայրով երկար փայտ, խմբի անկյուններում օդի մեջ թափահարում են և ասում. «Պուպուշի՛կ, դո՛ւրս, պուպուշի՛կ, դո՛ւրս»:

Վերցնում են պասի ուտեստները և ամբողջ խմբով ուղևորվում որևէ կանաչազարդ տեղ (դաշտ, բուսաբանական այգի, զբոսայգի): Շրջում են, փոքրիկ հացկերույթ կազմակերպում, հացկերույթից հետո մաքրում են շրջապատը և վերադառնում:

Ծառզարդար-Ծաղկազարդ

Ծեսին անհրաժեշտ մթերքներ և պարագաներ՝

ցորեն, սիսեռ, չամիչ, շաքար (շաքարի մանրուք), որոնցով խոհանոցում քաղցր հատիկ են պատրաստում,

չրեր, մրգեր

ձվեր

ուռենու ճյուղեր

միջին մեծության մի քանի թաս

փոքրիկ մոմեր

ճեռեր, կարկաչաներ, շրխկաններ

ժապավեն-գլխակապեր

Ծիսական օրեր, ծիսական եռուզեռ

Նախ և առաջ մեզ հարց տանք. երեխաները կտոնեի՞ն «Ծառի տոնը». ինչո՞ւ. նախակրթարանում հարկավոր է ներկայացնել Ծառզարդարը:

Այս տոնին պատրաստվում են երկու շաբաթ առաջ: Այդ ընթացքում երեխաները՝

հեքիաթներ են հորինում ծառերի, գարնան, բույսերի մասին

նկարում են իրենց հորինած հեքիաթները

երգ, առած, հանելուկ են սովորում կամ իմացածներով խաղում՝ կրկնելով դրանք: Դա կարող են առավոտյան ծեսին, խաղեր խաղալիս, բակում անել

ծառ-տիկնիկներ են պատրաստում

փոքրիկ ճյուղերով, բնական այլ նյութերով կոլաժներ են անում

էտած ճյուղեր են դնում ջրի մեջ և նկարում դրանք

շրխկաններ, աղմկող՝ զնգզնգացող, շրխկացող խաղալիք-գործիքներ են պատրաստում՝ շշերի, մետաղյա փոքրիկ տարաների մեջ ավազ, կոճակներ, ուլունքներ, քարեր և «աղմկող» այլ մանրուք լցնելով, տոնի բոլոր օրերին բակն են մաքրում, ծառերի տակ փոսեր են փորում, մեծերի հետ ծառերն են էտում, ծառ, ծաղիկ տնկում, նախապատրաստում են ծիսական ծառը՝ ծառի էտած ճյուղ կամ ճյուղեր են բերում խմբասենյակ, ամրացնում են անհրաժեշտ տեղում, ծիսական ծառն են զարդարում:

Ծեսին նախորդող կիրակի օրը

Ծնողներից մի քանիսը դաստիարակի և երեխաների հետ կազմակերպում են նախորդ երկու շաբաթվա ընթացքում երեխաների ստեղծած գործերի ցուցահանդեսը, գնում են եկեղեցի՝ ուռենու ճյուղերն օրհնելու:

Ծիսակատարություն

Առավոտյան խումբ են բերում ուռենու ճյուղերը, մոմեր, ձվեր, սիսեռ, չամիչ, շաքարի մանրուք:

Խոհանոցում պատրաստում են հատիկը: Լցնում են մեծ թասի մեջ և դնում սեղանին:

Բոլորը հյուրասիրվում են:

Վերցնում են ուռենու ճյուղերն ու միմյանց մեջքին թեթև խփելով՝ ասում.

- Մեջքը տեղը, կամքը տեղը,
- Քամու տեղ, սրտի դեղ:

Երգում են «Խնկի ծառ» երգը:

Տատիկներ - Բարի լույսի զանգեր զարկին,

Խումբ - Զնգզնգալեն անուշ-անուշ,

Տատիկներ - Լույսը բացվեց մեր աշխարհքին:

Խումբ - Ճղճղալեն անուշ-անուշ:

Մեծ տատ 1-Կարկաչա, կարինկաչա:

Խումբ - (շրխկաններով հանգ տալով)- Կարկաչա, կարինկաչա:
Մեծ տատ 2 - (շրխկաններով) - Անակ, անակ, ճոճանակ:
Խումբ (շրխկաններով) Անակ, անակ, ճոճանակ:
Տատ 1 - Ծաղկազարդը եկե՞լ է:
Խումբ (շրխկաններով) - Եկե՜լ է, եկե՜լ է:
Տատիկներ - Նուրի-նուրիկ եկե՞լ է:
Խումբ (շրխկաններով) - Եկե՜լ է, եկե՜լ է:
Տատիկներ - Նուրի- նուրի, ի՞նչ կուզես:
Խումբ (Նուրի տիկնիկները խաղացնելով).
- Կթան կովից եղ կուզեմ,
Չալ հավից հավկիթ կուզեմ,
Երկնքից ամպեր կուզեմ,
Ամպերից անձրև կուզեմ:
Որ մեր ուզած տա մեզի,
Անձրև իջնի վեր ծեզի:
Տատիկներ - Կարմիր արև քեզ, ախպե՛ր,
Աստծու բարև քեզ, ախպե՛ր:
Խումբ (շարունակում է).
- Կարմիր եզին օղն ու կոճակ,
Կարմիր հավկիթս դուրս բերեք,
Ճերմակ հավկիթս ներս տարեք:
Տատիկներ - Ու մեր ծառի գովքը արեք:
Բոլորը վեր են բարձրացնում փոքրիկ ճյուղերը, որ նախորդ շաբաթ ջրի մեջ էին դրել, տարուբերում են ու երգում « Խնկի ծառ» երգը:
Տատիկ 1 - Եկեք ծեծենք, եկեք ծեծենք ...
Տատիկ 2 - Մենք ի՞նչ ծեծենք, մենք ի՞նչ ծեծենք:
Խումբ - Սխտոր ծեծենք ու սոխ ծեծենք,
Սխտոր ծեծենք ու սոխ ծեծենք:
Բոլորը երգում և խաղում են «Եկեք ծեծենք» երգը: Երգի ավարտից հետո շուրջպար են բռնում:
Տատիկ 1 - (Շուրջպարից հետո)
Սոխ ու սխտոր, կարմիր լոբի,
էլ ի՞նչ մնաց...
Տատիկ 2 - Բա բանջա՜րը:
Բոլորը երգում և խաղում են «Ջրմփիկ, զրմփիկ» երգը:
Երեխաների մի խումբ (շրխկանները շրխկացնելով).
- Կարկաչա՜, կարկաչա՜...
Մյուս խումբը - Ծառզարդա՜ր, ծառզարդա՜ր,
Ձեր տուն եկանք ծառզարդար,
Շեն մնաք,
Լիքը բարիք ունենաք,
Հատիկ տվեք էս օրվան,
Հավկիթ տվեք Զատկվան:
Բոլորը երգում և խաղում են «Կարկաչա» երգը: Երգի ավարտից հետո երեխաների մի խումբ արտասանելով ծու, յուղ, կաթ է հավաքում.
- Ով չտա մեր երկու ծուն,
Մուկն ու կատուն իրենց թքուն,
Ով կտա մեր երկու ծուն,
Աստված պահի իր փեսացուն:
Երեխաների մի խումբ - Հավկիթ տվողն ի՞նչ լինի:
Մյուս խումբը - Կարմիր բարձին նստի,
Շեն մնա, լիքը բարիք ունենա:
Երեխաների մի խումբ - Ով չտվե՞ց...
Մյուս խումբը - Մուկը ցորենն ուտի, կաթը թթվի,

Տունն էլ մրջյունով լցվի:

Ցատիկներ - Ծառերը զարթնել են, ծաղիկները բացվել: Զատիկ է շուտով, Կարմիր Զատիկ, հանեք ձմեռվա շորերը, հագեք գարնանը, իրար աչքալուսանք տվեք՝ բարով գնանք դեպի Զատիկ:

Երգում ու խաղում են «Գնացեք, տեսեք» երգը:

Տոնը շարունակվում է ուրախ երգ ու պարով:

ԳԱՐՈՒՆ-ԾԵՍ

Պատմություններ նախակրթարանից

Նկարագրված գործողությունները օրվա գործունեության մասն են կազմել: Ձգտել ենք այնպես շարադրել, որ ընթերցողը ունենա նախակրթարանի գործունեության ամբողջական պատկերը:

Առավոտյան ծեսից հետո մեկնվեցինք գորգին: Բոլորը «զբաղված» էին. զրուցում, խաղալիք էին քանդում-հավաքում... Մի երկուսի հետ սկսեցինք տարվա եղանակների մասին զրուցել, պարզեցինք՝ ում ծննդյան օրը որ եղանակին է, անսպասելի ու հետաքրքիր հարցեր էինք տալիս: Զրույցը կամաց-կամաց գրավեց նաև մյուսներին. մի քանիսը միացան զրույցին՝ առանց զբաղմունքը թողնելու, մյուսները մոտեցան մեզ:

Միասին հիշեցինք ու նկարագրեցինք եղանակները, համեմատեցինք ու պարզեցինք, որ բնությունը ձմռանը բարկանում, գժվում է ու քնում, որ արևը մրսում է, գարնանը ուրախանում է, ծիծաղում է, արթնանում քնից, գալիս է խմբասենյակ, որ ընկերանա մեզ հետ, տաքացնի մեզ: Ամռանը լցվում է ամեն տեղ, մեզ հետ խաղում է բակում ու պարտեզում, ծիծաղում է, վառում է բոլորին: Զրուցելով հասանք գարնանը:

Առաջարկեցինք երեխաներին գարնան բարեկամ ու հակառակորդ բառեր ասել: Երեխաներն այնքան ոգևորված էին, որ յուրաքանչյուրն ուզում էր առաջինն ասել: Գարնան բարեկամները արևն ու ծաղիկներն էին, ծառերն ու կանաչ գույնը, կապույտ ամպը, գետակը, խաղը, հողը, բարի լույսը, մայրիկը, տերևը, առուն, մի քիչ քամին:

Սիրուշիկը գորգի մյուս ծայրից կանչեց.

- Լեգոն է գարնան բարեկամը:
- Ինչո՞ւ:
- Որովհետև ես հիմա իրենով եմ խաղում, ու ինքը գունավոր է:

Երբ զրույցն ավարտեցինք, գնացինք բակ տեսնելու, թե մեր ծառերն ինչ են անում հիմա: Բակում խաղացինք որքան սրտներս ուզեց, դիտարկեցինք ծառերը, նշեցինք կատարված փոփոխությունները: Դայակը երեխաներին պատմեց, թե հնում մարդիկ ինչպես են արթնացրել իրենց այգու ծառերին: Պատմությունն այնքան դուր եկավ երեխաներին, որ նրանք էլ գետնից ճյուղեր հավաքեցին ու թակելով ծառերի բները սկսեցին արթնացնել նրանց: «Ծառերն արթնացե՞լ են» մեր հարցին պատասխանեցին.

- Այո՛, արթնացել են, որովհետև գարունը եկել է:
- Ինչի՞ց իմացաք, որ գարուն է:
- Որովհետև արև է, ու ձյունը հալվել է:
- Իսկ ծառն ինչի՞ց է իմանում, որ արթնացել է:
- Նայում է իրեն ու տեսնում, որ բողբոջներ ունի:
- Նայում է, տեսնում, որ արթնացել է:
- Արևը նրան աչքով է անում:
- Որ մենք ասենք, կիմանա, որ չասենք, էդպես էլ անիմաց կմնա: (Սա Արտյոմն էր):

Խմբասենյակում նկարեցինք մեր բակի ծառերը: Այդ օրվա ծառերը մի [illegible] տեսար էին ստացվել, երևի արևը քիչ էր, դրանից էր:

Հաջորդ օրերին մաքրեցինք, կարգի բերեցինք բակը, վարպետ Մեսրոպի [illegible] հետ էտեցինք ծառերը:

Գարնանացան

...Գնացինք-հասանք գարնանացանին: Նախ «քանդեցինք» գարնանացան բառը, հասկացանք՝ ինչ բառեր են միացել, ինչ է նշանակում այն: Հարցրինք.

- Եթե ծմռանն ինչ-որ բան ցանեին, ինչպե՞ս կկոչվեր:

Գլխի ընկան.

- Ձմեռնացան:

Հետո երեխաները ուրախ կանչում էին՝ ամառացա՜ն, աշնանացա՜ն:

Հարցրինք.

- Ինչո՞ւ ծմռանը սերմ չեն ցանում:

- Սերմը կմրսի, կհիվանդանա, կմեռնի,- ասաց Մերին,- ամռանն էլ շոգից կչորանա:

(Աշնանացանի մասին արդեն գիտեին. աշնանը ցորեն էին ցանել):

Քանի որ արդեն գիտեինք գարնան զարթնելու մասին, որոշեցինք խմբասենյակում սերմեր ցանել ու տեսնել, թե դրանք ինչպես են ծնվում:

Աշխատանքը սկսելուց առաջ որոշեցինք նախապատրաստվել: Երեխաներին հարցրինք, թե գարնանացանի համար մեզ ինչ է հարկավոր:

- Սերմեր են պետք,- ասաց Արսենը. մյուսները հանձայնեցին նրա հետ:

- Իսկ սերմը որտե՞ղ պիտի ցանենք:

- Հողի մեջ, էլ որտե՞ղ,- զարմացավ էլենը:

- Ինչո՞ւ են սերմը հողի մեջ ցանում:

- Որ հողը սերմին արմատ տա, ու սերմը աճի:

- Որովհետև հողը փափուկ է:

- Հողի միջից սերմը հեշտ է դուրս գալիս:

- Հողը սերմի ի՞նչն է- հարցրինք մենք:

Արսենն ասաց.

- Հողը սերմի տունն է, իմքն այնտեղ է ապրում:

Անին էլ պնդեց.

- Հողը սերմի վերմակն է, նա չի թողնում, որ սերմը մրսի:

- Հողը սերմի մաման է, որովհետև նրա միջից է ծնվում,- ասաց էլենը:

Երբ բավականաչափ զրուցեցինք սերմերի մասին, ասացինք, որ այսօր միասին գնալու ենք սերմեր գնելու:

- Ես գիտեմ, հետո էլ դրանք միասին ցանելու ենք,- ոգևորված բացականչեցին երեխաներն ու արագ-արագ սկսեցին փոխել հողաթափերը:

Երբ բոլորն արդեն պատրաստ էին, անցորդներին ողջունելով՝ բարձր տրամադրությամբ գնացինք խանութ: Խանութում մեզ ջերմորեն դիմավորեցին և, իհարկե, զարմացած: Ողջունեցինք վաճառողներին, մոտեցանք սերմավաճառին: Երեխաների հետ նախապես որոշել էինք՝ ինչ սերմեր ենք գնելու: Գումարը միասին հաշվեցինք, գնեցինք կաղամբի, լոլիկի, սմբուկի, պղպեղի սերմեր, շնորհակալություն հայտնեցինք, դուրս եկանք խանութից: Երեխաները ոգևորված էին. նրանք երբեք սերմեր չէին գնել: Խանութից դուրս գալով՝ հարցրինք, թե էլ ինչ է հարկավոր, որ սերմերը ցանենք:

- Հող է հարկավոր, աման է հարկավոր, որ հողը մեջը լցնենք,- պատասխանեցին Արմենն ու էլենը:

Գնացինք շինանյութերի խանութ, միասին ընտրեցինք անհրաժեշտ թաղարները, հաշվեցինք ու վճարեցինք գումարը: Տղաները թաղարները գրկած տարան մինչև խմբասենյակ: Սկսվեց գարնանացանը: Թաղարի մեջ հող լցրինք, հողը թրջեցինք: Երբ թրջում էինք հողը, Արսենն ասաց .

- Ջուրը սերմի ուտելիքն է:

Լարիսան էլ ավելացրեց.

- Եկեք լիքը ջուր լցնենք, որ մեր սերմերը շուտ աճեն:

- Չէ՜, որ շատ ջուր լցնենք, սերմը կխեղդվի,- անհանգստացավ Արթուրը:

Երեխաները չէին կարողանում կողմնորոշվել, թե ում ասածն է ճիշտ, այդ պատճառով էլ փորձեցինք նրանց օգնել:

- Ջուրը սերմի ուտելիքն է: Եթե ուտելիքը չափից շատ ուտեն, ի՞նչ կլինի:

Արսենը շատ արագ գտավ պատասխանը.

- Եթե մենք շատ ուտենք, կուռենք ու կպայթենք: Այդպես էլ սերմը, եթե շատ ջրենք, կպայթի:

- Իսկ ի՞նչ կլինի, եթե սերմը պայթի,- հարցրինք մենք:

- Ինքը դեռ փոքր է, պիտի մի քիչ մեծանա, նոր պայթի: Եթե հիմա շատ ջրենք, ինքը պայթելուց կխեղդվի, իսկ որ մեծանա ու նոր պայթի, կկանաչի ու հողից դուրս կհանի իր մարմինը,- ինքնավստահ ու համոզիչ պատասխանեց էլենը:

Երբ հարցրինք, թե բացի հողից ու ջրից սերմին էլ ի՞նչ է պետք, պատասխանեցին՝ լույս, տաքություն, խնամք, դեղեր, շպրից (ներարկիչ), որ չհիվանդանա:

- Ինչպիսի՞ լույս է հարկավոր:

- Լամպի ու արևի լույս, բայց ավելի լավ է արևի լույս լինի, որովհետև արևը սերմի ընկերն է,- պատասխանեց էրիկը:

Այնուհետև թվարկեցինք սերմի բարեկամների ու հակառակորդների անունները: Միասին ընտրեցինք, թե որ սերմն ենք ցանելու առաջին հերթին: Երեխաներն ամենից շատ լոլիկ էին սիրում, այդ պատճառով էլ որոշեցինք լոլիկ ցանել: Ցանեցինք, վերջացրինք ու սկսեցինք զրուցել լոլիկի մասին:

- Ի՞նչ գույնի է լոլիկը,- հարցրինք նրանց:

- Հասածները կարմիր են, փտածները՝ սև, իսկ կանաչները թթուներն են:

- Լոլիկն ի՞նչ ձև ունի:

- Կլոր:

- Ինչո՞ւ է կլոր:

- Որովհետև կլորը սիրուն է:

- Իսկ կանաչ լոլիկը ուզո՞ւմ է կարմրել:

- Այո, ուզում է կարմրել, որ համովանա, ու իրան ուտենք:

- Իսկ լոլիկն ուզո՞ւմ է՝ իրեն ուտենք:

- Այո՛, ուզում է՝ ուտենք, որ գնա մեր փորի մեջ ու էնտեղի ուտելիքների հետ խաղա:

Երեխաներից մի քանիսն ասացին, որ լոլիկը կտխրի ու կլացի, եթե իրեն ծամենք կամ դանակով կտրենք: Մենք էլ հարցրինք, թե ինչ կլինի, եթե լոլիկին չուտենք:

- Կխաղա, կուրախանա:

- Հետո ի՞նչ կլինի, որ այդպես երկար մնա:

- Կթթվի, կսևանա:

Այդ ժամանակ երեխաներին ցույց տվեցինք մեր խմբասենյակի դռումը, որին ամիսներ առաջ կերպավորել էինք: Զննեցինք ու տեսանք, որ արդեն փչացել է, տեսքը կորցրել, տգեղացել, իսկ եթե կերած լինեինք, չէր փչանա, այլ մեզ համար օգտակար կլիներ, համեղ մուրաբա կդառնար: Հիմնավորումները լսելուց հետո բոլորը հասկացան, որ ուտելիքները ուտելու համար են և ուրախանում են, երբ օգտակար են լինում մեզ:

Հետո հարցրինք.

- Ի՞նչ կլինի, եթե լոլիկը հանկարծ մութ սենյակում հայտնվի:

Բոլորն իսկույն պատասխանեցին, որ կվախենա, կտխրի ու կլացի:

Արսենն էլ ասաց.

- Ո՛չ, չի տխրի ու լացի: Նա այնտեղ իր համար անցք կբացի, տուն կսարքի ու լույս կվառի, կապրի:

- Իսկ մութ սենյակում լոլիկն ո՞ւմ կհանդիպի:

- Կախարդին:

- Մութին:

- Արջին կհանդիպի:

- Վախին:

- Իսկ մութի բարեկամներն ովքե՞ր են:

- Վախը, չար կախարդը, արջը, գայլը, կծելը, լացը:

- Ի՞նչ կլիներ, եթե լոլիկը թևեր ունենար, կճղիք ունենար ու մկան նման ծվծվար:

- Նա կթռչեր, կգնար ուրիշ երկիր:

- Մազալու կենդանի կլիներ, կգնար, ուր ուզենար:

Բավականաչափ զրուցելուց հետո երեխաներին առաջարկեցինք նկարել լոլիկի կերպարը իրենց պատկերացմամբ, որից հետո նրանք պատմեցին իրենց նկարածը:

Բնագետի օրագիր

Երեխաներին ծանոթացրինք օրացույցի հետ և ցույց տվեցինք, թե որ սյունակում պետք է նշումներ կատարենք: Պայմանական նշանները միասին որոշեցինք: Սերմիկները դեղին գույնով նշանակեցինք, ջուրը՝ կապույտ գույնով, իսկ ծիլերը՝ կանաչով; Սերմերը ցանելու օրը դեղին թղթի կտորներ փակցրինք ու կապույտ նշանով տարբերակեցինք ջրելու սյունակները: Այսպես կազմեցինք մեր սերմերի աճի օրացույցը:

Երեխաները հասկացան, որ պետք է խնամեն իրենց սերմերը, պիտի չգոռան ու չկռվեն, որ նրանք շուտ ծլեն: Իսկ երբ հողի մեջ հայտնվի կանաչ ծիլը, նրանք այդ օրվա սյունակում կփակցնեն նաև կանաչ տարբերանշանը:

Ադիբուդի թիթիզ ծառ

Դուրս եկանք ներքին բակ, փաթաթվեցինք մեր ծառերին, զրուցեցինք նրանց հետ, խմբասենյակում նկարեցինք փոփոխված ծառերը: Երեխաները նկատեցին, որ նրանք ավելի են թիթիզացել, ավելի են սիրունացել, որովհետև արևի տաքությունից՝ բողբոջները պայթել են, ու սպիտակ ծաղիկներ ու կանաչ տերևիկներ են ծնվել: Երբ մաքրում էինք մեր ծառերի շուրջը, գետնին թափված ճյուղեր տեսանք: Երեխաներին հարցրինք, թե դրանք ինչու են չոր ու գետնին ընկած: Նրանք էլ պատասխանեցին, որ նրանք տխրել են, որովհետև չեն բողբոջել, դրա համար էլ գետնի վրա են, ոչ թե ծառի:

Որոշեցինք ճյուղերին ուրախացնել: Հավաքեցինք դրանք, տարանք խմբասենյակ: Հետո Ծառզարդարի առթիվ փոքրիկ ճյուղերի կտորտանքներից կոլաժներ ու վզնոց-սիմվոլներ պատրաստեցինք: Ճյուղին ուրախացնելու համար դատարկ ձվիկները գուաշով ներկեցինք ու գունավոր թելերով կախեցինք ճյուղերից: Երբ զարդարեցինք մեր ճյուղը, տեսանք, որ այն «Չվածառ» է դարձել:

Չվածառն համեմատեցինք բակում ծաղկած ծառերի հետ, պարզեցինք, որ նրանք և նման են, և տարբեր: Նման են նրանով, որ երկուսն էլ թիթիզ ծառ են, երկուսն էլ զարդարված են, երկուսն էլ ճյուղեր ունեն, ու մենք երկուսին էլ սիրում ենք: Տարբեր են նրանով, որ բակի ծառերը հողի մեջ են ապրում, իսկական բողբոջներ, արմատներ, լիքը ծիտիկներ ունեն, իսկ Չվածառը ապրում է խմբասենյակում, մի դեղին թութակ, Ակլատիզ ընկեր, գունավոր ձվիկներ ունի: Հարցրինք.

- Ձեր կարծիքով՝ մեր ճյուղն այժմ ուրա՞խ է:

Պարզվեց՝ այնքան էլ չէ. դրսի ծառն ավելի ուրախ է, որովհետև ծյունի նման ճերմակ, փափուկ ծաղիկներ ունի: Երեխաները առաջարկեցին խմբի ծառն այնպես զարդարել, որ նա ավելի ուրախանա ու իր ընկեր ծառերին նմանվի: Երեխաները ծաղիկները նմանեցրին ադիբուդիների: Այսպես ծնվեց ճյուղը ադիբուդիներով զարդարելու միտքը:

Միասին գնացինք խանութ, ադիբուդի գնեցինք, դեռ խանութի տնօրենն էլ մի մեծ տոպրակ ադիբուդի նվիրեց մեզ: Եկանք խմբասենյակ, մի լավ ադիբուդի կերանք ու մնացածով զարդարեցինք մեր ճյուղը: Հիմա նա ավելի ուրախ էր ու համեղ, որովհետև ծաղկած ծառի ծաղիկը չենք ուտում, իսկ ադիբուդիները ուտում ենք: Խումբն ուրախությամբ էր լցվել:

Զարդարելուց հետո նկարեցինք մեր «համով ծառերին», հանելուկներ հորինեցինք նրանց մասին ու գովեցինք:

Չրածառ

Նախորդ օրը ծնողների հետ երեխաներից թաքուն ծառերի ճյուղերից տարբեր տեսակի չրեր կախեցինք: Երեխաներն առավոտյան մտան խմբասենյակ, ու ոչ ոք չնկատեց, որ ծառն այսօր փոխվել է:

Մենք հարցրինք, թե խմբասենյակում ինչ փոփոխություններ են եղել: Մի մասը Ակլատիզի մոտ վազեց, մյուսները գնացին աճած ծիլերը զննելու, չափելու, երեխաներից մեկը նկատեց, որ գորգը չկա: Մեկ էլ Անին նայեց ծառին ու զարմանքով նկատեց, որ ճյուղերից չրեր են կախված:

Բոլորն արագ հավաքվեցին ծառի շուրջն ու զարմացած հարցնում էին՝ որտեղի՞ց չրերը: Անին «հայտնագործեց».

- Դա Ակլատիզն է արել: Նա չի թողնում, որ յուղոտ բաներ ուտենք, դրա համար էլ խղճացել է մեզ ու յուղալի, փայլուն չիր է ուղարկել:

Մեծ մասն ասում էր, որ ծառը կախարդական է, և կարող է այդ պատահել, ու համաձայնեցին Անիի հետ:

- Հիմա ինչպե՞ս վարվենք այս յուղալի ու փայլուն չրերի հետ: Ուտե՞նք, թե՞ թողնենք մնան ճյուղերից կախված:

Բոլորը ցանկացան ուտել, բացի Բելլայից: Նա չէր ցանկանում ուտել, որ ծառն իրենից չնեղանա: Բելլայի որոշումն ազդեց նաև մյուսների վրա, և բոլորն աստիճանաբար սկսեցին հրաժարվել չիր ուտելու մտքից, որքան էլ այն գայթակղիչ էր:

Այդ ժամանակ բացատրեցինք, որ ծառի պտուղներն ուտելու համար են, դրանք ծառի պարգևներն են, որոնք ծառը սիրում է նվիրել մարդկանց: Երբ ծառը ծաղկում է, նա ցանկանում է բերք տալ, հյութալի մրգերով զարմացնել մեզ, իսկ երբ չորանում է, տխրում է, որ այլևս չի ծաղկելու: Այնպես, ինչպես մեր ճյուղն էր մինչև զարդարելը:

Այս ամենը լսելուց հետո երեխաները ոգևորվեցին: Նրանք որոշեցին չիր ուտել, որպեսզի ծառն ուրախանա և իրենց նոր բարիքներ բերի: Չիրը պոկելուց առաջ յուրաքանչյուրը մի բարեմաղթանք էր ասում ծառին, նոր «պոկում» իր բաժինը և փորձում գուշակել, թե որ մրգի չիրն է դա:

- Ուրախ ծաղկես, համով լինես: (Էլեն)
- Ես քո չրից էլի եմ կերել, շատ քաղցր է: (Արսեն)
- Չնեղանաս, էլի կծաղկես: (Անի)

Մյուսները շնորհակալություն էին հայտնում և անհամբերությամբ ուտում չիրը: Բոլորս կերանք չրերը, իսկ կորիզները որոշեցինք ցանել:

- Ի՞նչ կլինի, որ կորիզները ցանենք,- հարցրինք երեխաներին:
- Նոր կախարդական ծառ կաճի, ու ինչ ուզենք, կտա մեզ,- պատասխանեցին բոլորը:

Հաջորդ օրը Մրգածառ պատրաստեցինք:

Նվերածառ

Այս անգամ կախարդական ծառը կատարել էր երեխաների խնդրանքն ու խաղալիքներ էր բերել: Մենք գնացել էինք տիկնիկային թատրոն, երբ վերադարձանք, տեսանք, որ ճյուղերից խաղալիքներ, ջրաներկեր ու գունավոր մատիտներ էին կախված: Երեխաները միանգամից վրա հասան ու բեռնաթափեցին կախարդական ծառը: Նրանք բոլոր նվերները Ակլատիզին էին վերագրում:

Կախարդական ծառի մասին հեքիաթ հորինեցինք, վերջում ծառի համար մի խաղ խաղացինք:

Խաղ «Գուշակիր, թե ով եմ ես»

Երեխաներից մեկը կանգնում է կենտրոնում ու ծառ դառնում: Դա կարելի է անել մնջախաղի միջոցով կամ մեկ այլ եղանակով: Մյուսները շարվում են ծառի շուրջն ու մտապահում որևէ մրգի անուն: Այնուհետև «ծառի» ընտրությամբ «պտուղ դարձած» երեխաներից մեկը կանգնում է ծառի կողքին: Նա ծառի ականջին ասում է իր անունը, ասենք՝ կեռաս: Երեխաները ծառին հարցնում են իր անունը, ծառը պատասխանում է նրանց հարցին: Ճիշտ պատասխանի դեպքում (կեռասենի) ծառն ընտրում է մեկ այլ միրգ, իսկ սխալվելու դեպքում տվյալ միրգը գրավում է ծառի տեղն ու նրան տալիս իր անունը: Խաղը կարելի է զարգացնել, ձևափոխել:

Այդ օրերի ընթացքում հանելուկներ, առածներ, երգեր, ոտանավորներ սովորեցինք ծառերի, ծաղիկների, գարնան մասին, ավանդություններ, պատմություններ լսեցինք, օրհնանքներ սովորեցինք:

Ամեն օր առավոտյան, երեխաները մոտենում էին թաղարներին, նշում փոփոխությունները, լրացնում օրագիրը:

Վարունգի սերմերը չծլեցին: Երեխաները որոշեցին, որ դրանք կամ հիվանդ էին, կամ եփած. իրենք աշնանը եփած ցորեն էին ցանել և պարզել, որ սերմը եփելիս մեռնում է, ու երբ ցանում ես, չի ծլում:

Երբ ծիլերը սածիլներ դառնան, իրենք էլ դրանք կհանեն, այգում կտնկեն:

ՁԱՏԻԿ

Տոնական օրեր, տոնական եռուզեռ
Տոնական օրացույց

Ձատկից 25-30 օր առաջ զատկական օրացույց են պատրաստում Ձատկին մնաց---- -- օր: Ամեն օրվա համար զատիկ, ճուտիկ, թիթեռ կամ համապատասխան այլ կերպար են փակցնում:

Այդ կերպարները կարող են բակի ծառերից մեկին կամ մի քանիսին կախել: Կլինի ծառ-օրացույց:

Կարելի է ճյուղ բերել խմբասենյակ և դրա վրա հավաքել օրացույցի օրերը:

Ստացված օրացույցից օրական մի կերպար հանելով հաշվում են, թե Զատիկին քանի օր մնաց:

Ածիկ

Զատիկից 20-25 օր առաջ ափսեների կամ սկուտեղների մեջ բամբակ են փռում, լավ թրջում են, վրան ցորեն, գարի, ոսպ կամ այլ հատիկ են ցանում: Բամբակը միշտ թաց պիտի լինի: Մինչև Զատիկ ածիկը ծլում է: Երեխաները հետևում են ածիկի աճին:

Ցանում են նաև եփած ցորեն, քարեր: Դիտարկելով համոզվում են, որ եփած ցորենն ու քարերը չեն ծլում: Քննարկում են, թե ինչու դրանք չծլեցին, պատկերացում են կազմում անկենդան և մեռած բնության մասին:

Ձեռակերտ նմուշներ

Զատկից 30- 35 օր առաջ սովորական թղթերից և ստվարաթղթից տարբեր չափի ձվեր են կտրում, մեջը դատարկված ձվեր են հավաքում: Մինչև Զատիկ դատարկ ձվերը նկարազարդում են, թելերով նախշում, կերպավորում աչքեր, քիթ, բերան, բեղեր, մազեր, գլխարկ և այլ հետաքրքիր մասեր կպցնելով: Զատկական կերպարներով ապլիկացիաներ են անում: Չու-տիկնիկներ են պատրաստում:

Զատկաճյուղ

Տոնից 15-20 օր առաջ ծառի էտած ճյուղ են բերում խմբասենյակ, զարդարում իրենց նախշած ձվերով, պատրաստած կերպարներով:

Ուտիս տատ

Եթե Բարեկենդանին Ուտիս տատ չեն ունեցել, տոնից 10-15 օր առաջ նրա տիկնիկն են պատրաստում:

Արև- գլխարկներ

Նախատոնական բոլոր օրերին գլխարկներ, արևներ, ճուտիկներ են պատրաստում տոնին դրանք հագնելու համար:

Զատկական հրավիրատոմսեր

Զատկական կերպարներով հրավիրատոմսեր են պատրաստում ծանոթներին ծիսակատարությանը հրավիրելու համար:

Բարեկենդանից Զատիկ

Հեքիաթներ ու պատմություններ են հորինում, երգեր, պարեր, խաղեր են սովորում-բեմադրում:

Հանելուկներ, ասույթներ, խաղերգեր են սովորում:

Դաստիարակի, ձեռարվեստի մասնագետի հետ ամուր լարերով մեծ ծու են գործում, կտորով կամ այլ փափուկ նյութով պատում:

Տոնին նախորդող շաբաթ

Երկուշաբթի Ջրաղացպանի օր: Սովորում են «Դալի լոբ լո» երգը: Խոսում են ջրաղացի մասին, փոխինձ են պատրաստում և յուտում:

«Խնոցի-հարոցի» խաղը («Խաղադարան»)

«Հիմար-իմաստունի» վիճակի արարողություն:

Հնում 10 թղթակտորներից 5-ի վրա գրվում էր «իմաստուն», 5-ի վրա «հիմար» բառերը: 10 երեխա վերցնում էին մեկական թուղթ: Մտքում որևէ երազանք պահած անձինք նախապես ընտրում էին երեխաներից մեկին: «Իմաստուն» վիճակի ընկնելը նշանակում էր երազանքի իրականացում, «հիմարի» դեպքում՝ ձախողում: Այս արարողությունը կարելի է իրականացնել մեծերի և փոքրերի հետ՝ առանց հաշվի առնելու տարիքը:

Չորեքշաբթի: Չորեքշաբթին չիք-օր է: Այդ օրը հիմնովին մաքրում են խմբասենյակը, բակը, շրջապատը՝ աղբը չիք են անում:

«Չիք-չիք» են խաղում: Յուրաքանչյուրը երկու քար է վերցնում:

Դրանք քսում են իրար և ասում.

- Չիք- չիք, մուկը չիք,
- Չիք- չիք, մոծակը չիք...

Կարելի է խաղալ հարցուպատասխանով:

Մի խումբ. - Չիք-չիք, ի՞նչը չիք:
Մյուս խումբ. - Չիք - չիք, կռիվը չիք:
Մի խումբ. - Չիք - չիք, ի՞նչը չիք:

Մյուս խումբ. - Չիք - չիք, հիվանդությունը չիք:
Մի խումբ. - Չիք-չիք, ի՞նչը չիք:
Մյուս խումբ. - Չիք-չիք, սուտ ասելը չիք:

Հինգշաբթի: Այդ օրը այգեպանները, վերցնելով կացինը, այգի են մտել և վատ բերք տվող ծառերի բնին կացնի բութ կողմով հարվածելով՝ վախեցրել. «Բերք ես տալու, տուր, թե չէ՝ կկտրեմ»:

Երեխաներն էլ կարող են նույն բանն անել ճիպոտով: Այդ օրը ամեն մեկն ընտրում է իր ծառը, զրուցում նրա հետ, մաքրում շուրջը...

Այդ օրը խմբի անդամների թվով ծու են ներկում: Ճաշին ճաշակում են նոր ծլած կանաչիով ուտեստ:

Կարմիր, կանաչ թելերով մանկական մատանիներ, ապարանջաններ են պատրաստում:

Ուրբաթ: Մանկական խոհանոցում բոլորը միասին զատկական կերակուրներ են պատրաստում, Զատկի ծվերն են ներկում:

Օիսակատարությունը հաջորդ շաբաթ են անում: Այն կոչվում է Ավագ շաբաթ, ու բոլոր օրերը տոնական են:

Օիսակատարություն

Հնչում է շուրջպարի երաժշտություն՝ «Խնկի ծառ»: Բոլորը, մեծ շրջան կազմած, «Գովնդ» են պարում: Մեկը ամբողջ ծեսի ընթացքում զատկածառն է պարեցնում: Զատկածառերը կարող են մի քանիսը լինել:

Երեխաների մի խումբ (երաժշտության դադարից հետո).

- Զատկեզատի՞կ է, նավակատի՞կ է, չամչեհատի՞կ է:

Մյուս խումբը.

- Կարմիր ծու տուր, կարմիր օր տամ:

Բոլորը երգում ու պարում են «Արև՛, արև՛, ե՛կ, ե՛կ» կամ «Արև՛, արև՛, դո՛ւրս արի»:

Այդ ընթացքում բոլոր «արևները» կենտրոնում շուրջպար են բռնում, մյուսները՝ նրանց շուրջը: Երգի ավարտից հետո արևները գնում են:

Բոլորը.

- Մարիա՛մ խաթուն, Մարիա՛մ խաթուն,
  Իջի՛ մեր տուն, իջի՛ մեր տուն,
  Ես քեզ կտամ նուշի կթուն:

(ծլնգոց է լսվում)

- Զատի՛կ, զատի՛կ, նավակատի՛կ, արի նստի՛ մեր տան մոտիկ:

«Զատիկները» կենտրոն են գալիս: Բոլորը երգում են «Զա՛րկ, բոլոճիկ» երգը և խաղում:

Խաղում են զույգ-զույգ. զույգի մեկը կքանստում է (գնդակ է դառնում և կքանստած թռվռում է գնդակի նման), մյուսը կանգնում է նրա գլխավերևում և շատ թույլ հարվածելով «գնդակի գլխին» խաղացնում է նրան: Մյուսները տեղերում են երգում ու նույն խաղը խաղում: Այնուհետև հնչում է պարային երաժշտություն:

Ակլատիզի տիկնիկը խաղացնելով՝ կենտրոն են գալիս Ակլատիզները (5-6 հոգի):

Խումբ. - Տի՞զ-տի՞զ, Ակլատիզ,
Մազդ բիզ- բիզ, Ակլատիզ,
Պասը գնաց, Զատիկն եկավ,
(փոքր դադար)
Այծն էլ խոտը կերել է:

Ակլատիզներ - Գնացեք, տեսեք՝ ով է կերել այծը:

Խումբ - Գնացինք, տեսանք, գայլն է կերել այծը:

Երգում են «Գնացեք, տեսեք» երգը և խաղում:

Երգից հետո.

Խումբ - Ակլատիզը փետելով

Ջատիկը շուտ չես բերի:

Բոլորը երգում են «Ըմփիկ, զըմփիկ, զարին ա» երգը:

Այդ ընթացքում Ուտիս տատի տիկնիկը խաղացնելով, արգելված կերակուր (ասենք՝ միս) ուտելով՝ կենտրոն են գալիս Ուտիս տատիները (5-6 հոգի) և կանգնում Ակլատիզների դիմաց:

Ակլատիզներ (խիստ բարկացած).

- Օրը ցերեկով, իմ աչքի առաջ էդ ի՞նչ եք անում:

Ուտիսներ.

- Էլ պաս չկա, բան չկա, ի՞նչ պիտի անես հիմա, այ թոռոմած կծու սոխ, քեզնից վախեցող չկա:

Խումբ (ծաղրում են).

- Ծերացել ես, ծե՞ր-ծե՞ր, մնացել ես դու անտեր,

Փետուր չունես, պոչ ունես, պոչդ առ ու հեռացիր:

Ակլատիզներ.

- Բա մեր վերջն ի՞նչ պիտի լինի:

Խումբ.

- Աքլորակռի՞վ, գոմշակռի՞վ:

Հնչում է երաժշտություն, Ակլատիզներն ու ուտիսները աքլորակռիվ ու գոմշակռիվ են խաղում («Խաղադարան»): Կռիվն ավարտվում է, երաժշտությունը դադարում է, Ակլատիզները փախչում են:

Ուտիսները կանչում են.

- Ձնկլիկ օրոճ եմ շարե՞լ:

Բոլորը կրկնում են և սկսում երգել «Ձնկլիկ օրոճ եմ շարել» երգը:

Երգի ավարտից հետո խմբով կանչում են.

1-ին խումբ.

- Աքլորը ծու է ածե՞լ, աքլորը ծու է ածե՞լ:

2-րդ խումբ.

- Ջվից ճուտ է դուրս եկե՞լ, ծվից ճուտ է դուրս եկե՞լ:

Մինչ այդ պատրաստված մեծ ծվից ճուտ-երեխան է դուրս գալիս ու զարմացած նայում է շուրջը:

Բոլորը.

- Ջատկածվիկ կախարդակա՞ն, զատկածվիկ կախարդակա՞ն:

(ծլնգոց է լսվում):

- Դռան առաջ հերկեցինք,

Ջատկի ծվեր ներկեցինք,

Դրկցին ողջույն տվեցինք:

Լուսնյակն անուշ, հովն անուշ,

Հում կաթի պաղ սերն անուշ:

Ուտիս տատիներ.

- Դրկցի (հարևանի) բաժինը պահե՞լ եք:

Երեխաները պատասխանում են՝ այո՞:

Ուտիս տատիներ.

- Ածիկի մեջ շարե՞լ եք:

Երեխաները պատասխանում են՝ այո՞:

Մեծ տատ.

- Քրիստոս հարեաւ ի մեռելոց:

Խումբ.

- Օրհնեալ է հարութիւնն Քրիստոսի:

Վերջում զատկական խաղեր են խաղում:

Ջատկական հանելուկներ

1.Ուլուլիկ, պուլուլիկ,
Մեջը դեղին ուլիկք:

2.Տուն ունեմ, դուռ չունի,
Դուրսն արծաթ, մեջը ոսկի:

3. Այսօր կլոր մարմար քար,
Վաղը թռչի վեր ու վար:

4.Շնչավորից անշունչ ելավ,
Անշունչից շնչավոր:

Ջատկական ասույթներ

Մարիա՛մ խաթուն, Մարիա՛մ խաթուն,
Իջի մեր տուն, իջի մեր տուն,
Ես քեզ կտամ նուշի կթուն (միջուկ):
Դռան առաջ հերկեցինք,
Ջատկի ձվեր ներկեցինք,
Դրկցին ողջույն տվեցինք:
Լուսնյակն անուշ, հովն անուշ,
Հում կաթի պաղ սերն անուշ:
Ջատկեզատի՞կ է, նավակատի՞կ է, չամչեհատի՞կ է:
Ունեցողի համար ամեն օր Ջատիկ է:
Կարմիր ծու տուր, կարմիր օր տամ:
Ջատիկն առանց ձվի չի լինի:
Հավը կուտե հատիկ-հատիկ, ծով ձմեռեն կելնի Ջատիկ:
Ակլատիզը փետելով զատիկը շուտ չես բերի:
Ջատիկը թըռի, մեր կովը ծնի:

ՄԱՅՐԻԿԱՏՈՆ

Մայրության և Գեղեցկության տոնը նախակրթարանում

Տոնական օրեր, տոնական եռուզեռ

Որպեսզի երեխաներին ծեսի խորհուրդը հասկանալի լինի, միասին որոշում են մայրիկների հետ մայրիկների համար գարնանային տոն անել:

Սենյակային բույսեր՝ բոլոր մայրիկներին

Մարտի սկզբին ամեն երեխա սենյակային բույսի ճյուղեր է դնում թափանցիկ բաժակի կամ բանկայի մեջ: Ճյուղը արմատներ կտա, այդ արմատները կերկարեն, երեխաներն էլ հնարավորություն կունենան դիտարկելու ճյուղերի արմատակալումը:

Մածունի բանկաներով կամ այլ տարաներով ծաղկամաններ կպատրաստեն դրանք տարբեր հնարքներով ձևավորելով:

Տոնից 2-3 օր առաջ արմատակալած ճյուղերը կտնկեն իրենց պատրաստած ծաղկամանների մեջ և տոնին կնվիրեն մայրիկներին:

Ուրախ կոլաժ կամ գարնանածառ

Երեխաները տանից մայրիկների, տատիկների, քույրիկների լուսանկարներ կբերեն: Տանը կպայմանավորվեն, որ այդ նկարները կարելի է նաև կտրատել: Դրանցով և հետաքրքիր այլ նկարներով, ճյուղերով, այլ իրերով կոլաժներ կանեն: Որպես շրջանակ կարող են գործածել շոկոլադների տուփերը:

Կարելի է այդ և գարնանային այլ նկարներով, իրենց պատրաստած տոնական իրերով էտած ծառի ճյուղով գարնանածառ պատրաստել:

Կարելի է մեծ թղթի վրա մի ընդհանուր կոլաժ անել:

Նոր կյանք՝ հին զգեստներին

Կհավաքեն ծնողների հին զգեստները: Մի քանի մայրիկի կհրավիրեն օգնելու որ հին շորերից անսովոր, ինքնատիպ զգեստներ ստանան իրենց մայրիկների համար:

Անսպասելի կերակուրների 2 օր

Մայրիկների մի խումբ էլ երեխաների հետ 2 օր կաշխատի խոհանոցում, կպատրաստեն կերակուրներ, որոնք այնքան էլ հաճախ չեն պատրաստվում: Դա կմտնի խմբի այդ օրերի ճաշացանկի մեջ: Մի մասն էլ կպահեն հանդիսության օրվա հյուրասիրության համար:

Ծիսակատարության ծրագիրը միասին կկազմեն, երգերն ու պարերը միասին կսովորեն:

Ծիծաղելի հողաթափեր

Եղանակը փոխվում է: Ձմեռային հողաթափերը այլևս պետք չեն: Ինչ անել. ափսոս է թափես: Տանը ծնողները հին, մաշված, անգամ ծակ հողաթափերով ծիծաղելի հողաթափիկ-տիկնիկներ են պատրաստում երեխաների համար:

Հողաթափերի փոխարեն կարելի է ձմեռային հնացած այլ իր ընտրել: Կարևորն այն է, որ հին իրը չնետվի, և անսովոր լուծումներ գտնվեն:

Ծիսակատարություն

Տոնը կարելի է սկսել հողաթափիկ-տիկնիկների զվարճալի շքերթով:

Կարելի է մինչ տոնը հողաթափիկների ուրախ պար բեմադրել: Տոնի օրը

շքերթին կհաջորդի հողաթափիկ-տիկնիկների ուրախ պարը:

Ծիսակատարության ժամանակ բացի միասին երգելուց ու պարելուց մի խումբ երեխաներ (3-4 երեխա) վարսահարդար կդառնան և բոլորի ներկայությամբ կհարդարեն իրենց մայրիկների մազերը: Մի խումբն էլ դիմահարդար կդառնա, համապատասխան կոսմետիկայով կդիմահարդարի իրենց մայրերին: Մեծերն այս գործին չեն խառնվի:

Մայրիկները կցուցադրեն հին զգեստներից ստացած իրենց նոր զգեստները, երեխաների ծիծաղելի հողաթափերի շքերթ կլինի, դիմահարդարների և վարսահարդարների ցուցադրություն կլինի:

Վերջում՝ պարեր, նվերներ, հյուրասիրություն:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Համբարձումը տոնում են Զատկից 40 օր հետո: Ծեսն իրականացնելու համար անհրաժեշտ են.

սափորներ

գրտնակ

ուլունքներ և այլ զարդեր

Ծաղկամորը հագցնելու համապատասխան շորեր

կաթնապուր բաժանելու թասեր

սկուտեղներ՝ գովքի «բաժինը» հավաքելու, կաթնապուր հյուրասիրելու համար:

Համբարձումն անավանում են նաև Ջանգյուլում: Այն ավելի շատ երիտասարդ, չամուսնացած աղջիկների ու տղաների տոն է, որին «խառնվել» են նաև երեխաները:

Մարդիկ հավատացել են, որ Համբարձման գիշերը հրաշքների գիշեր է, լուսնի տակ դրված ջուրը հրաշագործ է դառնում, որ Համբարձման օրվա գուշակությունները կատարվում են:

Ծեսից 4-5 շաբաթ առաջ դաստիարակը երեխաներին մատչելի լեզվով պատմում է Համբարձման մասին:

Ծիսական օրեր, ծիսական եռուզեռ

Ամեն օր մաքրում են բակը, խնամում բույսերը, բակում ծաղիկներ են ցանում, թփեր են տնկում, վարդատունկ են անում, բակն են նախապատրաստում ծեսին: Ծաղիկը դառնում է աշխատանքի թեմա (զրուցում են, աշխատում ռոդարիական հնարքներով, նկարում են, ծաղկեգլխարկներ, զգեստներ պատրաստում, քայլող-խոսող ծաղիկներ են պատրաստում, դրանցով խաղում, հանելուկներ, ասացվածքներ, երգեր սովորում, հեքիաթներ են հորինում կախարդական գիշերվա, լուսնի հրաշագործ (կախարդական) շողերի, ծաղիկների մասին, նկարում են իրենց հորինած հեքիաթները, ծիսական երգեր, քառյակներ (մանիներ) են սովորում, սափորներ, գրտնակ, զանազան զարդեր հավաքում, միասին քննարկում են, թե այդ տոնի համար ինչպիսի հագուստներ պետք է պատրաստեն (նկատի են ունենում նաև իրենց նկարները) և սկսում են մաս- մաս պատրաստել դրանք. ծնողներն անպայման օգնում են:

Գուշակության խաղ

Այս խաղը երևակայական խաղեր խաղալու լավ առիթ է: Երեխաներից մեկը գուշակություն է անում ծանոթ որևէ առարկայի մասին: Խումբը փորձում է այն իրականացնել կամ ներկայացնել:

Մեր խմբերից մեկում գուշակության առարկան կաղամբն էր: Երեխաներից

մեկը գուշակեց, որ երեք օր հետո այս կաղամբը կապիկ կդառնա: Թե ինչ կպատահի մինչ այդ, և կաղամբն ինչպես կապիկ կդառնա, երեխաները միասին կորոշեն-կհորինեն:

Կարելի է տարբեր հնարքներ մտածել, կարևորն այն է, որ երեխաները երևակայեն, ստեղծագործեն, խաղան մտքի հետ, լուծումներ տան իրենց իսկ առաջադրած խնդրին:

Բոլոր ծնողները ծեսից երկու-երեք շաբաթ առաջ ունենում են ծեսի ծրագիրը, սովորում են երգերն ու մանիները:

7 աղբյուրից ջուր հավաքելու կամ ջուրը կախարդական դարձնելու խաղ

Մինչև խաղն սկսելը խմբով պատմություն են հորինում կախարդական ջրի մասին: Հետո դաստիարակն ասում է, որ ինքը գիտի կախարդական ջուր ստանալու գաղտնիքը:

7 աղբյուրից ջուր են հավաքում. այն պիտի լուռ հավաքել, որ բառերով չխանգարենք կախարդանքին. կարելի է միասին պարզել ինչու լուռ: Այդ ջրի մեջ 7 ծաղիկ, 7 տերև և 7 քար են գցում, ջուրը կախարդական գիշերը թողնում են լուսնի կախարդական շողերի տակ. սափորը գիշերը թողնում են բաց երկնքի տակ, որ գիշերվա ընթացքում ջուրը հրաշագործ զորություն ստանա (կախարդական դառնա), և սափորն իր պարունակությամբ առավոտվա ցողով օծվի:

Այդ արարողությունը կոչվում է «աստղունք դնել», իսկ սափորը Վիճակի պուլիկ:

Այդպես էլ անում են. ջուրը հավաքում են, 7 տեսակ ծաղիկ, 7 տարբեր քարեր, 7 տարբեր ծառից 7 տերև են հավաքում: Հավաքում են նաև պսակ հյուսելու ծաղիկներ: Հետո նախակրթարանի այգում երգելով, խաղալով, զրուցելով ծաղկեպսակներ, ծաղկեփնջեր, վիճակի պուլիկն են պատրաստում:

Ընթացքում երգում են իրենց սովորած երգերը՝ «Այ արևը, արևը...», «Համբարձման երկուշաբթի» ...

Ծիսակատարության օրը առավոտ վաղ, տատիկները երեխաների հետ մեծ ամանով կաթնապուր են եփում, որ հետները այգի տանեն:

Ծիսակատարություն

Տոնը պիտի կատարվի կամ դաշտում, կամ այգում բնության գրկում: Ցանկալի է, որ բոլոր երգերն ու պարեղանակները նախապես ձայնագրված լինեն և երգողների երգերին զուգահեռ հնչեն:

Հնչում է «Ջան ծաղիկ, ջան, ջան» երգը: Տարբեր կողմերից երեխաները, դաստիարակը, մյուս բոլոր աշխատողները, ծնողները, հյուրերը հավաքվում են և շուջպար բռնում: Շարունակում են երգել-պարել «Վեր հա վեր» կամ «Աղջկերք, պար բռնեցեք»:

Երբ երգն ավարտվում է, արտասանում են.

- Այգի է, ծառը դու ես,
Ծաղիկ է, ցողը դու ես,
Ցողիկ է լույսերի մեջ,
Աննման շողը դու ես:

(Սա և երեխաները, և մեծերը անգիր պիտի իմանան)

Տատ.

- Խաղի պարը քաշեք, խաղի պարը:

Հնչում է զուռնայով պարեղանակ: Խմբերով խաղում են «Պուտ- պուտ» խաղը (« Խաղադարանի» «Ժողովրդական խաղեր» բաժին):

Պուտ-պուտ

Խաղացողները շրջանաձև պպզում են, ու յուրաքանչյուրի գլխավերևում կանգնում է մի խաղացող: Պպզողները կոչվում են պուտ: Կանգնողներից միայն մեկը պուտ չի ունենում և կոչվում է շուն: Շունը մոտենում է մի պուտի և հարցնում կանգնողին.

- Ի՞նչ ուտենք:
- Չիր ու չամիչ:
- Որտեղի՞ց ուտենք:
- Գողանանք ուտենք:
- Ծափ տանք, վազենք,- ասում է շունը:

Եվ երկուսն էլ ծափ են տալիս ու հակառակ կողմերով վազում: Եթե շունը, շրջան անելով, մյուս վազողից շուտ հասավ նրա պուտին, ինքն է լինում նրա տերը, իսկ մյուսը դառնում է շուն և գնում է, միևնույն հարցումը տալիս հարևան պուտին: Իսկ եթե շունը չհասավ, դարձյալ մնում է շուն, գնում է, նույն հարցն առաջարկում մյուս պուտին: Վազելիս եթե մեկը շրջանի միջով անցնի, նրան պատժում են:

Խաղն ավարտելուց հետո հարսների տիկնիկ խաղացնող երեխաները շրջանի կենտրոն են գալիս: Բոլորը երգում և բեմադրում են «Պսակ- պսակ» երգը, հարսի տիկնիկներն են պարեցնում:

Երգից հետո խաղում են «Խաշիլ-ճաշ» խաղը:

Խաշիլ-ճաշ

Երեխաները 10 և ավելի հոգով կիսաշրջան են կազմում, որոնցից առաջինը մայր է կոչվում: Մեկը թռչուն է դառնում, նստում կիսաշրջանի մեջտեղը և հող կամ ավազ է լցնում դիմացը դրված ամանի մեջ: Կիսաշրջանը մոր առաջնորդությամբ պտտվում է նրա շուրջը:

Մայրը թռչունին հարցնում է

- Ա՛յ թռչուն, էդ ի՞նչ ես եփում:
- Խաշիլ-փափա,- պատասխանում է թռչունը:
- Ո՞ւմ համար:
- Իմ ճտերի:
- Կտա՞ս իմ ճտերին:
- Չեմ տա. ինչո՞ւ տամ. թե քաջ են, թող իրենք վերցնեն:

Այս խոսքի վրա մայրը կամ ճտերից մեկը աշխատում է թռչնին հրել և անպայման վայր գցել, ամանը փախցնել: Հաջողվելու դեպքում հրողն ու թռչունը դերերը փոխում են, իսկ եթե ոչ շարունակում են խաղալ այնքան ժամանակ, մինչև որ հաջողում են:

Բոլորը, երգում են «Աղջկեք, պար բռնեցեք» երգը և պարում:

Հետո սկսվում է Ծաղկամոր պատրաստությունը: Նստում են խոտերի մեջ, երգելով, զրուցելով, խաղիկներ արտասանելով պատրաստում են Ծաղկամոր տիկնիկը: Դա ծեսի խորհրդանիշ տիկնիկն է:

Ծաղկամեր տիկնիկ

Գրտնակն ամրացնում են սափորի մեջ: Գրտնակի վերին ցցված մասում պատրաստում են Ծաղկամոր գլուխն ու ձեռքերը, հագուստ են հագցնում, զարդարում ուլունքներով ու զարդերով:

Երբ տիկնիկը պատրաստ է, պարում են ու երգում «Համբարձման երկուշաբթի» երգը:

Այդ ընթացքում երգում են «Այ արևը, արևը...», «Համբարձման երկուշաբթի», «Խնկի ծառ», «Վեր հա, վեր- վեր, վերիկ է...» կամ այլ երգեր «Մանկական երգարան» ժողովածուից:

Երբ տիկնիկները պատրաստ են լինում, խմբերը, տիկնիկներին

խաղացնելով, պարեցնելով, մոտենում են մեծերին՝ ծնողներին, հյուրերին, հարսիկների հետ (ամեն խումբ իր հարսիկն է ունենում) գովքի երգեր են երգում և բարեմաղթանքներ ասում,

Ծաղիկ ունեմ ալա յա,
Ջան գյուլում, ջան, ջան,
Ալա չի ալվալա յա,
Ջան վիճակ, ջան, ջան:

Գլուխդ շաղոտ աղջիկ,
Ոտքերդ ցողոտ աղջիկ,
Ես եմ քո ուզած տղեն,
Ծաղկոտ-արևոտ աղջիկ:

Հրես եկավ իմ ախպեր (յարը)
Ջան գյուլում, ջան, ջան,
Նռան հատիկ բալա յա,
Ջան վիճակ, ջան, ջան:

Փարչի հրաշագործ ջրից են ցանում բոլորի վրա, մեկական ծաղիկ նվիրում և բաժին ստանում: Ծնողները, տատիկները գովքի բաժին են տալիս:

Երբ գովքն ավարտում են, բոլորը միասին արտասանում են.

Ալ ձին նալը ինչ կանի,
Սիրունը խալն ինչ կանի,
Սիրածը սրտով լինի,
Աշխարհի մալն ինչ կանի:

Հնչում է 2-3 պարեղանակ, շուրջպար են բռնում:

Դրան հաջորդում է կաթնապուրի «մատաղի» պարարողությունը. ծնողները թանապուր են լցնում սեղանին դրված թասիկների մեջ և բաժանում ներկաներին:

Հյուրասիրությանը հաջորդում է վիճակահանությունը:

ԵՐԵԽԱՏՈՆ

Երեխաների պաշտպանության օրը
Տոնական օրեր, տոնական եռուզեռ

Տոնից 10-15 օր առաջ սկսում են Տիկնիկների պարի բեմադրումը: Երաժշտությունը երեխաներն են ընտրում երաժշտության դաստիարակի հետ: Մինչ այդ պիտի բացատրել-ներկայացնել պարի բովանդակությունը. պարի մասնակիցները իրենց ծանոթ սիրելի հերոսներն են՝ Ծիտը, Անհաղթ աքլորը, Պոչատ աղվեսը, Ակլատիզը, Ուտիս տատը, Նոզայը (էլ ի՞նչ սիրելի հերոսներ ունեն): Պարը ոչ թե միասնական պիտի լինի, այլ յուրաքանչյուրը պիտի պարի իր կերպարին համապատասխան, միայն երաժշտությունը ընդհանուր կլինի: Դա պար-ներկայացում պիտի դառնա:

Այդ օրերին «Մանկական խաղադարան» ժողովածուից խաղեր են սովորում և խաղում:

Ծնողները, դաստիարակները և մյուս աշխատողները մանկական ուրախ երգ են սովորում, որ տոնին երեխաներին նվիրեն:

Արևի կերպարանքով Արև-տիկնիկ են պատրաստում:

Ծնողների և երեխաների հետ ծանոթ երգերից տոնի երգ են ընտրում, կրկնում են և բեմադրում:

Ռոքն-ռոլ կամ այլ ուրախ պար են բեմադրում:

Բեմադրում են նաև երկար գնացքի կամ այլ կերպարային պար:

Երեխաներից թաքուն ծնողներն ու դաստիարակը կերպարվեստ-ձեռարվեստի դաստիարակի հետ շատ մեծ տոնական բացիկ-աճակնկալ (1-1,5 մետր բարձրությամբ) են պատրաստում, լավ կլինի, որ այն երևակայական կերպար լինի, հարթ չլինի և որևէ ֆունկցիա ունենա՝ շիրմա, խաղ, ճամփորդական խաղ-քարտեզ և այլն:

Տոնական հագուստները, ատրիբուտները, նշանները, փուչիկները, դրոշները, գլխարկներն են պատրաստում, եղածներն էլ թարմացնում են, նոր տեսք տալիս:

31. 06. 2006

Ավարտում են Արև-տիկնիկը:

Խոհանոցում մի խումբ ծնողներ և երեխաներ օրվա խորհրդանիշներն են թխում՝ փոքրիկ երեխահացիկներ, թխում են նաև որքան հնարավոր է մեծ, ժպտացող արև՝ Արև-հաց: Հունիսի 1-ին երեխաները երեխահացիկները կնվիրեն բոլոր մասնակիցներին, Արև-հացը միասին կուտեն:

1. 06. 2006

Առավոտյան խմբում ուրախ երաժշտություն է հնչում: Ամեն ինչ տոնական է: Նախավարժանքի ժամանակ նախորդ օրերին բեմադրված երգերն են երգում, ուրախ պարեր են պարում:

Ծնողները մեծ տոնական բացիկ-աճակնկալն են նվիրում երեխաներին:

Ծիսակատարություն

Մենք առաջարկում ենք այդ օրը տոնական մարզատոն անցկացնել, թեև ծիսակատարությունը կարող է բոլորովին այլ ընթացք ունենալ, կարևորը երեխաների տրամադրությունն է:

Մարզատոն

Հնչում է հանդիսավոր երաժշտություն: Մասնակիցները տոնական ատրիբուտներով հանդիսավոր շքերթային պտույտ են կատարում:

Ծնողներն ու աշխատողները երեխաների համար երգում են նրանց համար պատրաստած «նվեր» երգերից մեկը:

Հնչում է տոնական երաժշտություն: Երեխաները վազելով կենտրոն են գալիս: Գնացք են կազմում, պարում են գնացքի պարը: Շրջանի կենտրոնում Արև-տիկնիկն ու Արև-հացն են պարեցնում: Գնացքի պարի ավարտից հետո «վագոնները» պարում են իրենց բեմադրած ուրախ պարը:

Հայտարարվում է առաջին խաղը: Բոլոր խաղերի ժամանակ հնչում է համապատասխան ուրախ, ռիթմիկ երաժշտություն:

Գդակ թռցնել

Խաղում են 8-10 հոգիանոց երկու խմբով (16-20 խաղացող): Խմբերը կանգնում են 50 քայլ իրարից հեռու սահմանների վրա: Վիճակահանությամբ խաղն սկսող խմբից մի հոգի գալիս է, մյուս խմբից մեկի գլխարկը հանկարծ թռցնում ու փախչում հասնելու իր խմբին: Գլխարկատերը պետք է հասնի և նրան ձեռքով դիպչի մինչև տեղ հասնելը: Գլխարկն ազատում է և խաղը շա-

հում: Հակառակ դեպքում ինքը գերվում է, իսկ խումբը տանուլ է տալիս: Խաղը վերսկսում է շահող խումբը:

Խաղը շարունակում են, մինչև խմբերից մեկը գերի մյուսի խմբի բոլոր անդամներին:

Երգում և բեմադրում են «Դան-դան» երգը:

Երկրորդ խաղ

Ամեն խմբից գալիս են 5-ական ծնող և երեխա: Կանգնում են ուղիղ գծով և գնդակը գլխավերևով փոխանցում իրար, հետո վերջից ոտքերի միջով փոխանցում են առաջ:

Խաղից հետո երգում են «Աղջկերք, պար բռնեցեք» երգը և պարում:

Երրորդ խաղ

Խաղացողները բաժանվում են 2 հավասար թիմերի, շարվում են մեկնարկային գծից միասյուն: Հրահանգից հետո թիմերի առաջին մասնակիցները, անցնելով օղակների միջով, վազում են, շրջանցում 5-6 մետր հեռու դրված դրոշակը և ուղիղ գծով վերադառնում, ձեռքի հպումով մեկնարկ են տալիս մյուս մասնակիցներին: Հաղթում է այն թիմը, որի վերջին մասնակիցն ավելի շուտ է հասնում իր շարքին:

Խաղից հետո Տիկնիկների պարն են ներկայացնում: Կարող է նաև ողջ տարվա ընթացքում երեխաների պատրաստած տիկնիկների շքահանդես լինել:

Չորրորդ խաղ

Խաղացողները բաժանվում են 2 հավասար թիմերի, շարվում են մեկնարկային գծից միասյուն: Թիմերից 7-8 մետր հեռավորության վրա ցանցկեն զամբյուղներ են դրվում: Զամբյուղներից մոտ մեկ մետր հեռու նետման գիծ է գծվում: Յուրաքանչյուր մասնակցի ռեզինե գնդակ է տրվում: Մասնակիցները, անցնելով տարածությունը, նշված գծից գնդակը նետում են զամբյուղի մեջ, վերադառնում հետ՝ մեկնարկ տալով հաջորդին:

Վերջում երեխաները բոլոր հյուրերին փուչիկների թելերին կապած երեխահացիկներ են բաժանում:

Սկսվում են ուրախ պարեր:

ՎԱՐԴԱՎԱՌ

Ծիսական օրեր, ծիսական եռուզեռ

Ինչպես գարնանը, հունիսին էլ ջրով լցված թափանցիկ բաժակի մեջ սենյակային բույսերի ճյուղեր են դնում և հետևում են դրանց արմատակալմանը: Մի ճյուղ էլ դնում են դատարկ բաժակի մեջ: Հետո արդյունքները համեմատում են: Արմատակալած ճյուղերը տոնին մոտ օրերին տնկում են ծաղկամանների, թաղարների մեջ կամ այգում:

Ուսումնական ճամփորդության (էքսկուրսիա) են գնում ցորենի արտեր ունեցող որևէ տարածք, ցորենի հասկեր են հավաքում թելերով կամ այլ նյութերով փոքրիկ (10-15սմ երկարությամբ) աղջիկ-տիկնիկներ են պատրաստում. յուրաքանչյուր երեխա պիտի ունենա իր աղջիկ-տիկնիկը, որն ամրացնում է փայտի վրա՝ ծեսի օրը ջրին տալու (ջուրը գցելու) համար: Նախակրթարանի բակում խաչբուռեր են սարքում, մեկ մետրանոց խաչն են պատրաստում, որ ծեսի նախորդ օրը զարդարեն: Զուռնայի երաժշտության տակ խաղ-ըմբշա-

մարտ, գոմշակռիվ, աքլորակռիվ են խաղում, ծեսի խաղերն են սովորում:

Սկսում են երգերի բեմադրումը

«Հեյ իմ նազանի», «Ճախարակի երգ», «Արև, արև, եկ,եկ», «Ջուլո », «Բատոլա, ջան», «Փափուռի», «Մանդրիկ թփիկ ռեհան»;

Փորձեր ջրով

Ջուր և համ

Սեղանին մեծ ամանով ջուր է դրված, գուաշներ, վրձիններ, աղ, շաքարավազ, ավազաքարեր: Ամեն մեկն իր թափանցիկ բաժակն է ունենում: Ամանից բաժակով ջուր են վերցնում:

Խմում են ջուրը և պատմում, թե ինչ համ ունի:

Հետո ջրին շաքարավազ են ավելացնում: Ի՞նչ եղավ շաքարավազը: Համ-տես են անում:

Շաքարավազն էլի են ավելացնում, համտեսում են:

- Ի՞նչ փոխվեց:

Հաջորդ փորձը աղով են անում:

Վերջում ավազաքար են լցնում: Բոլոր գործողությունները երեխաներն են անում:

Ջուր և գույն

Պարզում են՝ ինչ գույն ունի ջուրը. դաստիարակը չի միջամտում: Հետո առաջարկում է վրձնով ջրի մեջ որևէ գույն լցնելուց հետո պատմել՝ ինչ կատարվեց, ինչու այդպես եղավ:

Ջուր և տրամադրություն

Փորձը կատարում են մեծ ամանի կամ ավազանի մեջ: Երեխաներին խնդրում են նկարագրել ջուրը, հարցնում են նրանցից ջրի տրամադրությունը՝ հանգիստ է, խաղաղ է և այլն:

Հետո փոքր ալիքներ են ստեղծում: Նկարագրում են ջրի նոր տրամադրությունը՝ ջուրը հուզվել է և այլն:

Ալիքները մեծացնում են: Նոր առաջացած տրամադրությունն են նկարագրում:

Վերջում ամեն մեկը նկարում է ջրի այն տրամադրությունը, որն իրեն ավելի է դուր եկել:

Ջուրը փափկացնում է

Այս փորձի համար հարկավոր է խմոր ստանալ և ապա թխել: Ո՞ր դեպքում է ջուրը շատ:

Երեխաների մասնակցությամբ հարկավոր է բակում հողից ցեխ ստանալ, պատկեր-կերպարներ պատրաստել, դնել արևի տակ հաջորդ օրը դիտարկելու համար՝ նախորդ օրվա «ցեխային» պատկերները ինչ վիճակի են հիմա, ինչն է փոխվել, ինչու է փոխվել, դրանց մեջ երբ էր ջուրը շատ՝ երե՞կ, թե՞ այսօր:

Հուշաթերթ

Խաչբուռ

Ցորենի հասկից հյուսված կին կամ ծառ հիշեցնող փունջ է: Նախ ցորենի հասկերով փնջեր են անում, փունջը գունավոր թելերով այնպես են փաթաթում, որ թելերի շերտերը իրար պինդ կպած լինեն, հետո գունավոր թելերով այդ փոքրիկ փնջերը (խրծերը), նույն կերպ գունավոր թելերով փաթաթելով,

միացնում են իրար մարդու կազմվածքի կամ ծառի նման: Դրանք սովորաբար պատրաստել են հնձվորները արտը հնձելուց առաջ կամ հետո և նվիրել արտատիրոջը կամ կանանց: Խաչբուռը տանը հատուկ տեղում պահում էին մինչև հաջորդ Վարդավառ:

Խնդում

Մեկ մետրանոց խաչածև փայտ է (երկու հատ մեկմետրանոց փայտ խաչածև իրար միացրած), որը զարդարում են վարունգներով, խնձորներով ու վարդերով:

Որոշ շրջաններում մինչև Վարդավառ աղջիկները մի ամանի մեջ ցորեն կամ գարի էին աճեցնում և խնդումը դնում այդ կանաչի մեջ: Խնդումը կարող է լինել մեկ կամ մի քանի հատ: Սովորաբար խնդումը պատրաստում են, որ ջահելները կատակ խաղ խաղան տատիկի հետ՝ այն գողանալով նրանից: Տատիկն էլ կատակ-անեծքներ է ասում երիտասարդներին:

Անհրաժեշտ իրեր, պարագաներ

ցորենի հասկեր մասնակիցներին բաժանելու, խաչբուռեր սարքելու համար

1 մետր երկարությամբ բարակ 4 փայտ խնդում պատրաստելու համար, վարդեր բոլորին բաժանելու համար, վարդի թերթեր բոլորի վրա թափելու (շաղ տալու) համար

ծղոտե զամբյուղով խնձորներ

տարբեր տիկնիկներ, ծաղիկներ, խաղալիքներ և այլ հուշանվերներ տոնավաճառ կազմակերպելու համար

յուրաքանչյուր երեխա պիտի ունենա իր աղջիկ-տիկնիկը

փոքր փայտ կամ խաչփայտ վրան տիկնիկ կապելու և ջրի մեջ բաց թողնելու համար

լայնբերան սափորներ:

Ծիսակատարություն

Ծեսն անում են դրսում, այնպիսի վայրում, որ առու կամ այլ ջրավազան լինի:

Ծեսն սկսում են խաղիկով.

Վարդավառը գալիս ա,
Ծաղիկը ցնծալիս ա,
Վարդավառ ասող աղջիկ,
Ձենդ ծլվլալիս ա:

Երգում են «Վարդավառ է» երգը և պարեցնում հասկերից պատրաստված աղջիկ-տիկնիկները, վարդի թերթեր են ցանում շուրջը:

Բոլորը միասին արտասանում են.

Ծուղրուղո՜ւ,
Աքլորը զիլ կանչեց թառին:
- Ճիկ-ճիկ, ճիկ-ճիկ,-
Ձարթնեց մթնում ծիտը ծառին:

- Ծուղրուղո՜ւ,
Կանչեց ծեգին երկրորդ բերան:
- Հո-հո՜, հո-հո՜,-
Նախիրն արդեն հանդը տարան:

- Ծուղրուղո՜ւ,-
Լույսը բացվեց երրորդ կանչին:

- Վույ-վույ, վույ-վույ,-
Նստեց նանը տեղի միջին:

Դրանից հետո խաղի երաժշտություն է հնչում (զուռնայով), երեխաները խաղում են «Մուկ-կատու» կամ «Գա՛յլ, քող գիշերենք քեզ մոտ»: Ավելի փոքրերը խաղում են «Երկու բռունցք»:

Երգում են «Նուրի» երգը, փոքրերը պարեցնում են ջուր-տիկնիկները, այդ ընթացքում մեծերը սափորներից ջուր են ցողում մասնակիցների և տիկնիկների վրա: Երգի ավարտից հետո բարակ փայտի կամ խաչփայտի վրա կապված տիկնիկները դնում են մոտակա ջրավազանի կամ առվի մեջ:

Երգում են «Սոնա յար» երգը: Այս անգամ փոքրիկների խումբն է վարդի թերթեր ցանում ներկաների վրա:

Բոլորն արտասանում են.

- Արեգակը դուրս է եկել — Ջորումն առուն քչքչում է
Պսպղալով. — Վշվշալով.
Շողքը երդից ներս է ընկել — Ծույլ տղայի քունն է տարել
Շողշողալով. — Խռմփալով.
Ծիտը ծառին կչկչում է — Տրեխները շունն է տարել
Ծլվլալով. — Մռմռալով:

Մեծ ու փոքր շուրջպար են բռնում, երգում են «Փափուռի» երգը:

Պարերգի ավարտից հետո զուռնան է հնչում, կենտրոնում տղաները կատակ-ըմբշամարտ, գոմշակռիվ, աքլորակռիվ են բռնում, մյուսները ոգևորում են նրանց:

Ավարտին փոքրիկները վարդեր են նվիրում «կռվողներին»: Երգում են «Մանդրիկ թփիկ ռեհան» երգը:

Հետո մեծերը կանչում են.

- Խնդումն եկա՞վ, խնդո՞ւմ բերեց:

Հնչում է ուրախ երաժշտություն: Խնդումը ձեռքին գալիս է Մեծ տատը, երեխաները ընդառաջ են գալիս տատին և տատի հետ արտասանում.

- Խնդում ունեմ վարդով լի,
Վարդով ու խնձորով լի,
Վախենամ քունս տանի,
Խնդումս չարը տանի:

Փոքրերն ու մեծերը ծևացնում են, իբր խնդումը գողանում են, տատն էլ «դժվարությամբ տալիս է ու «անիծում».

- Ով իմ խնդումը տարավ,
Աստված նրա ջանին քոր տա
Եվ բութ մատին եղունգ չտա,
Ենքան նիհարի, որ ասեղի ծակով անցնի:

Երեխաներից մեկը մոտենում է տատին.

- Նանի՛ ջան, նանի՛, մի՛ անիծի, միացի՛ր մեզ ու մեր պարը պարի:

Երեխաները տատի հետ կատարում են «Բատոլա ջան» պարերգը:

Պարերգից հետո երեխաները խնձորներ են բաժանում ներկաներին:

Դրանից հետո ծնողները իրենց երեխաներին օծում են ջրում նրանց ջրի մեջ մտցնելով: Հնչում է ուրախ երաժշտություն, բոլորն իրար են ջրում:

ԱՇՆԱՆԱՑԱՆ-ԾԵՍ

Նպատակը
Զարգացում՝ ակտիվ գործունեության արդյունքում

Խնդիրները.
Բնագիտական ինֆորմացիայի ձեռքբերում խաղ-աշխատանքի միջոցով
Ստեղծագործական երևակայության զարգացում
Գործիքներով աշխատելու հմտության մշակում
Բառապաշարի հարստացում
Ինքնադրսևորում, ինքնարտահայտում
էկոլոգիական դաստիարակություն
Սոցիալական հարաբերությունների կուլտուրայի մշակում

Անհարաժեշտ նյութեր և գործիքներ՝
համապատասխան գյուղատնտեսական գործիքներ՝ փոքրիկ բահեր, փոցխեր
ցորեն՝ ցանելու, ալյուր և փոխինձ ստանալու, աղանձ անելու համար
սրճաղաց՝ ցորենն ու աղանձը աղալու համար
ցորենի հասկ
ափսե, բամբակ, թաղար՝ ցորեն աճեցնելու համար
ալյուր՝ հաց թխելու համար
փոխինձ
հացի տարբեր տեսակներ
գրտնակ
քարտեր՝ ցորեն բառի բառարանը կազմելու համար
գազօջախ կամ լավաշ թխելու այլ հարմարանք
Ցորեն, հաց
Այդ օրերի ճաշացանկի մեջ լավաշ կլինի:
«Նաղաշն ու լավաշը». աշխատանք հեքիաթով
Ցույց տալ ցորենի հասկը. երեխաները նկարագրում են հասկը, նկարում այն:

Մի ուրիշ անգամ, արտաքին տեսքն հաշվի առնելով, փորձում են բնութագրել նրան որպես կերպար և պատճառաբանել իրենց պատասխանը, եթե ուզում են:

Կարևոր չէ, թե ինչ կպատասխանեն, կարևորը մտածելու, զուգահեռներ անցկացնելու, համադրելու գործընթացն է:

Մեր փորձից

- Այս հասկը զգույշ է, ինքը դիտմամբ ոչ ոքի չի ծակի, բայց փշեր է պահում, որ հենց իրեն նեղացնեն, ինքը ծակի: (Վահրամ)
- Ինքը ջղային մարդու նման է, մազերը բիզ-բիզ են:(Փիրուզ)
- Ջղային չէ, դեղին ոսկու նման է, մարդկանց հարստացնում է:(Ալեքսան)

Առաջարկեցինք գտնել ցորենի բարեկամ բառերը (նույն դաշտին պատկանող բառեր) և ցորենին ոչ բարեկամ բառերը: Հարցրինք, թե որտե՞ղ է ապրում ցորեն բառը: Երեխաները նկարում են ցորեն բառի կացարանը. դաստիարակը կարող է հուշել՝ ով է ապրում այդ բառի հետ...

Նկարելուց հետո պատմում են իրենց նկարի մասին, բացատրություններ տալիս:

Բառային աշխատանքների ընթացքում գրի են առնվում երեխաների բացատրությունները, հայտնագործությունները, և կազմվում է ցորեն բառի բառարանը:

Եթե ջրաղաց բառը չեն ասում, դաստիարակը հուշում է:

Պարզում են, թե ուրիշ էլ ինչով կարելի է ցորեն աղալ:

Հեքիաթ ցորենի մասին

Ցորեն բառի կողքին բառեր են դնում, բառակապակցություններ են կազմում:

Դաստիարակը դրանցից ընտրում է ամենաանսպասելին, հետաքրքիրը. երեխաները պատմություն են հորինում:

Ազատ խաղի ժամանակ դաստիարակը առաջարկում է երեխաներին ցորեն դառնալ և այդ դերով խաղալ:

Ուսումնական ճամփորդություն.

ճամփորդություն՝ ջրաղաց տեսնելու գյուղ՝ ցորենի արտը, դրա հնձելը տեսնելու

այցելություն թոնրատուն՝ լավաշի թխելը տեսնելու:

Փոխինձ ու լավաշ (խոհանոցում)

Ցորենը մաքրում են:

Տղաները սրճաղացով ցորենն են աղում: Ստացած ալյուրը խառնում են մինչ այդ գնած ալյուրին և հացի խմոր հունցում, ծածկում են, թողնում հասնի: Երբ լավաշի խմորը պատրաստ է լինում, մաս-մաս բացում են՝ լավաշ թխելու համար: Գրտնակում են և թխում թավայի մեջ կամ ջեռոցի վրա: Ամեն մեկը իր լավաշն է թխում, երեխաները չեն էլ համբերում, հենց լավաշը ջեռոցի վրայից վերցնում են, բաժանում են, ուտում:

Մի ուրիշ անգամ

Ցորենը մաքրում են, աղանձ անում: Աղում են աղանձը, խառնում գնված փոխինձին: Լավ լվացվում են, փոխինձը շաքարաջրով խմորի են վերածում և զանազան կերպարներ պատրաստում, ստացված խմորով հյուրասիրում են բոլորին:

Աշնանացան

Բակում հողը փորում են, ցորենը ցանում, ջրում են:

Սերմնացանները առաջին բուռ ցորենը դեպի վեր են գցում ու ասում.

- Այս մի բուռը երկնքի հավքերին:

Երկրորդ բուռը ցանելիս ասում են.

- Այս մի բուռը տանից հեռու գտնվողներին:

Մնացած ցորենը ցանելուց հետո խումբ են գալիս, խմբում ցորենը ցանում են թաղարներում և ափսեների մեջ փռված շատ թաց բամբակի վրա: Մի ափսեի մեջ ցանում են նախօրոք խաշած հատիկներ, քարեր, որ հետագայում տեսնեն, որ եփած ցորենն ու քարերը չեն ծլում: Պատին փակցնում են ցորենի աճի օրացույց, որի վրա գրանցելու են ցորենը ցանելու, ծլելու օրը, գրանցելու են ցորենի աճը. ամեն օրվա համար մի գիծ են գծելու, հետո հաշվելու են, թե քանի օր հետո ծլեց ցորենը:

Ծառատունկ

Ծնողների հետ երեխաները ծառ են տնկում նախակրթարանի բակում: Ծառատունկից հետո միասին հաց են ուտում: Կարող են միասին որևէ խաղ խաղալ, ասենք՝ ֆուտբոլ:

Խաղեր

Ես ցորենն եմ

Մեկը լինում է սերմնացան:
Դաստիարակը բացատրում է՝ ինչ է նշանակում սերմնացան:
Մնացածները դառնում են ցորենի հատիկներ:
Հնչում է երաժշտությունը, գալիս է սերմնացանը, արտասանում.

- Ցորենը ցանեմ-ցանեմ,
Գարնանը ցորենն հնձեմ,
Ցորենը ջաղաց տանեմ,
Ջաղացի քարի տակից
Սպիտակ մանր ալյուր հանեմ:
Արտասանում է և գնում:

Երբ սերմնացանը արտասանում է, ցորենները ներկայացնում են իրենց «ցանվելը» աշնանը, ձմռանը՝ քնելը, գարնանը՝ ծնվելը:

Ամռանը գալիս է սերմնացանը.

- Ամառը եկավ-եկավ, ցորենը հասավ-հասավ, հնձե՞մ, տանե՞մ ջրաղաց:

Ցորեններն էլ ցույց են տալիս իրենց հնձվելն ու աղացվելը:

Փախած ցորեններ

Երեխաները դաստիարակի հետ շրջանագիծ են գծում: Խումբը բաժանվում է 2 մասի՝ ցորեններ և սերմնացաններ: Ցորենները կանգնում են շրջանից դուրս, սերմնացանները՝ շրջանի մեջ: Խմբավարն ասում է՝ ուշ է, ուշ է, աշունն է, ուշ է, ցորենը ցանելու ճիշտ ժամանակն է: Սերմնացանները դուրս են գալիս շրջանից, բռնում ցորենի փախչող հատիկներին, բերում շրջանի մեջ, կանչում.

- Սրան ցանեցի:

Եթե սերմնացանը մոռանում է դա ասել, ցորենն իրավունք ունի շրջանից փախչելու: Խաղն ավարտվում է, եթե բոլոր ցորենները ցանվում են:

Ծեսի գեղարվեստական- բանահյուսական նյութեր

Երգեր

«Եկեք ծեծենք սոխ ու սխտոր»
«Առավոտյան փչեց հով»
«Արև՛, արև՛, արի դուրս»

Ոտանավորներ

«Անձրև ախպեր»
«Ծիածան»
«Մանուկն ու ջուրը»

Առած-ասացվածքներ

Ամառվա փուշ՝ ձմեռվա նուշ:
Ամառվա օրը տարի է կերակրում:
Հա՛ց, հա՛ց, դուռդ բաց: Ով ինչ ցանի, այն կհնձի:
Ով աշխատի, նա կուտի:
Ես աղա, դու աղա, բա մեր աղունն ո՞վ աղա:
Ժլատ մարդու հացը չի ուտվի:
Հացը երեսից էլ պիտի ուտվի:

Հանելուկներ
Ոտքով ջուր է խմում,
Կտուցով ծվեր է հանում:
(ցորենի հասկ)
Թաղում ես, ապրում է,
Պահում ես, մեռնում է:
Սերմը ափով
Շաղ տամ թափով,
Մեռնի՝ տարով,
Ապրի բարով:
(ցորեն)

Ավանդություններ
ԱՄԵՆ ԱՐՏՈՒՄ ՄԱՐԴԱԿԵՐՊ ՄԻ ՀԱՍԿ ԵՐ ԼԻՆՈՒՄ

Շա՜տ- շա՜տ վաղուց հին Հայաստանում ամեն հողագործ ուզում էր իր արտը հսկող անտեսանելի պահապան ունենալ: Ցանքսի (սերմը ցանելու) ժամանակ շինականը խմորից մարդակերպ (մարդու նման) մի գնդիկ էր սարքում, մեջը մի սերմի հատիկ էր տեղավորում և դնում հողի մեջ:

Սերմը ծլում էր, գլուխը վեր բարձրացնում՝ խմորի փոքրիկ արձանիկի ձև ստանալով: Հենց այդպես էլ արտի մեջ աճում էր մարդանման հասկը:

Ամեն արտում լինում էր մի այդպիսի հասկ, որն ասես տիրություն էր անում մյուս հասկերին:

ԻՆՉՈՒ ԵՆ ԱՐՏԵԶՐԻՆ ՀԱՍԿԵՐ ԹՈՂՆՈՒՄ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հին Հայաստանի գավառներից մեկում հնձի ժամանակ թռչունների համար արտի եզրին մի քանի հասկ էին թողնում:

Մի իշխան, որ շատ ու շատ արտեր ուներ, իր մշակներին հրամայում է արտերը հնձել ամբողջովին՝ առանց մի հասկ թողնելու: Թռչունները խռովում են և հեռանում իշխանի արտերից:

Հաջորդ տարում մորեխի ամպերը նստում են արտերի վրա և սկսում ոչնչացնել հասկերը: Ագահ իշխանը տասը հազար մշակ է վարձում՝ մորեխի դեմ կռվելու համար: Բայց ոչինչ չի ստացվում. մշակները չեն հասցնում հնձել նույնիսկ մի հասկ:

- Մի՞թե հնարավոր չէ ոչինչ փրկել,- հուսահատված ասում է իշխանը:

- Ո՛չ, իշխա՛ն, մեր ուժից վեր է ոչնչացնել այսքան մորեխը,- ասում են մշակները,- սա թռչունի գործ է: Հազար թռչուն ավելի շատ մորեխ կոչնչացներ, քան տասը հազար մշակը:

ՍԵՂԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԸ

Հայոց Վաղարշակ թագավորը տերության բոլոր կողմերից պալատ կանչեց յոթանասուն իմաստունի և նրանց ասաց.

- Ցորենն առատ է այս տարի: Շինականները յոթ տարվա համար հատիկ են ամբարել: Այդ առթիվ մենք յոթ օր խնջույքի կնստենք և անուշ կանենք ամեն տեսակ ցորենհաց: Ով յոթերորդ օրը կարողանա հացի մասին այնպիսի իմաստուն խոսք ասել, որ ինձ դուր գա, նրան մի ոսկե մատանի կնվիրեմ:

Ասելն ու խնջույքն սկսելը մեկ եղավ: Յոթ օր յոթանասուն իմաստունները կերան ու խմեցին, իրենց գինու ըմպանակները (բաժակները) զարկեցին արքայի ըմպանակին: Լավաշ, խորոված ու խաշած միս, կաթ ու մածուն, չորս հարյուր տեսակ համեմ ու բանջար, խաղող, տանձ ու խնձոր, ծիրան ու նուշ. Վաղարշակ թագավորը ամեն ինչ լցրել էր սեղանի վրա, որ իմաստունները

կարողանան համեմատել և հասկանալ հացի արժեքը:

Մտմտացին, մտմտացին իմաստունները, և յոթերորդ օրը ամեն մեկը մի բան ասաց հացի մասին: Բայց ոչ մի խոսք դուր չեկավ արքային: Վաղարշակ թագավորը դիմեց իր խոհարարին.

- Գուցե դո՞ւ ասես, թե ինչ է հացը:

- Սեղանի թագավոր,- հանգիստ պատասխանեց խոհարարը:

- Հրաշալի է: Հացը, իրոք, սեղանի թագավոր է, առանց հացի սեղան չի լինի: Դու ավելի իմաստուն ես, քան այս յոթանասունը,- ասաց Վաղարշակ թագավորը և արքայական մատանին նվիրեց խոհարարին:

Օրհնանքներ

Դռներդ միշտ բաց լինի, տաշտներդ միշտ հաց լինի:
Աստված մեկդ հազար անի:
Առատ տարի, բերքը բարի:
Մեկ ցանես, հազար հնձես:

Հեքիաթներ

Հովհաննես Թումանյան

«Պոչատ աղվեսը»
«Ով աշխատի, նա կուտի»:

Ամփոփում

Բնագիտություն

Գաղափար ցորենի մասին՝ հատիկ է:
Ցանում են աշնանը կամ գարնանը:
Հնձում են ամռանը կամ վաղ աշնանը:
Հատիկները աճում են հասկի (ցողունի) վրա:
Պտուղը գետնից բարձր է. (հետո գազար, սոխ, գետնախնձոր կցանեն, որոնց պտուղը հողի մեջ կլինի):
Տարբեր պայմաններում աճը տարբեր է լինում:
Ծիլը դուրս է գալիս հատիկի միջից (դա կտեսնեն ափսեի մեջ):
Եփած սերմը մեռնում է, չի ծլում:

Թվաբանություն

հաշվում
համեմատում (այնքան-որքան, ավելի-պակաս)
չափումներ
գաղափար մաթեմատիկական հասկացությունների մասին

Լեզվագործունեություն

Նոր բառեր՝ հասկ, հատիկ, ջրաղաց, սերմնացան, հնձել, ծիլ, ցողուն, թոնիր, թոնրատուն
նույն դաշտի բառեր
հակառակ դաշտի բառեր
ցորեն բառի նման բառեր
բառերի զուգորդում
սովորական և անսովոր բառակապակցությունների կազմում
ցորեն բառի «բառարան»
բառային երկանդամներով պատմությունների հորինում
հեքիաթների տարբերակների ստեղծում

Ցորեն բառի բարեկամ բառերը
արև-ցորենն ու արևը իրար շատ են նման
դաշտ-դաշտն իր տունն է
հաց-բա իրենով են հաց թխում
ձեռք-ձեռքով հաց են ուտում
լավաշ-լավաշը հացի բարեկամն է, հացն էլ լավաշ է
ծիտիկ-նրանք իրար բարեկամ են

Ցորեն բառի թշնամի բառերը
մուկ-մուկը ցորեն է ուտում
սղոցը-ցորենին սղոցում է
ծով-կգա, նրան կքշի կտանի
ոտք-կանգնում է ցորենի վրա

Առավոտյան ծես նախակրթարանում

Ամեն օր կարող է տոն լինել, և ամեն օր կարող է առօրյա լինել: Առօրյան էլ կարող է տոն լինել: Երբ կողքիդ հարազատ, քեզ մի քիչ նման, մի քիչ տարբեր մարդիկ են, որոնք հասկանում ու սիրում են քեզ, նրանց հետ օրը տոն է: Իսկ երբ այդ մարդկանց հետ գործ ունես անելու, գիտես՝ ինչ գործ, ու այդ գործը սիրով ես անում, ամեն օր՝ սիրով, օրդ ծես է դառնում:

Կան գործեր, որոնք երեխան իր ընկերների հետ ինքնուրույն է կատարում, կատարում է ամեն օր, որովհետև դա իրեն ու ընկերներին շատ է պետք: Հետո մի օր այդ գործերը սովորություն են դառնում և պահպանվում ողջ կյանքում:

Առավոտյան նախակրթարանում (կամ էլ դեռևս փողոցում) նա անպայման ողջունում է ընկերներին, դաստիարակին ու մյուս աշխատողներին: Ոչ թե մոր կամ իրեն ուղեկցող մեծի «թույլտվությամբ» կամ հուշելով՝ բարևիր էսինչին, այլ սովորել է՝ իր ընկերոջը տեսնելիս անպայման պետք է ողջունել. նա ի՛ր ընկերն է, նրան բարևելը ի՛ր անելիքն է («Խաղադարանում» համապատասխան խաղ կա): Ամեն առավոտ իր ընկերոջն ինքնա՛ անպայման բարին պիտի ցանկանա, նա էլ՝ իրեն, որ օրը լավ անցնի: Բացի այդ՝ իրենք հաստատ ուրախ են, որ հանդիպել են: Դե ուրեմն՝ բարև, ընկե՛ր ջան:

Հետո ներկա-բացակայի թերթիկին նշում է իր ներկայությունը, փոխում հագուստն ու կոշիկները, եթե դրա անհրաժեշտությունը կա: Այնուհետև հավաքում, կարգավորում է բակը, խմբասենյակը, ջրում է բակի ծառերն ու ծաղիկները: Կարելի է պայմանավորվել ծնողների հետ, որ շշով ջուրը տանից բերեն, իրենց ծառը միասին ջրեն, բակը կարգի բերեն: Տանից նաև կեր են բերում կենդանիների համար, կերակրում կենդանիներին:

Աշխարհում բոլորը և ամեն ինչ իրենց խնամքի, հոգածության կարիքն ունեն: Բացի այդ՝ իրենց շուրջը իրենց նման մաքուր ու կոկիկ պիտի լինի, չի կարելի թափթփված միջավայրում ապրել: Կարելի է միասին լիքը պատմություններ հնարել, խաղեր խաղալ, որոնց արդյունքում աղբն աղբանում կհայտնվի, անպետք թուղթը՝ թափոնի արկղում, թափթփված խաղալիքներն ու իրերը՝ իրենց տեղերում:

«Պարապ մնացած» երեխաները հաստատ գտնում են իրենց զբաղմունքը. նրանց պարտադրել պետք չէ. եթե նույնիսկ որևէ մեկին այդ ամենին պետք է մասնակից դարձնել, ուրեմն դա արվում է նրբանկատորեն, միասին:

Երբ բոլորը հավաքվում են, նախավարժանք են կատարում, երգում ու խաղում են իրենց սիրած երգերը, կրկնում են նախորդ օրվա սովորածը՝ խաղ կամ որևէ ստեղծագործություն, որից հետո նախապատրաստվում են նախաճաշի. բոլորը լվացվում են, մի քանիսը, հագնելով խոհանոցի համար նախատեսված հագուստը՝ գոգնոց, գլխաշոր, օգնում են խոհարարին, մի մասն էլ

Թատրոն
մնջախաղ
հորինած պատմության ներկայացում

Խաղ
մնջախաղ
շարժական խաղ
լեզվական խաղ

Երաժշտական գործունեություն
երգի ուսուցում

Կերպարվեստ-ձեռարվեստ
հեքիաթի ձևավորում
ապլիկացիա
բառի, նրա «բնակարանի» պատկերում
խոհանոց
ալյուր, աղանձ, փոխինձ ստանալ
խմոր պատրաստել
լավաշ թխել
հարիսա եփել

Մեր փորձից
Ծեսի ընթացքում ծնված մտքեր և պատմություններ

Որտե՞ղ է ապրում ցորենը
Նրա տունը խանութն է, որովհետև խանութում են ցորեն ծախում:
Իր բնում, որովհետև իր բույնը իր տունն է:
Վառարանի մեջ, որովհետև տաք տեղ է գտել:
Հացի մեջ, որովհետև իրենով հաց են թխում:
Սար ու ձորում, որովհետև սար ու ձոր է ընկել:
Ցորեն բզիկում, որովհետև ցորեն-բզիկում:
Փլավի մեջ, որովհետև ցորենի փլավը համով է:
Քարի մոտ, որովհետև ինքը սիրում է քարին:

Ցորեն-հեքիաթ
Լինում է, չի լինում, մի ցորեն է լինում: Էս ցորենը չի իմանում՝ ինչ անի, որ իր համար տուն գտնի: Շատ է ման գալիս, քիչ է ման գալիս, հազիվ մի տուն է գտնում: Մտնում է մեջը, ապրում: Քիչ հետո գայլը գալիս է, ասում.
- Ի՞նչ ես անում էստեղ:
Ցորենն ասում է.
- Ես տուն չունեմ, էստեղ եմ ապրում, արի միասին ապրենք:
- Ո՛չ, ես մեծ տուն ունեմ, դու պուճուրիկ ես, դու էստեղ մնա, ես էլ իմ մեծ տան մեջ ապրեմ:
Ու հեքիաթն ավարտվում է:

նախաճաշի սեղանն է պատրաստում՝ ափսեներն ու անծեռոցիկները, հացը, անհրաժեշտ այլ պարագաներ են դնում, ուտելիքն են բաժանում: Նստում են նախաճաշի: Նախաճաշից հետո հավաքում են սեղանները, լվանում են ափսեները, եթե կարող են և պայմաններ կան: Հետո սկսվում է երեխայի ազատ գործունեությունը:

Միշտ պետք է հիշել՝ երեխաներն օրն անցկացնում են բակում, պարտեզում, խմբասենյակ մտնում են միայն խիստ անհրաժեշտության դեպքում, կամ երբ եղանակը անբարենպաստ է:

Առավոտյան խաղեր

Խաղում են բակ-պարտեզում, ներսում խաղում են միայն ցուրտ եղանակներին:

Չայնախաղ

Խաղավարը ձեռքերն իրար մոտ է պահում և մասնակիցներին առաջարկում է շշուկով որևէ ձայնավոր հնչյուն (ա, է, ը, ի, ու, օ) արտասանել: Խաղավարը ձեռքերն աստիճանաբար հեռացնում է իրարից, մասնակիցները ձայներն աստիճանաբար բարձրացնում են, հասցնում են հնարավոր ամենաբարձրին: Հետո խաղավարը ձեռքերը աստիճանաբար մոտեցնում է իրար, մասնակիցներն էլ, ձայնն իջեցնելով, «հետ են գնում» հասնելով շշուկի:

Ծափխաղ

Շրջան են կազմում, ցածրաձայն, դանդաղ ծափահարելով, ծափերի հաճախականությունը մեծացնելով՝ գալիս են շրջանի կենտրոն, արագ ծափահարում են, գոռում ու վայր ընկնում: Հետո կատարում են հակառակ գործողությունը. վեր են կենում և բարձրաձայն ծափահարելով, ծափերի ձայնն ու հաճախականությունը պակասեցնելով՝ մեծացնում են շրջանը:

Ծափ ու հաշիվ

Երեխաները ազատ շարժվում են: Ըստ խաղավարի ծափերի՝ նրանք որևէ կենդանի կամ առարկա են դառնում. Պետք է նախապես պայմանավորվել:

Լսելով խաղավարի մեկ ծափը՝ երեխաները դառնում են արագիլ, բարձրացնում են մեկ ոտքը, տարածում թևերը: Երկու ծափի դեպքում կարող են գորտեր դառնալ, երեքի դեպքում կրկին ազատ շարժվում են: Խաղավարը ծափերի հերթականությունը փոխում է:

Կարելի է նաև այսպես.

Մեկ ծափի դեպքում դառնում են պատառաքաղ, երկու ծափի դեպքում թավա, երեքի դեպքում ազատ թռվռում են:

Բարևախաղ

Երեխաները կողք կողքի են կանգնում: Կարող են շրջանաձև կանգնել: Դաստիարակը երեխաների հետ է կանգնում: Նա էլ սկսում է խաղը: Աջ ձեռքով թույլ հարվածում է իր աջ կողքին կանգնած երեխայի ձախ ձեռքին (թույլ ծափ է տալիս իր և կողքինի ձեռքով) և տալով ընկերոջ անունը՝ բարի լույս է մաղթում՝ նշելով իր անունը.

Օրինակ՝

- Բարի լույս, Արտակ, ես Աստղիկն եմ:

Արտակը հարվածում է իր կողքինի ձեռքին.

- Բարի լույս, Արմինե՛, ես Արտակն եմ:
Արմինեն նույն կերպ շարունակում է հարվածելով կողքինի ծեռքին.
- Բարի լույս, Հասմի՛կ, ես Արմինեն եմ:
Խաղն ավարտվում է, երբ շրջանն ավարտվում է:
Խաղը հետո զարգացվում է:
Երեխաները և աշխատողները գնդակը փոխանցում են միմյանց իրար անուն դնելով:

Օրինակ
- Մարինե՛, դու խնձոր ես:
Մարինեն գնդակը տալիս է Աշոտին և ասում.
- Աշո՛տ, դու բողկի նման ես:
Աշոտը գնդակը տալիս է Լուսինեին.
- Լուսինե՛, դու անծեռոցիկ ես:
- Ալի՛կ, դու փուշ ես:
Շրջանն ավարտվելու հետ խաղն ավարտվում է:
Գնդակը պետք է, որքան հնարավոր է, արագ փոխանցել:

Ծննդյան օրվա ծես

Ծննդյան օրվա ծեսին անհրաժեշտ պարագաներ.

գունավոր գլխարկներ երեխաների թվով
տոնական երկու գլխարկ երեխայի ծնողների համար
տոնական գլխարկ (կարող է լինել թագի տեսքով) օրվա հերոսի համար
ժապավեններ, փուչիկներ
փոքրիկ թաղար-ծաղկամաններ սեզյակային ծաղիկներով (նվիրելու համար)
տոնական սպասք
տոնական մոմեր
հրավերների տուփեր, որում ծննդյան օրվա հրավիրատոմսեր կլինեն

Նախակրթարանի լուսանկարներից պետք է առանձնացնել երեխայի նկարները, հավաքել CD-ի վրա և ծննդյան օրը նվիրել նրան:
Այդ օրը իր կերպարը պիտի ունենա, որը ոչ միայն կզվարճացնի երեխաներին, այլև կլինի ծննդյան օրվա ծեսի կազմակերպիչը: Երեխաները կարող են նրա համար անուն հորինել կամ պարզապես Ծաղրածու անվանել: Այդ դերը կարող է խաղալ դաստիարակը կամ երեխայի ծնողը:
Խումբը ծննդյան օրվա ծիսական պար պիտի ունենա, այնպիսի պար, որ օրվա հերոսը կենտրոնում լինի. ամեն անգամ պարի «բեմադրությունը» կարող է տարբեր լինել: Կարելի է անգամ հենց այդ օրը պարելով ծննդյան օրվա նոր պար բեմադրել:
Ծեսի մասնակից ծնողները (նաև օրվա հերոսինը) այդ օրը նվեր են մատուցում ամբողջ խմբին. կարող են ծառ տնկել, խմբասենյակում ինչ-որ բան նորոգել կամ պատրաստել, կենդանի նվիրել...
Երեխաները ներկա-բացակայի թերթից նախապես կիմանան, թե այդ ամսին ում ծննդյան օրն են նշելու: Նրանք ամեն օր ինքնուրույն լրացնում են պատին փակցված այդ թերթը համապատասխան վանդակում փոքրիկ դեմք (սմայլ) փակցնելով կամ այլ նշում անելով: Այդ թերթիկի անհրաժեշտ վանդակը դաստիարակը նախապես ներկում է պայմանավորված գույնով կամ նշում որևէ նշանով:

Այսպես

ՄԱՐՏ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.Աշոտ												
2.Դավիթ												
3.Աստղիկ					***							

Եթե մեկի ծննդյան օրը մարտի 5-ին է, նրա անվան դիմաց դաստիարակը նշում է մարտի 5-ի վանդակը: Մարտի առաջին օրից նա ընկերների հետ հաշվում է՝ քանի օր անցավ, և քանի օր մնաց իր ծննդյան օրվան:

Այդ օրվանից երկու օր առաջ երեխաները մի մեծ (անքան մեծ, որ երեխան այն գրկած տանի) բացիկ են պատրաստում: Օրվա հերոսը կարող է մասնակցել դրան կամ այդ ընթացքում ուրիշ բանով զբաղվել: Հետո ամեն մեկը կարող է իր անհատական նվերը պատրաստել: Երեխաները կարող են իրենց ընկերոջ համար տիկնիկ, նկար կամ այլ նվեր պատրաստել:

Բոլորը հրավիրատոմսերի տուփից վերցնում են հրավերի բացիկը ծնողներին իրենց ընկերոջ ծննդյան օրվան հրավիրելու համար:

Ծննդյան օրվա նախորդ օրը հոբելյարը ընկերների և մայրիկի հետ նախակրթարանի խոհանոցում թխում է իր ծննյան օրվա տոնական գաթան կամ տորթը: Դա ևս փոքրիկ ծես է, որին ուրիշ ծնողներ էլ կմասնակցեն: Ամեն մեկը խմորի մի բաղադրիչ է լցնում խմորի մեջ (ալյուր, ձու, շաքարավազ, ջուր...) և որևէ մաղթանք ասում «օրվա հերոսին»: Միասին ձևավորում են գաթան, դնում ջեռոցը: Մյուսները նախապատրաստում են հաջորդ օրվա ատրիբուտները՝ տոնական գլխարկները, թիկնոցները, հոբելյարի թագը, տոնական սպասքը, մոմերը: Այդ օրը բոլորը միասին փուչիկներով զարդարում են կամ խմբասենյակը, կամ բակը՝ այն վայրը, որտեղ պիտի նշեն ծննդյան օրը:

Մարտի 5-ի առավոտյան, մինչև երեխաների գալը, դաստիարակը երաժշտություն է միացնում, որը հնչում է մինչև բոլորի հավաքվելը: Ով խմբասենյակ է մտնում, նախապես դնում է տոնական գլխարկը, նոր միայն անցնում իր սովորական գործին՝ առավոտյան ծեսին: Երեխաներն ու Ծաղրածուն «օրվա հերոսին» երգելով, հանդիսավոր դիմավորում են, թագադրում, պարում են, թռվռում: Հետո միասին տոնական սեղանն են պատրաստում:

Երբ սեղանը պատրաստ է լինում, սենյակը հավաքված, հնչում է հանդիսավոր երաժշտություն. Ծաղրածուի հրահանգով «օրվա հերոսը» մայրիկի կամ որևէ մեկի հետ բերում է մոմերով զարդարված գաթան կամ տորթը, դնում սեղանին, հանգցնում մոմերը, և պարում են «օրվա պարը»: Ծաղրածուն հայտարարում է նվերների մասին, և առաջին նվերը ինքն է մատուցում:

Ծաղկամաններից մեկի վրա միասին փակցնում են օրվա հերոսի անունը և որոշում, որ նա արդեն պատասխանատու է ծաղկի համար: Եթե տարվա այն ժամանակն է, որ կարելի է ծաղիկ տնկել, ապա այդ օրը բակում ծաղիկ են տնկում:

Այնուհետև Ծաղրածուն, երեխայի ձեռքը բռնած, տանում է նվերների մոտ կամ հուշում դրանց տեղը: Նվերները «բացում են» բոլորը միասին: Հետո շնորհավորում են, երգում, միասին արտասանում այն, ինչ որ կուզեն նվիրել իրենց ընկերոջը: Սկսվում է հյուրասիրությունը:

Հյուրասիրողը օրվա հերոսն է. օրվա տերն ինքն է, ուրեմն տանտերն էլ է ինքը: Պիտի կարևորվի նաև նրա շնորհակալական խոսքը՝ ուղղված ընկերներին, ծնողներին, դայակին, դաստիարակին, հյուրերին: Ծաղրածուն հանդիսավոր հայտարարում է այդ արարողության մասին՝ հաշվի առնելով երեխայի առանձնահատկությունները: Նա այնպես պիտի անի, որ «չխոսկան» երեխան ավելի չկաշկանդվի, ուզենա ինչ-որ բան ասել:

Այդ օրը Ծաղրածուն նրա ընկերը կլինի, ամբողջ օրը նրանք միասին կանցկացնեն. երեխան ոչ թե պասիվ, ծանծրացող դիտող պիտի լինի, այլ իր

ծննդյան օրվա տոնի ակտիվ մասնակիցը: Երբ նա կավարտի իր «խոսքը», նրա ծնողները կհանձնեն իրենց նվերը և շատ կարճ, որ երեխաները չձանձրանան, կպատմեն նրա ծնվելու մասին, այն մասին, թե ինչպիսին էր նա, երբ շատ փոքր էր, ինչ ծիծաղելի դեպքեր են պատահել նրա հետ...

Պատմությունների ավարտից հետո սկսվում է ուրախ պարերի ու խաղերի շարանը:

Hydrometallurgy
Fundamentals and Applications

Բանավոր խոսքի զարգացման ծրագրային և մեթոդական դրույթների փորձարկումը նախակրթարանում

Ճպուռն ու մրջյունը

Ճաշից հետո արտասանեցի «Ճպուռն ու մրջյունը» առակը: Երեխաների մի մասն այն անգիր գիտեր և ինձ հետ արտասանում էր: Հարցրի, թե ում մասին է պատմությունը: Հարցիս առաջին պատասխանը եղավ՝ ճպուռի ու մրջյունի:

- Ուրիշ ովքե՞ր կան այս պատմության մեջ,- հարցրի ես:

Լռեցին: Առաջարկեցի ավելի ուշադիր լսել ու մի անգամ էլ արտասանեցի խաղացի շեշտելով ծմեռ, քամի, ցուրտ բառերը: Պարզվեց առակի մեջ Ցուրտ կա, Ձմեռ ու Քամի կան:

Սկզբում զրուցեցինք մրջյունի մասին, բակ դուրս եկանք, մրջյուններ գտանք, մի լա՞վ դիտեցինք:

Ես նաև մրջյունի նկարը ցույց տվեցի: Միասին հաշվեցինք նրա ոտքերը, բեղերը, աչքերը... Մրջյունի մարմնի մասերը համեմատեցինք մեր մարմնի մասերի հետ:

Երեխաները նկարեցին այնպիսի մրջյուն, ինչպիսին պատկերացնում են:

Հաջորդ զրույցի հիմքում ռոդարիական հնարքներն էին:

Հարցրի.

- Մրջյուն բառի կողքին ի՞նչ բառ կդնեք, ինչպիսի՞ն է նա:

Մեր խմբում ծնվեցին *խուճուճ մրջյուն, սուսիկ-փուսիկ մրջյուն, բեղավոր մրջյուն, կծած մրջյուն* բառակապակցությունները:

- Աշխատասեր մրջյունը ամբողջ օրն աշխատում է, իսկ ծույլ մրջյունն ի՞նչ է անում, մի քիչ պատմեք նրա մասին:

- Աշխատողներին է խանգարում: (Գևորգ)

Հետո զրուցեցինք չարաճճի մրջյունի մասին, պատմություն հորինեցինք ծույլ մրջյունի ու գիտնական մրջյունի մասին:

Պատմությունը միասին հորինեցինք իրար լրացնելով: Մեկն սկսեց, մյուսը լրացրեց, երրորդը շարունակեց նախորդին, և այպես մինչև բոլորը մասնակցեցին, և հեքիաթն էլ ավարտվեց:

- Եկեք ճպուռ-քամի խաղանք, ցույց տանք, թե ճպուռն ու քամին ինչպես են պարում ամռանը, ինչպես են իրար պարի հրավիրում,- առաջարկեցի ես (աննկատելիորեն մշակվում է ներկայացման մի հատվածը): Հրաշալի մնջախաղ ստացվեց:

Փոքր ներկայացումից հետո զրուցեցինք քամու մասին. ինչպիսի՞ն է ճպուռի հետ պարող քամին, բարկացած քամին:

- Ճպուռի հետ պարող քամին էլ նրա նման անխելք ու անդարդ է:

- Էդ քամի՞ն...(մտածում է), էդ քամին թև ունի, սիրում է ուրիշներին խաբել, ոչ մի բան չանել: Ամբողջ օրը իրան-իրան ման է գալիս: (Արսեն)

- Էդ քամին ոչ մի տեղ էլ չի գնում, ինքը ճպուռի ընկերն է:

Շարունակում եմ հարցնել.

- Պատկերացրեք այս ճպուռը շատ խորամանկ է, հո ձմռան ցրտին չի՞ սատկելու: Ի՞նչ կանի նա իր կյանքը փրկելու համար (սյուժեի ընթացքի փոփոխում):

- Կասի՝ մրջյուն, արի ձմեռը ես քո տունը մաքրեմ, ճաշդ եփեմ:

- Ձեզ ծանոթ հեքիաթների հերոսներից ո՞վ կօգնի ճպուռին, ինչպե՞ս կօգնի. (նոր հերոսի ներմուծում):

- Ծիտը... իր ոտի փուշը կվառի կամ էլ կտանի նանի մոտ, ինքը (ճպուռը) թոնրի մոտ կապրի: (Շուշան)

Ես քիչ-քիչ խաղից դուրս եկա, տեսա, որ իրենք առանց ինձ էլ կարող են:

Մյուս անգամ փոխեցինք պատմության ավարտը (սյուժեի ավարտի փոփոխում):

Մի անգամ էլ պատմությունը շարունակեցինք:

Երեխաների հորինած շարունակությունն էլ կարող էր դառնալ ապագա

ներկայացման ավարտ, բայց մենք ուրիշ ճանապարհով գնացինք:

Չմոռացանք, որ առակի մեջ Ցուրտ կար, Քամի և Չմեռ կային: Որպեսզի դրանք ներկայացման հերոսներ դառնային, երեխաները նրանց մասին զրուցեցին, կերպավորեցին դրանց:

- Ցուրտն ինչպիսի՞ն է լինում՝ տա՞ք, թե՞..., արագաշա՞րժ, թե՞...
- Ցուրտը ձմռան ի՞նչն է:
- Ցուրտը ձմռան ծառան է, ինչ ասի, ցուրտը կանի: (Արթուր)
- Դուք ցրտին ինչո՞վ եք նման:
- Ես ցրտի նման կատաղած եմ,- «կատաղի» դեմք ընդունելով՝ ասաց Արտյոմը:
- Ցուրտը ձեզնից ինչո՞վ է տարբերվում:
- Ինքն ուր ուզի, կգնա, ոչ ոք չի ասի՝ մի գնա:
- Այս հեքիաթում, երբ ցուրտը գա, ի՞նչ կասի տաքին:
- Ես ինչ ծույլիկ ես, քո ընկերներն էլ են ծույլիկ: (Արթուր)
- Ա՛յ տաք, մի քիչ էլ որ մնաս, բոլորին կվառես, թող գնա: (Գևորգ)
- Ա՛յ տաք, դու գնա, տես ես էս ծույլ ճպուռին ինչ կանեմ: (Անահիտ)

Երեխաները նկարեցին ցրտի դեմքը:

- Իմ ցուրտը ինքն իրեն մրսեցրել ա, թշերը կարմրել են: (Էդվարդ)

Իրար հարցեր տվեցինք և պատասխանեցինք: Կարծում եմ՝ կարևորը հարցերն են:

- Քամին ցրտի ի՞նչն է:
- Երկուսն էլ խիստ են, ուրեմն մարդ ու կին են: - Որո՞նք են քամի բառի բարեկամ բառերը:
- Փոշի ու ծուռ ծառ:
- Վազել, որովհետև ինքը ուժեղ ա վազում:
- Քամի բառի թշնամի բառերը որո՞նք են:
- Երբ քամին ծիծաղում է, ի՞նչ է լինում:
- Քամին ո՞ւմ հետ է սիրում խաղալ:
- Չմռանը քամին ինչի՞ մասին է պատմում:
- Ինչպիսի՞ դեմք ունի ձմռան ցուրտ քամին. ցույց տվեք: Եկեք սառը քամի խաղանք:

Այնուհետև անցանք ներկայացման նախապատրաստմանը, թեև մինչ այդ էլ ինչ արվել է, դարձյալ օգնելու է ներկայացմանը:

- Մեր պատմության մեջ ճպուռն ի՞նչ էր անում. հիշեցինք.

Թռի-վռի մի ճպուռ,
Ողջ ամառը շուռ ու մուռ,
Երգեց, ճռռաց, ճռճռաց...

- Մին էլ ըհը, ձմեռն ի՞նչ արեց,- հարցրի ես, ու միասին էլ պատասխանեցինք.

- Մին էլ ըհը, ձմեռը
Փռեց իրեն թևերը,
Բացեց գորգը սպիտակ,
Աշխարհն առավ թևի տակ:

- Չմեռն ո՞ւմ օգնությամբ կփռի իր սպիտակ գորգը. ձմռան օգնականներն ովքե՞ր են:

Մեր խմբում նրանց Չմեռիկներ անվանեցին:

- Չմեռիկները ձմռան ի՞նչն են:
- Եկեք ձմեռիկներ դառնանք և ձմռան սպիտակ գորգը փռենք: (Ցույց ենք տալիս):
- Հասանք քաղցած փորին.
Քաղցած փորին էլ ինչ երգ,
Ցուրտը տարավ ոտ ու ձեռք:
- Հիմա էլ եկեք քաղցած փոր դառնանք, խոսենք նրա փոխարեն:
- Հիշո՞ւմ եք՝ ինչպես էր դողում մրջյունը.

Ջընգըր-զընգըր դողալով,
Ծանր-ծանր սողալով...

- Հիմա էլ ճպուռ ենք. եկեք նրա նման դողանք և դիմենք մրջյունին:

- Ընկե՛ր Աննա, առանց էդ էլ մրսում ենք, էլի մրսե՞նք,- ասաց Ալիկը, թեև օրը բավականին տաք էր:

Այսպես ամբողջ առակը միասին խաղացինք:

- Ամռանը միայն մրջյո՞ւնն է աշխատում: Էլ ո՞ր կենդանիներն են աշխատում, պաշար հավաքում:

- Եկեք փորձենք մեղուներին էլ միացնել մեր պատմությանը:

Երեխաները մեղուների նման աշխատեցին:

- Եթե «Ծիտը» հեքիաթի Ծիտը ճպուռի ընկերը լիներ, նրա հետ երգեր, պարեր, ու ձմեռը գար, ի՞նչ կլիներ. հիշեք՝ ծիտն ինչեր էր անում իր հեքիաթում:

- Փողոցներում կոտրած սազ կնվագեին, փող կաշխատեին:

Ծտի փոխարեն երեխաները կարող են ուրիշ հերոս «ներմուծել» հեքիաթ:

Երեխաները նկարում են հերոսներին հագուստներով, որոշում են ձևերը և դաստիարակի օգնությամբ պատրաստում են դրանք: Նրանք կարող են որոշ հատվածների համար պարզ երաժշտություն հորինել:

Մնում է ամբողջ աշխատանքը իմի բերել, և ներկայացումը պատրաստ կլինի: Կարևոր է, որ դաստիարակը բոլոր խաղերն ու տեսարանները երեխաների հետ խաղա:

Ճպուռն ու մրջյունը
(Սցենար)

Աշխատանքային եռուզեռ է:

3 մեղուներ մեծ շերեփներով և փոքրիկ դույլերով ծաղկափոշի են հավաքում:

4 մրջյուններ բուռ-բուռ ինչ-որ բան են իրար փոխանցում՝ տեղափոխելով իրենց բույն: Մի մրջյուն ղեկավարում է նրանց:

Արտուտիկը ցորենի հատիկ է հավաքում:

Ճպուռների խումբը և Քամին անհոգ պարում են՝ ծիծաղում:

Հեղինակների խումբը կանգնած է մի կողմում:

Պզզալով առաջ են գալիս մեղուները:

Խումբ - Պզզան, պզզան, պզպզան,
Պը՛զզ, պզպզան,
Մեղուներ - (Ցույց են տալիս իրենց)
Պստիկ մեղու՝ տզտզա՛ն:
Խումբ - Տը՛զզ, տզտզան:
Մեղուներ - Դաշտ ու հովիտ կշրջենք:
Խումբ - Պը՛զզ, պզպզան:
Մեղուներ - Բարձր սարեր կշրջենք:
Սուսան - սմբուլ կծծենք,
Ու ոտքերով թավամազ
Փոշի առած տուն կգանք:

Յուրաքանչյուր տողից հետո խումբը կրկնում է՝ պը՛զ. պզպզան:

Մրջյուններն են առաջ գալիս՝ շարունակելով «փոխանցումը»:

1-ին մրջյուն- (բարձրաձայն) - Մե՛կ:
2-րդ մրջյուն - Երկու:
3-րդ մրջյուն - Երեք:
4-րդ մրջյուն - Չորս:

Բոլոր մրջյունները միասին երգում են:

Մենք հատիկ ենք հավաքում,
Մեկ. երկու. երեք, չորս,

Մեր տաքուկ բնում պահում,
Մեկ, երկու, երեք, չորս,
Որ ծմռան սաստիկ ցրտին,
Մեկ, երկու, երեք, չորս,
Մեր տունը տաքուկ լինի,
Մեկ, երկու, երեք, չորս,
Մթերքը առատ լինի,
Մեկ, երկու, երեք, չորս:
1-ին մրջյուն - Տե՛ս, թռի մի ճպուռ:
2-րդ մրջյուն - Տե՛ս, վռի մի ճպուռ:
Խումբը - Թռի, վռի մի ճպուռ:
Ղեկավար - (Սաստում է) - Ձեր գործին կացեք:
Ճպուռ - (Պարելով ցույց է տալիս իրեն):
Թռի - վռի մի ճպուռ:
Խումբ - (Ցույց է տալիս ճպուռին)
Թռի - վռի մի ճպուռ,
Ողջ ամառը շուռումուռ:
Ճպուռ - Երգեմ, ճռռամ, ճռճռամ:
Խումբ - Երգեց, ճռռաց, ճռճռաց:
Մրջյունների ղեկավար - (Դիմում է ճպուռին)
Ի՞նչ խաբար է, սանի՛կս,
Չես աշխատում, ջանի՛կս:
Ճպուռ - Սանամե՛ր, դատարկ բանի
էլ ժամանակ ո՛վ ունի:
Քամի - Մրջյո՛ւն, քո գործին մնա,
Դու մեզ չես էլ հասկանա՛:
Ճպուռ - Արի՛, պարի՛, սանամե՛ր:
Մրջյուն - է, ես՝ աղա, դու՝ աղա, բա մեր աղունն ո՞վ աղա:
Խումբ - Երգեց, ճռռաց, ճռճռաց,
Մին էլ, ըհը, ծմեռը
Փռեց իրեն թևերը
Բացեց գորգը սպիտակ:
3 Ձմեռիկ խաղով ցույց են տալիս, իբր թե սպիտակ «գորգ» փռեցին, հետո «զեկուցում» են մոտեցող Ձմռանը:
Ձմեռիկներ - Բացեցինք գորգը սպիտակ:
Ձմեռ - Աշխարհն առանք թևի տակ:
Խումբ - Բացեց գորգը սպիտակ,
Աշխարհն առավ թևի տակ:
Ձմեռ - Բուք-բորան, բուք-բորան,
Եկավ ծածկեց պատուհան:
Այդ ընթացքում իրարանցում է, բոլորը մտնում են իրենց բները: Գլխավոր մրջյունը կախում է ցուցանակը. «Ձմռանը մրջնանոցը փակ է, խնդրում ենք չանհանգստացնել»:
Գլխ. մրջյուն - Կարդացի՞ք չանհանգստացնեք,
Ճպուռը սառած դողում է:
Ձմեռ - Ճպու՛ռ, երգի՛ր լսեմ:
Խումբ - Քաղցած փորին էլ ի՞նչ երգ:
Ճպուռ - Քաղցած փորիս էլ ի՞նչ երգ,
Ցուրտը տարավ ոտ ու ձեռք:
Խումբ - Ձընգըր-զընգըր դողալով,
Ծանր-ծանր սողալով,
Նա մրջյունին ասում է.
Ճպուռ - Գլխիդ մատաղ, սանամե՛ր,
Մի ճար արա՛ շունչ առնեմ,

Ձրտից, սովից չմեռնեմ:
Քամի - (Մինչ այդ պտտվում էր ճպուռի շուրջը)
Ցրտից, սովից կմեռնի:
Ճպուռ - Կերակրի՛ր, տաքացրո՛ւ,
Մինչև գարուն ապրեցրո՛ւ:
Գլխ. մրջ. - (Գլուխը զգուշորեն բնից դուրս է հանում)
Ի՞նչ խաբար է, սանի՛կս,
Ձարմանում եմ, ջանի՛կս,
Չաշխատեցի՞ր ամառը,
Ասա՛ ի՞նչն է պատճառը:
Ճպուռ - Այդպես բանի, սանամե՛ր,
էլ ժամանակ ո՞վ ուներ,
Այն խոտերում բուրավետ
Երգում էի մերոնց հետ:
Քամի - Էն խոտերում բուրավետ,
Ո՛ւ...ո՛ւ...ո՛ւ...
Երգում էինք իրար հետ:
Մրջյուն - (Դիմում է ճպուռին) - Ուրեմն դո՞ւ...
Ճպուռ - Այո՛, ես...
Ողջ ամառը դեն ու դես,
Երգում էի մշտապես:
Քամի - Երգում էր, է՛, մշտապես:
Մրջյուն - Երգո՞ւմ էիր... Շա՛տ բարի,
Այժմ էլ բռնիր վերվերի,
(Նայում է քամուն)
Քամին ծափ տա, դու պարի:
Ներս է մտնում, դուռը փակում: Ճպուռը գնում է փեթակի մոտ:
Ճպուռ - Պզզան, պզզան, պզպզան,
Պստի՛կ մեղու՛ տզտզան,
Ներս թող դու ինձ քո փեթակ,
Կսատկեմ պատերի տակ:
Մեղու - Պը՛զզ, աշխատել ենք ամռանը,
Թողեք քնենք ձմռանը:
Ավարտը՛ ըստ երեխաների առաջարկած տարբերակի:

Գեղարվեստի դպրոցի նախակրթարան
դաստիարակ՛ Աննա Ադամյան

Տիկնիկային թատրոն

Այն, որ փոքրիկները շատ են սիրում տիկնիկային թատրոնը, անառարկելի է: Շիրմայի հայտնվելը խմբասենյակում բավականին փոփոխություններ առաջ բերեց: Երեխաները սիրում են մտնել նրա ետևը և խաղալ, խոսել, պատմել: Շիրմայի ետևից խոսելը նրանց ավելի կազմակերպված է դարձնում թե՛ խոսքի, թե՛ կարգապահության առումով: Իսկ կերպարներ պատրաստելը, միասին ինչ-որ բանի պատրաստվելը, ներկայացումներ ցույց տալը երեխաներին ոգևորում է: Մինչև ամբողջական ներկայացում ցույց տալը, երեխաներն իրենց ցանկացած առարկան վերցնում էին և մտնում շիրմայի ետևը, խոսում էին, պատմում իրենց մասին կամ իրենց հետ կապված ինչ-որ դեպք:

Հաջորդ խնդիրն այն էր, որ երեխան շիրմայի ետևից հեքիաթ պատմի: Ընտրվեց «Ճամփորդներ» հեքիաթը: Հեքիաթը վերհիշելուց հետո նրանք հերթով մտնում էին շիրմայի ետևը և պատմում: Ամեն անգամ նոր բան էր ստացվում: Աշոտը հեքիաթի մի մասը պատմեց, այն էլ կցկտուր, սակայն նրա դեպքում դա մեծ առաջընթաց էր: Իսկ Ռազմիկը իրար խառնեց «Ճամփորդներն»

ու «Պոչատ աղվեսը»: Սակայն տվյալ դեպքում կարևորը այն չէր, թե ինչպես կպատմի, այլ այն, որ երեխան բնական ձևով իր ընկերներին ինչ-որ բան պատմելու, խոսելու ցանկություն ունեցավ: Ուրիշ դեպքում, երբ նրանց առաջարկեինք պատմել որևէ հեքիաթ, նրանք չէին համաձայնի: Շիրման տրամադրում է դեպի հեքիաթը, պատումը: Նրանք սիրով և սեփական ցանկությամբ պատմում են: Այստեղ էլ բացահայտվում են մեր փոքրիկները: Բնական կերպով զարգանում է նրանց կապակցված խոսքը, որը կենդանի է ու բնական:

Հեքիաթից հետո, որտեղ կերպարը հենց իրենք էին, որոշեցինք կերպարներ դարձնել փուչիկները և խաղալ դրանցով: Փուչիկների վրա «մռութներ արեցինք», անցանք շիրմայի ետևը և սկսեցինք խաղալ: «Փուչիկների երգչախումբ» էր, որտեղ նրանք երգում էին մեր իմացած գրեթե բոլոր երգերը: Չնայած նրան, որ փուչիկները միանման էին ստացվում, որովհետև նրանց նախօրոք տրվել էին կտրտված դետալներ, նրանք սիրով էին անում ապլիկացիոն աշխատանքը: Դրանից հետո սենյակում թափառող, վազվզող և թռվռացող փուչիկներին հրահանգվեց տեղավորվել աթոռներին, որովհետև փուչիկների նիստ էր լինելու, որտեղ նրանք պետք է ներկայանային և ելույթի ընթացքում լուսանկարվեին:

Երեխաները սիրում են խոսել, պատմել իրենց մասին, բայց միայն խաղային իրավիճակում: Խոսելով փուչիկի անունից նրանք ասոցացնում էին փուչիկին իրենց հետ արտահայտելով իրենց զգացմունքները և ցանկությունները: Այս դեպքում «անհեթեթություն», լիմերիք հորինելը դառնում է ավելի լուրջ աշխատանք: Իսկ ելույթից առաջ կամ հետո, ինչպես նաև ընթացքում լուսանկարվելը նրանց ոգևորում էր, և «խաղն» ավելի հետաքրքիր էր դառնում:

«Պոչատ աղվեսի» ներկայացմանը պատրաստվել սկսեցինք դետալների պատրաստումից: Երբ փոքրիկները իրենց ձեռքով ստեղծում են կերպարները, նրանց վերաբերմունքն այդ ամենի նկատմամբ փոխվում, այլ է դառնում, քան այն դեպքում, երբ դրանք պատրաստի վիճակում են տրվում: Նրանք պատասխանատու են դառնում իրենց արածի համար:

Իրենց ցանկացած կերպարը ձեռքին ջրաներկով նկարելու աշխատանքը շատ էր ոգևորել: Այդ ոգևորությունը և ստացված ձեռք-կերպարով խաղալը նրանց դարձնում է ավելի լուրջ: Մինչ հեքիաթը խաղալը նրանք նախապատրաստվում են դրան և այդ բոլոր աշխատանքները կատարում են իրենք սկսած դետալի պատրաստումից մինչև կերպարի ընտրությունը: Եթե կերպարների հարցում տարաձայնություններ են լինում, այսինքն մի քանիսն են ցանկանում նույն դերը խաղալ, փորձում ենք տարբերակներ գտնել: Նույն կերպարը բոլորը հերթով խաղում են, կամ էլ բոլոր ցանկացողները դառնում են աղվես: Լուծումները գալիս են նաև երեխաներից, թեև այս առումով վեճեր էլ են լինում:

«Ճամփորդներ» հեքիաթը խաղացինք տիկնիկներով: Ստվարաթղթից պատրաստեցինք անհրաժեշտ դետալները, հետո կատարեցինք դերաբաշխում: Բացի աքլորից, շնից և աղվեսից ունեցանք կատու-հեղինակ, սար- աղջիկ, ծխնելույզով կտուր և թուփ, որոնք շնչավորվում և դառնում են կերպարներ: Ներկայացման ժամանակ Ա. Աշոտը առաջարկեց, որ աքլորը և շունը թփին հարցնեն, թե սարի ետևում ինչ կա, իսկ ինքը պատասխանի, որ ոչինչ չգիտի: Դետալները պատրաստելիս գույնը, ձևը ընտրել ենք միասին: Սարի կանաչ գույնը առաջարկել են երեխաները, կտուրին ծխնելույզ ունենալու առաջարկը նույնպես նրանցն է: Մինչ ներկայացումը սկսելը տեղափոխեցինք կահույքը. շիրման եկավ սենյակի կենտրոն, սեղանները տեղափոխվեցին գրատախտակի մոտ, որպեսզի չխանգարեն, իսկ գորգին շարվեցին աթոռները, ինչպես տիկնիկային թատրոնում է: Երեխաների մի մասը դարձավ հանդիսատես և նստեց աթոռներին: Աշխատանքի սկզբնական փուլում կային երեխաներ, որոնց այս ամենը չէր հետաքրքրում, բայց այս ամբողջ եռուզեռը հե-

տաքրքրություն առաջացրեց, և նրանք նստեցին, որպեսզի տեսնեն, թե ինչ է լինելու: Պայմանավորվեցինք, որ դահլիճում հանդիսատեսը չի խոսելու, իսկ շիրմայի ետևում դերասանները պետք է լուռ մնան, որ իրենց լսեն:

Եվ այսպես, սկսեցինք: Հեքիաթը նրանց ծանոթ է, գրեթե բոլորը համարյա անգիր գիտեն, սակայն ներկայացման ընթացքում թե խոսքի, թե կազմակերպման առումով իմ միջամտության կարիքը կար: Ներկայացումը ավարտելուց հետո դերասանները դուրս էին գալիս շիրմայի ետևից իրենց տիկնիկի հետ. ես ասում էի նրանց անունը, նրանք գլուխ էին տալիս, իսկ մյուսները ծափ էին տալիս: Դրանից հետո պայմանավորվեցինք, որ վաղը նորից կխաղանք, որպեսզի մեր փոքրերի խմբի համար ներկայացում ցույց տանք: Հաջորդ քայլը փոքրիկների համար հրավիրատոմս պատրաստելը և նրանց հրավիրելն էր:

Դիտարկում.

Շիրման, որպես այդպիսին, շատ տրամադրող է: Այն օգնում է, որ երեխաները կենդանի և առանց պարտադրանքի պատմեն, խոսեն իրենց մասին:

Ներկայացումներին պատրաստվելը, դրանք ցույց տալը լավագույն կերպով նպաստում են երեխաների ինչպես երևակայության զարգացմանը, այնպես էլ կապակցված խոսքի զարգացմանը:

Կերպարների ստեղծումը ձեռքի աշխատանքը, նպաստում է մոտորիկայի զարգացմանը:

Տիկնիկային կոլեկտիվ խաղն ու քննարկումները համագործակցության կարևոր հմտություններ և կարողություններ են մշակում:

Թատրոնը որպես գործունեության ձև, շատ անհրաժեշտ է խմբասենյակում: Այն լավագույն կերպով նպաստում է երևակայության զարգացմանը:

Ծանոթանալով դասական ստեղծագործություններին և դրանք խաղալով երեխաների մոտ զարգանում է բանավոր խոսքը:

Դպրոց-պարտեզի նախակրթարան
Դաստիարակ Անահիտ Հարությունյան

Մաթեմատիկական պատմություններ

Պատմություն հորինելուց առաջ երեխաներին առաջարկեցինք ուշադիր նայել իրենց շրջապատող առարկաներին և թվարկել այն առարկաները, որոնք իրենց կարծիքով մեծ են: Նրանք նայեցին իրենց շուրջն ու ասացին առարկաների անուններ սեղան, աթոռ, ակլատիզ, պատուհան, դաշնամուր, պատ, դուռ, շվեդական պատ, հեռուստացույց:

Հետո առաջարկեցինք թվարկել փոքր առարկաների անուններ: Երեխաները անմիջապես սկսեցին թվարկել թութակ, ձվիկներ, հանկարծ նկատելով սենյակում տզզացող ճանճին ասացին ճանճ: Այստեղից էլ սկիզբ առան իրար հաջորդող պատասխանները թրթուր, որդ, ճիճու, զատիկ, բզեզ, միջատ, մրջյուն: Փոքրի հասկացությունը նրանց մոտ հիմնականում ասոցացվում էր միջատների, իսկ մեծինը շինությունների հետ: Երբ թվարկեցին խմբասենյակի առարկաները, փոխեցինք պահանջը: Այս անգամ երեխաները պետք է ասեին այն բառերը, որոնք անմիջապես ծագում էին իրենց մտքում: Պատասխանները հետևյալներն էին մեծ պահարան և մուկ, գնդակ և օղակ, դաշնամուր և ծաղիկ, մոլորակ և մոծակ, փիղ և մրջյուն, ծի և հեռուստացույց, բասկետբոլ և բասկետբոլի ցանց, փոքր մատիտ և փիղ, սեփական տուն և գնդակ, վիշապ և մրջյուն, կատու և շուն, ծով և ճանճ, ծաղրածու և խորանարդ, փիղ և վագոն (վագոնը մեծ է, իսկ փիղը փոքր), ընձուղտ և գետաձի:

Երբ բառերն արդեն հավաքել էինք, միասին որոշեցինք ընտրել այն բառերը, որոնց մասին կցանկանայինք պատմություն հորինել: Երեխաներն ընտրեցին վիշապ, մոլորակ և մրջյուն բառերը: Բառերն ընտրելուց հետո հարցրինք.

- Իսկ ի՞նչ կլիներ, եթե հանկարծ մեր հերոսները հայտնվեին խառնաշփոթների աշխարհում:

էլենը պատասխանեց.

- Իրենք էլ կխառնաշփոթվեին:

Որպեսզի երեխաներն ավելի կոնկրետ պատկերացնեին իրենց աննելիքը, փորձեցինք հարցերի միջոցով օգնել նրանց:

- Ինչպիսի՞ն է խառնաշփոթների աշխարհը:
- Շփոթված է,- պատասխանեց Արմենը:
- Այնտեղ ամեն ինչ թարս է,- ավելացրեց Անահիտը:
- Իսկ ինչո՞վ է այն տարբերվում մեր աշխարհից:
- Ամեն ինչով,- կտրուկ պատասխանեցին բոլորը:

Մենք առաջարկեցինք նշել այդ տարբերությունները:

- Այնտեղ ծառերը խճճված ճյուղեր ունեն: Այնքան խճճված, որ բոլորը մի ծառից կպած են աճում,- ասաց էլենը:
- Այնտեղ ծիտիկներ չկան, ծիտիկների փոխարեն կարմիր ավտոմեքենաներ են թռչում,- ավելացրեց Արթուրը:
- Իսկ երկինք կա՞ այդ երկրում:
- Կա, բայց կարմիր գույնի է,- պատասխանեց Արմենը:
- Որտե՞ղ է գտնվում խառնաշփոթների աշխարհը:
- Ուրիշ մոլորակում,- ասաց էլենը:
- Մութ անտառում,- հաստատեցին մի քանիսը:

Հենց այստեղից էլ սկիզբ առավ մեր պատումը:

Վիշապը, մրջյունն ու մոլորակը խառնաշփոթների աշխարհում

Լինում է, չի լինում, մի մութ անտառ է լինում: Այս անտառի խորքում մի կախարդական դռնակ է լինում: Դռնակը շատ փոքր ու նեղ էր: Դրա համար էլ ոչ ոք չէր կարողանում նրանից ներս մտնել ու իմանալ, թե ինչ կա դռան ետևում: Մի անգամ մոլորակը, վիշապն ու մրջյունը որոշեցին գնալ մութ անտառ ու տեսնել, թե դռան ետևում ի՞նչ կա: Երբ մոտեցան դռանը, վիշապը ականջ դրեց ու կռվի ձայն լսեց: Այնտեղ մարդիկ ամեն օր կռիվ-կռիվ էին խաղում, դրա համար էլ միշտ կռվի ձայն էր գալիս: Մոլորակը ամբողջ ուժով հրեց դուռը, բայց այն տեղից չշարժվեց: Մրջյունը մտավ դռան անցքի մեջ, ու դուռը կախարդվեց: Այնքան մեծացավ, որ երեքն էլ միանգամից ներս մտան: Դռնից ներս մտան ու զարմացան: Դու մի ասա, դռան ետևում խառնաշփոթների աշխարհն էր: Այնտեղ ամեն ինչ խճճված էր: Ծառերը ծուռումուռ էին, իրար կպած, երկինքը կարմիր էր, իսկ ծիտիկների փոխարեն կարմիր ավտոմեքենաներ էին թռչում: Մարդիկ էլ միայն կռիվ-կռիվ էին խաղում:

Մեկ էլ հանկարծ մրջյունը նայեց վիշապին ու տեսավ, որ նա փոխվել ու կանաչ օձ էր դարձել: Մոլորակն էլ նրան չճանաչեց: Մոլորակը դարձել էր գունավոր մուկ, ու մարդիկ զարմացած նրան էին նայում: Էլ չենք խոսում մրջյունի մասին: Նա մի մեծ ավտոմեքենա էր դարձել, որը համ թռչել գիտեր, համ քայլել: Խառնաշփոթների աշխարհը նրանց դուր չեկավ, որովհետև այնտեղ ամեն ինչ խառնված էր: Այդ պատճառով էլ մի ուրիշ դուռ գտան ու մտան ներս: Հիմա էլ հայտնվեցին ջրերի աշխարհում: Գնացին ընկան ջրերի մեջ ու դարձան կանաչ ծիտիկներ: Ծիտիկ դառնալը նրանց շատ դուր եկավ, որովհետև թռչել շատ էին սիրում: Երբ թռչելուց հոգնեցին, դուրս եկան երկու դռներից ու նորից իրենց աշխարհում հայտնվեցին: Նրանց աշխարհը մեր իսկական երկիրն է:

Դիտարկում- Մեծ ու փոքր բառեր կազմելը նրանց դուր եկավ և հաջողվեց: Բառերը թվարկելու ընթացքում արտասանության ու ծափերի միջոցով փորձում էինք որոշել, թե որ բառն է ավելի մեծ: Այդ ընթացքում երեխաները հասկանում էին, որ մեծ չափեր ունեցող առարկաները կարող են շատ կարճ արտասանվել և հակառակը: Ամենից շատ նրանց դուր է գալիս հարցերի պատասխանել: Բոլորն այդ ժամանակ այնքան ակտիվ են գտնվում, որ դժվարու-

թյամբ են լսում ընկերների պատասխանները: Նրանք ավելի են կարևորում իրենց պատասխանները, որովհետև դա ինքնարտահայտվելու հրաշալի միջոց է: Պատմություն հորինելիս փոխվում է ընդհանուր մթնոլորտը: Կան երեխաներ, որոնք պասիվ դիրք են գրավում և ուշադրությամբ լսում են ընկերների արտահայտած մտքերը: Մյուսներն էլ իրենց անհատական պատասխանները հարմարեցնում են պատմության սյուժեին: Այս ժամանակ նրանք կենտրոնանում են ընդհանուր պատմության բովանդակության վրա և հեշտությամբ զիջում են իրար: Իրենց հորինած պատմությունները առանձնահատուկ հետաքրքրությամբ են լսում և միշտ ցանկություն են հայտնում նկարել դրանք:

Գեղարվեստի դպրոցի նախակրթարան
Դաստիարակներ Աննա Ադամյան
Արմինե Աբրահամյան

Գարունը բերեցինք խմբասենյակ

Առավոտյան իջանք բակ, որպեսզի դիմավորենք գարնանը: Բակը շատ գեղեցիկ էր: Ծառերը բողբոջել էին: Երեխաները ոգևորված էին: Նրանց խնդրեցի ուշադիր նայել ծառերին և ասել, թե ինչ են տեսնում: Արփինեն և Անահիտը ասացին, որ ծառերը ծաղկել են, իսկ Անդրեասը հարցրեց.

- Բա մրգեր չեն աճելո՞ւ:

Ասացինք, որ երբ ծառերը բողբոջում են, ծաղկում են, դրանից հետո աճում են մրգերը: Վարդգեսն ու Տիգրանը հիշեցին, թե անցած տարի գարնանը ինչքան խակ ծիրան էին կերել...

Բոլորս գիտեինք, որ հիմա գարուն է: Որոշեցինք գարունից ինչ-որ բան տանել խմբասենյակ:

Խմբասենյակում հարմար տեղավորվեցինք բարձերին և սկսեցինք զրուցել մեր բերած գարնան մասին: Անահիտն ասաց, որ ինքը գարունից մի տերև է բերել խմբասենյակ, որ ներսում գարուն լինի: Գ. Արփինեն գարնանն էր բերել, որ մեր սենյակը զարդարվեր ծառերով, տերևներով, ծաղիկներով: Իսկ Սոֆյան գարնան ծաղիկն էր բերել: Հովհաննեսը ոչ մի բան էլ չէր բերել, որովհետև ինքը մեքենայով խաղում էր, բայց ասաց, որ երբ գարունը գալիս է, մրգերը և ծաղիկները աճում են, ծառերը ծաղկում են: Արթուրը գարունն էր բերել, որ մեր սենյակը սիրուն լիներ ու զարդարված: Անդրեասը գարնան արևն էր բերել, որ այն մեր սենյակը տաքացներ, մեր սենյակում ցանած ծաղիկներին դուրս հաներ, սենյակում ծառեր լինեին, դրանց վրա մրգեր աճեին, և մենք ուտեինք: Էդգարը գարնան շորիկն էր բերել, որը շատ սիրուն էր և պետք է մեր սպորտային սենյակը զարդարեր կարմիր և դեղին գույներով: Արսենը արևն էր բերել, որ սենյակը տաքացներ և սենյակում խնձորի ծառ լիներ, խնձորները հավաքեին և ընկերների հետ ուտեին: Վարդգեսը արևն ու գարնան կոշիկն էր բերել: Այդ կոշիկը կախարդական էր: Գարունը բարի կախարդ էր և երբ հագներ այդ կոշիկը, աշխարհը կզարդարեր ծաղիկներով, փայլերով, կարմիր վարդերով:

- Իսկ ի՞նչ եղավ, երբ գարունը կորցրեց իր կախարդական կոշիկները:

Վարդգեսն ասաց, որ այդ կոշիկները գողացել էին, ու ինքը գնաց, գնաց և դրանք անտառից գտավ: Երբ հարցրի, թե ովքե՞ր էին գողացել, պատասխանեց գողերը, Տիգրանն ավելացրեց, որ դրանք Հայաստանի չար գողերն էին: Վարդգեսը շարունակեց, որ նրանք գարնանը չէին սիրում, որովհետև գարունը գողերին նեղացրել էր: Ինչո՞ւ էր նեղացրել, նա չգիտեր: Հովհաննեսը շարունակեց, որ երևի նրանք գարնանից ոսկիներ էին ուզել, իսկ գարունը չէր տվել, դրա համար էլ նեղացել էին:

Ռազմիկը գարնան թռչող սունկն էր բերել, որ կեղտոտ ջրաներկը սիրուն [illegible] և շատ ոսկիներ ու դոլարներ բերեր մանկապարտեզ: Ի՞նչ էին անե-

լու դրանք. պարզվեց՝ ոչ մի բան: Տիգրանը գարնան ծաղիկներն էր բերել, որ սիրուհացներ խմբասենյակը, հետո գարունը կախարդական բոթասներով կգնար Ռուսաստան: Էրիկը ոչ մի բան չէր բերել, որովհետև այդ օրը ինքը ուշ էր եկել պարտեզ: Հովիկն էլ ձնծաղիկ էր բերել, որ մեր խումբը տաքանար և սիրուն-սիրուն լիներ: Իրինան գարունն ու սիրուն արևն էր բերել, որովհետև տոն է եկել, և ջրաներկով նկարելու ենք: Միսակն իր հետ մի հրաշալի տղա էր բերել. նա կախարդական էր, և ով կպչեր նրան՝ ձեռքը կվառվեր, ու երեխաների համար ամեն ինչ կլիներ: Մանկապարտեզի մեջ լիքը ոսկիներ կլիներին, նրանք կվերցնեին ու շատ բաներ կառնեին: Հետո ասաց, որ ինքը արևին է բերել, որ մեր խումբը տաքացնի.

- Արև՛, մեր խումբը տաքացրու:

Արևը տաքացնում է: Այդ տղան էլ գալիս է մեր խումբ, և բոլորը ուրախանում են:

Ջրույցից հետո նկարեցինք մեր բերած գարունը:

Դպրոց-պարտեզի նախակրթարան
Դաստիարակ՝ Անահիտ Հարությունյան

Ի՞նչ կլիներ, եթե...

Աշխատանքը սկսեցինք «Գնդլիկ բոքոնիկ» հեքիաթը պատմելով: Երեխաները ոգևորված պատմում էին, հետո սյուժետային դրվագների կերպարային խաղով ներկայացնում: Երբ երեխաները պատմում էին, մենք հարցերի միջոցով քննարկում էինք պատումն ու Ռոդարիի «Ի՞նչ կլիներ, եթե...» հնարքի կիրառումով խաղում նյութի հետ: Երբ հարցրինք, թե ինչո՞ւ է Գնդլիկ բոքոնիկը գլորվում, պատասխանեցին.

- Որովհետև պապիկը տատիկին չի լսել, բոքոնիկն էլ պապիկի նման չարություն է արել ու փախել է տնից:

Պարզվեց նաև, որ նա գլորվում է, որովհետև գնդակի է նման, համ էլ եթե գլորվել չիմանար, անտառ չէր գնա ու այնտեղ գայլին, նապաստակին, արջին ու աղվեսին չէր հանդիպի: Երբ հարցրինք, թե ում կհանդիպեր բոքոնիկը, եթե աղվեսին չհանդիպեր, Արսենն ասաց.

- Կհանդիպեր կախարդ տատիկին: Կախարդը կհարցներ՝ ո՞ւր ես գնում, ա՛յ սիրուն, համո՛վ բոքոնիկ,- և ինքն էլ պատասխանեց նաև բոքոնիկի փոխարեն-գնում եմ անտառ, որ այնտեղ տուն սարքեմ ու մենակ ապրեմ իմ տան մեջ:

Մյուսներն էլ ասացին, որ անտառում Գնդլիկ բոքոնիկը կհանդիպեր չար գայլին, բոբոյին, դինոզավրին:

Երեխաները սկսեցին հարցեր ուղղել միմյանց և պատասխանել, որի արդյունքում էլ ստացվեց այս «հարց ու պատասխան» հեքիաթը:

Էլեն - Ինչո՞ւ էր բոքոնիկը ուզում մենակ ապրել, բա որ վախենա՞ր:

Անի - Բա որ կախարդը գար, նրան ուտե՞ր...

Արտյոմ - Ուտեր, նա էլ կգնար ու կախարդի փորի մեջ կապրեր:

Էլեն - Փորի միջի ուտելիքների հետ կխաղար, որ չտխրեր:

Անահիտ - Ո՛չ, կախարդը կամ աղվեսը հենց որ բոքոնիկին կուլ տվեցին, մսով կարկանդակ դարձան ու հեքիաթը վերջացավ:

Էլեն - Տատիկն ու պապիկն էլ իրենց համար նոր բոքոնիկ թխեցին:

Արսեն - Բայց բոքոնիկը էլ չփախավ տանից...

Լարիսա - Որովհետև տատիկն էլ մայրիկին ու պապիկին չէր նեղացնում:

Դիտարկում - Հեքիաթի պատումը հետաքրքիր է դառնում երեխաների համար հատկապես այն դեպքում, երբ պատմողը շեշտը դնում է գեղեցիկ արտահայտչաոճի վրա և բերանացի է ասում հեքիաթը: Հեքիաթի դերային ներկայացումը առավել տպավորիչ է երեխաների համար, որովհետև նրանց գրա-

վում է խաղային ակտիվ վիճակը: Այս դեպքում բոլորն էլ մասնակիցներ են դառնում և ներգրավվում են ազատ, ստեղծագործական աշխատանքի մեջ: Երեխաներին հարցեր ուղղելու և նրանց պատասխանները գրանցելու հնարավորությունը, գործող, երեխաներին դիտարկող դաստիարակի համար օգտակար աշխատանք լինելուց բացի, գրավիչ և հետաքրքիր է նաև երեխաների համար: Ռոդարիական մեթոդների կիրառումը յուրօրինակ խաղ է նրանց համար: Երեխաները սկսում են հասկանալ, որ կարելի է խաղալ ոչ միայն տեսանելի, շոշափելի նյութերի հետ, այլև մտքի, ձայնի, գույնի, անգամ պատահական գծված գծիկի հետ: «Ի՞նչ կլիներ, եթե...» հնարքի կիրառումը նրանց կենտրոնանալու, կերպարի կամ դիպվածի շուրջ մտածելու, կարծիքը անկաշկանդ արտահայտելու հնարավորություն է տալիս: Երբ դաստիարակը գրի է առնում բոլորի պատասխանները, նրանք շատ են ոգևորվում ու հասկանում են, որ իրենց արտահայտած միտքը, խոսքը կարևոր է և հարգելի: Հարցերին պատասխանելու և հարցեր տալու հնարավորությունը զարգացնում է երեխաների դիտողական և տրամաբանական մտածողությունը: Հարցեր տալու հնարավորությունը օգնում է նյութի բովանդակային ընկալմանը, իսկ մտածված պատասխաններ տալու և ուրիշների պատասխանները ուշադիր լսելու կարևորությունը մշակում է խոսքի, զրույցի կուլտուրան: Հարցերը և դրանց պատասխանները երեխաների աշխարհընկալման, անհատական կենսափորձի փնտրտուքներն ու հիմնավորումներն են: Ուշադիր և հոգատար դաստիարակը այս հնարքը կիրառելիս կարող է ճանաչել իր սաների ներաշխարհն ու հոգեվիճակը, և հենց հարցերի կամ լուծումների միջոցով կփորձի օգնել հաղթահարելու անհանգստություններն ու շեղումները:

Գեղարվեստի դպրոցի նախակրթարան
Դաստիարակներ՝ Աննա Ադամյան
Արմինե Աբրահամյան

Մի գիծ՝ ես, մի գիծ՝ դու

Այս հնարքը նախակրթարանային խմբում կիրառելու համար առավել նպատակահարմար է աշխատել կամ փոքր խմբերով, կամ էլ «կարուսել»-ի մեթոդով (յուրաքանչյուր երեխայի տալիս են մեկական անհատական թուղթ, որի վրա նրանք պետք է որևէ գիծ կամ անավարտ պատկեր գծեն: Այնուհետև թղթերը, հաջորդաբար փոխանցելով, պատկերը շարունակում են այնքան, մինչև որոշակի նկար ստացվի):

Այս հնարքի կիրառումը սկսվեց երեխաների նախաձեռնությամբ: Նրանք գրատախտակի վրա նկարում էին՝ մարկերը իրար ձեռքից խլելով: Որպեսզի աշխատանքն ամբողջական ստացվեր, և ստացված պատկերը կարողանայինք պահպանել, երեխաներին առաջարկեցինք նկարել թղթի վրա կիրառելով «մի գիծ՝ ես, մի գիծ՝ դու» հնարքը: Բոլորս միասին նկարեցինք, նկարի վերաբերյալ պատմություն հորինեցինք ու վերնագրեցինք:

Չու-խատուտիկ

Լինում է, չի լինում մի Չու-խատուտիկ է լինում: Նա ապրում է երկնքի հեռո-մոտիկ տեղում: Չու-խատուտիկն այնտեղ ապրում էր իր ընտանիքի՝ մայրիկի, հայրիկի, քույրիկի և եղբոր հետ: Մայրիկի անունը Ծիծաղոտիկ է, հայրիկինը՝ Ժպտերեսիկ, որովհետև նա շատ էր ժպտում, եղբոր անունը Ծիծաղիկ է, քույրիկինը՝ Խուճուճիկ: Ծնողներն իրենց Չու-խատուտիկի համար համեղ ուտելիքներ էին բերում, իսկ նա օգնում էր մայրիկին: Չու-խատուտիկը շատ էր սիրում իր ընտանիքի անդամներին և ընկերներին: Երբ ընկերները հյուր էին գալիս, նրան ծվածեղ, բուլկի և էլի ուրիշ համեղ բաներ էին բերում: Նրանք միասին ուտում էին այդ շատ համեղ բաները, հետո խաղում էին: Երբ

Չու-խատուտիկը եկավ երկնքի հեռու-մոտիկից, իր հետ բերեց աստղ, խնձոր, արև, ծաղիկ: Մենք նրա բերած նվերները պահեցինք, որպեսզի չփչանան: Այդ ամենի փոխարեն մենք նրան կտանք ճաշիկ, մեծ գրատախտակ, տիկնիկներ, ծաղիկ և փուչիկ: Նա մեր տված նվերները պահելու է, որ իր ընկերներին ցույց տա:

Վերջում մենք նրան ցտեսություն ասացինք, և նա գնաց: Մենք շատ ուրախացանք, որ նա եկել էր մեզ հյուր, հիմա էլ տխրեցինք, որ գնաց: Նաև ուրախացանք, որ ինքը մեզ նվերներ էր բերել:

Դիտարկում - Նկարելը երեխաների ամենասիրած զբաղմունքներից է: Խմբային նկար ստանալու առաջարկը մի փոքր շփոթեցրեց նրանց, որովհետև հատկապես նկարելիս երեխաները ձգտում են ամբողջական, անհատական աշխատանք կատարել: Աշխատանքի սկզբում նրանք դժվարանում էին շարունակել անավարտ ու անհասկանալի պատկերը: Սակայն ավելի ակտիվ երեխաները օգնում էին, որպեսզի աշխատանքն իր հունի մեջ ընկնի և ընդգրկի բոլոր մասնակիցներին: Որքան պատկերը տեսանելի էր դառնում, այնքան մեծանում էր երեխաների ակտիվությունը: Խաղի մեջ ընդգրկված էին բոլորը և նույնիսկ ամենապասիվ մասնակիցները հնարավորություն էին ստանում ինքնարտահայտվելու: Խմբային աշխատանքի ժամանակ նրանք ավելի վստահ են հանդես գալիս, որովհետև բոլորը ուշադիր լսում են իրենց կարծիքը և կենտրոնանում նկարած պատկերի վրա: Ստացված պատկերը վերնագրելիս երեխաներն առավել ակտիվ էին: Յուրաքանչյուրը ձգտում էր արտահայտել իր կարծիքը նկարի վերաբերյալ և անվանակոչել ստացված նկարը, ինչը շատ ինքնատիպ ու հետաքրքիր էր: Կարծում եմ, որ հնարքը դուր եկավ երեխաներին, քանի որ ողջ աշխատանքի ընթացքում նրանք կենտրոնացած և հետաքրքրված էին:

Երկնքում ճախրող մտքեր

Այս հնարքը կիրառելու համար անհրաժեշտ է, որ երեխաները նկարեն անհատական թերթիկների վրա և հետո պատմեն իրենց նկարը: Աշխատանքը սկսելուց առաջ անհրաժեշտություն չկա զրուցել որևէ թեմայի շուրջ, քանի որ աշխատանքի նպատակը երեխաներին ինքնարտահայտվելու և ազատ մտածելու հնարավորություններ ընձեռելն է: Մենք նրանց թղթեր բաժանեցինք և առաջարկեցինք նկարել այն, ինչ կամենում են: Առաջադրանքը երեխաներին շատ դուր եկավ, և բոլորը մեծ աշխուժությամբ գործի անցան: Մոտենում էինք նրանց, ովքեր վերջացնում էին նկարելը, և խնդրում, որ պատմեն իրենց նկարի մասին: Երբ երեխաները պատմում էին նկարը, մենք պատմելու ընթացքում գրի էինք առնում դրանք:

Իվետա - Նկարել եմ իմ տունը: Այդտեղ ապրում են մամաս, պապաս, տատիկս, պապիկս: Այսօր իմ ծնունդն է: Մամաս սեղան է դնում, պապան էլ օգնում է: Պապան տիկնիկ կառնի, որովհետև տիկնիկ եմ ուզում:

Բելլա - Նկարել եմ աղջիկ ու տնակ: Աղջիկը գնում է անտառ, որ խոտ հավաքի ու տանի իր կովերին տա, որովհետև կովը չի կարող հավաքել, քանի որ բերան չունի: Իսկ աղջկա անունը Նինա էր:

Անահիտ - Նկարել եմ տուն, որտեղ շատ մարդիկ են ապրում: Այդ մարդիկ ուրախանում, պարում, հաց են ուտում, որովհետև Զատիկ է: Սեղանին շատ կերակուրներ կան: Զատիկի տոնին սեղանին դնում են ներկած ձու: Նրանց մոտ հյուր է գալիս Ակլատիզը, ասում է .

- Բարև, զատիկներ: Այդ ի՞նչ եք անում:

Նրանք էլ պատասխանում են.

- Զատիկի համար հաց ենք ուտում:

Դավիթ - Նկարել եմ տուն: Այստեղ մարդ է ապրում: Այդ մարդը ամեն օր դարպասը ջարդում է, որ տուն մտնի: Մի անգամ գնում է կովերին արածացնի, որ կաթ խմի, որովհետև կաթը վերջացել էր:

Մերուժան - Սա տանձ է: Եկել է ծառից: Լավ էլ արել է, որովհետև ծառից ընկել է: Տանձը ապրում է խնձորի հետ: Տանձի ծնողներն են տանձերը: Տանձը ամբողջ օրը մաճ էր գալիս և լաց էր լինում: Նրան իր մայրիկ տանձն է հյուր գալիս և հարցնում.

- Ինչո՞ւ ես լաց լինում:
- Որովհետև ծառից ընկել եմ:

Էլեն - Նկարել եմ Աչք-խուճուճիկ: Նա բոլոր մարդկանց նայում էր: Ովքեր չար էին, աչքը խաբում էր, իսկ ով բարի էր՝ մի լավ բան էր անում: Աչքը բնակվում էր մի մարդու մեջ, որը անտեսանելի էր: Աչքի ծնողները ուրիշ աչքերն են, վիզը, ականջներն ու քթերը: Նրանք բոլորն էլ միշտ հյուր են գալիս աչքին, որովհետև նրան բարեկամ են: Նրան լավ լուրեր են հայտնում: Աչքը աշխատասեր էր և միշտ աշխատում էր, որ սոված չմնա:

Թերեզա - Եռանկյունի մարդուկ եմ նկարել, որը բնակվում է անտառում: Նրա ծնողներն են քառակուսին և ուղղանկյունը: Եռանկյունի մարդու բարեկամներն են ուղղանկյունը, քառանկյունը և շեղանկյունը: Նրան հյուր են գնում ծնողներն ու ասում.

- Ովքե՞ր են քո բարեկամները:
- Դուք եք:

Արթուր - Նկարել եմ խնձոր: Նրա հայրիկը տանձն է, իսկ մայրիկը՝ նարինջը: Խնձորը բնակվում է ծառի վրա, իսկ ամբողջ օրը բակում խաղում է նարինջների՝ իր ընկերների հետ: Մի օր նրան հյուր է գնում տատիկը՝ Սուտիկը և հարցնում.

- Կգա՞ս գնանք մեր տուն:
- Այո՛, կգամ:

Եվ տատիկի հետ գնում է նրանց տուն: Պապիկը բարկանում է և խնձորին ետ է տանում իրենց տուն:

Դիտարկում - Երեխաները ամենից շատ ոգևորվեցին այն ժամանակ, երբ իրենց հորինած պատմությունները ներկայացրինք իրենց ընկերներին: Ողջ աշխատանքի ընթացքում, հատկապես նկարելիս, նրանք կենտրոնացած էին: Ստեղծագործելու ընթացքում երեխաները սովորաբար աղմկում են, իսկ նկարելիս միշտ լուռ են:

Հեքիաթի աղավաղում
«Սուտասանը»

Հնարքի կիրառումը սկսեցինք հեքիաթի պատումից և բեմադրումից: Պատմելու ընթացքում համոզվեցինք, որ նրանք լավ են տիրապետում նյութին: Երեխաները գրեթե բերանացի պատմում էին նյութը, և ընթացքում որոշ դրվագներ բեմականացնում էինք: Երբ պատմելն ավարտեցինք, հարցրինք.

- Ի՞նչ կլիներ, եթե թագավորը ոսկին չտար:
- Եթե մի կոտ ոսկին չտար, թագավորության կեսը կտար,- պատասխանեց Արսենը:
- Որ ոսկին չտար, աղքատն էլի աղքատ կմնար, դրա համար էլ ոսկին տվեց,- համոզված ասաց Թերեզան:

Այնուհետև որոշեցինք այնպես փոխել հեքիաթը, որ ոչ ոք չճանաչի: Երե-

խաներն իրենք առաջարկեցին փոխել հերոսներին: Մեր խմբասենյակում ապրող սերմերին հրավիրեցինք հեքիաթ և միասին բաժանեցինք դերերը: Թագավորի դերում հայտնվեց լոլիկը, որովհետև գլխին թագ ուներ: Մյուս բանջարեղեններն էլ դարձան քաղաքի բնակիչները:

Լինում է, չի լինում, մի թագավոր է լինում: Էս թագավոր Լոլիկ-կլորիկը փախչում է իր երկրից, որ ոչ ոք իրենից փող չխնդրի: Նա գնում է տաք երկիր ու այնտեղ մի հրաման արձակում.

- Ես հրամայում եմ, որ այս երկրում էլ ոչ ոք ինձանից փող չխնդրի, որովհետև ես աղքատացել եմ: Տաք երկրի բնակիչները սմբուկները, պղպեղները, կաղամբները, կոտեմներն ու գազարներն էին: Նրանց շատ դուր եկավ թագավորի հրամանը, որովհետև որոշել էին նրա հախից գալ: Բանջարեղենները հավաքվեցին իրենց բանջարանոցում ու թաքուն ժողով արեցին: Հաջորդ օրն առավոտյան նրանք գնացին Ուտիս տատիկի մոտ ու խնդրեցին, որ իրենց առնի: Ուտիս տատիկը ուրախացավ: Նա բոլորին էլ թանկ գնով գնեց, որ տաներ մարդկանց բաժաներ: Հենց Ուտիս տատիկը փողերը տվեց, բանջարեղենները միանգամից խլեցին դրանք ու փախան Տաք երկիր: Հենց նույն օրը նրանք գնացին Լոլիկ-կլորիկ թագավորի մոտ ու ասացին.

- Վերցրու այս փողերը, որ հարստանաս ու ուրախանաս:

Թագավորը նրանց հարցրեց.

- Որտեղի՞ց ձեզ այսքան փող:

- Ուտիս տատիկն է տվել,- պատասխանեցին նրանք ու գնացին պալատից:

Թագավոր Լոլիկ-կլորիկը ամաչեց ու այնպես կարմրեց, որ մինչև հիմա էլ կարմիր է:

Բանջարեղենները վերադարձան Ուտիս տատիկի մոտ ու մասնակցեցին Ջատկի տոնին:

Նրանք այնտեղ ծանոթացան Սոխ-ակլատիզի հետ, բայց նրա փետուրները չպոկեցին:

Դիտարկում - Երեխաներին այնքան էին գրավել ցանած սերմերը, որ իրենք առաջարկեցին հեքիաթի հերոսներին փոխարինել սերմերով: Երեխաները հերոսների փոխարեն հանդես գալիս մտնում են դերի մեջ և նրանց միջոցով արտահայտում են նաև իրենց հուզող խնդիրները: Հորինած հեքիաթը նրանց ավելի դուր եկավ, քան բնագիրը: Երեխաներին ամենից շատ դուր էր գալիս հերոսների փոխարեն խոսելը: Երբեմն նույնիսկ դրանք կենդանի զրույցի էին վերածվում:

Գեղարվեստի դպրոցի նախակրթարան
Դաստիարակներ Աննա Ադամյան
Արմինե Աբրահամյան

Լոլիկի պատմությունը

Ամեն ինչ սկսվեց էմիլի հետաքրքրասիրությունից: Նա փորձում էր բարձրանալ և պատուհանից նայել դուրս: Տեսնելով նրան՝ ասացի.

- Էմի՛լ, եթե հանկարծ ընկնես, լխկած լոլիկ կլինես: Երեխաները ծիծաղեցին: Նրանց «լխկած լոլիկ» արտահայտությունը շատ դուր եկավ. նայում էին իրար, ասում՝ «լխկած լոլիկ» և ծիծաղում: Օգտագործելով այդ պահը՝ հարցրի.

- Երեխանե՛ր, ի՞նչ կլիներ, եթե լոլիկը հանկարծ պատուհանից ցած ընկներ: Նրանք սկսեցին առանց իրար հերթ տալու պատասխանել, որ կլխկեր:

Ցանկանալով, որ պատմությունը շարունակվի, առաջարկեցի, որ ես էլ պատասխանեմ այդ հարցին և ավելացրի.

- Իսկ նրան օգնության կհասներ վարունգը:

Վարունգի հայտնվելը ակտիվացրեց նրանց: Նրանք, իրար լրացնելով, սկ-

սեցին պատմել, որ վարունգն ու լոլիկը որոշում են գնալ խանութ: Այնտեղ նրանք հանդիպում են տանձին ու խնձորին: Ընկերանում են, և որպեսզի նրանց մարդիկ չգնեն, փախչում են: Լոլիկը, վարունգը, տանձը և խնձորը գնում են Մոսկվա: Մոսկվայի օդանավակայանում փախչում են ոստիկանի ոտքերի արանքից և գնում են...

Պատմությունը ընդհատվեց, որովհետև մենք պետք է գնայինք ճաշարան:

Մեր գարունը

Գարնան առաջին օրվա առթիվ իրար շնորհավորելուց հետո սկսեցինք զրուցել գարնան մասին: Այն հարցին, թե գարունը որտեղի՞ց է գալիս, նրանք պատասխանեցին, որ գալիս է վերևից, երկնքից, ամպերի ետևից: Երեխաները գիտեին, որ գարնանը արևը սկսում է ավելի շատ տաքացնել, ձյունը հալչում է, ծառերը ծաղկում են: Միասին իմացանք նաև, որ գարնան առաջին ծաղիկը ձնծաղիկն է, իսկ տաք երկրներից առաջինը վերադառնում են արագիլները: Գարնան ամիսների հետ ծանոթացանք: Դրանից հետո աղջիկներից մեկին ընտրեցինք Գարուն: Նա հագավ կանաչ թիկնոցը և սկսեց շրջել սենյակում: Այդ ընթացքում մենք պայմանավորվեցինք գարնանային բառեր ասել: Երեխաները ասում էին բառը և կանգնում էին «գարուն» բառի կամ առջևում, կամ ետևում: Երեխաները կարդում էին այդ բառերը: Հնչած արև, ծաղիկ, ձնծաղիկ, ոչխար, խոտ, տերև, ծառ բառերից, մրգերի, տարբեր առարկաների անվանումներից «գարունին» առաջարկեցինք ընտրել իրեն ամենից շատ դուր եկած բառը: Գարունը ընտրեց երկու ձնծաղիկներին: Ձնծաղիկները դարձան նրա նագիրն ու վեզիրը, և գարունը հրապարակեց իր հրովարտակը: Այն հետևյալն էր. «Թող թռչունները վերադառնան տաք երկրներից, թող ծաղիկները ծաղկեն, թող ծառերը կանաչեն»:

Գարունի բարեկամ և թշնամի բառերը: Հաջորդ օրը բաժանվեցինք երկու խմբի: Մի խումբը գարունի բարեկամն էր, մյուսը նրա թշնամին: Առաջին խումբը պետք է գարունին բարեկամ բառեր ասեր, իսկ երկրորդ խումբը թշնամի, հակառակ բառեր: Գարունի բարեկամները սենյակի մի մասում էին, թշնամիները մյուս: Բառերը կապված էին նրանց առօրյայի ավտոմեքենա, ղեկ, տիկնիկ, նաև բնության երևույթների հետ տերև, խոտ, ծաղիկ, արև, քամի, անձրև և այլն: Ոգևորված խաղում էին, սակայն բարեկամ և հակառակ իմաստները լավ չէին պատկերացնում: Նրանց շատ դուր էր եկել գարունին բարեկամ կամ թշնամի լինելը:

Խաղ գունավոր գլխարկներով

Երեխաներից մեկի գլխին դրեցի կանաչ, իսկ մյուսի գլխին՝ գազարագույն գլխարկ և խնդրեցի, որ այդ գույներն ունեցող բառեր ասեն: Նրանք ոգևորությամբ և առանց իրար հերթ տալու սկսեցին կանաչ և գազարագույն բառեր ասել: Կանաչ գույն ունեցող բառերն էին՝ խոտը, տերևը, կանաչին, իսկ գազարագույնը՝ գազարը, արևը և այլն:

Հաջորդ օրը գունավոր գլխարկներից մեկը դրեցի երեխաներից մեկի գլխին: Նա կանգնեց շրջանի մեջտեղում: Երեխաները հերթով բառեր էին ասում և կանգնում այդ գույնի առջևում կամ ետևում: Խումբը կարդում էր և ասում այդ բառը տվյալ գույնին սազում է, թե՞ ոչ:

Ի՞նչ կլիներ, եթե գարունը կորցներ իր գույները...

Հարցից անմիջապես հետո երեխաները ոգևորվեցին և սկսեցին իրար շարունակելով և հարցերի միջոցով պատմել:

Ռազմիկը միանգամից ասաց, որ գարունը չէր կարողանա ապրել, կլացեր ու տուն չէր ունենա, իսկ Անահիտն ավելացրեց, որ նրա շողերը կկորչեին: Հո-

վիկն ասաց, որ եթե գարունը իր շողերը կորցներ, այլևս չէր կարողանա գալ մեզ մոտ, այստեղ ցուրտ կլիներ: Այն հարցին, թե մարդիկ ինչպե՞ս կտաքանային, Միսակն ասաց, որ կրակ կվառեին ու կտաքանային: Իսկ Արթուրը շարունակեց, որ Աստծուն կխնդրեին, և նա գարուն կբերեր: Իրինան էլ ասաց, որ իրենք մատիտով ու ջրաներկով կներկեին, և գարունը իր գույներով կգար իրենց մոտ:

Ի՞նչ կլիներ, եթե Ակլատիզ պապիկն ու Ուտիս տատիկը ընկնեին «Պոչատ աղվեսը» հեքիաթի մեջ

Ակլատիզ պապիկի ու Ուտիս տատիկի մասին զրուցելուց հետո սկսեցինք պատմել «Պոչատ աղվես» հեքիաթը: Երեխաները հեքիաթը գրեթե անգիր գիտեին: Դրանից հետո հարցրի.

- Երեխանե՛ր, իսկ ի՞նչ կլիներ, եթե Ակլատիզն ու Ուտիսը ընկնեին «Պոչատ աղվեսը» հեքիաթի մեջ:

Խնդրեցի, որ նկարեն ու մտածեն, իսկ հետո պատմեն: Երեխաները հաճույքով նկարեցին և սիրով ու ոգևորությամբ պատմում էին իրենց հորինած հեքիաթները, անուն դնում դրանց: Ես գրի էի առնում: Նկարելու և հորինելու աշխատանքներից հետո փորձեցինք գուշակել, թե մեր ընկերներից ո՞վ է հորինել այդ հեքիաթը: Ես կարդում էի հեքիաթը, իսկ իրենք փորձում էին գուշակել: Այս խաղը նույնպես ոգևորեց նրանց: Նկարելուց հետո այսպիսի պատմություններ ստացվեցին:

Վարդը

Բոլոր հեքիաթների մեջ կան տատիկներ ու պապիկներ: Աղվեսը գալիս է կաթը գողանալու, տատիկը փայտով պոչը կտրում է, ու հետո աղվեսը գնում է կովի մոտ, կաթ է ուզում: Ակլատիզն էլ տեսնում է պոչատ աղվեսին ու ծիծաղում:

Պետրոսյան Անահիտ

Ակլատիզ պապիկը, Ուտիս տատիկը և Պոչատ աղվեսը

Ակլատիզը Ուտիսին տարավ նկուղ, որ խելոքացնի: Իսկ Ուտիսը դուրս եկավ, գնաց բակ խաղալու ու փայտ գտնելու, որ այդ Ակլատիզի փետուրները վրայից հանի: Ուտիսը գնաց Պոչատ աղվեսի տուն: Հետո Ակլատիզն էլ գնաց: Պոչատ աղվեսը նրանց ճաշ հյուրասիրեց:

Ամիրխանյայն Հովհաննես

Ուտիս տատ

Ակլատիզն ու Ուտիսը մեքենայով եկան իրենց տուն: Հետո գնացին ռեստորան, խմեցին: Եկան տուն, քնեցին:

Ավետիսյան Տիգրան

Ուտիս տատիկ

Ուտիսը «Պոչատ աղվեսի» հեքիաթում կորել էր: Ակլատիզը ներքևում լացում էր, որովհետև չէր ուզում, որ Ուտիսը ետ գա: Իսկ Ուտիսը դեռ ճանապարհին է, պետք է գա:

Հակոբյան Արթուր

Արև

Ակլատիզն ու Ուտիսը կռվեցին, ընկան «Պոչատ աղվեսը» հեքիաթի մեջ: Աղվեսը նրանց տեսավ ու զարմացավ.

- Դուք որտեղի՞ց եք եկել:

Նրանք պատասխանեցին.

- Ես Ուտիսն եմ:

- Իսկ ես՝ Ակլատիզը:

Աղվեսն ասաց.

- Եկեք ինձ հետ՝ ճամփորդենք:

Երեքով գնացին հեքիաթների աշխարհ, և Ջատիկը եկավ: Ջատիկը եկավ, նրանց չտեսավ ու տխրեց: Երբ նրանք ետ եկան, Ջատիկն ուրախացավ: Իսկ երբ մայր արևն ընկնում է, Ակլատիզը, Ուտիսը ու աղվեսը վերադառնում են, ու Ջատիկը վերջանում է:

Կիրակոսյան Արփինե

Պոչատ աղվեսը

Ակլատիզը գնում է իր փետուրները փնտրելու: Մեկ էլ տեսնում է աղվեսին: Աղվեսն ասում է.

- Ակլատի՛զ պապիկ, այս կողմերում կաթիկ տեսե՞լ ես:

- Տեսել եմ:

- Որտե՞ղ:

- Պառավի տանը:

Գնում է պառավի տուն, կաթը խմում է: Պառավը պոչը կտրում է:

- Պառա՛վ, պառա՛վ, պոչս տո՛ւր, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն, Պոչա՛տ աղվես, որտե՞ղ էիր:

Գնում է, կովիկից կաթ է ուզում, բերում տալիս է պառավին, պոչը վերցնում:

Գրիգորյան Արփինե

Խոզուկ

Ակլատիզն իր համար տուն է սարքում, գնում է Ուտիսի տուն: Փոթորիկ էր, ձյուն էր գալիս: Արևը թաքնվում է: Ակլատիզը ձյունը կտրում է: Մինչև ձյուն գալը աղվեսի պոչին քար է ընկնում, լացում է: Հենց ձյունը կտրվում է, ծաղիկները հողի տակից դուրս են գալիս:

Դումանյան Անդրեաս

Ակլատիզ

Ակլատիզն ու Ուտիսը գնացին հասան «Պոչատ աղվեսը» հեքիաթին: Պոչատ աղվեսը եկավ ու ասաց.

- Ի՞նչ գործ ունեք այստեղ:

Նրանք ասացին.

- Քայլեցինք, քայլեցինք, եկանք այստեղ:

Հետո աղվեսը հրաժեշտ տվեց, գնաց տուն, տեսավ կաթը, խմեց, պառավը պոչը կացինով կտրեց: Ու աղվեսը գնաց կաթը բերելու: Կաթը կովիկից բերում տալիս է պառավին ու պոչը վերցնում: Ակլատիզը գալիս է, աղվեսի հետ ընկերանում են: Միասին քնում են, ու վերջանում է:

Չերքեզյան Արսեն

Ակլատիզն ու Պոչատ աղվեսը

Ակլատիզն իր սենյակում նստած հեռուստացույց էր նայում: Հանկարծ դմփոց լսվեց: Ակլատիզն ասաց.

- Եկեք գնանք տեսնենք այդ ի՞նչ է, ո՞ւմ տունն է, մեջը ի՞նչ կա:

Մտան, տեսան պառավին ու աղվեսին: Պառավն ուզում էր աղվեսի պոչը կտրել, մեկ էլ հանկարծ աղվեսը փախավ: Հետո աղվեսը ետ եկավ, կաթը խմեց, էլի փախավ: Նորից ետ եկավ, նստեց իմանալով, որ պառավը տանը չէ: Միս էլ, ըհը, պառավը դուրս եկավ կացինը ձեռքին: Աղվեսը կաթի շիշը ձեռքին քնել էր: Մեկ էլ պառավը աղվեսի պոչը կտրեց: Հետո աղվեսը գնաց խոտի մոտ: Ակլատիզն ու Ուտիսը մտել էին աղվեսի երկիրը, պառավի տունը: Պոչատ աղվեսը ամաչեց նրանցից ու փախավ: Ակլատիզն ու պառավը գնացին իրենց տուն: Ուտիս տատը կաթը սարքեց, բերեց դրեց տեղը: Դրանից հետո աղվեսը ետ եկավ, բայց կաթը չխմեց, պառավը պոչը տվեց, աղվեսը կցմցեց, գնաց հասավ ընկերներին, ու բոլորը քնեցին:

Հովակիմյան Միսակ

Դպրոց-պարտեզի նախակրթարան
Դաստիարակ Անահիտ Հարությունյան

Ճպուռն ու մրջյունը

Հարմար տեղավորվեցինք բարձերին և սկսեցինք զրուցել ճպուռների և մրջյունների մասին: Երեխաները մրջյունների մասին ավելի շատ բան գիտեին, քան ճպուռների: Մենք միասին ամռանը դիտարկել էինք մրջնանոցը, ուշադիր հետևել էինք մրջյունների աշխատանքին: Երեխաներն իրար ընդհատելով պատմում էին, որ կան աշխատավոր և զինվոր մրջյուններ, որ մրջյունները ունեն թագուհի, և միայն նա է ձու դնում, որ մրջյունը կարող է իրենից տասը անգամ ծանր բեռ տանել: Գիտեին նաև, որ մրջյունները ձմռան պաշարը ապահովում են ամռանը աշխատելով ամբողջ օրը: Ճպուռների մասին համառոտ պատմեցի ես օգտագործելով հանրագիտարանային նյութը:

Որոշեցի անցնել ստեղծագործությանը: Ասացի, որ հիմա կպատմեմ մի պատմություն ճպուռի ու մրջյունի մասին: Նոր էի արտասանել առաջին տողերը, երբ մի քանիսը ոգևորված բացականչեցին, որ իրենք գիտեն «Ճպուռն ու մրջյունը»: Նրանք միացան ինձ և միասին իրար լրացնելով ներկայացրինք ստեղծագործությունը: Այն հարցին, թե դուր եկավ ստեղծագործությունը, բոլորը պատասխանեցին, որ այո: Ապա երեխաները առաջարկեցին խաղալ առակը: Սակայն գիտեին որպեսզի կարողանան խաղալ, պետք է բառերը սովորեն: Որոշեցին մի անգամ էլ լսել մեզ բառերն իմացողներիս: Այսպիսի դեպքերում բառերն արագ սովորելը «կենսական նշանակություն» է ստանում: Սա արդեն հենց այնպես ինչ-որ բան սովորել չէր, այլ դերը ակտիվ խաղալու նախապայման: Լսում էին ուշադիր, փորձում մեզ հետ միաժամանակ արտասանել: Չնայած ես դանդաղ էի արտասանում, բայց փորձում էի մտնել դերի մեջ: Դեռ չէի ավարտել, երեխաները սկսեցին աղմուկով դերաբաժանում անել «Ես ուզում եմ ճպուռը լինել, ես մրջյունը»:

- Իսկ ձմե՞ռն ով կլինի:

Որոշեցինք բաժանվել երկու խմբի ճպուռների և մրջյունների: Մի քանիսը ձմեռ դարձան: Մրջյունները տեղավորվեցին սեղանների շուրջ. դա իրենց տունն էր, որտեղ իրենք աշխատանքից հոգնած հաց էին ուտում, իսկ ճպուռները անցան սենյակի մյուս կողմը: Նրանք պետք է պարեին, թռվռային: Երեխաները մտան դերի մեջ. մրջյունները ցույց էին տալիս ճպուռներին և մեր օգնությամբ ասում ստեղծագործության սկիզբը մինչև ճպուռի գալը մրջյունի մոտ: Հետո սենյակով մեկ թևատարած պտտվեցին ձմեռները ոռնալով փոթորկի պես, սուլելով քամու պես:

Սին էլ ըհը, ձմեռը
Փռեց իրեն թևերը,
Բացեց գորգը սպիտակ,
Դաշտերն առավ ձյունի տակ:

Հետո ճպուռների հետ փորձեցինք սողալով և քաղցած տեսք ընդունելով մոտենալ մրջյուններին և խնդրել տաքացնել ու կերակրել: Երկխոսության մեջ մտան ճպուռ-Փ. Աշոտը և մրջյուն- Կ. Արփինեն: Երբ արտասանեցինք «Քամին ծափ տա, դու պարի» տողերը, բոլորը սկսեցին պարել: Ճպուռ- Արթուրն էլ ասաց.

- Ինչ լավ խաղացինք:

Այնուհետև հարմար տեղավորվեցինք և որոշեցինք պարզել, թե մրջյունն ու ճպուռը ինչպիսին էին: Երեխաներն ասացին, որ մրջյունը աշխատասեր է, խելացի, զինվոր, թագուհի, թագավոր, լավը, իսկ ճպուռը երգող-պարող է, Լիլիթն ասաց «անաշխատավոր է», Ռոբերտը՝ նկարող է, իսկ երբ Անահիտն ասաց, որ ճպուռը խելացի է, Փ. Աշոտը հակադրվեց՝ ասելով, որ հեչ էլ խելացի չէր, նա չէր ուզում աշխատել: Հովհաննեսն ասաց, որ ճպուռը ոչինչ չէր անում, միայն տանը նստած հեռուստացույց էր նայում:

Երեխաները համաձայն էին մրջյունի հետ, որ ճպուռին ներս չթողեց:

Այնուհետև որոշեցինք նկարել ճպուռին և մրջյունին: Երեխաները նկարում էին, իսկ ես արտասանելով շրջում էի խմբասենյակում հետևելով նրանց աշխատանքին: Երեխաների մի մասը նկարում և արտասանում էր ինձ հետ: Նկարները շատ հետաքրքիր էին ստացվել: Մարիամը նկարել էր գետնի վրա պարող մրջյուն, Տիգրանը՝ խաղացող, Լիլիթի ճպուռն եկել էր մրջյունի տուն, որ հարցնի, թե կարելի է նրա հետ մի տարի ապրի: Ռազմիկի ճպուռները կեր էին ման գալիս, իսկ մրջյունները տանը նստած հեռուստացույց էին նայում: Հովհաննեսի ճպուռները քնել էին, իսկ աքլորը նրանց արթնացնում էր: Փ. Աշոտը նկարել էր վարպետ մրջյունին, որը մրջյունների համար տուն էր սարքում: Իսկ այդ տունը կախարդական էր: Ճպուռն էլ գնում էր այդտեղ, որ իրեն տաքացնեն: Հայկի, Կ. Արփինեի նկարում ճպուռն ու մրջյունը խաղում էին:

Դիտարկում.

Երեխաները շատ են սիրում դերերով խաղալ:

Երեխաները սիրով արտասանում են ոչ միայն իրենց, այլ նաև ընկերոջ բառերը: Ներկայացման ընթացքում, անկախ նրանից, թե իրենք ում դերում են՝ մրջյունի, ճպուռի, ձմռան թե հեղինակի, ասում են բոլորի խոսքերը՝ ոմանք շշուկով, ոմանք բարձր: Արդյունքում բոլորը գիտեն խաղացվող ստեծագործության բոլոր բառերը:

Երեխաները սիրում են ուսուցչի հետ միասին արտասանել: Որոշ երեխաներ նկարելիս նույնպես կրկնում են ստեղծագործությունը:

Երեխաները սիրում են նկարել տրված թեմայով ու սիրում են պատմել իրենց նկարածը:

Մկների ժողովը

Պարապմունքն անցկացվում է խմբասենյակում: Ձրույց կատուների և մկների մասին:

Երեխաները արագ-արագ, իրար ընդհատելով պատմում են թե՝ կատուների, թե՝ մկների մասին: Նրանց իմացությունը մեծ չէ, բայց լիովին բավարարում է մկների ժողովի «դրամատիզմն» ընկալելու համար: Ես որոշ մանրամասնություններով ավելացնում եմ նրանց իմացական պաշարը, և անցնում ենք ստեղծագործությանը: Նախ մինչև նյութի մատուցումը աշխատում եմ նյութին լիարժեք տիրապետել: Նկատել եմ, որ ընթերցանությունը նրանց այնքան չի հետաքրքրում, որքան աչքերին նայելով, կարծես յուրաքանչյուրին հատկապես դիմելով բանավոր խոսքը: Փորձում եմ անգիր ասել: Ինձ ուշադիր լսելու մյուս նախապայմանը հետաքրքիր, փոփոխվող, համապատաս-

խան առոգանությամբ կենդանի, գրավիչ խոսքն է:

Ներկայացնում եմ ստեղծագործությունը: Երկխոսությունները շատ են, գործողությունները դինամիկ: Երեխաները մեծ ուշադրությամբ լսում են: Ընթացքում բացատրում եմ նաև անհասկանալի բառերը: Եթե գզիր, կողակից, ահել բառերը հետո մոռանալու են, հոգ չէ: Կարևորը որ հիմա հասկանում են ինչի մասին է խոսքը: Ստեղծագործությունն ինքնին խաղային է: Որոշում են մի անգամ էլ լսել մտապահելու համար: Քանի որ ստեղծագործությունը բավականին երկար է, որոշեցինք ներկայացնել հատվածաբար: Բաժանվեցինք երկու մասի: Մի մասն արտասանում էր, մյուս մասը մնջախաղով ցույց էր տալիս արտասանածը: Հետո դերերը փոխում էինք: Ստացվում էր այնպես, որ նույն խումբը և արտասանում էր, և խաղում էր նույն հատվածը: Այսպես յուրաքանչյուր հատված երկու անգամ կրկնում էինք:

Հաջորդ օրը արդեն կարող էինք ամբողջական ներկայացնել: Ընտրեցինք կատվին Հովհաննեսն էր: Խումբը կատարում է մկների դերը: Ուրախ թռչկոտում են, պարում են, ուտելիք են գողանում, ուտում, խմում, քեֆ են անում: Մեկ էլ հանկարծ անկյունից դուրս է նետվում կատուն կատվային շարժուձևերով, ճանկերը բացած, բարձր մլավելով: Մկները շարժման մեջ քարանում են: Շարժումը կանգ է առնում: Լռություն է: Կատուն մլավելով գալիս ու «փռվում է» մառանի մոտ գորգին բարձերի վրա: Դրանից հետո քարացած մկների խումբը վախեցած արտասանում է «Կատուն» բանաստեղծությունը:

Կատուն եկավ, - Կատու, կատու,
Փիսի՜կ, փիսի՜կ, Է՞ր ես տրտում.
Հազար նազով, Թե՞ մկներն են
Ինչպես հարսիկ, Հիմա արթուն:
Դունչը սրբեց Կատուն ասեց.
Թաթիկներով, - Միաո՜, միաո՜.
Մազը սանրեց Այսինքն թե
Չանչիկներով: - Այո, այո:

Այնուհետև փորձեցինք ցույց տալ, թե ինչ սոված մկնիկներ ենք: Փորիկները բռնած, սոված տեսք ընդունած գալիս նայում էին կատվին և ուշաթափված ընկնում. այդ ընթացքում ասում էին. «Սով էր, սով էր Մկստան, Կատվի ձեռքից լկստան»: Կատուն եկել ու փակել էր մառանը, իսկ խեղճ մկնիկները չէին կարողանում գնալ և կեր վերցնել: Հենց մոտենում էին, նա քշում էր: Տղա-մկնիկներն ասում էին.

Գզիրն ընկավ դռնեդուռ,
էլ չթողեց տուն, կտուր,
Ջահել, ահել գեղովի,
Ջոջերին ջոկ տեղովի
Կանչեց բերեց ժողովի
Թե ինչ անեն, որ կատվեն
Մի հնարքով ազատվեն:
Եկան գյուղի ջոջերը,
Երկար բարակ պոչերը,
Մասնակցեցին ժողովին:
Մի մուկ խոսեց իր հերթին.

Մեր Ջոջ մուկը Փ. Աշոտն էր, զանգը կախելու մասին զարմացած հարց տվողը Լիլիթն էր: Դրանից հետո բոլորը իրար զարմացած հարցնում էին. «Ո՞վ կախ անի»: Այնուհետև միասին ասում էինք. «Ալո, դու», «Բալո, դու», «Չալո, դու», «Մստո, դու», «Փոստո, դու», «Համբո, դու» և ցույց էինք տալիս նրանց: Ալոն Կ. Արփինեն էր, Բալոն Լաևան, Չալոն Գ. Արփինեն, Մստոն

Անահիտը, Փոստոն Իրինան, Համբոն Անդրեասը: Իսկ վերջում Ալոն ու Բալոն հակադրվեցին Ջոջ մկանը՝ նրան անվանելով «չոր գանգ»: Վերջինս էլ բարկացավ, քաշեց պոչը ու գնաց: Այդպես ավարտվեց մեր մկների ժողովը: Դրանից հետո որոշեցինք հորինել, թե հետո ի՞նչ է լինում մկներին և կատվին (Ջ. Ռոդարի «Ստեղծագործական երևակայության քերականություն». «Իսկ հետո ի՞նչ եղավ»): Նրանք ասացին, որ երբ կատուն քնած է, մկները գնում են, կերը վերցնում և ուտում են: Իսկ արթուն ժամանակ փորում են գետինը և դրա տակով անցնելով՝ ծակում են ամանը և կեր վերցնում: Այնուհետև նկարեցինք, թե ժողովից հետո ինչ եղավ:

Դիտարկում. «Մկների ժողովը» ամենասիրած խաղերից մեկն է: Սիրելի է, որովհետև շարժումը շատ է: Ամենաոգևորիչը այն էր, որ գնում էին կեր վերցնելու և կատուն նրանց քշում էր, իրենք էլ ճչալով, լեղապատառ փախչում էին:

Ագռավն ու աղվեսը

Երեխաները բարձրը շրջանածև շարեցին գորգին, և ես անգիր ասացի ագռավի ու աղվեսի մասին առակը՝ փորձելով դերի մեջ մտնել: Երկրորդ անգամ ասելիս բացատրեցի նաև գերվել, կուռ, ճուռ բառերը: Դրանից հետո Փ. Աշոտը դարձավ ագռավ, Սոֆյան՝ աղվես, իսկ Արսենը ցանկացավ պանիրը լինել:

Մնացածս դարձանք հեղինակ: Փորձեցինք դերերով խաղալ: Հետո մի քանի անգամ աղվեսի, պանրի, ծառի, ագռավի դերերը փոխեցինք: Ով ցանկանում էր, հնարավորություն ունեցավ իր ուզած դերը խաղալու: Որպեսզի հեղինակները միապաղաղությունից չձանձրանային, մենք այս պատմությունը որպես հեղինակ տարբեր առաջադրանքներով էինք արտասանում՝ մի անգամ ուրախ, ծիծաղելով, մի անգամ տխուր, լաց լինելով, զարմացած, հիացած և այլն: Այս խաղը նույնպես շատ դուր եկավ երեխաներին:

Երբ սկսեցինք քննարկել, թե նրանց ով դուր եկավ, շատերն ասացին աղվեսը, որովհետև ագռավը «գեշ է»: Դրանից հետո որոշեցինք առակը նկարել:

Դիտարկում:

Երեխաները սիրում են պատմել նկարելու միջոցով: Նկարելուց հետո նրանք մանրամասն պատմում էին իրենց նկարածը:

Անհրաժեշտ նյութեր՝ գորգ, բարձեր, սեղան, աթոռներ, գունավոր մատիտներ, սպիտակ թղթեր:

Աշուն

Բակում ենք: Դիտում ենք աշունը:

Հավաքվել ենք ծառի շուրջ: Զրուցում ենք մեզ շրջապատող ծառերի, խոտի, տերևի մասին: Երբ հարցրի, թե հիմա տարվա որ եղանակն է, ասացին, որ աշուն է: Իսկ Լիլիթն ասաց, որ տարին ունի չորս եղանակ: Պարզեցինք, որ աշնան գույներն են դեղինը, կանաչը, կարմիրը, իսկ Անահիտն ասաց, որ աշնան գույնը ոսկին է: Թվարկեցին աշնան մրգերի անունները: Դրանից հետո պայմանավորվեցինք շրջել բակում և հավաքվել ծառի մոտ յուրաքանչյուրս բերելով մեր աշունը: Մի որևէ իր կամ միտք, որն էլ կտանենք խումբ, որպեսզի հետո նկարենք:

Եկանք խումբ, նստեցինք ու սկսեցինք պատմել, թե աշնան որ մասն ենք բերել մեզ հետ: Պարզվեց, որ Սոֆյան աշնան ոսկին էր բերել, Վարդգեսը՝ կռկռան ագռավին, իսկ Արթուրը՝ քաղցր խնձոր: Որպեսզի մեր աշունը չկորչի, որոշեցինք նկարել թղթի վրա ու պահել: Բոլորը իրենց բերած աշունն էին նկարել:

Նկարելը վերջացրինք ու նստեցինք գորգին շարված բարձերին: Պատմեցի, որ լինում է, չի լինում մի մարդ է լինում, անունը՝ Հովհաննես Թումանյան:

Երեխաները իսկույն ասացին, որ նա ծանոթ է իրենց, քանի որ վերջինիս ստեղծագործությունները պատմելիս նրա անունը միշտ նշվում է: Ասացի, որ նա էլ իր աշունն է բերել մեզ: Եվ ահա, թե ինչպես է նա պատմում իր աշնան մասին: Արտասանեցի ոտանավորը, ընթացքում փորձեցինք հասկանալ նախշուն, պաղ, մեգ բառերը: Դրանից հետո որոշեցինք «խաղալ» բանաստեղծությունը: Երեխաները կդառնան տերևներ և կծածկեն դաշտը. այն մեզ մոտ գորգն էր, իսկ ընկ.Արմինեն և ես կլինենք քամիներ և կփորձենք քշել տերևներին: Դա նրանց շատ ոգևորեց: «Տերևներն» ասում էին ոտանավորը, և երբ պետք է «քամին» փչեր, նրանք վեր էին կենում և վազում սենյակի մյուս մասը: Իսկ Արսենն ասաց, որ ինքը ուժեղ տերև է, և քամին իրեն չի կարող քշել: Ու սովորեցինք ոտանավորը:

Հաջորդ օրը «Աշուն» բանաստեղծությունը խաղալու այլ ձև գտնվեց: Երեխաների մի մասը դարձավ աշուն, որը գալիս և իջնում է դաշտերին, մի մասը դարձավ դաշտ ծաղիկներ, մի մասը անտառ ծառեր, քամի և այլն... Դանդաղ արտասանում էին և միաժամանակ կատարում էին իրենց դերերը: Աղմկոտ և բարձր էին արտասանում քամու տերևները քշելու տեսարանը:

Բանաստեղծությունը կրկնեցինք: Գրեթե բոլորը հիշում էին. մի մասը լավ, մյուս մասը շատ լավ:

Դիտարկում.

Երեխաները շատ են սիրում դիտարկումներ անել: Աշխատում էին անպայման գտնել աշունը բնութագրող որևէ երևույթ չորացած խոտ, կամ դեղին, կարմիր տերև: Հատկապես ոգևորվեցին, երբ գնացին իրենց աշունը բերելու: Կարծում ենք, աշնան այս դիտարկումը ավելի տեսանելի և ընկալելի դարձրեց «Աշուն» բանաստեղծությունը, նպաստեց նրա ուսուցմանը:

Երեխաները սիրով են կերպարանափոխվում: Դերակատարման, խաղի միջոցով առանց ճիգի սովորում են առաջարկված նյութը:

Գորտերի խաղը

Երեխաները ներկայացնում են հետևյալ պատկերը:

Լուսնյակ գիշեր... Լիճը խաղաղ...
Ուռած թշեր ... Գորտերի խաղ:
Գորտի բանակ... Գորտի նվագ...

Ինչպե՞ս: Առաջարկում են երեխաները: Դաստիարակը ուշադիր լսում է առաջարկվող լուծումները, դրանցից ընտրում ամենաանսպասելիները բացատրելով իր կատարած ընտրությունը: Խումբը կարող է ներկայացնել գիշեր դեմքերի արտահայտությամբ, իրենց կազմած շրջանի փակվելով ու բացվելով, քնած ձևանալով, արևին գողանալով և այլն: Երեխաները կարող են նաև լուսիններ դառնալ. անհրաժեշտ է միայն խնդիրը հստակ առաջադրել: Մնացածը խաղ է հարցերով ու պատասխաններով: Երեխաները, խմբերի բաժանվելով, սիրով ու աշխուժությամբ մտնում են ցատկոտող և կռկռացող գորտերի կերպարի մեջ:

Դպրոց-պարտեզի նախակրթարան
Դաստիարակներ՝ Անահիտ Հարությունյան
Արմինե Աբրահամյան

Մի պատումի պատմություն

Երեխաները շրջապատել են ինձ: Ես կախարդական պարկից հանում եմ բառեր՝ ծու, զատիկ, կռիվ, ածիկ, ձուկ, արջ, գայլ: Բառերն ունեն ընդհանրություն՝ կապվում են Զատիկի հետ: Միայն արջ և գայլ բառերն են, որ առանձ-

նանում են: Բառերն ասելուց անմիջապես հետո Դավիթը միանգամից ասաց. «Բայց արջն ու գայլը ի՞նչ կապ ունեին դրանց հետ»: Ու միասին սկսեցինք այդ բառերն իրար հետ կապող պատմություն հորինել:

Արջն ու գայլը իրար հետ գնում էին որս անելու: Արջը գայլին ասաց.

- Արի գնանք ուրիշ տեղ որս անենք, այստեղ էլ ծուկ չկա:

Իրար հետ քայլում էին ջրաղացի կողքով, հանկարծ մի ճուտիկ տեսան: Ճուտիկը լողում էր, հանկարծ տեսավ արջին ու գայլին: Գայլը ճուտիկին խղճաց ու ասաց.

- Որտեղի՞ց ես եկել:

Ճուտիկն էլ ասաց.

- Ջվիկի միջից եմ ընկել:

- Ո՞ր ծվիկի:

- Ջարդարված ծվիկի մեջից, որը դրված էր աղքատիկ տան սեղանին: Այդ տանն այդ օրը զատիկ էին նշում:

Տան մեջ ապրում էին հավիկը, զատիկը, արագիլը: Նրանք ծվիկները շարել էին ածիկի մեջ ու դրել էին պատուհանին:

Արջն ու գայլը տեսան ածիկը ու որոշեցին այցելել նրանց, հետները տարան նաև ճուտիկին:

Դուռը թակեցին ու ներս մտան:

- Ինչո՞ւ եք եկել,- հարցրեց նրանց հավիկը:

- Անցնում էինք այս կողմերով ու հանկարծ պատուհանին տեսանք ծվերով զարդարված ձեր ածիկը ու որոշեցինք ձեզ այցելել, մեր ընկերոջն էլ ենք բերել:

Հավիկը չվախեցավ, նրանց ներս հրավիրեց: Միասին նստեցին սեղանի շուրջ. հավիկը սեղանին դրեց ներկած ծվերը, չամիչով փլավը, եփած ձկնիկը, տապակած բանջարեղենը, հյութերը, խմիչքը ու միասին սկսեցին քեֆ անել:

- Եկեք ծվիկներով կռվենք,- ասաց արջը:

Խաղալու ընթացքում հավիկի ծվիկը կոտրվեց ու միջից մի ճուտիկ դուրս եկավ: Հավիկն ուրախացավ: Երբ արջի ծվիկը կոտրվեց, զատիկ դուրս եկավ, իսկ երբ գայլի ծվիկը կոտրվեց, միջից ոսկի դուրս եկավ: Բոլորը շատ զարմացան: Դրանք իսկական ծվեր չէին, դրանք կախարդական ծվեր էին, բայց նրանցից ոչ մեկը չգիտեր այդ մասին: Իսկ թե ինչ դուրս եկավ ճուտիկի ծվիկի մեջից, թող ոչ մեկը չիմանա...

Բանաստեղծության աղավաղում
Հովհաննես Թումանյան «Իրիկուն»

Լուսինը շատ էր քնել,

- Հերիք է,- ասաց,- վեր կենամ ու քեֆ անեմ:

Տերևը երազ էր տեսել, վախից արթնացավ ու ասաց.

- Լուսինը քեֆ է անում, իսկ ես երազ եմ տեսնում, ես էլ գնամ ու պարեմ:

Թռչնակը տանը ճաշ էր եփում, մեկ էլ հանկարծ ճաշը թափվեց.

- է՞ս ինչ է,- ասաց,- լուսինը քեֆ է անում, տերևը երազ է տեսնում, իսկ ես ճաշ եմ պատրաստում, ես ուզում եմ քեֆ անել:

Նապաստակը գազարով ու կաղամբով աղցան էր պատրաստում և հանկարծ թթվասերը մոռացավ.

- է՞ս ինչ է,- ասաց,- լուսինը քեֆ է անում, տերևը երազ է տեսնում, թռչնակը ճաշ է եփում, ես աղցան եմ պատրաստում, ուզում եմ գնալ քեֆ անել:

Որսկանը որս էր անում անտառում, մեկ էլ ինչ տեսնի, բոլորը քեֆ են անում.

- է՞ս ինչ է,- ասաց,- որսս թողնեմ ու գնամ քեֆ անեմ:

Արևը շատ էր քնել, չդիմացավ ու միանգամից արթնացավ.

- Է՞ս ինչ է,- ասաց,- լուսինը քեֆ է անում, տերևը երազ է տեսնում, թռչնակը տանը ճաշ է եփում, նապաստակը գազարով աղցան է պատրաստում, որսկանը որս է անում, մենակ ես եմ, որ միշտ հոգնած, մնում եմ երկնքում պառկած:

«Նոր դպրոցի» նախակրթարան
Դաստիարակ՝ Ժամհարյան Անի

Նախակրթարանում ծնված այլ պատմություններ

Բարի գլուխը

Մեզ թխեցինք, կերանք: Նկարեցինք: Մեզ նկարեցինք ու հեքիաթ հորինեցինք: Հեքիաթը ոնց որ ինքն իրեն ծնվեց: Արմենուհին սկսեց.

- Աշխարհում մի գլուխ էր ապրում գայլի բնում:

- Ես գլխի վրա ոչ մի բան չկար, ու ինքն էլ քաչալ էր,- շարունակեց էլենը:

Կարենը զարգացրեց պատումը.

- Հետո աննրևի հետ լիքը մազեր եկան ամպերի միջից ու կպան գլխին:

Գոռն էլ շարունակելու փոխարեն հարցրեց.

- Բա աչքերը որտեղի՞ց եկան:

- Արևը գլխի ծնունդին նվեր տվեց, լուսինն էլ քիթը նվիրեց,- Գոռին պատասխանեց Միլենան:

- Հետո որ գլուխը քնեց, Ջմեռ պապից բերան ուզեց, ու ինքը բերեց, ու գլուխը բերանի մեջ լիքը դեղձ ու ծմերուկ լցրեց, ու մեկ էլ հոպ՝ թուշ ունեցավ,- շարունակեց Գագիկը:

- Ես գազանանոց եմ գնացել ու կապիկին ասել եմ, որ իր ականջից մի քիչ տա գլուխին,- ասաց Մարիամը:

- Բայց էս գլուխը շատ բարի մարդ էր, որտև (որովհետև) իրանց բոլորին պահեց իրա մոտ,- հեքիաթն ավարտեց էդվարդը:

Վերջում որոշեցինք հեքիաթն անվանել «Բարի գլուխը»

Դպրոց-պարտեզի նախակրթարան
Դաստիարակ՝ Շողիկ Ստեփանյան

Պոչատ աղվեսը

Լինում է, չի լինում մի աղվես: Աղվեսը մուկիկի չար ախպերն է լինում: Էս աղվեսը ուզում է մուկիկի 7 նապաստակ ծագուկներին ուտի: Մուկիկը ասում է.

- Աղվե՛ս, ես քեզ կկապեմ ու կտանեմ բանտ:

- Վա՛յ-վա՛յ-վա՛յ, հեսա շնածկները կգան ու ինձ կգցեն ջուրը,- ասում է աղվեսը:

Շնածկները գալիս են ու էս աղվեսին գցում ջուրը: Աղվեսն ընկավ ջուրը ու սատկեց:

Մուկիկի պապան, մաման ու իրենց 7 նապաստակ բալիկները ուրախացան: Բալիկները «կկումի» մեջ էին: Կկումը քարից աման է, մե՛ծ-մե՛ծ դռնակամանն, էսքան մեծ է:

Մուկիկը հաղթում է:

Աղվեսը պարտվում է:

Շնածկներն էլ են հաղթում, որովհետև հազիվ աղվես են ուտում:

Տատինցյան Արևիկ, 4 տարեկան
Դպրոց-պարտեզ
Դաստիարակ՝ Արուսյակ վարդանյան

Էս արագիլը

Էս արագիլը ինձ իրենց տուն էր կանչել: Ինքը համով բաներ էր եփել ու վախենում էր, որ ուրիշ համովներ կգան, իր համովին կտանեն, ինքը սոված կմնա: Էս ծառն էլ ամեն ինչ գիտեր, բայց ոչ մեկին չէր ասում: Ես գնացի արագիլի տուն: Համով բաներ կերանք, բայց մի համովը փախավ իր ընկերների մոտ: Բայց ես չվազեցի հետևից. Հավես չունեի: Արագիլն էլ չտխրեց:

Բաբայան Էլեն, 3,5 տարեկան

«Նոր դպրոց»-ի նախակրթարան
Դաստիարակ՝ Նելլի Արղության

«Մատենիկից» սովորում ենք «Քամի» բանաստեղծությունը, Մարին արտասանում է.

- Քամի քամի դու անխելք,
Էն երկնքի ամպերը
Անիծում են ամեն ձև,
Ու տարածում սար ու ծոր,
Քո անուշիկ հողերը:

- Մարի՛ ջան, քամի, քամի դու ահեղ, ոչ թե անխելք: Ահեղ նշանակում է ուժեղ:

- Հա, որ ուժեղ է, ուրեմն ինչ ունենք-չունենք պիտի քշի տանի՞:

Մի անգամ էլ ինձ էր քշում, ես չէի գնում, բայց ինքը ինձ զոռով քշում էր, անխելք էր, է...

Պատմում ենք «Ճամփորդներ» հեքիաթը: Մարատիկը չի լսում, խմբով մեկ պտտվում է ու ոչ մի կերպ չի ուզում նստել.

- Ես սենց էլ եմ լսում:

Խաղացինք, դերերը բաժանեցինք, աքաղաղ, շուն, աղվես ունեցանք, հասանք վերջին՝ աղվեսը պուկ փախավ, բոլորը լռեցին, իբր հեքիաթը վերջացավ: Մեկ էլ լսում ենք՝ ծուղրուղո՛ւ:

Նայենք վերև, տեսնենք՝ Մարատիկը շվեդակա՞ պատի ամենավերին աստիճանին կանգնել ծուղրուղո՛ւ է կանչում:

- Մարատիկ, իջիր, կընկնես:

- Չէ, ընկե՛ր Անի, չեմ ընկնի, բարձրացել եմ՝ տեսնեմ՝ վերևում ի՞նչ կա, ի՞նչ չկա, հըլը եկեք, էս վերևից նայեք, տեսեք՝ լրիվ երևում ա:

- Դե ասա, ի՞նչ կա սարի հետևը,- հարցրեց Հրաչը:

- Իբր սարը տեսա, մնաց տեսնեմ հետևն ինչ կա,- պատասխանեց Մարատիկը:

Դաստիարակ՝ Ժամհարյան Անի
«Մայքլ Գանյան» դպրոցի նախակրթարան

Արևի հեքիաթը

Լինում է, չի լինում մի արև: Էս արևը որոշում է իր մյուս արև-ընկերների հետ մի տեղ գնալ, այսինքն՝ ռեստորան: Մտնում են երկնքի մեջ. էնտեղ իրենց ռեստորանն էր: Նրանք ուզում էին շատ ուտել, որովհետև նրանք շատ լույս ու տաքություն էին տալիս ու այդ ժամանակ ոչինչ չունեին: Երկինքն էլ մութ էր, նրանք կերան, կշտացան ու գնացին-գնացին, երկնքից դուրս եկան ու գնացին իրենց տուն, իրենց դեղին շորերը հագան: Լույսը բացվեց, ու ամբողջ աշխարհին լույս տվեցին:

Հիվանդ զատիկը

Լինում է, չի լինում մի զատիկ: Ես զատիկը հիվանդանում է: Նրա ընկերները գնում են զատիկին տեսնելու: Նրանք գիտի, բնական հյութ են խմում, որ առողջ լինեն, խմում, խմում են, բայց չեն հարբում, որովհետև նրանք չաղ էին: Քիչ հետո գալիս է զատիկի հայրիկը ու հարցնում.

- Ինչո՞ւ ես այսքան մեծացել:

Չվիկը պատասխանում է.

Արաղ (օղի) եմ խմել:

Ծաղիկը

Լինում է, չի լինում մի ծաղիկ: Մի օր էս ծաղիկը սիրունանում է ու բողբոջին ասում.

- Բողբո՛ջ, ա՛յ բողբոջ, ինձ մի ծառ տուր, որովհետև ես սիրունացել եմ ու ծառ եմ ուզում:

Բողբոջը շատ է մտածում, մտածում ու ասում.

- Եթե շատ ես ուզում, կտամ:

Ծաղիկը հանգստանում է:

Հեքիաթ

Լինում է, չի լինում մի ճուտիկ է լինում՝ կանաչ գույնի: Նրան ասում էին կանաչ ճուտ-ճուտիկ: Ճուտ-ճուտիկը ապրում էր Ճսճստանում: Մի անգամ այս բարի, կանաչ ճուտ-ճուտիկը ցանկանում է արտից ցորեն հավաքել, բայց աղվեսը տեսնում է նրան ու վազում, որ բռնի: Մեր քաջ ճուտ-ճուտիկը այնպես արագ է վազում, մտնում իր տուն, որ խորամանկ աղվեսը չի կարողանում բռնել նրան: Ճուտիկը այնպես է վախենում, որ դրանից էլ ավելի է կանաչում: Երեխաները խոստացան այնպիսի լավ, ուրախ, բարի նկար նկարել, որ այլևս ճուտ-ճուտիկը աղվեսից չվախենա:

Գեղարվեստի վարժարանի նախակրթարան
Դաստիարակ՝ Սաթենիկ Պետրոսյան

Ձեռքերն ու ձեռնոցները

Լինում է, չի լինում մի աջ ձեռք ու մի ձախ ձեռք: Ես ձեռքերը միշտ ուրիշ տեղեր են գնում: Մի օր էլ խանութում միամիտ հանդիպեցին, պաղպաղակ առան, կերան, մրսեցին, տուն գնացին: Տաք- աք ձեռնոցներ հագան ու լավացան:

Մերի
Գեղարվեստի վարժարանի նախակրթարան
Դաստիարակ՝ Նիկոլյան Սոնա

Անձրևանոցն ու անձրևանոցը

Բարև ձեզ: Ես Անձրևանոցն եմ, սովորական անձրևանոց ու սովորական մի պատմություն գիտեմ անձրևանոցի մասին:

Կար-չկար մի անձրևանոց: Ծիծաղելի բան եմ ասում, բայց սուտ չեմ ասում, որ անձրևանոցը մի հատ չի կարող լինել, բայց կարող է միակը լինել:

Անձրևանոցները տարբեր գույների են լինում՝ սև, սպիտակ, կարմիր, կանաչ...., բայց այս անձրևանոցը բոլորգույնի էր, բացի սևից ու սպիտակից: Մի բան էլ՝ նա չէր բացվում:

Չեմ ասում, որ միանգամից տանեք ու խեղճին դեն նետեք. սովորաբար այդպես էլ անում եք, եթե միանգամից չստացվեց, ուրեմն՝ տանում եք ու

գցում: Բայց դե աննրևանոց է, բա որ կոտրված լինի, թափե՞նք:

- Չէ, աննրևանոցին օգնել է պետք, հո չե՞նք թողնի կորչի, գնա: Կարող է աննրևանոցի ձևեր է թափում. երևի այնքան սիրուն է, ամաչում է կբացվի ու բոլորին կզարմացնի, կամ էլ հակառակը:

***

- Որ լավ մտածենք, սկզբում բոլորս էլ փակ ենք լինում, մինչև չվերցնես ու չբացես: Չի լինո՞ւմ, որ առանց դիպչելու բացվում ենք: Կարող է և լինում է: Ես անգամ էլ վախենում ես ձեռք տալ. մեկ էլ հանկարծ գըմփ ու բացվեց: Ես էլ եմ աննրևանոց, բայց տես, կարգի՞ն, տեղը տեղի՞ն: Ու այդպես տեղը տեղին մի երկուշաբթի շատ ուզեցի զբոսնել, բակում էլ, հակառակի պես, աննրև էր: Ի՞նչ անեմ, ստիպված աննրևանոցս վերցրի: Գնացի զբոսնելու: Քայլում եմ ու ուզում եմ բացել, չի բացվում ու չի բացվում: Գցե՞մ, թե՞ հետս տուն տանեմ, ինչի՞ համար եմ պահում, ինձ նման աննրևանոցին շատ պետք է այս անպետքը: Ուզում եմ տուն գնալ, արդեն թրջվել եմ ու ոչինչ չեմ կարող անել: Մտա տուն, ուղղակի աննրևանոցս գցեցի սեղանին ու գնացի չորանալու: Շուռ գամ տեսնեմ բացվել է:

Հաջորդ օրը սկսեցի մտածել: Հայտնի է, որ բոլոր աննրևանոցները սկզբում բաց են լինում, ինչպես արևածաղիկը, նրանք ուրախանում են, երբ կանչում ես թեթև կամ ուժեղ աննրևի տակ զբոսնելու:

***

Մի աննրևանոց էլ էի ճանաչում, որ շատ էր սիրում փիսոների հետ ընկերություն անել, հենց տեսնում էր փիսոյիս, միանգամից բացվում էր, սա էլ գնում նստում էր աննրևանոցի տակ. երևի զրուցում էին: Ես էլ բարկանում էի. ես ի՞նչ աննրևանոց է, հեչ աննրևանոցի նման չէ, պետք է սրան մարդավարի աննրևանոց սարքել: Որոշեցի խրատել նրան, գոնե ինքն ինձ հասկանա: Բայց հենց սկսեցի, նա միանգամից բացվեց ու սկսեց արագ պտտվել իր բոլոր գույներով: «Չէ, սա խաղ է անում ինձ հետ»,- մտածեցի, ես էլ բացվեցի, մտա խաղի մեջ: Բռնեցի աննրևանոցի ոտքից ու պտտվում էինք:

Հանկարծ աննրևանոցը ծիծաղեց, հետո շարժիչի ձայնի նման ինչ-որ դռդռոց լսվեց, ու մենք աննրևանոցն ու ես, բարձրացանք օդ: Մի քիչ հետո էլ դուրս եկանք պատուհանից, սկսեցինք թռչել երկնքով: Դե սկզբում ես էլ չէի կարողանում հավատալ, բայց դա կարևոր չէ, կարևորն այն է, որ մենք թռչում էինք մեծ երկնքում, աննրևանոցս ուրախությունից միացրել էր իր գաղտնի շարժիչը, ես էլ ամուր բռնվել էի նրա ոտքից:

Ուշ տուն եկանք, երկուսս էլ փակվեցինք, որ հանգստանանք:

Գիշերը քնի մեջ մտածում էի. «Մեկ-մեկ էլ ես չեմ բացվի»:

Արդեն մի՞ քիչ, մե՞կ-մեկ չբացվող Աննրևանոց:

Հեղինակ Ժամհարյան Անի
Մ. Գանյանի անվ. դպրոցի նախակրթարանի դաստիարակ

Բլբլոց

Մեր մասին էինք խոսում: Որոշեցինք մեզ «թխել»: Խմոր արեցինք, խմորից մարդուկներ սարքեցինք. Երեխաները լավ ծանոթ էին «մարդահացիկներին»: Ես էլ, որ նոր էի ընդունվել աշխատանքի, որոշեցի անսովոր բառ մտցնել շրջանառության մեջ.

- Սրանք մենքահացիկներ են,- ջեռոցի մոտ ասացի ես:

- Ջենքահացիկ էլ կա՞,- հարցրեց Լաուրկան:

Ահա թե ինչ կարծիք ունեն իրենց մարդահացիկների մասին երեխաները:

- Իմ մարդուկը պոզավոր ա, անունն էլ պոզավոր ա, բայց ինքը շերեփի է նման: (Մանե)
- Իմը սիրուն աչիկներով Լաուրկա է, քաղաքում է ապրում: (Լաուրկա)
- Իմն էլ քաղաքի վերևում ա ապրում: (Թագուհի)
- Իմն էլ Արամ է, իմ տանն է ապրում, դուռը փակել եմ, որ չփախչի: (Արամ)

Մարդահացիկ էինք թխում: Երբ մարդուկները ջեռոցից հանեցինք, Լաուրկան բղավեց.
- Վա՜յ, ընկեր Արուս, իմ մարդուկի բերանը ճաքել ա, ու ինքը ծիծաղում ա:

Բ- 4թ. դպրոց-պարտեզ
Դաստիարակ՝ Արուսյակ Վարդանյան

Գաթայի խմորն ենք պատրաստում: Վանիլինի բույրը տարածվել է սենյակում: Հիմա այն պիտի լցնենք խմորի մեջ.
- Ընկեր Աուսյակ, հիմա խմորի դուխին պիտի ցանենք,- ասաց Էռնան:

Մեր մասին պատմեցինք, մեզ «ուսումնասիրեցինք», պարզեցինք, որ մեր գլուխները կլոր են: Հաջորդ օրը առավոտյան Գագիկը արթնանում է ու հորը հարցնում.
- Պապ, քո գլուխն էլ ա կլո՞ր:

Բ- 4թ. դպրոց-պարտեզ
Դաստիարակ՝ Շողիկ Ստեփանյան

Քնելուց առաջ տատն էլենին հանում է մաքուր օդ շնչելու՝ «Թող էրեխեն մի քիչ մաքուր օդ շնչի»: Մի քիչ զբոսնելուց հետո էլենը բարեհոգաբար դիմում է տատին.
- Տա՛տ, դու էլ շնչի:

Էլենը երկար նայեց ճահճում լողացող գորտին.
- Մամ, էս գորտերի բաղնիքը ի՞նչ կեղտոտ է:

Էլենին առավոտյան արթնացնելիս մայրն առում է.
- Լույսը բացվեց, վեր կաց:
Երեկոյան էլենի քունը տանում է, ուզում է քնել.
- Մամ, լույսը չի փակվե՞լ, գնամ, քնեմ:

«Նոր դպրոց-պարտեզ»-ի նախակրթարան
Դաստիարակ՝ Արղության Նելլի

Մարդահացիկ ենք թխում: Մածունի մեջ սոդա լցրեցինք, խառնեցինք, մեկ էլ սկսեց փրփրել ու բարձրանալ.
- Արա՜, նայեք, մածունը մեծանում ա,- զարմացած ասաց Կարենը:
- Ուրեմն սոդան մեծացնում ա, որովհետև հենց սոդա լցրինք, մածունը սկսեց մեծանալ,- եզրակացրեց Մարին:
- Այ տղա Արման, գնա, սոդա կեր, կմեծանաս,- խմբի ամենափոքրին առաջարկեց Կարենը:

Հեղինակ՝ Ժամհարյան Անի
Մ. Գանյանի անվ. դպրոցի նախակրթարանի դաստիարակ

Խաղադարան
Աիդա Պետրոսյան
Գոհար Բադալյան
Ռուզան Խաչատրյան
Աննա Ադամյան
Անի Ժամհարյան

Մատենիկ
Մարիետ Սիմոնյան

Տոնացույց
Աիդա Պետրոսյան
Մարինե Մկրտչյան

Պատմություններ մեր փորձից
Մարիետ Սիմոնյան

Խմբագիր՝ Վարդան Ջալոյան
Սրբագրիչ՝ Ելենա Սարգսյան
Նկարիչ՝ Գրիգոր Խաչատրյան
Էջադրող՝ Լուսինե Պետրոսյան

ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ



www.mskh.am
email: info@mskh.am
տեղեկատու 73 23 30
091 43 10 99

Մեր ուսումնական հաստատությունների և կենտրոնների տեղեկատու

Կրթահամալիրի տնօրեն	Ա. Բաբաջանյան 25	74 11 12
Տնօրենի աշխատակազմ	Ա. Բաբաջանյան 25	74 11 12
Հաշվապահություն	Ա. Բաբաջանյան 25	74 06 62
Կրթահամալիրի տեղեկատու	Ա. Բաբաջանյան 25	73 23 30
Գրադարան	Ա. Բաբաջանյան 25	74 49 81
Հեղինակային մանկավարժության սպասարկման կենտրոն	Ա. Բաբաջանյան 25	73 54 40
Մասնագիտական զարգացման կենտրոն	Ա. Բաբաջանյան 25	73 53 30
Ուսուցողական ծրագրեր		
ՀԱՋ Բ-1թ. Նոր դպրոց – պարտեզ	Ա. Բաբաջանյան 47/1	74 43 80
ՀԱՋ Բ-4թ. դպրոց – պարտեզ	Ա. Բաբաջանյան 38/1	74 21 72
Գեղարվեստի դպրոց-պարտեզ	Րաֆֆու 69/1	73 52 10
«Մայքլ Գանյան» հանրակրթական դպրոց	Ա. Իսակովի 52/6	74 42 81
Միջին դպրոց	Ա. Բաբաջանյան 25	73 59 90
Ավագ դպրոց-վարժարան	Ա. Բաբաջանյան 25	74 00 42
Արհեստագործական դպրոց	Զ. Անդրանիկի 92/1	74 00 22
Պետական քոլեջ	Ա. Բաբաջանյան 25	73 53 30
Ուսումնական կենտրոններ		
Նախադպրոցականի զարգացման	Ա. Բաբաջանյան 25	74 41 80
Կրտսեր դպրոցականի զարգացման	Ա. Բաբաջանյան 38/1	74 21 72
Հայագիտության	Ա. Բաբաջանյան 25	73 53 30
Օտար լեզուների	Ա. Բաբաջանյան 47/1	74 41 80
Հասարակական գիտությունների	Ա. Բաբաջանյան 25	73 54 40
Բնագիտության և տեխնիկայի	Ա. Բաբաջանյան 25	73 23 30
Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի	Ա. Բաբաջանյան 25	73 54 40
Արհեստների և տեխնոլոգիայի	Զ. Անդրանիկի 92/1	74 00 22
Գեղարվեստի և հրատարակչական գործի	Րաֆֆու 69/1	73 52 10
Երաժշտության	Ա. Բաբաջանյան 25	74 41 80
Մարզական	Ա. Բաբաջանյան 25	73 23 30
Կինոֆոտոյի և թատրոնի	Ա. Բաբաջանյան 25	73 06 74
Կրթամշակութային կենտրոն	Րաֆֆու 57	74 92 01
Ներառական ուսուցման կենտրոն	Ա. Բաբաջանյան 25	74 41 80